


ԷԶՄԻԱԾԻՆ




Ե
2012



ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷԶՄԻԱՇՆԻ

Մայիս

2012
Ս. Էջմիածին



ՀՐԱՄԱՆԱԲ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԻ
ՎԵՆԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ



**ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՆԱՏԱՆԱՅ
ԱՌ՝ ՄԻՐԵՑՆԵԱՆ ՈՐԴԻՆ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱՆ ՍՊԱՍԱԲՈՐՆ
ԱՌ՝ԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՆ
Տ. ՄԵՊՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՒԼՋԵԱՆ
ՈՐ Ի ՎԱՆԱՉՈՐ**

Նայոց հաւարքի նուիրական վեմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Նայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Քահանայական ձեռնադրութեան 25-րդ տարեդարձի առիթով:

Միբելի Սրբազան,

Քառորդ դար առաջ, աւարտելով Մայր Աթոռի հոգևոր ճեմարանը, Դուք Միածնի Իջման Սուրբ Խորանի առջև խոնարհ ուխտադրութեամբ արժանացար կուսակրօն քահանայութեան բարձր շնորհի՝ լծուելով Աստուծոյ Խօսքի բարոգութեան սրբազան առաքելութեանը: Այսօր Մենք ուրախ ենք հաստատելու, որ ծառայութեան ողջ ընթացքում Ձեր բոլոր յանձնառութիւնների ու պարտականութիւնների մէջ Դուք՝ որպէս զինուորեալ սպասաւոր Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, առաջնորդուել էք հայրողեաց հոգևոր կեանքի վերագարթօնքին աւանդ բերելու ազնիւ նախանձախնդրութեամբ՝ հաւարարմօրէն պահելով ծառայանուիրումի Ձեր սրբազան ուխտը Բարձրեալ Տիրոջ հետ:

Մայր Աթոռում, Ժնեւի հայ համայնքում եւ Շիրակի թեմում սրանձնած յանձնառութիւններով հաստացնելով Ձեր փորձառութիւնը՝ Դուք կոչուեցիք Գուգարաց թեմի առաջնորդի պատասխանատու պաշտօնին: Նախընթաց մէկ ու կէս տասնամեակի ընթացքում անյոգնաբեկ սպասաւորութեամբ Դուք կարողացար զօրացնել նորակազմ թեմը, եկեղեցիների շուրջ միաւորել մեր ժողովրդի հաւարաւոր զաւակներին, բարոօք աշխարանք իրականացնել ի նպաստ երիտասարդ հայրողեաց հոգևոր կրթութեան ու դաստիարակութեան:

Միբելի Սրբազան,

Գոհունակութիւն է Նայրապետիս համար Մեր բարձր գնահատանքը բերել Ձեզ

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում Ձեր նուիրեալ ծառայութեան եւ պարիսնրի վաստակի համար եւ Նայրապետական այսու Կոնդակով շնորհել Ձեզ

Ա Ր Ք Ո Ւ Թ Ե Ա Ն Պ Ա Տ Ի Ի

Իջման Սուրբ Սեղանի առջեւ ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալ Տիրոջ խնամքն եմք հայցում Ձեզ եւ գորակցութիւնը Ձեր եկեղեցաշէն գործունէութեանը:

Թող Ամենակալ Տէրը քաջառողջ եւ արեւշաք կենաց օրեր պարգեւի Ձեզ եւ գործոց նորանոր յաջողութիւններ՝ ի պայծառութիւն Գուգարաց Տիրախնամ թեմի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեւեւանդ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ

Տուաւ Կոնդակս ի 15-ն Մայիսի

յամի Տեառն 2012 եւ ի թուին հայոց ՌՆԿԱ.

ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի

ընդ համարաւ 667

**ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՆԱՏԱՆԱՅ
ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԼ ՍՊԱՍԱՌՈՐՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԵՐԱՇՆՈՐՆ
Տ. ՆԱԹԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎՆԱՆՆԻՍԵԱՆ
ՈՐ Ի ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ**

Սիրելի Սրբազան, բերկրանօք սրբի Նայրապետական Մեր օրհնությունն ու բանադթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու վաստակաշար սպասաորիդ:

Շուրջ երեք տասնամեակներ առաջ, Աստուծոյ սպասաորր լինելու կոչումը Ձեր սրբում, Տիրոջ կամքով եւ օրհնութեամբ մուտք գործեցիք Սուրբ Էջմիածնի հոգեւոր ճեմարանի նուիրական յարկից ներս: Ձեր հոգեւոր ուսումնաորութիւնն ամբողջացնելով՝ Միածնի Իջման Սուրբ Մեղանի առջեւ անձնուէր ծառայանուիրումի ուխտ կնքեցիք եւ ստանձնեցիք կուսակրօն քահանայի պատասխանատու առաքելութիւնը հաւատարմոր մեր ժողովրդի ազգային-եկեղեցական կեանքում:

Գնահատելով եւս անդրադառնում Տէրունապատուէր Ձեր ծառայութեան արդիւնքներին: Դուք նախանձախնդիր ու նուիրեալ ոգով էք արգասաորել Ձեր սպասաորութիւնը ճեմարանի փոխպետէի, այնուհետ Ուկրաինայի եւ ապա Մեծ Բրիտանիայի Նայոց թեմերի առաջնորդի պատասխանատու պաշտօններում:

Ուրախ ենք, որ այսօր Դուք, որպէս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրապարակաական բաժնի անօրէն, գովարժան աշխատանք էք իրականացնում հոգեւոր-աստուածաբանական գրականութեան հրապարակութեան կարեւոր գործում՝ ներդրում բերելով Տիրոջ կենարար խօսքի տարածման եւ մեր հաւատացեալների կրօնական գիտելիքների գորացման առաքելութեան մեջ:

Սիրելի Սրբազան,

Բարձր գնահատելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում տարիների Ձեր վաստակը եւ նուիրեալ ծառայութիւնը, Նայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ

ԱՐ Ը ՈՒ Թ Ե Ա Ն Պ Ա Տ Ի Ի

Ի խորոց սրբի աղօթում եւ մաղթում ենք, որ Բարին Աստուած Ամենախնամ Իր Սուրբ Աջով պահի ու պահպանի Ձեզ, գորակից լինի բարձր ու պատասխանատու Ձեր կոչման մէջ՝ շնորհելով քաջաորոջութիւն ու արեւշատութիւն եւ նորանոր յաջողութիւններ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Նոգոյն եւ յաւեր օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ

Տուալ Կոնդակս ի 16-ն Մայիսի
յամի Տեառն 2012 եւ ի թուին հայոց ՌՆԿԱ.
ի Մայրապանոս Սրբոյ Էջմիածնի
բնդ համարաւ 669

**Ն.Ա.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՇՆՈՐՏԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ
ՕՐՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Նայրական սիրով Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում ուսումնական հասարակությունների շրջանավարտներին, փնօրինությանց, ուսուցիչներին ու դասախոսներին:

Սիրելի շրջանավարտներ, այսօր դուք ձեր կրթօջախներում ամբարած գիտելիքներով, հույսերով ու երազանքներով քայլում եք դեպի կյանքի նոր հանգրվան: Դեպի ուր էլ առաջնորդի ձեզ այս նոր ճանապարհը՝ ուսումը շարունակելու, աշխատելու, բանակում ծառայելու, Աստված մշտական հոգածությամբ պահապան է օգնական է ձեզ՝ իրականություն դարձնելու ձեր ազնիվ ու արդար իղձերը: Մեր Տերը Նիսուս Բրիսպոս ասում է. «Ես սիրեցի ձեզ, Իմ սիրո մեջ հաստատվե՛ք մնացե՛ք» (Նովի. ԺԵ. 9): Մեր Տիրոջ այս կոչին ունկնդիր՝ ձեր սրբերում վառ պահեցե՛ք հավաքքը, աստվածսիրությունն ու ազգանվիրումը, որպեսզի Բարձրյալի գորակցությամբ ձեր ջանքերը պարգևերեն հաջողություններով ու նորանոր ձեռքբերումներով եւ բարիք ու խնդություն հավելեն մեր Նայրենիքի ու ժողովրդի կյանքին:

Աստվածակառույց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Նայրապետական Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Ամենակարողն Աստված, որ օրհնի ձեր կյանքի ուղին եւ շնորհի երջանկությունն ու ամենայն բարիք:

Մեր բարձր գնահատանքն ենք բերում կրթության գործի բոլոր նվիրյալներին ու ծնողներին նոր սերունդ կրթելու ջանադրության, խնամքի ու հոգաբարության համար եւ հայցում, որ Տերը Իր Սուրբ Աջի հովանու ներքո խաղաղ պահպանի մեր Նայրենիքը եւ հավաքքով ու հույսով գորացյալ՝ մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի:

**Ն. Ա. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՏԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ
ՆԱՆՐԱԳԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ**

(28 մայիսի, 2012 թ.)

Բրիսպոսահիմն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Նանրապետության օրվա փոնական առիթով ողջունում եւ Նայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում մեր ժողովրդի զավակներին՝ ի Նայաստան, յԱրցախ եւ ի Սփյուռս:

Այսօր փոռնում ենք նվիրական հիշատակը Նայոց պետականության վերականգնման, որն իրականություն դարձավ բազմադարյա դադարից հետո: Իննսունչորս փարիներ առաջ մայիսյան լուսավոր այս օրը մեր հայրերը հռչակեցին Նայաստանի առաջին

Նանրապեղությունը, եւ հայրենի երկնականարում ծածանվեց հայոց եռագույնը՝ որպէս խորհրդանիշ ազապ եւ անկախ ապրելու մեր ժողովրդի երազանքի իրականացման:

Գոռություն Երկնավորին, Մայիսյան հերոսամարտերի եւ Նայասարանի առաջին Նանրապեղության հռչակման հիշատակներն այսօր ոգեշնչում են մեր ժողովրդին հայրենի պերականությունը գորացնելու եւ իր լուսավոր գալիքը կառուցելու հույսերով:

Մայր Տաճարի Իջման Սուրբ Սեղանի առաջ ի խորոց սրբի աղոթում ենք, որ Ամենակարող Աստուծոյ երկնառաք օրհնության եւ հարապել խաղաղության մեջ պահի Նայրենի մեր երկիրը եւ հավաքավոր Մեր գավակներին՝ պարգեւելով կայուն եւ ապահով առաջընթաց:

Ն.Ա.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐԱՎԱՐԱՅԻՆ ՈՒՂԵՐԶԸ ՆԱԴԹԱՆԱԿԻ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

Սիրելի հավաքավոր գավակներ մեր ի Նայասարան, յԱրցախ եւ ի Սփյուռս,

Նամայն հայության հոգեւոր օրրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Նայրապեղական մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում Ձեզ Մայիսի 9-ի՝ Նաղթանակի ու Խաղաղության օրվա բերկրալի առիթով:

Այսօր նշվում է Ֆաշիզմի դեմ պարած հաղթանակի օրը, որ պոն է խաղաղության, չարիքի ու արեւելության դեմ բարոյ եւ եղբայրսիրության հաղթանակի: Այս պոնը կրկնակի ուրախությամբ է լցնում սիրտը յուրաքանչյուր հայորդոյ, քանզի քսան տարիներ առաջ այս օրը՝ մայիսի 9-ին, ազապագրվեց հայրենի մեր Արցախ աշխարհի սիրտն հանդիսացող Շուշին: Շուշիի ազապագրումը դարձավ արցախաբնակ մեր հայորդիների ազապության եւ ինքնորոշման աստվածադիր իրավունքի պաշտպանության հաղթական պայքարի առանցքային հանգրվաններից մեկը՝ ոսկե տառերով գրվելով ազգային մեր արդի պարմության տարեգրության մեջ:

Նոբելյանական այս օրը խոնարհումով ենք հիշում Մեծ Նայրենականի եւ Արցախյան հերոսամարտի տարիներին անձնուրացորեն սեփական կյանքը Նայրենիքին գոհաբերած մեր քաջագուն գավակներին՝ հայցելով, որ Բարեգութ Տերը հանգստություն պարգեւի նրանց հոգիներին ու հանգչեցնի Իր լույս օթեանների մեջ:

Քրիստոսաստապար Մայր Տաճարի Իջման Սուրբ Սեղանի առաջ ի խորոց սրբի աղոթում ենք, որ Ամենակեցույցն Աստուծոյ հարապել ու անսասան պահի խաղաղությունն արարչաստեղծ աշխարհում, ամրացնի եղբայրությունը, սերն ու հանդուրժողականությունը մարդկանց սրտերում, եւ մաղթում ենք, որ մարդկային միտքը, տաղանդն ու կարողությունները ծառայեն միայն բարի նպատակների ու հանուր մարդկության բարօր կյանքի ու առաջընթացի համար նպաստող ձեռնարկներին՝ իրականություն դարձնելով Եսայի մարգարեի կանխասացությունը, թե՛ Տերն այնպէս պիտի փոխի մարդկանց

սրբերը, որ «Նրանք իրենց սուսերներից խափեր պիտի ձուլեն, և իրենց սվիններից՝ մանգաղներ, ազգ ազգի վրա սուր չպիտի բարձրացնի, և նրանք այլևս չեն սովորելու պապերազմել» (Եսայի Բ. 4):

Թող Տերը երկնառաք օրհնությամբ՝ Ամենախնամ Իր աջի հովանու ներքո պահի և պահպանի Նայասւրան և Արցախ Նայրենի մեր երկիրը և աշխարհասփյուռ ազգս Նայոց:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԽՈՍՔԸ ՆԱԴԹԱՆԱԿԻ ՏՈՆԻ, ԼՂՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱՆԱԿԻ ԵՒ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ
20-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ
 (ԼՂՏ, 9 մայիսի, 2012 թ.)

Մեծարգո Նախագահ Նայասւրանի Նանրապետության փխար Մերժ Սարգսյան,
 Մեծարգո Նախագահ Արցախի Նանրապետության փխար Բակո Սահակյան,
 Վաստակյալ նախագահներ փխար Ռոբերտ Բոչարյան և փխար Արկադի Ղուկասյան,

Գերաշնորհ, հոգեշնորհ, արժանապարիվ հոգևոր հայրեր,

Նարգարժան պեպական այրեր,

Միրելի հավաքավոր ժողովուրդ և պապական հյուրեր.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից անհուն ուրախությամբ եկել ենք Նայրապետական Մեր օրհնությունը բերելու և խնդակից լինելու ձեզ Մայիսի 9-ի այս լուսավոր, բերկրանքով ու քաջակերությամբ լեցուն օրը, երբ Երկրորդ համաշխարային պապերազմի հաղթանակը Շուշիի ազապագրության և Լեռնային Ղարաբաղի Նանրապետության Պաշտպանության բանակի 20-ամյա հորելյանները: Եկել ենք շնորհավորելու և Մեր գնահապարներ բերելու ձեզ, մեծարգո Նախագահ Նայասւրանի Նանրապետության, մեծարգո Նախագահ Լեռնային Ղարաբաղի Նանրապետության, հայոց պեպական այրեր, սիրելի հաղթանակած ժողովուրդ՝ Մեր հավաքավոր զավակներ Արցախի, Նայասւրանի և Սփյուռքի: Մեր շուրթերին այս պահին սաղմոսերգուի օրհներգն է, որ որպես աղոթք՝ բարձրացնում ենք առ Տերը՝ ասելով. «Բո երեսի լոյսը ծագեց մեզ վրայ, և ուրախությւնս քունեցիր մեր սրբերին» (Մղմ. Դ. 7-8):

Շուշիի ազապագրումով Աստծո արդարության լոյսը փայլեց մեր կյանքում՝ լիառար ուրախությամբ համակելով սրբերը մեր ժողովրդի և առաքացնելով հույսերը պապերազմի հաղթական ավարտի: Այսօր լուր են պապերազմի ձայները: Շուշիի Սուրբ Ամենափրկիչ նորոգված ու նորաշուք եկեղեցու զանգակապան բարձունքից հրեշտակները հնչեցնում են օրհներգության փողը հաղթանակի ու խաղաղության, հնչեցնում են շեփորն ազապ կյանքի և արդար իրավունքի, որը երբեք և ոչ մի ժամանակ չրեց մեր ժո-

ղովորդի հոգում: Ազատ ապրելու այս ոգով է գրվել մեր դարավոր հերոսական պատմությունը: Այս ոգով մեր ժողովուրդը, այդ թվում՝ Արցախի քաջարի զավակները, իր արժանի մասնակցությունն ու մեծ ավանդը է բերել Երկրորդ աշխարհամարտում՝ պայքարելով ազգերի լիիրավ ու խաղաղ կյանքի համար: Այսօր ազգս հայոց՝ նույն ոգով հաղթանակած Արցախյան ազատամարտում՝ րերն է իր արդար իրավունքների:

Դժվարին, բայց հույսով, հավաքով ու րեսիլով լեցուն ուղի ենք անցել, սիրելիներ: Մենք հաղթեցինք պատերազմում, որը մենք չէինք սկսել: Այդ պանծալի հաղթանակը մեր ժողովուրդը կերպեց հերոսական մաքառումով, անհամար գոհողություններով, հավաքավոր եւ հայրենանվեր հոգու արիությամբ: Արցախով գորացան սրբերը աշխարհասփյուռ մեր ժողովրդի, եւ համախմբվեց ազգս՝ մեկտեղելով իր ուժերն ու հնարավորությունները հանուն Արցախի պաշտպանության եւ հայրենի պերականության ազատ ու բարօր կյանքի: Արդարեւ, Արցախի այս հողն ու երկիրը, որ մի բուռ րարածքն է պարմական մեր Նայրենիքի, վերջին երկու րասնամյակի իր պարմությամբ վկայությունն է բերում մեր ժողովրդի հայրենասեր ու ազգանվեր հոգու, վճռական կամքի, հաղթական բազկի, միասնականության եւ համարեղ ջանքերի արդյունավորման:

Փառք եւ գոհություն Աստծո, այսօր Նայասրանի եւ Միլյուրքի կողքին օր օրի շենանում է Արցախը, լցվում բարերեր ու խնդառար կյանքով: Նամայն մեր ժողովրդի աջակցությամբ, արդար վասրակով, արցախահայության ջանք ու նվիրումով բարձրանում են դարավոր վանքերն ու եկեղեցիները, նորոգվում ու պայծառանում հոգևոր, գիրակրթական ու մշակութային կյանքը: Կառուցապարվում եւ նոր կյանքով է լցվում նաեւ Շուշին՝ պարմական ծաղկուն քաղաքն Արցախի: Ազատ Արցախում ծնված սերունդն այսօր կյանք է մրնում պայծառ գալիքի նոր րեսլականով: Այս ձեռքբերումներն ու արդար հույսերը առավել պարավորեցնում են մեզ հայրենակերպումի նոր սիրանքների:

Սիրելի ժողովուրդ հայոց, Աստծո լույսն ու օրհնությունն են ծագել մեզ վրա, ունենք գլխավորը՝ մեր Նայրենիքի ազատությունը: Մեր հույսն առ Աստված, հավաքով գինված, քրիստոնեական արժեքներին, մեր Սուրբ Եկեղեցուն հավաքարիմ՝ կառուցենք վաղվա լուսավոր օրը: Դեռես քիչ չեն դժվարություններն ու խնդիրները: Մեր կյանքի հրամայականներին պիրի դիմագրավենք եւ բոլոր խոչընդոտները պիրի հաղթահարենք Նայրենիքի հանդեպ նույն սիրով ու պարասխանարվությամբ, լավագույն ծառայությամբ ու հայրենանվեր ազնիվ գործերով, որոնցով եւ ձեռք են բերվել մեր հաղթանակները: Թող մեզ գորացնեն ազատության եւ հայրենի պերականության վերահասարարման մեր անցած ուղին, նաեւ՝ հզոր եւ միասնական Նայրենիքի մեր իղձերն ու րեսիլքները, մեր զավակների, մեր ժողովրդի լուսավոր գալիքի հույսերը, որպեսզի ամեն ժամ ապրենք ու գործենք դրանք մարմնավորելու աներկբա կամքով՝ միասնական ջանքերով հաղթանակի առաջնորդելով նաեւ Լեռնային Ղարաբաղի Նանրապերության միջազգային ճանաչումը: Անվարան ու հասրարուն ընթանալը Տիրոջ ճանապարհներով, եւ «Նա այնպեւ կանի,- ինչպեւ օրհներգում է սաղմոսերգուն,- որ արդարութիւնդ երեւայ, ինչպեւ լոյս, եւ իրաւունքդ՝ ինչպեւ ցերեկ» (Մղմ. Լ.Ձ. 6):

Սիրելիներ, Արցախի նվիրական հողից Նայրապերական Մեր աղոթքը առ Աստ-

ված բարձրացնելով, հայցում ենք, որ Իր Սուրբ Աջի հովանու ներքո խաղաղ պահպանի մեր Նայրենիքը, մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի եւ հանապազ օրհնի ազգիս՝ մարմնավորելու մեր իղձերն ու մեր լուսավոր գալիքը:

Մեր աղոթքն ենք բարձրացնում երկինք հոգիների համար Արցախյան ազատամարտում եւ Երկրորդ աշխարհամարտում զոհված մեր զավակների եւ բոլոր նրանց համար, ովքեր իրենց կյանքով կերպեցին հաղթանակը:

Փառք, բյուր հազար փառք, աշխարհասփյուռ ազգիս հայոց: Փառք Արցախի հերոսական ժողովրդին, Պաշտպանության բանակին: Փառք ու կրկին փառք Նայրենիքը պաշտպանողներին, զորացնողներին եւ շենացնողներին: Թող միշտ ապրեն նրանց բարի գործերը եւ ներշնչեն նոր արարումների, թող սերնդեսերունդ հիշվեն նրանց պանծալի անունները:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ
ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՆ

Մայիսի 5-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրիել Բ. Ծայրագույն Պապրիկարք եւ Ամենայն Տայոց Կաթողիկոսն ընդունեց Ուրուգվայի Արևելյան Տանրապետության արքայաքին գործերի նախարար Լուիս Ալմադրո Լեմեսի գլխավորած պարավիրակությունը:

Ողջունելով նախարարի այցը համայն հայության հոգևոր կենտրոն՝ Նորին Սրբությունը բարի արդյունավորում մաղթեց նրա առաքելությանը: Վեհափառ Տայրապետը գոհունակությամբ անդրադարձավ երկու երկրների միջև առկա ջերմ հարաբերություններին՝ վստահություն հայտնելով, որ նման այցելություններն առավել կխթանեն Տայասարանի եւ Ուրուգվայի միջև ձեւավորված համագործակցությունը՝ ի բարօրություն երկու ժողովուրդների:

Ամենայն Տայոց Կաթողիկոսը, ի դեմս Կիար Լեմեսի, երախտագիտություն հայտնեց Ուրուգվայի իշխանություններին՝ Տայոց Յեղասպանությունն աշխարհում առաջին ճանաչելու եւ դարապարտելու համար:

Իր խոսքում Նորին Սրբությունն անդրադարձավ նաեւ Ուրուգվայի հայոց թեմին եւ հայ համայնքին, որոնք կարևոր դերակատարություն ունեն երկու ժողովուրդների հարաբերությունների սերտացման գործում:

Ուրուգվայի արագորձնախարարը շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար եւ իր հերթին կարևորեց երկու երկրների հարաբերությունների ամրապնդումը: Նախարարը նշեց նաեւ, որ երկու ժողովուրդները կրողն են միեւնույն արժեքների ու սկզբունքների, ինչը կարևոր է հարաբերությունների արդյունավետ զարգացման համար:

ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ:

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՔՈՒՎԵՅԹԻ ՇԵՅԽՈՒՏԻ ՖԱՐԻՆԱ ԱԼ-ԱՏՄԱԴ ԱԼ-ՍԱԲԱՏԻՆ

Մայիսի 13-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրիել Բ. Ծայրագույն Պապրիարք եւ Ամենայն Տայոց Կաթողիկոսն ընդունեց Քուվեյթի շեյխուհի, Քուվեյթի «Օրինակելի մայր» հիմնադրամի նախագահ Շեյխա Ֆարիհա ալ-Ահմադ Ալ-Սաբահի գլխավորած պարվիրակությունը՝ ողնկցությամբ երկու երկրների դեսպանների:

Նանդիպման սկզբում Քուվեյթում ՏՏ արտակարգ եւ լիազոր դեսպան Ֆադել Չար-չոդլյանը ներկայացրեց Շեյխայի այցելության նպատակը՝ նշելով, որ նա բարեգործական մեծ աշխատանքներ է իրականացնում փարբեր երկրներում՝ օգնություն ցուցաբերելով կարիքավոր ընտանիքներին:

Վեհափառ Տայրապետը, ողջունելով Քուվեյթի շեյխուհու այցը համայն հայության հոգեւոր կենտրոն, անդրադարձ կատարեց հայ ժողովրդի կյանքում, ինչպես նաեւ հայ ինքնության պահպանման գործում Տայոց Եկեղեցու ունեցած դերակատարությանը՝ ընդգծելով, որ յուրաքանչյուր հայորդի, որպէսզ Էլ որ նա ապրի, անբաժանելիորեն կապված է Քրիստոսահիմն Ս. Էջմիածնի հետ: Այս խոսելով հայ եւ արաբ ժողովուրդների դարավոր հարաբերությունների մասին՝ Նորին Սրբությունը նշեց, որ դրանք մշտապես հարկանշվել են ջերմ եղբայրությամբ եւ բարեկամությամբ եւ որ դրանքի ընթացքում ձեւավորված գեղեցիկ ավանդույթների արտահայտություններն այսօր Կուեյթի եւ Քուվեյթում:

Վեհափառ Տայրապետն ուրախություն հայտնեց, որ երկու երկրների միջեւ դիվանագիտական արդյունավետ հարաբերություններ են ձեւավորվել, որոնք գնալով ավելի սերտանում ու գործակցային են դառնում: Ամենայն Տայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաեւ Քուվեյթի հայկական համայնքին՝ գոհունակությամբ նշելով, որ ապրելով խաղաղ ու բարօր կյանքով՝ հայորդիներն իրենց կարեւոր ներդրումն են բերում Քուվեյթի կյանքի առաջընթացին: Ի դեմս Շեյխա Ֆարիհայի՝ Նորին Սրբությունն իր շնորհակալությունն ու գնահատանքը հայտնեց Քուվեյթի Էմիրին եւ իշխանություններին՝ հայկական համայնքի հանդէպ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի համար: Վեհափառ Տայրապետն իր մասնավոր շնորհակալությունը հայտնեց նաեւ Շեյխա Ֆարիհային նրա մարդասիրական գործունեության համար՝ ընդգծելով, որ իրականացվող բարեգործությունը բարձր է գնահատվում բոլոր ժողովուրդների կողմից անկախ կրոնական պարկանելությունից:

Նանդիպման ընթացքում Շեյխա Ֆարիհան ուրախություն հայտնեց Տայրապետն եւ մասնավորապես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի այցելելու կապակցությամբ: Իր խոսքում Կրիկին Ֆարիհան նաեւ անդրադարձավ Քուվեյթում առկա կրոնական հանգուրժողականության բարձր մակարդակին, ինչպես նաեւ երկրի փարբեր ոլորտների զարգացման գործում հայության կարեւոր դերակատարությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱԽԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՃԱՊՈՆԻԱՅԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՒ ԼԻԱԶՈՐ ԴԵՍՊԱՆԻՆ

Մայիսի 17-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրելին Բ. Ծայրագույն Պապրիարք եւ Ամենայն Տայոց Կաթողիկոսն ընդունեց Տայասարանի Տանրապետությունում Ճապոնիայի արքայակարգ եւ լիազոր դեսպան Տիկահիլո Տարադային:

Տանդիպմանը Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց երկու երկրների միջև համագործակցության առավել սերտացման նպատակով ձեռնարկվող քայլերի համար՝ վստահություն հայտնելով, որ այդ գործակցությունից փոխադարձ դրական արդյունքներ կարձանագրվեն: Վեհափառ Տայրապետն իր գնահատանքը հայտնեց Ճապոնիայի ժողովրդին՝ Տայասարանին ցուցաբերվող գորակցության համար:

Զրույցի ընթացքում անդրադարձ կատարվեց նաև անցյալ տարի ողջ աշխարհի ցնցած ողբերգությանը՝ Ճապոնիայի երկրաշարժին եւ դրա տուժալի հետևանքներին: Այս առնչությամբ Ճապոնիայի դեսպանը շնորհակալություն հայտնեց Ամենայն Տայոց Տայրապետին՝ դժվարին այդ օրերին հայ ժողովրդի եւ Տայոց Եկեղեցու սրտակցության, ինչպես նաև ի հիշարակ գոհվածների կազմակերպված աղոթքի արարողության համար:

Նորին Սրբությունը մաղթեց, որ Ճապոնիան շուրափույթ հաղթահարի աղերքի հետևանքները եւ ինչպես Ճապոնիայի ժողովուրդը, այնպես էլ ամբողջ աշխարհի զերծ մնան նման ողբերգություններից:

ԱՄՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ
ՏԵՐԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՍԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՍԵՆԱՏԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Մայիսի 26-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրելին Բ. Ծայրագույն Պապրիարք եւ Ամենայն Տայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Սենատի անդամներ Ֆիլիպ Մարինին, Սոֆի Ժուսսենին եւ Բերնար Ֆուրնիլին:

Ողջունելով սենատորների այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Վեհափառ Տայրապետը շնորհավորեց նրանց նոր նախագահի ընտրության կապակցությամբ՝ մաղթելով, որ նրա առաքելությունն արդունավեր ու արգասաբեր լինի ի բարօրություն Ֆրանսիայի ժողովրդի:

Անդրադառնալով երկու երկրների հարաբերություններին՝ Նորին Սրբությունը նշեց, որ հայ ժողովուրդն առանձնակի ջերմություն է տածում ֆրանսիացիների հանդեպ, քանի

որ դժվար պահերին նրանք մշտապես գորակից են եղել մեր ժողովրդի զավակներին և հանդես եկել նրանց իրավունքների պաշտպանությամբ: Խոսելով Ֆրանսիայի հայկական համայնքի մասին՝ Ամենայն հայոց Կաթողիկոսն իր մասնավոր շնորհակալությունը հայտնեց Ֆրանսիայի իշխանություններին՝ համայնքին հոգևոր և մշակութային կյանքով լիարժեքորեն ապրելու հնարավորություն ընձեռելու համար:

Պատվիրակության ղեկավար սենատոր Ֆիլիպ Մարինին իր հերթին անդրադարձավ հայ-ֆրանսիական հարաբերություններին՝ ընդգծելով, որ դրանք աչքի են ընկնում բարձր մակարդակով: Պրն. Մարինին կարևորեց նաև հայկական համայնքի դերն ու նշանակությունը Ֆրանսիայի զարգացման գործում՝ նշելով, որ երկրի քաղաքներում առկա հայկական եկեղեցիներն ու մշակութային շատ արժեքներ Ֆրանսիայի անբաժան մասն են կազմում: Սենատորները նաև ներկայացրին Լեռնային Ղարաբաղի հանրապետություն կարարած իրենց այցի փրավորությունները՝ մասնավորաբար ընդգծելով, որ այսօր Արցախում ակնհայտ է խորը քրիստոնեական արմատներ ունեցող ազգային մշակույթի և ինքնության վերածնունդը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳ

ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

ԳՈՌ ՄԱՐԿԱՎԱԳ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

ԱՆԱԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԹԵ ԱՊԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԱԿԱՆ

ՄՈՏԵՅՄԱՆ ՈՒՐՎԱԳԻԾ

Նայոց Եկեղեցին Բաբկեն Կաթողիկոսի օրոք բացորոշ կերպով անցավ միաբնակների կողմը: Այդ ժամանակ, սակայն, Ասորական Միաբնակ Եկեղեցին դեռևս մի միություն էր կազմում: Այդ իսկ պարզաբանում Նայոց Եկեղեցու համար դեռ հարց չէր կարող լինել, թե միաբնակ ո՞ր կուսակցությանը պետք է հարի: Ինչպես գիտենք 451 թ. Քաղկեդոնում կայացած ժողովը, չունենալով հստակ մշակված եզրույթաբանություն, Քրիստոսի եկեղեցուն առաջացրեց ճեղքվածք, որը դարեր գոյատևելով, ցայսօր անհաղթահարելի է մնում: Քաղկեդոնի ժողովը դուռ բացեց քրիստոնեական այլևայլ վեճերի ու սակարկումների առջև, որոնց շարքում առանձնահատուկ տեղ է գրավում Զ. դարասկզբում Անտիոքի պապրիարք Սևերիոսի և Նալիկառնասի եպիսկոպոս Նուլիանոսի միջև ծավալված վեճը, որը սկիզբ առավ Ասորի Միաբնակ Եկեղեցու ծոցում, սակայն կարևոր նշանակություն ունեցավ նաև Բյուզանդական և Նայոց եկեղեցիների քրիստոսաբանական մարքի ընթացքի համար: Նշանավոր այդ վեճի առարկան Տիրոջ մարմնի՝ անապական կամ ապականացու լինելու խնդիրն էր, որը չափազանց մեծ նշանակություն է ունեցել մեր Եկեղեցու հայրերի համար: Բավական է նշել, որ Նայոց Եկեղեցու հայրերի քրիստոսաբանական գրեթե բոլոր երկերում անապաման անդրադարձ է կատարվել այս խնդրին: Տիրոջ մարմնի անապանականության մասին վարդապետությունը իր կնիքն է դրել Նայ Եկեղեցու ծիսական կյանքի վրա, առաջին հերթին նկատի ունենք անթթիմոր հացի և անապակ գինու պարագան, որ պեսամենի արարահայությունն է այդ ուսմունքի՝: Խնդիրը բարդանում է նաև, երբ որոշ հեղինակներ (օր.՝ Ե. Տեր-Մինասյան, Ա. Աննինսկի, Ի. Տրոիցկի) փորձում են Նայ Եկեղեցու վարդապետությունը ներկայացնել որպես հույանական: Այդպիսի մեղադրանքներ կարող են հնչել նաև այսօր՝ Օրթոդոքս Եկեղեցու որոշ աստվածաբանների կողմից: Փորձենք ներկայացնել Սևերիոսի և Նուլիանոսի պե-

1 Տե՛ս Նինա Գաբրյան, Նաղորդության սուրբ բաժակի անապակ գինին Նայոց Եկեղեցում. «Էջմիածին», 2010, է. էջ 22:

սակերները, ճշարել Հայ Եկեղեցու հայրերի՝ Կալիստոսի խնդիրն առնելով վարդապետությունը և այն համեմատել Օրթոդոքս Եկեղեցու դիրքորոշման հետ: Հայ Եկեղեցու վարդապետությունը շարադրելիս օգտվել ենք Խոսրովիկ Թարգմանչի և Ս. Նովիան Օձնեցու երկերից: Պակաս կարևոր չեն նաև Ս. Ներսես Շնորհալու և Ս. Գրիգոր Տաթևացու քրիստոսաբանական գրվածքները: Օրթոդոքս Եկեղեցու վարդապետությունը ներկայացնելիս հիմնվել ենք Մաքսիմոս Խոստովանողի և Նովիան Դամասկացու հայացքների վրա, քանզի Օրթոդոքս Եկեղեցու մեծամասնությունն այս հայրերի շնորհիվ քաղկեդոնական դավանանքը բյուրեղացավ, ավարտուն տեսք ստացավ և համաձայնեցվեց կյուրեղյան քրիստոսաբանությանը:

518 թ. Ալեքսանդրիա աքսորված Սեներիոսը ու Նուլիանոսը, վեճի բռնկվելիս մի հարցի շուրջ. Տիրոջ մարմնին անապական է եղել, թե՞ ապականացու: Ըստ Նուլիանոսի՝ այն անապական էր, ըստ Սեներիոսի՝ ապականացու²:

«Ապականություն» եզրը ունեցել է 2 իմաստ.

ա) մահվանից հետո մարմնի քայքայում, փայտում

բ) մեղքի հետևանք դիպվող մարդկային կրքերը՝ քաղց, ծարավ, հոգնածություն և այլն, որոնցով բնորոշվում է մեր անկյալ բնությունը:

Բանավեճի մեջ խոսքը ապականության այս վերջին իմաստի մասին է: Մի՞թե մարմնացյալ Աստված կրել է այդ կրքերը: Եթե այո, ապա Քրիստոսի մոտ ինչպիսի՞ բնույթ են դրանք ունեցել, և արդյոք արտահայտվել են այն օրինաչափություններով, ինչպես աղանդողիներին յուրաքանչյուրի մոտ: Գրականության մեջ արմատավորված է այն կարծիքը, թե ըստ Սեներիոսի, Տերը բնության բնադադարվածությամբ, «ի հարկե» կրել է մարդկային տկարությունները, իսկ Նուլիանոսը ժխտել է Տիրոջ կրած տկարությունների իրողությունը՝ դրանք «առ աչօք», երևութական համարելով³: Սակայն այս կարծիքը չի համապատասխանում իրականությանը. Սեներիոսը հարուկ կերպով շեշտել է, որ Տերը կամավորապես է ենթարկվել կրքերին, ինչը որ պնդել են ոչ միայն Նուլիանոսը, այլև Բյուզանդական և Հայ Եկեղեցու հայրերը⁴: Ինչ վերաբերում է Նուլիանոսին, ապա նրա երկերում նշույն անգամ չկա այն կոպիտ երևութականության, որ վերագրում են իրեն. քնդհակառակը, Նուլիանոսն էլ իր հերթին շեշտել է, որ Տիրոջ տկարություններն ըստ ամենայնի իրական են եղել⁵: Ուրեմն, ո՞րն է այս երկու աստվածաբանների հայացքների տարբերությունը: Սեներիոսի համար Տիրոջ կամավոր կիրքնությունությունը չի նշանակում կրքերի հակաբնական բնույթ, մինչդեռ Նուլիանոսի համակարգում Քրիստոսի կրքերը բնորոշ չեն նրա մարդկությանը: Այլ կերպ ասած, դրանք դրված չեն Տիրոջ մարդկային բնության մեջ, այլ աստվածային կամքն է, որ անկիրք մարդկությանը նրա համար անբնական վիճակներ է պարտադրում: Նուլիանոսը, թեպետև հռչակում է Տիրոջ մարմնի համագոյությունը մեզ, սակայն այս կերպով, փաստորեն, ժխտում է այդ համա-

2 Տե՛ս **В. В. Болотов**, *Лекции по истории Древней Церкви*, т. IV, Москва, 1994, էջ 343:

3 Տե՛ս «Միխայելի Աստուրցի Պատրիարքի Ժամանակագրություն», Երուսաղեմ, 1871, էջ 252

4 Տե՛ս **Б. М. Лурье**, *История византийской философии*, СПб., 2006, էջ 181-191:

5 **J. Lebon**, *Monophysisme Sévérien*, Lovonii, 1909, էջ 242-292:

գոյությունը, քանզի սրացվում է, որ Քրիստոսին բնորոշ չեն էական այն երևույթները, որոնք բնորոշ են մեզանից յուրաքանչյուրին: Անշուշտ, եկեղեցագիտությունը մեծ է յուրջ անելիք ունի՝ Նույնանոսի և Սևերիոսի վեճի էությունը կազմող խնդիրը երևան հանելու գործում, բայց եթե նշված վերջին պնդմանը իրավացի է, ապա հենց Տիրոջ կրքերի բնականության հարցն է զարթոնում հույանականության և ուղղափառության սահմանը: Նկատի առնելով այս հանգամանքը՝ Նայոց Եկեղեցու հայրերի դիրքորոշումը շարադրելիս հապուկ ուշադրություն պիտի դարձնենք այս խնդրի լուսաբանմանը՝ նրանց քրիստոսաբանական համակարգերում:

Խոսքովի վարդապետը կտրականապես մերժում է հույանյան այն պնդումը, թե Տերն ընդունել է Ադամի նախասպանությունը, որը գերծ էր նաև անանգոսնելի կրքերից⁶: Խոսքովիքը սրա փակ թաքնված մարդամերժություն է պնդում և հասարակում է, որ անանգոսնելի կրքերը ոչ թե մեղսագործության հետևանք են, այլ Աստծո կողմից են ի սկզբանե ներդրվել մարդու մեջ: Կրքերն իրենց բնությամբ չեզոք են եղել, և Ադամն իր ինքնիշխան կամքով պիտի դրանք ի բարին ուղղեր, բայց սրացվեց հակառակը...

Բանն Աստված, մարդանալով, ընդունեց մարդկային բնությունը՝ իրեն բնորոշ անանգոսնելի կրքերով, որոնք Խոսքովիքը «բնատրականք» է կոչում և բաժանում հոգեկանների (տրամություն, երկյուղ, անգիտություն և այլն) և մարմնականների (քաղց, ծարավ, բուռն և այլն)⁷: Տերը, ինչպես որ էությունական որևէ փոփոխության չենթարկեց իր մարդկությունը, այնպես և կրքերը չհեռացրեց իր մարմնից. «Եւ որպէս ոչ երարձ կամ փոխեաց Աստուածն Բան գկնի անբակ միատրութեանն զմարմինն, ըստ նմին և զբնատրականն ոչ երարձ իրմէ մարմնոց, զոր ի Կուսէն»⁸: Ըստ Խոսքովիի՝ կրքերը վերաբերում են ոչ թե ապականությանը, այլ՝ չարչարության ոլորտին, իսկ ապականությունը նա հասկանում է միայն մարմնի քայքայման իմաստով: Խոսքովիքը մահն ընկալում է որպես անբնական, բայց աստվածադիր իրողություն, մինչդեռ ապականությունը մարդկային բնության մաս չի կազմում՝ մարմնին չգոյության առաջնորդելով: Արդ, Տերն իր մարդեղության ժամանակ վերցրել է աղամորդու չարչարելի և մահկանացու բնությունը:

Ս. Կույսի արգանդում երկու բնության միության առաջին իսկ ակնթարթից մարդկային բնությունն աստվածացել է՝ հաղորդակից է դարձել աստվածային փառքին, հարստացել է աստվածային ներգործություններով: Միավորության շնորհիվ աստվածային ինչ-ինչ սպորտգելիներ վերագրելի են Տիրոջ մարմնին: Այսպես, Տիրոջ մարդկային բնությունն առանձին, վերացականորեն վերցված (*in abstracto*) առմիշտ չարչարելի և մահկանացու է, բայց Բանի հետ միավորվածության շնորհիվ՝ հավիպյալն անմահ, կենդանաբար և անչարչարելի: Այստեղանդերձ, որևէ կերպ չի կարելի Տերունական մարմինը կոչել Աստվածությանը համագո, անեղ, անծին, անսկիզբ, անբովանդակելի և այլն: Կուսական ծննդյան և մարմնի աստվածացման շնորհիվ իրականում (*in concreto*)՝ Տերը

6 Անդ, էջ 248-249:

7 Տե՛ս «Միխայելի Ատրոց Պարթիարքի Ժամանակագրություն», էջ 248-249:

8 **Գարեգին Վ. Յովսեփեան**, Խոսքովի Թարգմանիչ և երկասիրությունը նորին, Վաղարշապատ, 1903, հ. Ա, էջ 55:

գերծ էր կրքերի պարպադրանքից, Տիրոջ կամքը նախորդել է կրքերի դրսևորմանը: Տերը, երբ կամեցավ, թույլ տվեց, որ մարմինն ըստ իր օրենքների, կապարի իրենը: Այնպիսի երևույթներ, ինչպիսիք են փակ դռներով մտնելը կամ ջրի վրայով քայլելը, ոչ թե մարդկային բնությանն են յուրահատուկ, այլ աստվածային ներգործության հետևանք են: Տիրոջ մարմինը բովանդակալի, շոշափելի, քրեանելի է, և այս ստորագրելիները վերագրելի են նրան Հարությունից հետո, այլապես կստացվեր, թե Հարությունից հետո Տերն իր մարմինն անմարմնության փոխեց, և Հոր աջ կողմում նստել է ոչ թե մեր բնությունը, այլ ինչ-որ ուրիշ բան: Այսպես հարկ է նշել, որ եթե Մեներիտը ջանում էր վերացնել մարդկային և աստվածային բնությունների բանական պարբերությունները, ապա Հուլիանոսն ավելի առաջ գնաց, անսպանականության իր վարդապետությամբ նա փորձեց վերացնել նաև բնությունների որակական պարբերությունները: Այս լույսի ներքո հասկանալի է դառնում, թե ինչու է Ս. Հովհան Օձնեցի Հայրապետը երևութականության հերքումն սկսում «Մի է բնութիւն...» բանաձևի ուղղափառ ընկալման շարադրությամբ: Հայրապետը չի խաբվում նրանով, որ մի շարք այլ համայնքներ գործածում են «անհանգիստ» այդ բանաձևը, քանզի քաջ գիտակցում է, որ լույս գործածումը դեռևս ուղղափառության երաշխիք չէ: Նա քննում է ապոլինարականների, եսոփեսականների, հուլիանականների և այլոց՝ այդ բանաձևի մեկնաբանությունները, և բացահայտում է դրանց հերքելիքսական բնույթը:

Ըստ Ս. Հովհանի՝ միավորության մեջ Տիրոջ բնություններից որևէ մեկը ոչ մի փոփոխություն կամ այլայլում չի կրում. Քրիստոս կապարյալ Աստված է և կապարյալ մարդ, այսինքն՝ նա ունի երկու բնություն: Բայց այս բնություններն այնքան անբաժանելի են, որ նկարի ունենալով անճառելի միությունը, կարող ենք կիրառել «Մի է բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ» բանաձևը, որով մենք պարզապես շեշտում ենք բնությունների միությունը, այլ ոչ թե՝ մեկությունը, քանզի բնությունները միացել են ոչ միայն անբաժանելիորեն, այլև՝ անշփոթաբար: Ըստ Հովհան Օձնեցու՝ Քրիստոս ըստ էության ունի երկու բնություն, բայց մեկ՝ ըստ միավորության: Նա գրում է, որ հարկ է «զմին ասելով՝ յիշել և գառ ի յերկույն և դարձեալ՝ ոչ մոռանալով գերկույն, խոստովանել և զմին»⁹: Ահա այսպես պետք է հաստատել Տիրոջ մարդեղության լիարժեքությունն ու իրականությունը, ամբողջականությունը: Խոսքովիկի պես Ս. Հովհանը եւս պնդում է, որ անանգոսնելի կրքերը ապականություն չեն, և որ դրանք, որպես չեզոք երևույթներ, ի սկզբանե, մեղսագործությունից առաջ էլ եղել են Ադամի մոտ: Այս դրույթը Հովհան Օձնեցին հիմնավորում է՝ համապարասխան օրինակներ բերելով Ծննդոց գրքից: Կրքերը ոչ թե մարդուն խորթ ու հակառակ երևույթներ են, այլ՝ «որակք ոմանք, և որակութիւնք մարդկայնոյս պարշաճեալ գոյացութեան»¹⁰: Հովհան Օձնեցին կրքերը հասկանում է, որպես մարմնի և հոգու բնական պետքեր: Տերը ինքնակամ կերպով, «ըստ կարգի մարմնոյ իւրոյ» կրել է բնական այդ կրքերը, որոնք, սակայն, իշխանություն չեն ունեցել Քրիստոսի վրա այն իմաստով, որ Տիրոջ կամքից անկախ, բռնի կերպով կարողանային դրսևորվել, այլ

⁹ «Յովհաննու Իմաստասիրի Աձնեցոյ Մարենագրութիւնք», Վենետիկ, 1853, էջ 70:

¹⁰ Անդ, էջ 86:

ծիշար հակառակը. Տերը, երբ կամեցել է, թույլ է տվել, որ մարմինը կապարի իրենը: Քրիստոս, թեպետև ի գործ էր իր մարդկությունից հեռացնել, վերացնել կրքերը, սակայն թույլ տվեց, որ մարմինը բնականորեն կրի իրեն բնորոշը: Այսպիսով, ըստ Նովիան Օձնեցի Նայրապետի, Տերը իրապես, իր մարդկության բնական, բնութենական օրենքների համաձայն կամավորապես կրել է նույնքան բնական անանգոսնելի կրքերը: Նա դարապարպում է որևէ վորձ՝ գուգահեռներ կապարելու Բանի՝ Աբրահամի մոտ ճաշակելու, Նակորի հեղ մենամարտելու և մարմնով կրքերը կրելու միջև, քանզի Նին Կրակարանում Բանի ճաշակումը լոկ երևույթ էր, իսկ նորում՝ աներկբա իրականություն:

Նովիան Օձնեցին կարևոր է համարում նաև ճշարել, որ կրքերը վերաբերում են ոչ թե Տիրոջ Աստվածությանը, այլ՝ մարդկությանը: Աստված ոչ թե ուղղակիորեն է չարչարվում, այլ՝ մարմնի միջնորդությամբ: Անչարչարելին չարչարվում է չարչարելիով, Անմահը մահանում է մահկանացուով, Անկիրթը կրքերը կրում է կիրքնդունակով: Աստվածն կարող ենք չարչարված, իսկզված ու մահ ճաշակած կոչել՝ միմիայն նկարի ունենալով բնությունների անբակ (ինչպես նաև անշվոթ) միությունը:

Ս. Ներսես Շնորհալին, ներկայացնելով Նայոց Եկեղեցու քրիստոսաբանությունը, գրում է, որ Բանն ընդունել է Ադամի հեղմեղանչական, այսինքն՝ կիրքնդունակ բնությունը, քանզի Ամենասուրբ Աստվածածինը նույն բնությունից է: Բանի՝ մարմնի հեղ անճանելի միավորության շնորհիվ Տիրոջ մարդկային բնությունը հաղորդակից է դարձել Աստվածայինին, այդ իսկ պարճառով Տիրոջ մարդկությունը գերծ է եղել անգոսնելի, մեղսական կրքերից ու մեղքից, ինչպես նաև կրքերի բռնադարավածությունից:

Տիրոջ երկրավոր կյանքն սկսվել է անապանականության կուսական ծննդյամբ¹¹ և ավարտվել նույնպես անապականությամբ, որովհետև գերեզմանում «Մարմին նորա ոչ երես ապականութիւն» (Գործք. Ա. 31): Քրիստոսի մարմինն ինքնստիքյան չէ, որ անապական ու անմահ է, այլ Բանի հեղ միավորվածության շնորհիվ: Ներսես Շնորհալին վկայակոչում է Ս. Աթանասի այն միպրքը, որ Տիրոջ մարմինն ունի այն բոլոր հատկությունները (բացի մեղքից), ինչ որ մերը: Տիրոջ մարմինը չարչարելի է և թանձր, թեպետև Աստվածությունն իր մարմինը կարող էր այնպես թեթև ու թափանցիկ դարձնել, որ կարողանար քայլել ծովի վրայով կամ փակ դռներով առաքյալների մոտ մտնել: Այս առումով ոչ թե Տերն է ծառայել բնության օրենքներին, այլ վերջիններս են ծառայել իրենց Տիրոջը: Ներսես Շնորհալին չի վարանում Տիրոջ մարմինը՝ մարդկային անանգոսնելի կրքերը կամավորապես կրելու իմաստով «ապականացու» կոչել, բայց դարապարպում է նրանց, որոնք Քրիստոսի մարմինն այդպիսին են անվանում անանգոսնելի ու ակամա կրքերին ենթակա լինելու իմաստով¹²: Ներկելով հայ քրիստոսաբանական ավանդույթին՝ Ս. Գրիգոր Տաթևացին «ապականութիւն» եզրի տակ հասկանում է երկու իրողություն.

ա) կրքերի հարկադրական ներգործություն

բ) մարմնի ֆիզիկական քայքայում

11 Տե՛ս «Ձայնբաղ Շարական», հայր. Բ., Վաղարշապատ, 1888, էջ 253:

12 Տե՛ս «Թողթ Ընդանրական Ներսիսի Շնորհալոյ», Էջմիածին, 1865, էջ 88-93:

Եռամեծ վարդապետը համաձայնում է Տիրոջ մարմինը մահկանացու ճանաչել, բայց ոչ երբեք՝ ապականացու: Նա մաքառում է Քրիստոսի մարմինն ապականացու խոստովանողների դեմ, որովհետև Տիրոջ մարդկային բնության ազապագրումն ապականության ճիրաններից համարում է աստվածացման (փառավորման) արգասիք: Ներկաբար, ըստ Ս. Գրիգոր Տաթևացու, Տիրոջ մարմինն ապականացու խոստովանելը մինչև Նարություն նշանակում է բնդունել, որ նրա մարդկային բնությունն աստվածացել է ոչ թե Ս. Կույսի արգանդում, այլ՝ Նարությունից հետո (այսպիսի մտքեր ունի Լեոն Բյուզանդացին), ինչը, անշուշտ, բացահայտորեն հակասում է Նայ Եկեղեցու ուղղափառ դավանանքին:

Մարդեղության ժամանակ Տերը վերցրել է Ադամի մեղանշական բնությունը¹³, որը մեր բնությունն է: Անապական հղիության առաջին իսկ ակնթարթից, երբ Աստվածությունը միացավ մարդկությանը, Քրիստոսի հոգուց բաժանվեց ու վերացավ մեղքը, իսկ մարմնից՝ ապականությունը, ճիշտ այնպես, ինչպես որ հուրը, ոսկուն միանալով, ոչնչացնում է ժանգը: Մարմնի աստվածացմամբ նորոգվում է մարդկային բնությունը. «Դարձնալ ասեմք, թե ոչ գառաջին բնութիւն Ադամայ Էառ, այլ զապականացուս մեր ի զանգուածոյն Ադամայ: Այլ միառերեւոյ բնոյ ինքեան՝ Էհան յառաջին անմեղ եւ անապական բնութիւն Ադամայ: Եւ վասն այն Աստուած մարդ եղև զի յառաջին փառս եւ որպիսութիւն զմեզ հանցէ»¹⁴: Ինչպես իրեն նախորդած եկեղեցական հայրերը, Գրիգոր Տաթևացին նույնպես չի բնդում, որ կրքերը ապականությանն են վերաբերում, եւ որ Եդեսում նախաստրելծր դրանք չունեն: Գրիգոր Տաթևացին կրքերը դիտում է որպես բնական երևույթներ. «Եւ ասին սոքա բնականք զի նախքան զյանցանելն ի դրախորին բնառարապէս գոյին առ Ադամ: Եւ սոքա են անանգոսնելի կիրք: Եւ զայսոսիկ կարարեաց Քրիստոս. զի սրեղծուած էր ինքեան»¹⁵:

Իր գրչի մանրագնությամբ Ս. Գրիգոր Տաթևացին կրքերը բաժանում է բնականների եւ եկամբականների (եկամբական կրքերն են՝ մեղքը, մահը եւ ապականությունը), կամավորների եւ ակամանների, օգտակարների ու անօգուտների: Այսպիսով, Գրիգոր Տաթևացին, ելնելով հակաունիթորական պայքարի հրամայականներից, խորանում է մանրամասնությունների մեջ եւ առաջ քաշում պնդումներ, որոնք, թերևս, հարկ է համարել նրա անհարական կարծիքներ: Այսպես, օրինակ, Տերը կղկղանք (ծորում) չի ունեցել, քանզի թեպետ դա անանգոսնելի, սակայն անօգուտ կիրք է¹⁶: Ջանալով հիմնավորել այս պնդումը՝ հայոց եռամեծ վարդապետը փորձում է զուգահեռներ անցկացնել Բանի՝ Աբրահամի մոտ եւ առաքյալների հետ, ճաշակելու միջև, մի բան, որ ինչպես Կեսանք, դարապարպում էր Նովիան Օմնեցին: Այս ամենի հետ մեկտեղ, սակայն, պետք է փաստել՝ Ս. Գրիգոր Տաթևացու մոտ Կեսանում ենք Տիրոջ մարմնի անապականության մասին մեր ուսմունքի թեկուզ ամփոփ, բայց միանգամայն համակարգված ու կոռ

13 Տե՛ս Արշակ Տեր-Միքելյան, Նայասարանյայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնեականը, Ս. Էջմիածին, 2007, էջ 182:

14 Գրիգոր Տաթևացի, Գիրք Նարեմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 500:

15 Ամդ, էջ 496:

16 Տե՛ս Գրիգոր Տաթևացի, Ոսկեխորիկ, Երևան, 1995, էջ 168:

կադապարը: Քննելով այն հարցը, թե Տիրոջ հոգու և մարմնի ասարվածացման շնորհիվ որակական ինչպիսի փոփոխությունների է ենթարկվել նրա մարդկությունը՝ Տաթևացին ասում է, որ ադամորդիներս ունենք երեք հոգեկան և չորս մարմնական թերություն: Առաջին երեքն են՝ արգիւթությունը, մոռացումը և փոքրությունը, իսկ մնացյալ չորսը՝ չար-չարելիությունը (անանգոսնելի կրքեր՝ չարչարանք, մահ և ապականություն), սեւությունը, ծանրությունը ու թանձրությունը: Այս ամենը վերացել է Տիրոջ հոգուց և մարմնից մարդեղության առաջին իսկ պահից: Խոսելով վերջին չորսի մասին՝ Գրիգոր Տաթևացին գրում է. «Եւ այս գիտելի է, զի Տէր մեր Քրիստոս նախքան զյարութիւն զգործսին զայս եցոյց ի մարմին իւր: Զթափանցութիւն՝ զի կուսութեամբ ծնաւ, զթերեւութիւն ի վերայ ծովուն և յարկուն լերին, զպայծառութիւն ի Թափոս լեւոն և զանչարչարութիւն ի յօրհնել զմարմինն իւր և Կալ աշակերտացն ի վերնաբունն՝ անչարչարելի էր մարմինն Քրիստոսի ներգործութեամբ և գործութեամբ»¹⁷: Մինչև և հրաշափառ Հարությունը Տիրը ծածկյալ էր պահում իր Ասարվածությունն ու ասարվածացած իր մարմնի սքանչելի այս հարկությունները, սակայն Հարությունից հետո այլևս չմնաց ոչ մի սահմանափակման մեջ, որոնցում նա ինքն իրեն դրել էր փնտրելիական նպատակներով ու բացորոշ ցույց տվեց իր Ասարվածությունը¹⁸:

Այսպիսով, Ս. Գրիգոր Տաթևացու համակարգի յույսի օգնությամբ վերլուծելով Հայ Եկեղեցու ուսմունքը այս խնդրի վերաբերյալ՝ կարող ենք եզրակացնել, հայ եկեղեցական հայրերը կարծում են, որ անանգոսնելի կրքերը ոչ թե ապականությանն են վերաբերում, այլ բնական երեւոյթներ են, և, որպես այդպիսիք վերագրելի են Տիրոջ մարմնին՝ բայց միայն բնությունների միությունից առաջ: Մարդեղությունից հետո կրքերը միայն վերացարկմամբ (in abstracto) են բնորոշ Տիրոջ մարդեղությանը, բանգի այն, Ասարվածացման շնորհիվ ազատ է եղել դրանցից: Այնուամենայնիվ, Տիրը կամավորապես կրեց դրանք: Տիրոջ կամքը մշտապես նախորդել է դրանց դրսևորմանը: Տիրոջ մարմինը հավիտյանս անապական, անչարչարելի և անմահ է Ասարվածության հետ միության շնորհիվ: Եթե Տիրն իր երկրային կյանքի ընթացքին մնացել է ֆիզիկական պարամետրերի շրջանակներում, ապա միայն՝ կամավորապես, և ոչ թե մարդկային բնության սահմանափակվածության ու բնադարվածությամբ:

Նշենք կարևոր այն եզրակացությունները, որոնց հանգեցինք.

ա) Մինչև այժմ բավարար կերպով լուսաբանված չէ, թե Հուլիանոսի և Սեդրիոսի հայացքներն ինչով էին տարբերվում իրարից և ուղղափառ դավանանքից: Վերջինիս պարագային հավանական էր թվում մի կարծիք, ըստ որի, հուլիանականության-ուղղափառության սահմանն այն հարցն էր, թե անանգոսնելի կրքերը բնորոշ էին Տիրոջը, թե ոչ:

բ) Վերլուծելով հայ եկեղեցական հայրերի հայացքները՝ ցույց տվեցինք, որ նրանք տարբերակում են Տիրոջ մարդեղության երկու կարգավիճակ՝ միությունից առաջ և հետո: Առաջին կարգավիճակով Տիրոջ մարմինը մեղանչական, ապականացու և մահկանացու է, բայց երկրորդով՝ անմահ, անմեղ և անապական: Այսինքն՝ միությունից հետո

¹⁷ «Գիրք Հարցմանց», էջ 722-723:

¹⁸ Տե՛ս Աղան Բահանա Մակարյան, Քրիստոնեության իսկությունը, Սուրբ Էջմիածին, 2011, էջ 32-33:

անանգոսնելի կրքերը բնորոշ չէին Տիրոջ անչարչարելի մարդկությանը, բայց նա կամավորապես կրեց դրանք: Տեսանք, որ նույնն էր ասում Ս. Մաքսիմոսը:

գ) Նայ Եկեղեցու հայրերը, ի փարբերություն բյուզանդական ավանդության, անանգոսնելի կրքերը կոչել են ոչ թե ապականություն, այլ՝ բնական երեւոյթներ: Թեպետեւ այս փարբերությունը զուր եզրութաբանական է, սակայն կարեւոր բանալի է՝ հասկանալու մեր հայրերի քրիստոսաբանական միտքը:

դ) Ըստ Նայ Եկեղեցու հայրերի՝ Տիրոջ կամքը յուրաքանչյուր անգամ նախորդել է այս կամ այն կրքի դրսեւորմանը: Նույն են պնդում նաեւ Բյուզանդական Եկեղեցու հայրերը: Սրանով հերքվում է Վ. Բոլորովի այն պնդումը, թե հուլիանականության-ուղղափառության սահմանակետը հետեւյալն է, ըստ Նուլիանոսի՝ Քրիստոսն ամեն անգամ կամեցել է կրել այս կամ այն կիբքը, մինչդեռ, ըստ ուղղափառ դավանանքի՝ նա, մի անգամ կամենալով կրել կրքերը, մտել է դրանց անհրաժեշտական ներգործության ոլորտ եւ փաստորեն «ի հարկէ» կրել դրանք:

ե) Ըստ հայ եկեղեցական հայրերի՝ Տիրոջ մարմնի որակական փոփոխությունները հետեւանք են նրա մարդկության աստվածացման, որ Կրեղի ունեցավ հղիության առաջին իսկ ակնթարթից: Ու թեեւ նրանք գրեթե ոչինչ չեն ասում Նարությունից հետո Տիրոջ կիրքնդունակության մասին, սակայն ինքնին հասկանալի է, որ Նարությունից հետո Տերը չի կրել նույնիսկ անանգոսների կրքերը, ավելին, Նարությունից հետո Տերն իր մարմինը երեւացրեց այնպես, ինչպիսին էր հղիության առաջին իսկ պահից:

ՊԱՏԱՐԱԲԱՆԱԽԻՐԱԿԱՆ

Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՔԵՂԱ ՆԱՄԱԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՄԱՅԻՍՅԱՆ ՈԳԻՆ՝ ՆԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՒ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

«Մի՞թե մենք չպիտի կարողանանք պահպանել մեր օջախի կրակը,
մեր հավատի ջահը, մեր ազգային գոյի հիմքերը»:

ԳԵՒՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Բասարիկի գրավումից առաջ Փարիզում մեծ տարածում էին գրել հայերնի փիլիսոփա Վոլտերի հետևյալ խոսքերը. «Որքան երկար ենք ապրում մեր անհաջողություններով, այնքան դրանք ավելի զորավոր են դառնում մեզ վնասելու համար»¹: Խոսքեր, որոնք Ֆրանսիայի ողջ ժողովրդին՝ ազնվական թե ռամիկ, հարուստ թե աղքատ ուրբի հանեցին Կլուբի ունեցող հասարակական անարդարությունների դեմ և ուժ փոխեցին՝ պայքարելու միասնական բռնափրկության դեմ: Եթե Ֆրանսիայում խնդիրն առնչվում էր պարզապես բնկերային անարդարությանը, ապա նույն շրջանում Նալասարանի և՛ արևելյան, և՛ արևմտյան հարվածներում հայ ժողովուրդը ենթարկվում էր անասելի դաժանությունների հարեւան երկրների՝ հարկապես Թուրքիայի կողմից: Ավելի քան մեկ դար անց հայ ժողովուրդը՝ Սարդարապատի և Մայիսյան հերոսամարտերի օրինակով վերջնականորեն պիտի կայացներ՝ ուժով պայքարելու և ազատվելու ազգային բնաջնջումից: Ըստ էության, Սարդարապատը հայերի պարասխանն էր Նալոց Եղեռնի իրագործած թուրքերին՝ առ այն, որ անհնար է հային բնաջնջել, երբ նա, զորացած իր Մայր Եկեղեցու հավատով և ամրացած ազգային գիտակցությամբ, ելնում է իր բնախնդրի ու երկիրը պաշտպանելու:

Այս հողվածում պիտի փորձենք Եկեղեցու և պետության փոխհարաբերությունների փեսանկյունից հակիրճ ներկայացնել Մայիսյան հերոսամարտերին նախորդող և հաջորդող որոշ մանրամասնություններ, որոնք, կարելի է ասել, կենսական նշանակություն ունեցան «Մայիսյան» ոգու արթնացման ու պահպանման առումով:

1 Voltaire in “Bastille Day inspiration”, (ed. Shenindorf, London, 1928), p. 20.

1918 թվականի գարնանը Անդրկովկասի ողջ տարածաշրջանում Դեմոկրատական Դաշնակցային Հանրապետության (ԱԴԴՀ) մաս կազմող երեք ազգերի՝ հայերի, վրացիների ու ադրբեջանցիների միջև սկսվել էր ազգային-տարածքային սուր հակամարտություն, որի մեջ կոիկովյան հայրնի առակի պարկերով ամենքն իր կողմն էր քաշում «անդրկովկասյան սայլը»։ Պեպք է նշել նաև, որ հարևան Թուրքիան դեռևս չէր դադարեցրել հայերի ցեղասպանության իր ծրագիրը և, հայաթափ անելով գրեթե ողջ Արևմտյան Հայաստանը, ծրագրում էր առաջանալ դեպի Արևելյան Հայաստան և վերջնականապես բնաջնջել հայ ազգին Հայկական լեռնաշխարհից։ Խոսելով այս ժամանակաշրջանի մասին՝ այն բավական դժվար է ներկայացնել եկեղեցի-պետություն հարաբերությունների պեսանկյունից, քանի որ Հայաստանը, որպես անկախ պետականություն, դեռևս գոյություն չուներ։

Խորհրդային անհավատության տարիներին գրեթե բոլոր պատմաբանները Մայիսյան հերոսամարտերը ներկայացնելիս որևէ ակնարկ չէին անում այդ մարտերի ժամանակ Եկեղեցու դերի ու ազդեցության մասին։ Մակայն առավել ցավալին այն է, որ անգամ անկախացած մեր Հայրենիքում այսօր ևս գրեթե ոչինչ չի խոսվում այս մասին։ Վ. Վարդանյանի և Ա. Թադևոսյանի ընդհանուր հեղինակությամբ 2002 թվականին լույս տեսավ Հայոց Պարմության մի ձեռնարկ, որը մինչ այսօր կիրառում են բազմաթիվ ուսանողներ։ Սա միայն մեկն է տասնյակ նմանատիպ ձեռնարկներից, որտեղ ասվում է. «Մարդարապարի հերոսամարտը օրհասական գոյամարտ էր։ Այն ցույց տվեց, որ անհնար է ծնկի բերել հայ ժողովրդին, որը փոքրաթիվ ուժերով կենաց և մահու կռիվներ մղեց դարավոր ոսոխի մինչև արամները զինված գործերի դեմ, հաղթեց նրանց՝ նվաճելով որպես ազգ պետականորեն գոյատևելու իրավունքը»։ Այստեղ անգամ ակնարկ չի արվում առանցքային մի դեպքի մասին, որը դեռևս 1960-ական թվականներին անողդակիորեն ներկայացվել է հերոսյալ կերպ. 1918 թվականի սկզբին՝ Կարսը գրավելուց հետո, Թուրքերն իրենց բանակն ուղղեցին դեպի Երևան և Ալեքսանդրապոլ, որից հետո հայ առաջամարտիկ զինվորներից կազմված մի խումբ գնաց Հայոց Գեորգ Ե. Հայրապետի մոտ և առաջարկեց թշնամուց պարսպարվել վանքերից մեկում՝ կան Գեղարդում, կան Մեհանա վանքում։ Սա նշանակում էր, որ դեռևս ոչ պետական, բայց այդուհանդերձ իշխանությունն առաջարկում էր թողնել Սուրբ Էջմիածինն ու փախչել։ Հայոց Հայրապետն ի պարասխան զինվորների ասում է՝ «Ո՛չ և ո՛չ, հագա՛ր անգամ ո՛չ։ Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից աւանդուած Մայր Աթոռը։ Ես չեմ հեռանալ Հայոց Առաքելական Եկեղեցու օջախից։ Եթէ հայոց զինուորությունն ու ինքը՝ հայ ժողովուրդը, չեն կարողանալ թշնամու առաջխաղացումը կասեցնել, եթէ ի գորտ չեն լինի փրկելու մեր սրբությունները, ապա թող ևս նահապակուն հեկց այստեղ, շեմի վրայ Մայր Աթոռի, որի գահակալի պարսխն ունեն մեր սուրբ նախնիների արդար բարեխօսութեամբ և Աստուծոյ ողորմածութեամբ»²։ Այս

2 Գեորգ Ե. Կաթողիկոսի խօսքը՝ առ հայություն, [http://www.arak29.am/PDF_PPT/7-History/GevorgVEng.Arm.html], 10.05.2012 դրությամբ։

մի պարզամոլ Գեորգ Կաթողիկոսը ստիպում է հայոց ողջ բանակին պայքարել հանուն ազատության և երե կարիք կա, զոհվել հանուն հայրենի երկրի: Այսպեղ անհրաժեշտ է նշել այն սխալ մտրեցումը Եկեղեցու նկարմամբ, որ այսօր րիքում է Նայասարանում: Սկսյալ օրենսդրական մի շարք փաստաթղթերից մինչև պերական այրերի երայթներ, Նայասարանյաց Եկեղեցին կարծես կարեւորվում է ալեի պարմական քան թե հայրենի կյանքում իր ներկա դերի համար: Երբ շեշտվում է Եկեղեցու զուր «պարմական» դերը, անուղակիորեն անրեսվում է նրա ներկա նշանակությունն ու արժեքը: Նասարականության մեջ Եկեղեցին դառնում է պարմության՝ զուր անցյալի հեր կապող մի օղակ: Այնինչ՝ անցյալ 1700-ամյա պարմության որեւէ հանգրվաում Եկեղեցու դերն արժեւորվել է նրա ներկայով: Ահա նմանարիպ հանգրվաններից եղան նաև Մայիսյան հերոսամարրերը: Տեղին է հիշել հայրնի այն դեպքը, երբ Գարեգին եպիսկոպոս Նովսեփյանցը (հերագայում Մեծի Տանն Կիլիկո Գարեգին Ա. Կաթողիկոս) րեղեկանում է Թուրքերի առաջխաղացման ու նվաճողական քայլերի մասին, անմիջապես վերցնում է իր սուրն ու ձին և գնում Սարգսրապար՝ ճակարում հայորդյաց հեր միասին մարրնելով թուրքերի դեմ: Ներագայում Գարեգին Նովսեփյանցի այս հերոսական քայլը ոգեշնչման աղբյուր պերք է լիներ նաև Արցախի ազարագրման նպարակով պայքարի ելած հայոց քաջամարրիկների համար: Ահա այսպես է Եկեղեցին իր անմիջական մասնակցությունը բերել ու բերում հայրենի կյանքի զանազան ոլորրներում:

Արեւմտյան աշխարհում գոյություն ունի իրավարանական մի եզրույթ, որ թարգմանվում է «խոստովանարանի կնիք» (*The seal of the Confessional*): Այս եզրույթով միջնադարից ի վեր բնութագրվել են Կաթողիկ Եկեղեցու և քրիստոնյա մի շարք երկրների պերական մարմինների հեր հարաբերությունները: Դարերի ընթացքում այս եզրույթն ընդհանրացել է, և այսօր այն կիրառվում է որեւէ կառույցի հեր րվյալ երկրի իշխանության առանձնահարուկ հարաբերությունների նշանակությամբ: Ի սկզբանե այն կոչված էր քահանաներին ազարելու իրենց լսած խոստովանությունները դարավարությունների ժամանակ վկայություն րալու պարրավորվածությունից: Այդուհանդերձ, եզրույթն այնքան ընդարձակ է իր իորիրդով, որ դարձել է բնութագրիչը Եկեղեցու և պերության հարաբերությունների³: Եւ իսկապես, եթե փորձենք եկեղեցաբանորեն ընել քահանայի առաքելությունը, ապա այն մեզ համար կվերանա զուր ինսրիրուցիոնալ իր նշանակությունից և ալեի ընդգրկում իմաստ կսրանա: Եկեղեցու և պերության հարաբերությունները կդադարեն բոլորովին րարեր նպարակներ հերապնդող երկու հասարակական (*dual social*) կառույցների միջև հարաբերություններ լինելուց և կդառնան միեւնույն բարձրագույն նպարակին ուղղված մեկ մարմնի երկու անդամների հարաբերություններ:

Նմանարիպ բացառիկ հարաբերություններ հասարավեցին Մայր Եկեղեցու և պերության միջև 1918 թվականի հերոսամարրերից հերո, երբ հայ ազգն արժանացավ

3 Տե՛ս **Rev. William, Saunders**, *“The Seal of the Confessional” in Arlington Catholic Herald (ACH Press, 2000)*, էջ 3-13.

անկախ լինելու իր դարավոր իրավունքին: Եկեղեցին, որ դարեր ի վեր բացի իր գավակների հոգևոր կարիքները հոգալու գործառնությունը, ստանձնել էր նաև իր ազգն ու երկիրն օտարների առջև ներկայացնելու առաքելությունը, այլևս դրա կարիքը չունեց: 1918 թվականի մայիսի 28-ին հռչակված Նայոց նորանկախ պետության իշխանությունն էր այլևս իր վրա վերցնելու բաղադրական ու դիվանագիտական գործառնությունը՝ միաժամանակ մշտապես խորհրդակցելով Սուրբ Էջմիածնի հետ: Պետական կառուցվածքի րեսակերից Նայաստանի Նանրապետությունը համարվում էր պառլամենտական դեմոկրատական հանրապետություն, որտեղ բարձրագույն օրենսդիր իշխանությունը ժողովրդավարական ճանապարհով հիմնված խորհրդարանն էր, իսկ բարձրագույն գործադիր իշխանությունը՝ կառավարությունը: Նախարարվում էր Նայկական հարցի վերջնական լուծումից ու Նայաստանի երկու հարվածների միավորումից հետո հրավիրել Սահմանադիր ժողով, բնդունել Սահմանադրություն ու մրցնել նախագահական համակարգ եւ այլն:

Եկեղեցի-պետություն փոխաբերությունները կարգավորող Նայաստանի պարմության մեջ կարելի է ասել լավագույն փաստաթուղթ՝ «Նայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցու և Նայաստանի Նանրապետության միջև կնքվելիք դաշնագիր»-ը, որն իսկապես գրվել է Մայիսյան ոգուց բխած, ստորագրման պիտի այդպես էլ չարժանանար: 1920 թվականի դեկտեմբերի 2-ի ակտի⁴ համաձայն՝ ՆՆ Կառավարությունը հրաժարվեց իշխանությունից եւ դրանով շուրջ 70 տարի Նայ ժողովուրդը կորցրեց իր անկախությունը: Այդուհանդերձ, կարծում եմ հետաքրքրական կլինի րեսնել Նայոց առաջին Նանրապետության եւ Մայր Եկեղեցու միջև հարաբերությունները կարգավորող վերոնշյալ փաստաթղթի որոշ մանրամասներ, ինչը եւ ներկայացնում եմ ստորև:

Առաջին կետը ժողովրդավար (democratic) երկու կառույցների՝ միմյանցից րարբերվող, բայց միեւնույն ժամանակ միմյանց լրացնող բնույթն է ամրագրում: Եկեղեցին եւ ՆՆ-ն ճանաչում են միմյանց իշխանությունը: Ընդ որում՝ նշվում է Ամենայն Նայոց Կաթողիկոսի նախամեծար եւ գերիշխան իրավունքների մասին ազգային-եկեղեցական եւ կրոնա-բարոյական խնդիրներում⁵: Այսօրվա «արեւմտյան» պյուրալիստ «ժողովրդավարական» սկզբունքներով այս կետի «բ» մասը կարող է թերեւս անբնդունելի համարվել: Սակայն նույն արեւմտյան մշակույթը կրող մի շարք մտավորականներ⁶, վաղուց արդեն բարձրաձայնում են հասարակական-բարոյական սկզբունքները Եկեղեցուց անջար ու անկախ գուր աշխարհիկ միջավայրում կիրառելն անհնար լինելու փաստի մասին:

Երկրորդ կետով Առաքելական Սուրբ Եկեղեցին հայրաբարվում է ՆՆ գերիշխանությունից անկախ: Եկեղեցին կարող է ազարտրեն կիրառել իր րոնրեսական գործու-

4 «Վավերագրեր Նայ եկեղեցու պարմության», գիրք Ե., Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը Առաջին Նանրապետության րարիներին (1918-1920), կազմեց Ս. Բեկրոյյանը, Երևան, 1999, էջ 517:

5 Տե՛ս անդ, էջ 514:

6 Տե՛ս **K. S. J. Baker**, "True Morality is Based on Objective Principles" in *Fundamentals of Catholicism* vol. 1, part II, chapter 6 (San Francisco: Ignatius Press, 1983), էջ 135-138:

նեությունը: Ինչպես պարմության մեջ, այնպես այսօր կարելի է փնտնել Եկեղեցու՝ պետությունից կախման մեջ լինելու վնասները: Ինչպես հայրնի է՝ Մեծ Բրիտանիայում ԺԶ. դարից՝ Ների 8-րդ թագավորից սկսած, Անգլիկան Եկեղեցու գլուխը թագավորն է: Ընդ որում Քենթրբերիի արքեպիսկոպոսի ընտրությունը կախարում է երկրի վարչապետը՝ երկու անուններ հաստատման ներկայացնելով թագուհուն/թագավորին: Եկեղեցին թե՛ դավանաբանական է, թե՛ ադմինիստրատիվ որևէ լուրջ որոշում չի կարող ինքնուրույն կայացնել, այլ միայն աշխարհիկ իշխանության արտոնությամբ: Կարծում եմ, որ ե՛ն եկեղեցաբանական, ե՛ն դավանաբանական առումով սա ոչ հարմար մոտեցում է եկեղեցին ղեկավարելու համար: Նիսու Բրիստոն իր իսկ քարոզներում մշտապես բաժանել է պետական և հոգևոր իշխանությունը՝ ասելով. «Դայսբինը՝ կայսեր և Աստծունը՝ Աստծուն»⁷ դրանով իսկ հստակորեն սահմանազատելով աշխարհիկ և հոգևորի տարբերությունը, ինչպես նաև ցույց տալով երկու կառույցների կողմից միմյանց գործառնություններին միջամտելու վնասները:

Չորրորդ կետի համաձայն՝ Եկեղեցին կարող էր իր փոխապետության շրջանակներում առանց սահմանափակության բացել դպրոցներ, հասարակական, կրոնա-բարոյական գանազան հաստատություններ և այլն: Գրեթե գյուղից ի վեր թե՛ տարրական և թե՛ բարձրագույն ուսումնական հաստատությունները գտնվել են Եկեղեցու հովանու ներքո:

Յոթներորդ կետը սահմանում էր, որ Մայր Աթոռ ՏՄ Կառավարությանն առընթեր պիտի ունենար իր լիազոր ներկայացուցիչը, ինչպես նաև ՏՄ-ն Եկեղեցում պետք է ունենար իր դեսպանը: Այս կետի առումով այսօր բավական զարգացում են ապրել Եկեղեցի-պետություն հարաբերությունները. կառավարական համակարգում հարաբերություններ հաստատելու և ըստ ամենայնի դրանք ի շահ երկու կառույցների միասնական գործունեության ծառայելու նպատակով մի շարք հոգևորականներ ներկայացված են պետական գանազան գերատեսչություններում, որոնց ներկայացուցիչների հետ փոխադարձ հանդիպումները տալիս են իրենց դրական արդյունքները:

Ըստ տասներորդ կետի ՏՄ-ն, որպես Նայոց Եկեղեցու կողմից սրբազործված ու օրհնված իշխանություն, պետք է հիշատակվեր Սուրբ Պարարագի ժամանակ: Այս կետը ցայսօր պահվում է, և ամեն անգամ, երբ Սուրբ Պարարագ է մատուցվում, քահանան աղոթք է բարձրացնում առ Աստված Նայրենի պետականության շեն, խաղաղ ու անսասան լինելու համար:

Տասնինը կետերից բաղկացած այս դաշնագրի մնացյալ կետերն այդքան կարևոր նշանակություն չունեն: Ինչպես նշվեց, այս դաշնագիրն այդպես էլ կիրառություն չգտավ, սակայն մեծապես օգտակար եղավ, երբ արդեն նորանկախ Նայաստանի երրորդ Նախապետության և Մայր Եկեղեցու միջև կնքվում էր վերջիններիս առանձնակի հարաբերություններն ամրագրող հայրնի օրենքը⁸:

⁷ Մարթ. ԻԲ, 21:

⁸ ՏՄ օրենք «Նայաստանի Նախապետության և Նայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հարաբերությունների մասին», ընդունված՝ 22.02.2007:

ԺԸ. դարի ֆրանսիացի գրող Դը Կոսսադը (de Caussade) հրաշալի կերպով բնութագրում է մարդու առաքելությունն այս աշխարհում, ասելով. «Մարդը պետք է այնպեղ լինի, ուր Աստված հաստատել է իրեն»⁹: Այս խոսքերը լրջորեն պիտի ընկալվեն եւ որեւէ երկրի պետական իշխանության, եւ հոգեւորականության կողմից: Լինել այնպեղ, որպեղ Նիսուս Բրիսարոս է մեզ հաստատել՝ չի նշանակում անդադար ապրել միայն փառահեղ անցյալի հուշերով (nostalgic) եւ ոչ էլ ուրուպիստական գաղափարներով, այլ, քաղելով անցյալի լավագույն դասերը եւ բոցավառվելով ապագայի սպասումներով, ապրել հիմա եւ այսպեղ ու անդադար պայքարել: Այդ էր Սարդարապարի հերոսների րեսակաւնը՝ հիշելով Վարդանանց հերոսներին ու երագելով լուսավոր ապագայի մասին՝ գործել, պայքարել հանուն սրբագան գաղափարի: Ընդ որում, եւ որ ամենից կարեւորն է, պայքարել ձեռք ձեռքի րված՝ որպես ոչ թե ներկայացուցիչներ գանագան քաղաքական կառույցների, այլ մեկ Ազգ՝ մեկ Պետականություն ու մեկ Եկեղեցի:

⁹ P. Cornwell, *Church and Nation*, (England: Oxford, 1983), p. 65.

ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ԱՄՆ-Ի ՆԱՅԿԱԿԱՆ ԵՒ ԹՈՒՐԹԱԿԱՆ ՆԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱԴՎԱԾ ԱՄՆ-Ի ԿՈՆԳՐԵՍԻ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԹԻՎ 252 ԲԱՆԱԶԵՐԻ ՆԵՏ**

Նայոց ցեղասպանության փաստի ճանաչման ուղղությամբ լոբբինգ իրականացնելու գործում ԱՄՆ-ի հայկական համայնքն ունի երկարամյա փորձ: Եթե նախկինում համայնքն այդ ոճիքը դադարապարտ դրսևանում անցկացնելու համար իր գործունեությունն իրականացնելիս բախվում էր Թուրքիայի հակաբայլերին, ԱՄՆ-ի նախկին և ներկա զանազան պաշտոնյաների գործողություններին, ապա վերջին տարիներին խաղի մեջ է մտնում նաև ԱՄՆ-ի թուրքական համայնքը: Փորձենք ներկայացնել այդ բանաձևերից մեկի՝ ՖՅ252-ի ուղղությամբ հայկական համայնքի գործունեությունը և թուրքական համայնքի հակաբայլերը:

2009 թ. մարտին ԱՄՆ-ի Կոնգրեսի հայկական խմբի անդամներ Ադամ Շիֆֆի, Ջորջ Ռադանովիչի, Ֆրենք Փալոնեի և Մարք Բրրքի կողմից ներկայացված ՖՅ252 բանաձևով ճանաչվում էր հայերի դեմ իրագործված ցեղասպանության փաստը: Նկատելով, որ 2010 թ. մարտին, ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արարքին հարաբերությունների հանձնաժողովում ՖՅ252 բանաձևն ընդունվեց¹: Բանաձի ներկայացումը պայմանավորված էր հենց հայկական համայնքի լոբբինգով, հարկապես՝ Ամերիկայի հայկական ազգային կոմիտեի (ANCA) ջանքերով²:

Ներկայացուցիչների պալատի արարքին հանձնաժողովի վավերացնելուց հետո հերթական քայլը պետք է լիներ ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում բանաձևը ընդհանուր քվեարկության ներկայացնելը, ինչը ձգձգվում էր երկար ժամանակ: Երբ Կոնգրեսում ընկերությունների արդյունքում Դեմոկրատների կուսակցությունը կորցրեց մեծամասնությունը և 2010 թ. դեկտեմբերի վերջին օրերին ավարտում էր իր գործունեությունը՝ իբրև խորհրդարանական մեծամասնություն, հայկական կազմակերպությունները փորձեցին Ներկայացուցիչների պալատի օրակարգ մտցնել վերոնշյալ բանաձևը: Ամերիկայի հայկական համագումարը և Ամերիկայի հայկական ազգային կոմիտեն կոչ արեցին հայ համայնքին նամակներ հղել Կոնգրեսին՝ բանաձևը օրակարգ մտցնելու կոչով³: Սակայն չնայած գործադրված բոլոր ջանքերին՝ բանաձևն օրակարգ

1 Արարքին Յարաբերությունաց Յանձնախումբը Վաերացուց Թիւ 252 Բանաձեւը, 05.03.2010, <http://www.armenia.com.au/news/Diaspora-News/Armenian/923/>

2 Բանաձև 252. Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արարքին հարաբերությունների հանձնախումբը քվեարկության կղնի Նայոց ցեղասպանության բանաձեւը, ArmeniaNow.com, 05.02.2010, http://www.armenianow.com/hy/genocide/20720/armenian_genocide_resolution

3 Armenian Caucasus rallies support, urges passage of Armenian Genocide resolution, Armenian Assembly of

գում չհայրնվեց, ինչին հեղեղեցին համապարասխան, հիասթափությամբ լի հայրա-
րարություններ նույն կառույցների կողմից⁴:

Բանաձևի ընդունվելու փաստը բացասական արձագանքի արժանացավ Թուր-
քիայում, որը նույնիսկ հեղեղեց ԱՄՆ-ում իր դեսպանին⁵: Սակայն ուշագրավ էին
ԱՄՆ-ի թուրքական համայնքի գործողությունները՝ կապված այս բանաձի հեղեղ, որոնց
ներկայացվում են ստորև:

Նախ պետք է նշել՝ պարսիական չէ, որ ԱՄՆ-ի թուրքերի համախմբման եւ ինս-
տիտուցիոնալացման հիմնական պարճառ է դարձել հենց Նայոց ցեղասպանության
ճանաչման հավանականությունը ԱՄՆ Կոնգրեսի կամ նախագահի կողմից: ԱՄՆ-ում
Նայոց ցեղասպանության ճանաչման յուր ինարավորություններն ի հայր են գալիս Ռ.
Ռեյգանի կողմից այն հիշարակելուց հեղեղ⁶: Այդ ժամանակից ի վեր նկարելի է նաեւ
թուրքական համայնքի համախմբվելու գործընթացը: Նույնիսկ եթե մինչ այդ գոյություն
ունեցել են թուրքական մշակութային մի քանի կազմակերպություններ, ապա համայնքի
համախմբմանը նպաստել է հենց Նայկական հարցը: Վաշինգտոնում ունեցած հանդիպ-
ման ժամանակ Բարրշ Օնարըն նշեց, որ »Կեգիշերային ճեղքնթաց« գեղարվեստա-
կան կինոնկարից հեղեղ (որպեղ ներկայացված են թուրքական բանրի սարսափները)
թուրքի վարկն արեւմուրքում մեծապես խաթարվել էր, ուսրի շար թուրքեր ջանում էին
վերականգնել իրենց նախկին վարկը: Մինչեղեղ դրանից հեղեղ էլ թուրքերին ցեղաս-
պանության մեղ մեղադրելը, ըստ Օնարըրի՝ շար ավելի մեծ վնաս կհասցնի⁷, ուսրի
պարսիական չէ թուրքերի ագրեսիվ գործելաոճն այդ ուղղությամբ: Բանաձեղ ԱՄՆ
Կոնգրեսի Ներկայացուցիչների պալարի արարքին հարաբերությունների հանձնախմ-
բի կողմից վավերացնելուց հեղեղ Ամերիկայի թուրքական կոալիցիան հրապարակեց
մի վերլուծություն, որով փորձում էր 252 բանաձր ներկայացնել իրեն միակողմանի եւ
անարդար⁸, ընղ որում՝ վերլուծության մեղ նաեւ առկա էին դրա վերաբերյալ ԱՄՆ նախ-
կին պաշտոնյաների (օրինակ՝ Ների Մորգենթաուի) կարծիքները:

Իսկ երբ 2010 թ. ԱՄՆ Կոնգրեսի ընարություններում մեծամասնությունը կորցրած
Դեմոկրարական կուսակցությունը փորձում էր հասարարել վերջին օրինագճերը, հավա-
նական դարձալ Նայոց ցեղասպանության մասին 252 բանաձի անցկացումը: Ուշագրավ
էր թուրքական կազմակերպությունների արձագանքն այդ գործողության նկարմամբ:

America, 21.12.2010, <http://www.aaainc.org/index.php?id=875>,

ANCA continues to call for U.S. House vote on Armenian Genocide resolution, Armenian National Committee of America, 18.12.2010, http://www.anca.org/press_releases/press_releases.php?prid=1976

4 Pelosi Fails to schedule vote on Armenian Genocide Resolution, Armenian National Committee of America, 22.12.2010, http://www.anca.org/press_releases/press_releases.php?prid=1980

5 D. Nasaw, Turkey recalls US ambassador over Armenia genocide resolution, The Guardian, 05.05.2010, <http://www.guardian.co.uk/world/2010/mar/05/turkey-us-ambassador-armenia>

6 R. Reagan, Proclamation 4838 – Days of Remembrance of Victims of the Holocaust, April 22, 1981, <http://www.reagan.utexas.edu/archives/speeches/1981/42281c.htm>

7 Նարգաղույց »Ամերիկայի ձայն«-ի աշխարակից Բարրշ Օնարըն հեղ, ԱՄՆ, Վաշինգտոն, 15.11.10, 15:30-16:20:

8 Correcting the Record on H. Res. 252, TCA, http://www.turkishcoalition.org/files/news/pdf/Correcting_the_Record_on_H.Res.252_V1.pdf

Քանի որ սփյուռքի կազմակերպություններում ընդունված է այս կամ այն հարցով դիմել իրենց անդամներին և ազգակիցներին, ուստի եւ՛ թուրքական, եւ՛ հայկական կազմակերպությունները կոչ արեցին դիմել համապատասխան գործողությունների: Նկարագրելով է այս կապակցությամբ թուրքական ATTA, FTAA ու TcA կազմակերպությունների նամակն իրենց անդամներին, որը ներկայացվում է ստորև: Նայկական ցեղասպանությանը վերաբերող բանաձևի դեմ պայքարելու կոչ անող նամակում ասվում էր, որ եթե »այդ բանաձևին անցնի, ապա՝

- Թուրքական և մահմեդական ժառանգություն ունեցող բնակչությունն ու մեր երեխաները հավերժ կպիպակավորվեն իբրև ցեղասպանություն իրականացրածներ և ստիպված կլինեն կրել այդ ամոթը այն դեպքում, երբ Նայկական հարցը՝ »ցեղասպանություն« չէ:

- Կարող է ծայր առնել Թուրքիայից և թուրքական ընկերություններից փոխհատուցում ստանալու դատական հայցերի մի ամբողջ շարան, քանի որ ԱՄՆ որոշ նահանգների բնակիչ հայերին հաջողվում է վարել սեփական արտաքին քաղաքականությունը:

- Կարող են լինել դատական հայցեր հայերի կողմից պահանջվող հողերի շուրջ, այն հողերի, որոնք պարկանում են ձեր ընտանիքներին, և որպես նրանք ապրել են դառն շարունակ:

- Թուրք-ամերիկյան հարաբերություններն ու ԱՄՆ-ի շահերը անդառնալիորեն կվնասվեն Թուրքիայի տագնապալից տարածաշրջանում, ինչպես նաև կտրնահարվի թուրք և մահմեդական ժառանգություն ունեցող բնակչության արժանապատվությունը, երբ ամերիկյան օրենսդրությունն ընդունի դատավճիռ, որը հիմնված է միմիայն Կալիֆոռնիայի հայկական էթնիկ քաղաքականության վրա:

Նման բանաձևի ընդունման դեպքում թուրքական և մահմեդական ժառանգություն ունեցող բնակչությունը կպիպակավորվի որպես ցեղասպանություն իրականացրած, ինչպես նաև դա կարող է նպաստել հայերի կողմից Թուրքիայի դեմ դատական հայցերի հարուցմանը՝ փոխհատուցում ու հող ստանալու նպատակով⁹:

Այս դիմումը լիովին արագացրել է թուրքական համայնքի մտավախությունների ամբողջությունը: Նկարագրական է մահմեդական եզրը, որն օգտագործվում է այդ դիմումի մեջ. սա, ըստ էության, խնդիրը ներթուրքականից համամահմեդականի վերածելու փորձ է:

2010 թ. դեկտեմբերի 30-ին ելույթ ունենալով ԱՄՆ թուրք համայնքի առջև՝ ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Ն. Թանը շեշտեց, որ ԱՄՆ թուրքական համայնքի ակտիվ գործողությունների շնորհիվ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների ընդունած 252 բանաձի դեմ պայքարը պսակվեց հաջողությամբ, քանի որ »այս անգամ ԱՄՆ թուրքական համայնքը, նախկին տարիների համեմատ՝ շար ավելի

9 Stü The Armenian issue, Federation of Canadian Turkish Associations, Toronto, 1985, 60 p© ©

10 **Urgent Action.** *Oppose H.RES.252 contact Congress now*, Action Alert, Issues & Information, The Turkish Coalition of America, <http://www.capwiz.com/tca/callalert/index.tt?alertid=20914641&type=CO>

ակրիվ ու կազմակերպված, ամբողջական ու միասնաբար, նախահարձակ գործողություններով մեծ աշխատանք կատարեց¹¹: Նասկանալի է, որ միայն թուրքական համայնքի գործունեությունը չէր, որ ստիպեց ԱՄՆ Կոնգրեսին բանաձևեր չնկարատել իր քննարկումների օրակարգում, սակայն Թուրքիան փորձում է ամեն կերպ աջակցել թուրքական համայնքի հզորացմանը՝ նույնիսկ չխորշելով նմանատիպ բացահայտ բժնանքի դիմելու:

Ընդհանուր առմամբ՝ Ամերիկայում գործող թուրքական համայնքային կառույցները, որոնք ավելի համակարգված փուլեր են ստացել վերջին մի քանի տարիների ընթացքում, սկսում են մշակել ընդհանուր օրակարգ, ինչն արվում է ոչ առանց Թուրքիայի աջակցության: Թուրքական սփյուռքի ԱՄՆ-ի համայնքի այսօրինակ միասնականությունն ունի իր պարզառենքներ:

1. Նամայնքի փոքրաքանակ ու ցրված լինելը,
2. ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական նշանակությունն ու այնտեղ կայացվող որոշումների ունիվերսալ բնույթը,
3. Նայկական համայնքի՝ Նայոց ցեղասպանության ճանաչման պահանջի շոշափելիությունը:

Ինչպես նշվեց վերը՝ Վաշինգտոնում թուրք լրագրողներից մեկը հանդիպման ժամանակ ընդգծեց, որ թուրքական համայնքի ինստիտուցիոնալացման, որպես սփյուռքի մի մասի ձևավորման հիմնական պարճառը Նայկական հարցն է¹²:

Այսպիսով՝ կարելի է խոսել Նայոց ցեղասպանության ճանաչման հարցին երկու համայնքների հակադիր մոտեցումների մասին: ԱՄՆ-ի թուրքական համայնքը նպատակ ունի միայն ու միայն բոլոր միջոցներով հակադարձել Նայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևերին, ստեղծել գիտահետազոտական կենտրոններ, որոնց միջոցով կփորձի հարցականի փակ դնել այդ փաստը, մինչդեռ հայկական սփյուռքի պարագային մենք տեսնում ենք հակառակ պարկերը: Եթե նախկինում ԱՄՆ հայկական համայնքը բախվում էր գույր Թուրքիայի կառավարության գործունեությանը՝ ընդդեմ իրենց ձեռնարկումների, ապա հիմա ակնհայտ է ԱՄՆ-ի թուրքական համայնքի կշռի բարձրացումը, և հայկական կազմակերպություններն արդեն ստիպված են լինում ավելի ու ավելի հաճախ գործ ունենալ դրանց հետ: Կարճոր հանգամանք է նաև այն, որ ԱՄՆ-ի կողմից Նայոց ցեղասպանության ճանաչման մրավախությունը պայմանավորված է Նայկական համայնքի մեծաթիվ լինելով՝ ի պարբերություն թուրքական համայնքի: Այնուամենայնիվ, ԱՄՆ թուրքական համայնքը կարողացել է ճկուն ցանց ստեղծել ողջ ԱՄՆ-ով՝ հարկ եղած դեպքում դիմել այդ կետերին՝ համապատասխան հարցի շուրջ ակրիվանալու կոչով:

11 Վաշինգտոնում Թուրքիայի հանրապետության դեսպան Նամիկ Թանիկի՝ ԱՄՆ թուրք համայնքին ուղղված ամանորյա հայտարարությունը, Türkiye Cumhuriyeti Washington Büyükelçisi Namik Tan'ın Amerika Birleşik Devletleri'ndeki Türk toplumuna yönelik yeni yıl mesajı, The Association of Turkish Americans Of Southern California, 29©12©2010, <http://www.atasc.org/?p=1083>

12 Նարեգարույց «Ամերիկայի ձայն»-ի աշխատակից Բարրշ Օնարլուի հետ, ԱՄՆ, Վաշինգտոն, 15.11.10, 15:30-16:20:

ԽԱՉԱՏՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ
պարմական գիր. թեկնածու

ՆԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՆԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ռ. ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ

Նայ եւ քուրդ ժողովուրդներն ունեցել են բարդ եւ բազմաբովանդակ փոխհարաբերությունների պարմություն: Տարբեր ժամանակաշրջաններում նրանք իրերի բերումով հաճախ հայրնվել են պայքարի փարբեր ճակարներում: Երբեմն էլ առիթ է եղել համապրեղ պայքարելու ընդհանուր թշնամու դեմ: Մակայն, ընդհանուր առմամբ, ժամանակի ընթացքում երկու ժողովուրդները չկարողացան ըմբռնել համագործակցության կարևորությունը:

Ինչպես ճիշդ է նկատում անվանի պարմարան Վահան Բայբուրդյանը, րեսանելի կամ հեռավոր ապագայում հայ եւ քուրդ ժողովուրդների ճակարագրերը, որպես րարածաշրջանային անմիջական հարեւաններ, կրկին անխուսափելիորեն խաչվելու են¹: Ուսպի, ճակարագրորեն միասին լինելու դարապարրված այս երկու դրկից ժողովուրդները, անցյալի ցավուր սխալներից գերծ մնալու համար պերք է պարրասար լինեն դիմագրավելու նոր փործությունների:

Նայ-քրդական փոխհարաբերությունների ուսումնասիրությունը, գնահարումը, ինչու չէ, նաեւ ապագայի ուրվագծումը միշդ էլ եղել է հայ պարմագիրական, հասարակական-քաղաքական մրքի ուշադրության կենրոնում: Այս րեսակերից առանձնապես հերաքրքիր են Ի. դարի առաջին կեսի դաշնակցական գործիչների մորեցումները: Կարո Մասունին², Ռուբեն Տեր-Մինասյանը, Վահան Փափագյանը (Ամս), Միքայել

1 Վահան Բայբուրդյան, Քրդերը, Նայկական հարցը եւ հայ-քրդական հարաբերությունները պարմության յույսի ներքո, Երեւան, 2008, էջ 28:

Վ. Բայբուրդյանը հայ-քրդական հարաբերությունների մասին ունի մի քանի ուշագրավ ուսումնասիրություններ, որոնցից առավել ընդգրկունը 2008 թ. Երեւանում հրարարակված «Քրդերը, Նայկական հարցը եւ հայ-քրդական հարաբերությունները պարմության յույսի ներքո» աշխարությունն է: Մույն աշխարանքի գիրական արծեքի եւ կարեւորության մասին խոսել է Միեր Կարապերյանն իր գրախոսական հոդվածում (րեն Մ. Կարապերյան, «Պարմարանասիրական հանդես», թ. 1, 2010, էջ 262-268):

2 Դաշնակցական գործիչներից քրդական հարցի, հայ-քրդական հարաբերությունների պարմության լավագույն գիրակը, մեր կարծիքով, Կարո Մասունին է: 1920-1930-ական թվականներին նա նաեւ կարեւոր ներդրում է ունեցել ԺԴ եւ քրդական ազգային կազմակերպությունների համագործակցության ասպարեզում: Նա խնդրո առարկա թեմայով գրել է մի շարք ուսումնասիրություններ, որոնցից ամենաձավալունն ու ժամանակագրորեն ընդգրկունը «Քիւրքերու եւ հայերու ազարագրական շարծումներու փուլերը եւ անոնց փոյարաբերությունները» հոդվածաշարն է (րեն «Նայրենիք» ամսագիր, Բոստոն, 1929, նոյեմբեր, էջ 134-145, դեկրերեր 1929, էջ 146-158, յունար, 1930, էջ 102-113, փերրուար, 1930, էջ 151-160, մարր, 1930, էջ 133-149, ապրիլ, 1930, էջ 156-163, մայիս, 1930, էջ 124-133, օգոսրոս, 1930, էջ 46-65, հոկրեմբեր 1930, էջ 134-140, նոյեմբեր 1930, էջ 84-99), որը հերագայում որոշակի լրացումներով եւ փոփոխություններով յույս է րեսել առանձին գրքով (Պէրոյթ, 1969):

Վարանդյանը և այլք իրենց ուսումնասիրություններում հանդես են եկել հայ-քրդական հարաբերությունների վերաբերյալ հեղափոխական դիրքավորումներով, որոնք, ընդհանուր առմամբ, այսօր էլ ունեն արդիական նշանակություն:

Մեր կարծիքով, հայ-քրդական հարաբերությունների լուսաբանմանը յուրահայտ կմոտեցնում է ցուցաբերել Ռուբեն Տեր-Մինասյանը: Նա առանձնակի ուշադրություն է դարձրել հայ-քրդական պարմա-աշխարհագրական սահմանների հարցին³: Ռուբենին իր «Քիւրդիստան» հոդվածում նախ ուշադրություն է դարձնում թե՛ հայերի և թե՛ քրդերի աշխարհակալ ձգվումների վնասակարությանը: Նա սխալ է համարում թե՛ քրդերի ձգվումները փրկելու Բարձր Նայքին, Վասպուրականին, Տարոնին և թե՛ առաջին աշխարհամարտի փրկիչներին հայերի կազմած մի շարք ծրագրերն ու քարտեզները, որոնց մեջ Նայասպանին են վերագրում Քրդստանի մեծ մասը: Ռուբենին այս ձգվումների վնասակարության բացահայտումը անհրաժեշտ է համարում առավելապես այն պատճառով, որ «ըլտրացած լինի երկու բախրակից ազգերի մերձեցումն ու գործակցությունը յանուն լաւագոյն օրերի, որոնք անշուշտ պիտի գան»⁴:

Անդրադառնալով հայ-քրդական սահմանների հսկայեղծման հարցին՝ Ռուբենը նախ նշում է այն կարեւոր հանգամանքը, որ հայ-քրդական պարմական սահմանները ԺԹ. դ. վերջին և Ի. դ. սկզբին չէին համապատասխանում այս երկու ժողովուրդների

3 Նայ-քրդական սահմանների հարցն ընդհանրապես հեղափոխական մեկնաբանությունների է արժանացել հայ ուսումնասիրողների մոտ: Պարմաբան Վահան Բաբուրյանը նշում է, որ օսմանյան կառավարողները ԺԹ. դարի կեսերից, առաջնորդվելով իրենց որդեգրած հակահայ քաղաքականությամբ, հաճախ «Թուրքական Քրդստան» հասկացության փակ կամայական և բռնազբոսիկ կերպով մարցնում էին նաև ողջ Արեւմտյան Նայասպանի փարածքը, թեև «Թուրքական Քրդստան» աշխարհագրական առումով, միանգամայն առանձին փարածք է (տե՛ս Վ. Բաբուրյան, նշվ. աշխ., էջ 8): Մեծանուն պարմաբան Նիկողայոս Ադունցը մրախոգություն է հայտնել, որ շարքեր կցանկանան հայ-քրդական հարցը լուծել միայն Նայկական բարձրավանդակում: Նա նշում է, որ Նայասպանի Քուրդիստանի վերածելու ջանքերում Նայասպանի բարեկամներն ու թշնամիները ձեռք-ձեռքի են փալիս: Անգլիան ու Ռուսաստանը, երկու հակառակորդները Նայկական բարձրավանդակում, համակրում էին և ներողամտություն ցուցաբերում թուրքերի քրդասիրական քաղաքականության հանդեպ: «Այն ժամանակ, երբ Անգլիան եկավ համոզման, որ հայերի ռուսական կողմնորոշումը անսասանելի է, նա իր աջակցությունն ու համակրանքը փոխեց քրդերին, հակառակ հայերի, ի դեմս որոնց նա ցուցնում էր Ռուսաստանի դաշնակիցներին ու գործակիցներին Անդրկովկասից վերջինիս առաջխաղացման ճանապարհին»,- գրում է Ադունցը: Անդրադառնալով Ռուսաստանի կեցվածքին՝ պարմաբանը նշում է. «Բայց առավել եւս պէտք է զարմանալ, որ Ռուսաստանը, որն ինքը իսկական պարմաբան է Անգլիայի՝ Նայասպանի հանդեպ որդեգրած վարքագծի, փոխանակ ամբապնդելու իր դիրքերը այդ երկրում, ընդհակառակը, նմանվեց իր հակառակորդին և նույնպես զարգացրեց քրդասիրական քաղաքականությունը: Ռուսական քաղաքագետները ակնհայտորեն հույս ունեին դրանով զրկել Անգլիային քրդերի աջակցությունից... Նրանց գրքերում ու հոդվածներում Նայասպանը դադարեց գոյություն ունենալուց որպէս հայերի հող, այն փոխարինվեց Քուրդիստանով: Էրզրումի գոբին կոչվեց Նուսիսային և Բիթլիսը (Վան) Նարավային Քուրդիստան» (տե՛ս **Նիկ. Ադունց**, Նայկական հարցի լուծման շուրջ (Անգլ. թարգմ. և իրադ. պարբերաբար Վ. Ա. Դիլյանը), Երևան, 1989, էջ 94-95): Սրբեփան Պողոսյանը, խոսելով քրդստանի սահմանների մասին նշում է, որ «քրդերի բնօրրանը՝ Քրդստանը, ընկած է Վանի նահանգից հարավ՝ արեւմուտքում ձգվում է մինչև Տիգրիս գետը, իսկ արևելքում հասնում մինչև Նյուսիսային Պարսկաստան» (տե՛ս Սրբ. Պողոսյան, Քրդերը և հայկական հարցը, Երևան, 1991, էջ 4): Գերմանացի հայագետ Թեոստ Հոֆմանը գրում է, որ հայերի և քրդերի ներկայացուցիչները պարբերաբար են երկխոսության մեջ մտնել, եթե նրանք ուզում են լրջորեն պաշտպանել իրենց նպատակներն այս փրաքածաշխանում, իրենց պարմական հայրենիքում (տե՛ս **Tessa Hofmann, Gerayer Koutcharian, The History of Armenian-Kurdish Relations in the Ottoman Empire**, "Armenian Review", Boston, 1986, Winter, Volume XXXIX, num. 4, էջ 1-2):

4 **Ռուբեն**, Քիւրդիստան. «Յուսաբեր», Գահիրէ, 1925, 12 մարտ:

Լթնիկ սահմաններին: Խնդիրն այն է, որ թուրքական կառավարող շրջանակները ամեն կերպ խրախուսում էին քրդերին հաստատվելու պարսկական Նայասպանի տարածքում: Թուրքերը չկարողանալով թուրքացնել այս տարածքները, ձգտում են քրդացնել դրանք՝ այս ձևով փորձելով չեզոքացնել Նայկական հարցը⁵: Ֆիզիկաաշխարհագրական սահմանների բաժանման հիմքում Ռուբենը դնում է Նայկական Տավրոսը՝ այն համարելով Նայասպանի հարավային և Քրդստանի հյուսիսային սահմանը⁶:

Ռուբենը հայերի և քրդերի կողմից սեփական տարածքային պահանջներ ներկայացնելը բնութային է առնում նաև հոգեբանական փոփոխություն: Ըստ նրա՝ երկու ժողովուրդների մեջ էլ կան անհասկացողություններ, որոնք ապրում են աշխարհակալական երազներով: «Անուրանալի է, որ հայ և քիւրդ աշխարհակալ փոքր մասամբ հոգեբանական ցառուր երևոյթ է, որ սրելոծում է աղէպում վիճակի հեպտանքով: Քաղցածն առելի ազաի է լինում ու շատ առելի պահանջկոտ, քան բնականոն վիճակի բնութագրած մեկը: ...Գէթ մասամբ այս հոգեկան կացութեան պիտի վերագրել այն արարածոց երևոյթը, երբ հալածական քիւրդ գործիչը երագում է մէկ բնդարձակ քրդական կայսրութիւն, որի սահմանները սկսում են Սեւ ծովի հարաւից և բնդարձակում մինչև Դարսից ծոց. նոյնն են աղբիւրները նաև հայկական այն երագական պէտքութեան, որի մէկ ծայրին Սեւ ծովն է, իսկ միւս ծայրին՝ Միջերկրականը»,- գրում է Ռուբենը⁷:

Ռուբենը հարկապես կարեւորում է հայ քաղաքական առողջ մարքի դրսևորումն այս հարցում: Աշխարհակալ ձգտումները վեր են հայերի ուժերից: Միաժամանակ Ռուբենը պարզականություն է համարում նման գիտակցություն ձևավորել քրդերի մոտ: Ըստ նրա՝ «ցնորական» երազներով տարվելը կործանարար կարող է լինել երկուսերի: «Մակայն ժամանակն է, որ մենք մեր սխալը շրկենք: Դիտի շրկենք մանաւանդ նրա համար, որ մեր առջեր դեռ շատ անելիքներ կան: Ազատունք սխալներից և կանգնենք քաղաքական առողջ և ճշմարիտ գծի վրայ: Թող դատարկ խօսք չլինի այն յայտարարութիւնը, թէ մենք ձգտում ենք մեր ազատութիւնը հիմնել մեր անմիջական հարեւանների բարեկամութեան և մեր ու նրանց փոխադարձ շահերի ներդաշնակութեան վրայ»,- եզրակացնում է Ռուբենը⁸:

Ռուբեն Տեր-Մինասյանը լրջորեն անդրադարձել է նաև հայ-քրդական փոխհարաբերությունների պարզմությանը: Նախ արձանագրենք այն հայտնի իրողությունը, որ Ռուբենը Ի. դ. սկզբին գործունեություն իրականացնելով Տարսնում, հանգամանքների բերումով սրիպված է եղել լուրջ գործնական հարաբերությունների մեջ մտնել քրդերի հետ: Նույնիսկ նա խոսում է նախքան իր Տարսն գնալը Նրայր Դժոխքի (Արմենակ Դազարյան) և Տարսնի հոգևոր առաջնորդ Վարդան վարդապետ Նովսեփյանի գործադրած ջանքերի մասին, որոնք ուղղված էին թուրքական կառավարության դավերը դիմագրավելուն⁹: Նրանք 1902-1903 թթ. լուրջ աշխատանք են կատարում քրդերին հայերի դեմ

5 Ռուբեն, Քիւրդիստան. «Յուսարբ», Գահիրէ, 1925, 10 մարտ:

6 Տէն Ռուբեն, Քիւրդիստան. «Յուսարբ», Գահիրէ, 1925, 19 մարտ:

7 Անդ, 12 մարտ:

8 Անդ, 17 մարտ:

9 Միքայել Վարանդյանը գրում է, որ Արեւմտյան Նայասպանի տարբեր գավառներում ԺԹ. դ. վերջին և

ուղղված գործողություններից հետո պահելու համար: «Քիւրպերու համերաշխութեան գործը շաք դժուարին եւ բարդ ձեռնարկ մըն էր, գոր յանձն էին առեր կապարել «Ֆլայ» յեղափոխականը եւ կրօնականը: Անոնց դէմ կը գործէին թէ կառավարութիւնը իր հսկայ միջոցներով եւ թէ շէյխերը իրենց Ղուրանով: Սակայն Տրայր եւ Վարդան Վարդապետ չէին յուսահատեր եւ յամառօրէն կը շարունակէին, ունենալով այն խորունկ գիտակցութիւնը, թէ թուրք կառավարութեան դէմ մղուած պայքարին մէջ յաջողելու համար անհրաժեշտ է եթէ ոչ անպայման գործակից ունենալ քիւրքերը, գէթ չէզոքացնել զանոնք»,- գրում է Ռուբենը¹⁰:

Խոսելով Տարոնում գործունեության իր առաջին շրջանի (1905-1908 թթ.) մասին՝ Ռուբենը նշում է, որ ՆՅԴ- Դուրան Բարձրավանդակի¹¹ շրջանային ժողովը (1906 թ. Ս. Կարապետի շրջանային ժողովը) օրակարգի հարուկ կերպ է նվիրել քրդական հարցին: Այսպէղ մասնավորաբար որոշվել է ձգարել միանալ քրդերին եւ համագործակցությամբ հասնել բոլոր նպատակներին: Այս ուղղությամբ քարվող աշխատանքների մէջ կարևորվել է թուրքերի կողմից հայ-քրդական թշնամության բարոզչության դէմ հակազդեցության կազմակերպումը¹²:

Այս շրջանի վերաբերյալ Ռուբենը գրում է, որ քրդական աշիրեքները գործիք էին դարձել թուրքական կառավարության ձեռքին հայերին պարտիսանելու համար: Իսկ Տարոնում հայ ազատագրական շարժման ղեկավարությունը հիմնականում փորձել է քարքեր միջոցներով քրդերին համոզել, որ հայերն իրենց բարեկամներն են:

Օսմանյան սահմանադրության ընդունումից հետո թուրքերը թշնամաբար քրդամադրվեցին հռչակված ազատություններին: Նայկական նահանգներում քրդերը, որոշ բացառություններով հակասահմանադրական քրդամադրություններ ունեին: Փաստորեն քրդերի հակասահմանադրական քրդամադրությունները ենթադրում էին նաեւ հակահայկական քրդամադրություններ, որվհետեւ վերջինները հռչակված սահմանադրության ջերմ պաշտպաններ էին: Նայերը սահմանադրությունից կառչել էին՝ ելնելով իրենց անճարությունից, իսկ քրդերը սահմանադրությանը դէմ էին՝ այն համարելով ժամանակավոր երեւոյթ: Եւ նրանց թշնամական վերաբերմունքը ողբերգական եղավ երկուսի համար էլ:

Սակայն, երբ հայերը եւ Նայ Յեղափոխական Դաշնակցությունը բացահայտեցին երիպթութեքի իրական դէմքը եւ հեռացան նրանցից, նոր հեռանկարներ բացվեցին հայ-քրդական համագործակցության համար:

Ռուբենն անդրադառնում է նաեւ 1914 թ. գարնանը քրդերի բարձրացրած Բիթլիսի

Ի. դ. սկզբին հայ գործիչները փորձել են համագործակցել քրդերի հետ: Նման աշխատանքներ քարվել են Դերսիմում (Դերսիմի Քեռու՝ Ռուբեն Շիշմանյանի միջոցով), Տարոնում (Տրայրի, Գետրգ Չավուշի, Ռուբենի, Վարդան Վարդապետի միջոցով), Վասպուրականում (Արամի, Իշխանի, Վ. Փափագյանի, Ա. Վառմյանի, Մալխասի միջոցով), (յրեն Միքայէլ Վարանդեան, Ն. Յ. Դաշնակցութեան պարմութիւն, Պարիզ, 1932, հար. Ա., էջ 255-257):

10 **Ռուբեն**, Նայ յեղափոխականի մը յիշարակները, հար. Գ., Լոս Անճէլըս, 1951, էջ 259:

11 Դուրան-Բարձրավանդակ կոչվում էր ՆՅԴ- Տարոնի կազմակերպական շրջանը:

12 Տե՛ս **Ռուբեն**, Նայ յեղափոխականի մը յիշարակները, հար. Դ., Լոս Անճէլըս, 1951, էջ 24:

ապարամբության: Նա նշում է, որ չնայած պարպությանը, դեպքերը ապացուցեցին, որ «քիլոդր ուզում է ապրել ազատ եւ անկախ, ուզում է բաժան լինել Թուրքիայից, ուզում է ինքը փեր դառնալ իր սեփական ճակատագրին»¹³:

«Քրդական շարժումը» հողվածում Ռուբենն անդրադառնում է նաև մեկ այլ կարևոր խնդրի: Ըստ նրա՝ հայերի ազգային գիտակցության բարձր մակարդակը, Նայկական հարցի միջազգային բնույթը թուրքերին ստիպում էր ավելի շատ Նայասպանի անկախացումից զգուշանալ: Եւ քանի որ, ինչպես վերևում նշվեց, դժվար էր ճշտել երկու ժողովուրդների սահմանները կողք կողքի ապրելու եւ իրար մեջ խառնված լինելու պարճառով, թուրքական կառավարությունը Ռուբենի բնորոշմամբ «փոխանակ երկուքը մեկին հարուածելու, հեղափոխել էր «բաժանեա գի փրեւսցես»-ի քաղաքականությունը: Նայած հանգամանքներուն, թուրք կառավարությունը երբեմն կը թուլացներ իր հակահայ քաղաքականությունը եւ կը հեղափոխէր քրդական ձգտումները, իսկ երբեմն ալ, բնդհակառակն կը դադրեցներ քրդական հալածանքները եւ Քիլդերուն միջոցաւ կ'ոչնչացներ հայ ժողովուրդը»¹⁴:

«Քրդերը» հողվածում¹⁵, խոսելով քրդերի ազատագրական շարժման մասին, Ռուբենը նշում է, որ այս ժողովուրդը, որ գիտի փայլուն կովել եւ արյուն թափել ազատության համար, ի վերջո ձախողված է իր պայքարում: Նա դրա պարճառներ է համարում քրդերի զարգացման ցածր մակարդակը շրջապարող ժողովուրդներից¹⁶, նստակյաց եւ քոչվոր հայրվածների անհաշտությունը, փարբեր աշիրեթների միջեւ եղած անհամաձայնությունները:

Ռուբենը, խոսելով քրդերի ազատամարտության մասին, փայլա է մի կարևոր հարցի պարասխան: Ինչո՞ր քրդերը լինելով զինյալ ժողովուրդ, չկարողացան հասնել իրենց ազատությանը: Այստեղ նա հիմնական պարճառ է բերում քրդերի զարգացման ցածր մակարդակը¹⁷: Նա միաժամանակ նկատում է, որ բուրդն ուշիմ է եւ կրթության բնդունակ:

Նայ-քրդական փոխհարաբերությունները նոր արակ բնդունեցին առաջին աշխարհամարտի փարիններին: Քրդերի մեծամասնությունը առնվազն պարերազմի առաջին երեք փարիններին Օսմանյան կայսրության կողմն անցավ: Սա մարնանշում է, որ քրդական ազգայնականությանը դեռեւս չէր հաջողել թափանցել բուրդ զանգվածների մարածելու ավանդական եղանակներից եւ վարվելակերպից ներս¹⁸:

13 Ռուբեն, Քիլդերը. «Յուսաբեր», 1925, 31 մարտ:

14 Ռուբեն, «Քրդական շարժումը», «Դրոշակ», 1925, թ. 1, էջ 11:

15 Տե՛ս Ռուբեն, Քիլդերը. «Յուսաբեր», 1925, 24, 26, 31 մարտ, 4, 7, 18 ապրիլ:

16 Դեռեւս 1911 թ. հայ-քրդական հարաբերություններն ուսումնասիրող Նակոբ Շահբազյանը նկատել է, որ նախ «պերք է դնել քաղաքակրթութեան հիմք մը Քիլդերու համար, ու դնել այնպէս՝ որ համապարասխանէ անոնց ցեղի զարգացման, առանց սակայն վնասելու իրենց իսկական շահերը» (տե՛ս Նակոբ Շահպազյան, Քիլդրո-Նայ Դաբմութիւն, Կ. Պոլիս, 1911, էջ 3):

17 Տե՛ս «Յուսաբեր», 1925, 4 ապրիլ:

18 Սակայն շուրով երկու միարմներ սկսեցին երկբեւեռացնել քրդաբական ազգայնական ճամբարը: Նրանք «խեքնավարականներն» էին՝ Շեյխ Աբդուլ Քադերի գլխավորությամբ եւ «անկախականներ» Ամին Աալի Բեդիքիսանի գլխավորությամբ (տե՛ս Othman Siyabend, Kurdish Nationalism: Instigators and Historical Influences, "Armenian Review", Boston, 1989, Winter, vol. XXXXII, n. 1, էջ 53-54): Որոշ ուսումնասիրդներ մարնանշում են քրդական շարժման մեջ գոյություն ունեցող չորս հիմնական ուղղություն. 1) Քրդսպանի

Զավեշտալի եղավ սակայն այն, որ քրդերը, որպես գործիք, օգտագործվեցին թուրքերի կողմից հայերին կոտորելիս: Իսկ երբ նրանք գլխակցության եկան, արդեն Նայոց Յեղասպանությունը կատարված իրողություն էր, իսկ քրդերը միայնակ էին մնացել թուրքերի դեմ:

«Քիւրդերը եւ հայերը» հոդվածում Ռուբենը հերթական անգամ կարեւորում է հայ-քրդական համագործակցությունը: Այսպէղ նա կրկին փաստում է, որ Նայասպանը եւ Քրդսպանը Թուրքիայի համար կարեւոր են ոչ միայն քրդական, այլ նաեւ ռազմական տեսկերից: «Այդ երկիրներն են որ կիշխեն արեւելքի եւ հարաւի վրայ, որոնց մասին թուրքը ունի նուաճողական ձգտումներ: Այդ երկիրները կամուրջներ են, անցնելու համար ռուսական եւ պարսկական Արապսպանները, որոնց բնակիչները թուրք կը համարուին, եւ թերեւս հասնելու մինչեւ Նոկասպան, մինչեւ Այթայ լեռները: Այդ կամուրջը ապահովելու համար, անհրաժեշտ էր կամ թրքացնել հայերն ու քիւրդերը, կամ բնաջնջել զանոնք եւ թուրքեր գերելու անոնց տեղ»,- գրում է Ռուբենը:¹⁹ Թուրքերը կարողացան կրոնական կրքեր հրահրելով, բուրդ թռուռներին եւ աշխրեթապետերի շահադիպական ստոր բնագոյները իրախուսելով՝ քրդերին օգտագործել հայերի դեմ: Իսկ հայերի Յեղասպանությունից հետո քրդերը միայնակ եւ դեմ առ դեմ մնացին թուրքական կառավարության եւ նրա ցեղասպան հեղաշրջանի դրագրերի հետ: Ռուբենը կարծում է, որ քրդերից հետո պանթուրքական ծրագրերի իրականացման համար «Թուրքիա ի հարկին պիտի հարուածէ նաեւ վրացիները եւ պարսիկները»²⁰:

Նշենք նաեւ, որ Առաջին աշխարհամարտից հետո պարսկական Թուրքիայի հետ կնքված Սուրի պայմանագրի 62-64 հոդվածները սեփական պետականություն ունենալու հնարավորություն էին նախատեսում նաեւ քրդերի համար²¹:

Նայասպանի անկախության կորստից հետո հայ քաղաքական միւրքը ի դեմս Նայ Յեղալիթիսական Դաշնակցության, հակառակ մի շարք դժվարությունների, հետամուտ եղավ հայ-քրդական համերաշխության ձեռքբերմանը: Կան բազմաթիվ մանրամասներ, որոնք Կ. Սասունին անժամանակ է համարում նկարագրել: Ահա այսպէս. «Սակայն 1924-ին արդէն Դաշնակցութեան եւ Քիւրք ազգային կոմիտէի միջեւ նախնական համաձայնութիւն մը կնքուած էր, միշտ Սուրի դաշնագրի սահմաններն ու հիմունքները նկատի առնելով: Այս պարագան նոյնպէս իր բոլոր կողմերով քննութեան նիւթ չենք կրնար դարձնել: Կարեւորը իրողութեան մարնանշումն է: Նայերը եւ քիւրքերը կը մտնէին համերաշխութեան եւ համագործակցութեան ճամբու մը մէջ, քաղաքական պարասխանալու կուսակցութիւններու կապակցութեամբ»²²:

լիակատար անկախություն, որի հիմնական ջարագովը քուրդ մշակութականությունն է, 2) Քրդսպանի ինքնավարություն Թուրքիայի հովանավորության ներքո, 3) Քրդսպանի անկախություն Պարսկաստանի հովանավորության ներքո, 4) Քրդսպանի անկախություն անգլիական հովանավորության ներքո (տես **Իրազեկ**, Քիւրդիստան եւ քրդերը. «Նայրենիք» ամսագիր, 1942, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 67):

19 «Դրոշակ», 1925, թ. 2, էջ 41:

20 Անդ:

21 Stn "Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне", под редакцией проф. Ю.В.Клочникова и проф.А.В.Сабанина, Москва, 1927, էջ 24-25:

22 «Նայրենիք» ամսագիր, Բուսրոն, 1930, նոյեմբեր, էջ 93:

1925 թ. փետրի ունեցավ Շեյխ Սալիդի քրդական ապստամբությունը թուրքական կառավարության դեմ²³:

«Քրդական շարժումը» հողվածում Ռուբենը ներկայացնում է այդ ապստամբությունը: Այսպես նա շեշտում է, որ քուրդ ժողովուրդը միջազգային իրադրության բերումով պարբերաբար չէ ապստամբության, դեռ միայն նոր էին խմորվում այն նախապարաստություն մարքերը, սակայն թուրքական կառավարությունը կարողացավ փարեբային պոթեման մղել քրդական շարժումը²⁴, որը հնարավոր եղավ հեշտությամբ ճնշել: Որոշ շեյխեր կախաղան բարձրացվեցին, իսկ քուրդ մարավորականությունը բանտարկվեց: Ռուբենը գրում է, որ այս ձևով առժամանակ կանխվեց քրդական շարժումը, որը, սակայն, շարունակվելու է:

Եւ քանի որ հայերի եւ քրդերի շահերը կրկին գուցադիպել են, Ռուբենը գրում է, որ հայերը պետք է փորձեն շարունակել աշխարհի քրդերի հետ, չնայած որ հայերը խորապես վիրավորված են քրդերից:

Նարեկապետ Քեմալի մրցրած բարեփոխումներից հետո, երբ կրոնական նախապաշարումներն այլևս էական չէին, համիլանական քաղաքականության գաղափարը չէր կարող օգրագործվել թուրքերի կողմից²⁵: Այս ուղղությամբ Ռուբենը կարեւորում է աշխարհի քրդերի հետ. «Քիւրդ մարտականներուն եւ յեղափոխականներուն կը մնայ այս ուղղութեամբ դաստիարակել իրենց ժողովուրդը, եւ խրափուխ անցեալի ու ներկայի փորձառութիւններէն: Մենք անխափս կը պահենք մեր նահապսակ ընկերներուն

23 Պարմարան, հասարակական գործիչ Ալեքսանդր Սվարանցը գրում է, որ 1925 թ. փետրվարի կեսերին շեյխ Սալիդի ղեկավարած քրդական ապստամբությունը համընկավ անգլո-թուրքական հարաբերությունների սրման հետ, որը պայմանավորված էր Մոսուլի նավթով հարուստ շրջանի պարկանեության հարցով: Ազգերի Լիգայի հարույն հանձնաժողովը խորհուրդ փակեց Մոսուլը միացնել Իրաքին, սակայն թուրքական չհամաձայնեց այդ որոշման հետ: Նարեկ փոխանցվեց Նազազայի միջազգային դատարան, որն ուղարկեց արքայազն Սուտուլի հարցի լուծման անգլիական փարբերակին: Որպես թուրքական ճնշում միջոց անգլիական դիվանագիտությունն ու հեղափոխությունը օգրագործեցին շեյխ Սալիդի ապստամբությունը, որը շուտով փարածվեց արեւելյան 14 վիլայեթներում: Անգլիացի դիվանագետները Ազգերի Լիգայում նշեցին, որ քուրդերը դժգոհ են թուրքիայից եւ դրա համար պետք չէ հիմնականում քրդերով բնակեցված Մոսուլի շրջանը փակ նրան: Անգլիական դիվանագիտությունն ամեն ինչ արեց, որ թուրքական զիջումների գնա Մոսուլի հարցում: Ֆրանսիան պաշտպանում էր Անգլիայի պահանջները: Մեծ Բրիտանիայի եւ թուրքիայի կառավարությունների միջեւ սկսվեցին բանակցություններ, որոնք ավարտվեցին 1926 թ. հունիսի 5-ի թուրք-իրաքյան սահմանի եւ բարիդրացիական հարաբերությունների հաստատման մասին անգլո-թուրքական պայմանագրով: Պայմանագիրը ճանաչեց Բրյուսելյան բաժանարար գիծը՝ Մոսուլը թողնելով Իրաքի սահմաններում: Անգլո-թուրքական բանակցությունները պայմանավորեցին քրդերի ապստամբության ճնշումը 1925 թ. ապրիլին եւ Սալիդի կախաղան բարձրացվեց (սրեն **Александр Сварани, Пантюкизм в геостратегии Турции на Кавказе**, М., 2002, էջ 133):

24 Տե՛ս «Դրօշակ» 1925, թ. 1, էջ 14:

25 Այս փեսակերպից հետաքրքիր է Շեյխ Սալիդի ապստամբության ճնշման ժամանակ թուրքիայի գործադրած դաժանությունների դեմ Ընկերվարական միջազգայնականի Մարտելի համագումարում ՅՅԴ պարվիրակների բողոքի առիթով Կահիրեի «Յուսաբեր» օրաթերթի խմբագրականը, որում մասնավորապես ասվում է. «Թուրքիա դեպի յարապետ ըմբոսությունն ուղին կը մղէ իր հովանիին փակ մնացած ժողովուրդներէն վերջինը՝ քիւրդ ժողովուրդը: Կրօնքով մահմեդական ըլլալով հանդերձ՝ քիւրդը վերջնականապէս կը դարձապարտուի այն ճակարագրին, ինչ ճակարագրի որ դարձապարտած էին թուրքիայ մէջ ապրող բոլոր քրիստոնէայ ժողովուրդները» (սրեն Մ. Յ. Դաշնակցութիւնը եւ քրդական հարցը (խմբագրական), «Յուսաբեր», 1925, 5 սեպտեմբեր):

աւանդութիւնները, բայց յաջողութեան համար պայման է որ քիւրդերը իրենք ըմբռնեն թէ բնաջնջման վրանգը դառնկեալն սուրի մը պէս կախուած է նաեւ իրենց գլխուն»²⁶:

1925 թ. կրկին սկզբնավորված հայ-քրդական համագործակցության գլխավոր հիմքերից մեկը Ռուբենը համարում է պանթուրիզմի դեմ պայքարի անհրաժեշտությունը²⁷:

Ռուբենը կարեւորում է Նայկական հարցի լուծման պայքարում քրդական գործուն, որը նա պայմանավորում է իր հայրենիքում քուրդ բնակչության բավական բարձր թվով, Քրդստանի ունեցած ռազմավարական դիրքով, օգտակար հանածոների, հարկապես նավթի պաշարների առկայությամբ և այլն²⁸:

Ռուբենը կարեւորում է նաեւ եզդիների²⁹ հետ համապատասխան հարաբերությունների պահպանումը: Ըստ նրա՝ եզդիները Մերձավոր Արեւելքում հայերին ամենամոտ ժողովուրդն են, նրանց ճակատագիրը մեծապես կապված է եղել հայերի հետ³⁰: Բացի այդ, Ռուբենի համոզմամբ եզդիները կարող են կամուրջ լինել հայկական քաղաքակրթության և քրդերի միջև³¹:

Նայ Յեղափոխական Դաշնակցությունը Շեյխ Սալիդի ապստամբությանը իսկապես լրջորեն վերաբերվեց, որովհետև հիմնական գործողությունները կատարվեցին Արևմտյան Նայաստանի տարածքում, որի վրա հայ ժողովուրդն իր իրավունքներն ունի: Այս կապակցությամբ «Դրօշակ»-ի խմբագրականը գրում է. «Մենք ուշի ուշով հետևում ենք այս կռիվ ելուէջներին 1925-ից սկսած, երբ քրդությունը առաջին անգամ ազգային-ազատագրական պայքարի դրօշը պարզեց Շեյխ Սաիդի ղեկավարութեամբ: Ներքինը, և չենք կարող չհետևել, նախ և առաջ այն պատճառով, որ քիւրդ-թիւրքական գոյամարտը կատարւում է, այսօր գոնէ, մեծ մասամբ հայկական հողերի վրայ: Նողեր, որոնցից հայ ժողովուրդը չէ հրաժարւել և չպիտի հրաժարւի, ցորչափ նրա մէջ չէ մարած ազգային արժանապատւութեան զգացմունքը, և կենսունակ հայրենիքով ինքնուրոյն ազգ դառնալու իղեալը»³²:

Քուրդ և հայ ազգային գործիչների գործադրած ջանքերի շնորհիվ 1926-1927 թվականներին հնարավոր եղավ հաշտեցնել բազմաթիվ իրարամերժ քուրդ հոսանքների և 1927 թ. աշնանը հրավիրել քուրդ ազգային ընդհանուր համագումար: Համագումարին մասնակցում էին քրդական ամենապարբեր խավերի ներկայացուցիչները: Այս համա-

26 «Դրօշակ», 1925, թ. 2, էջ 41:

27 Տե՛ս Նայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՆԱԱ), ֆ. 1048, ց. 1, գ. 30, թ. 5:

28 Տե՛ս անդ, թ. 15:

29 Եզդիները եզդիականություն դավանող քրդերն են: Վ. Բալբուրդյանը գրում է, որ եզդիական կամ եզդիական դավանանքի ծագման արմատներն առ այսօր գիտության համար լրիվ պարզված չեն: Այն մերթ կապվում է մովսեսականության, մերթ հին իրանական հավատալիքների, մերթ զրադաշտականության, արեապաշտության և այլ կրոնական ուսմունքների հետ: Այն պարունակում է նաև քրիստոնեության և մահմեդականության տարրեր: Եզդիների հիմնական սրբավայրը շեյխ Ադիի՝ եզդիականության մարգարեի գերեզմանն ու դամբարանն է, որը գտնվում է Մոսուլի շրջանի Լալեշ գյուղում (տե՛ս Վ. Բալբուրդյան, նշվ. աշխ., էջ 31-32):

30 Տե՛ս ՆԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 30, թ. 62:

31 Տե՛ս անդ, թ. 63-64:

32 Քրդական հարցը (խմբագրական). «Դրօշակ», Փարիզ, 1930, օգոստոս, էջ 185:

գումարը, իր փեսակի մեջ առաջին լուրջ քաղաքական հավաքային էր, որ երբևէ ունեցել էր բուրդ ժողովուրդը:

1927 թ. համագումարը հիմնադրեց քրդական «Նոյբուն»³³ ազգային կուսակցությունը³⁴, որի մեջ կենտրոնացան նախկին կազմակերպություններն ու հոսանքները՝ սրբեղծելով մեկ ազգային կենտրոն: Կարո Սասունին, որ անձամբ մեծ ներդրում է ունեցել համագումարի կայացման և քրդական միասնական կազմակերպության սրբեղծման գործում, նշում է՝ «Նոյբուն»-ի գլխավոր նպատակը Թուրքական Քրդստանի անկախությունն էր³⁵: Նախկին սպա Իսսան Նուրի փաշային հանձնարարվեց այդ պայքարի կազմակերպումը³⁶:

Համագումարից անմիջապես հետո Հայ Յեղափոխական Դաշնակցության և «Նոյբուն»-ի դաշնագիր ստորագրվեց, որով և բուրդ ազգային երկու ղեկավար կազմակերպությունները պայմանավորվեցին համարել պայքար մղել Թուրքիայի դեմ³⁷: 1930 թ. «Նոյբուն»-ը Արարատ լեռան հարակից շրջաններում նախաձեռնեց հերթական հակաթուրքական ապստամբությունը: Արարատի ապստամբությունը ղեկավարում էր բուրդ հայրենասեր Իսսան Նուրին, որը ապստամբության շրջան էր ուղարկվել «Նոյբուն» կուսակցության կողմից որպես արտակարգ զինվորական ներկայացուցիչ³⁸:

Արարատի ապստամբության պարությունից հետո Ռուբենը քրդական խնդիրների մասին գրված իր ուսումնասիրության մեջ մեկ անգամ էս նշում է, որ կրոնական գործունե այլևս չի կարող քրդերին հետ պահել թուրքական կառավարության դեմ դուրս գալուց: «Քիրքի համակրության և հակակրության հիմքը կրօնը չէ, այլ իր ազգային շահը»,- գրում է նա³⁹: Քրդերի գիտակցության մեջ այս հեղաշրջումը Ռուբենը պայմանավորում է ոչ այնքան նրանց կրթական մակարդակի բարձրացմամբ կամ արաբքին ազդակներով, որքան հանրապետական թուրքական կառավարության կողմից վարվող քրդահալած քաղաքականությամբ, որը դրսևորվում է պարբերական ջարդերով, փեղահանություններով⁴⁰: Ռուբենը գրում է, որ անհրաժեշտ է աջակցել քրդական հարցի բարոզությանը: «Քրդական հարցի արծարծումով ինքնըստինքյան գուցա հետ կերպով առաջ պիտի գայ և Տաճկահայկական հարցի լուծման խնդիրը»,- գրում է նա⁴¹: Ռուբենի ըմբռնմամբ՝ քրդական ազատագրական շարժումը Թուրքիան քայքայելու լուրջ ազդակ

33 Որոշ ուսումնասիրողներ «Նոյբուն» բառը մեկնաբանում են այսպես՝ քրդերեն այն նշանակում է անկախություն, իսկ հայերեն՝ հայերի փուն (լեւն *Uras Esat, The Armenians in History and the Armenian Question*, Istanbul, Documentary publications, 1988, էջ 83):

34 Տե՛ս *Arshak Safrastyan, Kurds and Kurdistan*, London, 1948, էջ 84:

35 Տե՛ս *Կ. Սասունի*, Քիրք ազգային կուսակցությունը (Նոյբուն). «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, մարտ 1931, էջ 78:

36 Տե՛ս *Сост. Р. Оганян, “Курды в пламени войны”, М., 2005, էջ 164:*

37 Դաշնագիր Հայ Յեղափոխական Դաշնակցության և Քիրք Ազգային «Նոյպուն» Իկլայի միջև. «Դրօշակ», 1987, թ. 22, 18 փետրուար, էջ 11-14:

38 Տե՛ս *М. Гасратян, Курды Турции в новейшее время*, Ереван, 1990, էջ 155:

39 ՆԱԳ, ֆ. 1048, ց. 1, գ. 30, թ. 3:

40 Տե՛ս անդ:

41 Անդ, գ. 91, թ. 12:

է: Ներկաբար, այդ գործի համար պէտք չէ խնայել ո՛չ քարոզչական աշխատանք, ո՛չ էլ նյութական, բարոյական, մարտական միջոցներ⁴²:

Երկրորդ աշխարհամարտի փառքներին, Գերմանիայի կողմից ԽՍՀՄ-ի վրա հարձակվելուց մի քանի օր անց Ռուբենը, որն այդ ժամանակ Պաղեստինում էր, Մերձավոր Արևելքում գրավող անգլիական բանակի մի զենեռալի գրում է, որ անգլիացիների և ԽՍՀՄ-ի ձախողման դեպքում թուրքերը հարձակման են անցնելու երկուսի վրա էլ: Նա առաջարկում է Դաշնակցության աջակցությունը անգլիադիմադրային ուժերին: Այսպես Ռուբենը հիշեցնում է չանդեսել նաև շուրջ 5 միլիոն քրդության դասը, ավելին, խնդրում է «աջակցել գոնե Թուրքիոյ սահմաններում մեջ եղած քրդութեան կազմակերպման մեջ՝ պարբարսը ըլլալու վրանգներու համար»⁴³: Օրինակի համար առաջարկվում է սրելով հայերից, քրդերից և չերքեզներից կազմված մի գործարանակ, և այն պարբարսը պահել Սիրիայի և Իրաքի հյուսիսային սահմանների վրա⁴⁴:

Ավելի ուշ Ռուբենը գրում է անգլիացի մեկ այլ զենեռալի՝ Քոլնելին, հիշեցնելով, որ Նայ Յեղափոխական Դաշնակցությունը հեղափոխված է քրդական հարցով, որը Մերձավոր Արևելքի քաղաքական իրավիճակի վրա ազդելու հիմնական գործոններից է⁴⁵:

Քրդական շարժման առաջնորդներից շեյխ Աբդու Կադերին⁴⁶ ուղղված 1942 թ. ապրիլի 22-ի թվակիր նամակում Ռուբենը մտադրություն է հայտնում, որ հայերը և քրդերը հերթական անգամ ենթակա են հալածանքի և բնաջնջման, ինչին պէտք է դիմադրավել: Այս նամակում ևս Ռուբենը կարեւորում է հայ-քրդական համապեղ զինված ուժերի սրելով⁴⁷: Նայ-քրդական բանակի սրելովման անհրաժեշտությունը Ռուբենը հիմնավորում է նաև առանձին հոդվածով⁴⁸:

Ռուբենը երկրորդ աշխարհամարտի փառքներին արված իր գրառումներից մեկում կրկին անդրադառնում է հայ-քրդական սահմանին, շեշտելով՝ հարցը պէտք է լուծվի Սուրի պայմանագրի փրամադրությունների իրագործմամբ: Ընդ որում այս փրամադրությունն է բնկած նաև քրդական և հայկական ազգային կազմակերպությունների՝ Նոյբունի և Դաշնակցության համաձայնության և պայմանավորվածությունների հիմքում⁴⁹:

Այսպիսով՝ Ռուբեն Տեր-Մինասյանը, իր հուշերում և ուսումնասիրություններում լուրջ փոք է հարկացրել քրդական խնդրին, հայ-քրդական հարաբերությունների լուսաբանմանը: Նա հիմնականում կենսորոնացել է երեք կարեւոր սկզբունքների վրա.

42 Անդ, թ. 13:

43 ՆԱԱ, 1048, ց. 1, գ. 107, թ. 2:

44 Անդ:

45 Անդ, թ. 4:

46 Շեյխ Աբդու Կադերը սկզբնական շրջանում կողմնակից էր անգլիական հովանավորությամբ Քրդստանի անկախությանը: Սակայն հեղափոխում (երկրորդ աշխարհամարտի փառքներին) դարձավ անգլիացիների հակառակորդը և հանդիսացավ քրդական շարժման հիմնական կազմակերպիչը Նոյսիսային Քրդստանում (տե՛ս **Իրազեկ**, Քիւրդիստան և քրդերը. «Նայրենիք» ամսագիր, 1942, նոյեմբեր-դեկտեմբեր, էջ 68):

47 Տե՛ս ՆԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 107, թ. 5:

48 Տե՛ս անդ, գ. 44, թ. 1-6:

49 Տե՛ս անդ, գ. 87, թ. 1:

ա) ճշգրտող հայ-քրդական սահմանը⁵⁰, որը հաճախ օտարների կողմից արհեստականորեն փոփոխված է ներկայացվել ի վնաս հայերի,

բ) վերածել հայ-քրդական փոխհարաբերությունների պարմությունը՝ վեր հանելով անցյալի սխալներն ու բացթողումները,

գ) ուղենշել իր ժամանակի եւ ապագայի այն համարելը քայլերը, որոնք նպատակաուղղվելու են երկու ժողովուրդների բարեկեցությանն ու համարելը, խաղաղ գոյակցությանը:

Անդրադառնալով հայ-քրդական սահմանի հստակեցմանը՝ Ռուբենը անխռին է համարում թե՛ հայկական եւ թե՛ քրդական կողմերից հնչող չափազանց ծայրահեղ մոտեցումները: Ըստ նրա՝ այդ սահմանը մոտավոր կարող է լինել Նայկական Տավրոսը, ինչը է փարբերվում Սեւրի պայմանագրով նախանշված սահմանից:

Խոսելով հայ-քրդական փոխհարաբերությունների անցյալի մասին՝ Ռուբենը ցավով է նշում քրդերի կողմից թույլ տրված սխալները, որը նա պարճառաբանում է վերջիններիս գարգացման ցածր մակարդակով, կրոնական մոլեռանդությամբ, ինչպես նաեւ քուրդ ցեղապետների ունեցած անձնական շահամոլությամբ:

Առավել արդիական են Ռուբենի մարտնչությունները հայ-քրդական հեղափոխական համագործակցության առումով: Ըստ նրա՝ հայ-քրդական միասնական ճակատի ստեղծմամբ հնարավոր կլինի առավել արդյունավետ գործել հանուն երկու ժողովուրդների ուրուա-հարված իրավունքների վերականգնման:

50 1920-30-ական թվականներին հարցը եղել է հայ քաղաքական մտքի օրակարգում: Նայ Դաւիթ եւ քրդական ազատագրական շարժման այսօրվա կարգավիճակները, մեր կարծիքով, հայ-քրդական սահմանի հարցը եթե ոչ այսօր, ապա վաղն անպայման կրկին լուրջ քննարկման առարկա են դարձնելու:

ԷՄՄԱ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ
պարամական գիտ. դոկտոր

**ՆԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ, ՄԱՂԱՔԻԱ ՕՐՄԱՆՅԱՆԸ
ԵՒ ՕՏԱՐԱԶԳԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ**

Երկարատև և դժնդակ պարամության ընթացքում Նայոց Եկեղեցին ապրել է վերելքներ ու վայրէջքներ, ունեցել անկախ պերականություն՝ մեծ ու փոքր քաղաքներում, ակամարեն եղել պերականության կորստին և վերահասարարմանը, այդ բոլորով հանդերձ մնացել իր ժողովրդի պահապանն ու ամուր հենարանը: Պերականությունից զուրկ հայության համար Նայոց Եկեղեցին հաճախ կարարել է նաև աշխարհիկ իրավասություններ, և հայ ժողովուրդը, ի դեմս նրա րեսել է իր հզոր պաշարանին: Աշխարհի քրիստոնյա երկրների մեջ Նայ Եկեղեցին պահպանել է իր բարձր պարիվը, հավարարիմ մնացել առաքելական հնագույն եկեղեցու ավանդություններին:

Մահմեդական բազմաթիվ քոչվոր ցեղերի հարձակումների պարճառով իր պերականությունը կորցրած հայությունը հաճախ է իր հայացքը հառել քրիստոնյա Երոպային՝ նրանից ակնկալելով օգնություն: Նայոց Եկեղեցու անվանի հայրապետները (Միքայել Սերասարացի, Նակոր Ջուղայեցի և այլք) օգնության խնդրանքով պարվիրակություններ են ուղարկել երոպական պերություններ, բայց այնրեղ Նոմի պար օգնության դիմաց առաջարկել է ընդունել կաթոլիկություն, փոխել դավանանքը: Բազմաթիվ հասարակական գործիչներ (Իսրայել Օրի, Նովսեփ Էմին և այլք) իրենց հայացքը հառել են հերզհերսե հզորացող հյուսիսային հարեանին՝ քրիստոնյա Ռուսաստանին, սակայն նրանց պարասխանը միշտ բխել է իրենց ծավալապաշարական ճգրումներից և Նայասար եղել է շահարկման առարկա:

Դարեր շարունակ, չնայելով իրենց քաղաքական անբարեհույս վիճակին, Նայոց Եկեղեցին և հայությունը հավարարիմ մնացին իրենց ավանդություններին և դավանանքին, ոչ մի գնով չխաբվելով հզոր պերությունների խոսարումներից: Այդ հանգամանքը խիստ զայրացնում էր հունադավան, առավելապես կաթոլիկ հովվապետերին, և նրանք իրենց երկրներում հայադավան, ազգային առաքելական ուղղափառ եկեղեցին ներկայացնում էին իբրև հերձվածող, աղանդավորական եկեղեցի: Երոպական րարբեր դեկավարները չէին հանդուրժում, որ պերականությունը կորցրած, փոքրաքանակ մի ժողովուրդ ինքնուրույն դավանանք ունի և աշխարում էին սեպ խրել, խախտել այդ ժողովրդի միասնությունը: Դա նրանց երբեմն հաջողվում էր: Արեւմտահայ մշակութային կենրոնն Ա.Պոլսում, որրել գոյություն ուներ մեծ հայկական համայնք, կաթոլիկներին հաջողվեց պառակտել համայնքի միասնությունը, սրելծվեց առանձին կաթոլիկ համայնք, որը թուրքական պերական վարչական ապարարի կողմից սրացավ «կաթո-

լիկ միլիթի» անվանումը: Իգուր էին համագգային գաղափարների փեր հայ եւ կաթոլիկ դավանանքի մշակութային գործիչները միասնություն քաղգում (Տուր ինձ քո ձեռքը, եղբայր եմք մենք), բանաստեղծություններով ոգեշնչում փարքեր դավանանքների հայերին միասնության գաղափարները: Պատակաբում է առաջանում նույնիսկ հռոմեադավան հայերի շրջանում. հաստնյան եւ հակահաստնյան պայքարը այդ պատակաբման ցայրումն դրսևորումն էր: Մի խումբ հայ կաթոլիկներ դիմագրավում են պապականությանը, հռոմեադավան հայերին կաթոլիկության մեջ ձուլելու, ագգային արմարներից հեռացնելու քաղաքականությանը: Դրանցից էր Նոմի աստվածաբանական կաճառի անդամ, հռոմեադավան ընրանիքում ծնված, Նոմում բարձրագույն կրթություն սրացած Մաղաքիա Օրմանյանը, որն ուժգին պայքար է ծավալում հռոմեադավան հայությանը ձուլելու քաղաքականության դեմ: Այդ պայքարի արրահայրությունն են դառնում 1870 եւ 1872 թվերին իրարերեն լույս րեսած «Նայ արևելեան կաթողիկեայք» եւ «Ռեներտուրուս կամ Նայք եւ պապություն» աշխարությունները եւ դրանց գաղափարական շարունակությունը՝ 1872 եւ 1873 թթ. ֆրանսերեն լույս րեսած «Արևելեան կաթողիկաց կրօնական ագարությունը եւ քաղաքական իրաունքները», «Վարիկան եւ Նայք»¹ գործերը, որոնք անցան պապական արգելված գրքերի շարքը: Նոմում Կաթոլիկ Եկեղեցու վարդապետ օժված Մ. Օրմանյանը 1876 թ. գալիս է Կ. Պոլիս եւ որոշում իր կապերը խզել Վարիկանից, վերադառնալ Նայ Եկեղեցու գիրկը. «Հոմեադաունութենէ հեռանալու միարը իմ վրա ոչ կիրքի մը վայրկենական որոշում եւ ոչ շահադիարութեան կեղծիք էր, այլ երկար արեն խորհում եւ կշռում, եւ խոհական քայլերով յառաջացած գործ մը եղած է»²: 1879 թ. հոկտեմբերի 28-ին գրերթ «ժողովրդական ցույցի» կերպարանով 75 հոմեադավանի հեր (30 կին, 45 րդամարդ) Օրմանյանը Կ. Պոլսի հայոց պարրիարք Ներսես Վարժապետյանի քաջալերանքով վերադարձավ Նայ Եկեղեցու գիրկը եւ սրացավ ծայրագույն վարդապետության ասարիճան: 1880 թ. ապրիլին Օրմանյանն ընրրվեց Կարինի հոգևոր առաջնորդ³: 1886 թ. Ամենայն Նայոց Կաթողիկոս Մակար Թեղուրցու կողմից մի քանի արժանավոր հոգևորականների հեր նա օժվեց եպիսկոպոս: Դեռես Նոմում Աստվածաբանական կաճառի անդամի կոչում սրացած Օրմանյանը քաջատեղյակ էր ընդհանրապես քրիստոնեության, մասնավորապես Նայ Առաքելական Եկեղեցու պարմությանը: Դրա շնորհիվ եւ Նայոց Նայրապետի քաջալերանքով նորրնժա եպիսկոպոսը 1886 թ. «Արարար» ամսագրում հողվածաշարով լույս ընժայեց «Աթոռ Նայասրանեայց» աշխարությունը, որը շուրով լույս րեսավ իրրեւ առանձին աշխարություն⁴: Անգամ հպանցիկ ժանոթությունն այդ գրքույկին (93 էջ, 14 գլուխ) հաղորդակցում է մեկ

1 Տեն Ն. Ճ. Միրունի, Օրմանեան եւ իր ժամանակը. «Էջմիածին», 1961, Ե, էջ 37:

2 Մ. Օրմանեան, հոռք եւ խօսք, Երուսաղեմ, 1929, էջ 6:

3 Մեր խնդրից դուրս է անդրադառնալ նրա առաջնորդական գործունեությանը եւ մասնակցությանը «Պաշրպան Նայրենյաց» ագարագրական գաղրրի կազմակերպության գործունեությանը: Այդ մասին րենս Ռ. Փ. Նովիանիսյանի արժեքավոր աշխարությունը:

4 «Աթոռ Նայասրանեայց» գրեց Մաղաքիա եպիսկոպոս Օրմանեան, առաջնորդ Կարնոյ, Վաղարշապատի րարանի սրքոյ կաթողիկե Էջմիածնի 1886-ՌՅԼԳ, հրամանաւ Տ. Տ. Մակարայ Վեհափառ սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Նայոց:

ընկերությունները կանոնակարգելու համար 18, 09, 1961 թ. Թուրքիայի Հանրապետության նախարարների խորհուրդը ընդունել է թիվ 5/1654 որոշումը, որով սահմանվում են համայնքի կողմից երկաստիճան ընկերություններ: Պատրիարքի ընկերությունից հետո Թուրքիայի նախարարների խորհուրդը շնորհավորական նամակ է հղում նորընտրված պատրիարքին, և դա համարվում է ընկերության արդյունքի պաշտոնական ճանաչում: Այդ նամակից հետո միայն պատրիարքը, համաձայն 1934 թ. ընդունված 259 թվակիր փարագի (սքեմի) մասին օրենքի, իրավունք ունի եկեղեցու փարածքից դուրս ելա կրել կրոնական հանդերձանք՝ բացառիկ իրավունք, որից օգտվում են մուսուլմանների Կրոնական գործերի նախագահը, հույն պատրիարքը և հրեա համայնքի կրոնապետը:

1922 թ. Զավեն պատրիարքի հեռանալուց հետո թուրքական իշխանությունները շուրջ հինգ փարի թույլ չեն փվել անցկացնել պատրիարքական ընկերություններ, ինչի հետևանքով առանց ղեկավարի մնացած հայ համայնքում խնդիրներն ավելի են սրվել: Թուրքիայի Հանրապետությունում առաջին անգամ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքի ընկերություններ փեղի են ունեցել 1927 թ., և պատրիարք է ընտրվել Մեսրոպ արքեպիսկոպոս Նարոյանը (1927-1944 թթ.): Սակայն ընկերությունից հետո թուրքական իշխանությունները հինգ փարի դե-յուրե չեն ճանաչել Նարոյան պատրիարքին: Նրա գահակալության փարիները համընկան քեմալական ազգայնականության զարգացման հետ, հենց այդ ժամանակաշրջանում փեղի ունեցավ Թուրքիայի փոքրամասնությունների կյանքում բախտորոշ մի քանի իրադարձություն: Արդեն 1920-ականների վերջերին պետական մակարդակով սկսեց կիրառվել փոքրամասնությունների լեզուների դեմ մի պայքար, որն անվանվեց «Հայրենակից, թուրքերեն խոսիր»: Թուրքական իշխանությունների այս լեզվաքաղաքականությունը չէր հանդուրժում թուրքերենից բացի այլ լեզուների կիրառում, և սա Թուրքիայում շարունակվեց նաև հետագայում: 1934 թ. հունիսի 21-ին Թուրքիայում ընդունվեց, այսպես կոչված, «Ազգանվան մասին օրենք», որով արգելվեցին ոչ թուրքական ազգանունները և որոշ վերջածանցներ, ինչպիսիք են «յան», «պուլոս», «իս» և այլն¹²: Այդ ժամանակ հայկական ազգանունների մեծ մասը թուրքացվեց, միայն հաբուսկենոս դեպքերում եղան բացառություններ, և պահպանվեցին «յան»-ով ավարտվող ազգանունները: Մեսրոպ պատրիարքի գահակալման փարիներին են անցկացվել նաև իրենց բնույթով ծայրահեղ հակահայկական «20 դասակարգի գինակոչը», «Ունեցվածքի հարկը», այդ թվականներին են փեղի ունեցել գավառահայերի պարտադրված արտագաղթերը:

1944 թ. Մեսրոպ պատրիարքը վախճանվում է, և Գեորգե Լախսկոպոս Արսլանյանը երկրորդ անգամ է դառնում փեղապահ (1944-1950 թթ.): Թուրքիայում օրեցօր ծավալվող ծայրահեղ ազգայնամոլության և պանթուրքիզմի պայմաններում, թուրքական իշխանությունները, կրկին ամբողջ ժամանակով, արգելում են հայ համայնքին ընկերելու պատրիարք: Բազմաթիվ աղքատներ նշում են, որ այդ փարիներին հայ համայնքում առավել ևս սրվել են ներքին երկպառակությունները և խնդիրները: Հայ համայնքում սրելո՞-

12 Տե՛ս անդ:

ված վիճակի դեմ բողոքի ալիք է բարձրանում եւ 1948 թ. Նայոց պարբիարքության մի շարք հոգևորականներ նույնիսկ ընդվզում են Կրեդապահ Գեորգ եպիսկոպոսի դեմ¹³։ Սկսված վեճերին միջամտել են Ամենայն Նայոց Գեորգ Զ. եւ Կիլիկիայի Գարեգին Ա. կաթողիկոսները, ի վերջո, 1950 թվականի վերջին անցկացվում են Պոլսո պարբիարքի ընտրությունները։ Այս հարցում որոշակի դեր ունենալու այն հանգամանքը, որ Թուրքիայում խորհրդարանական ընտրությունների արդյունքում իշխանության էր եկել նոր ուժ՝ Դեմոկրատական կուսակցությունը։ Որքան որքան էր նախորդ իշխանություններից տարբերվող քայլեր անել։ Սակայն հեղափոխական ցույց տվեց, որ թուրքական իշխանությունների քաղաքականությունը, անկախ նրանց գաղափարախոսական կողմնորոշումներից, քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ շարունակում է մնալ խտրական եւ թշնամական։

Ինչեւէ, 1950 թ. Կոստանդնուպոլսի Նայոց պարբիարք է ընտրվում Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանը, որն այդ ժամանակ Լաբինական Ամերիկայի Նայոց հոգևոր առաջնորդն էր եւ 1951 թ. վերադառնալով Թուրքիա՝ մարտի 16-ին սրանձնում է պարբիարքի պարտականությունները։ Նորընտիր պարբիարքը Արմաշի հայրնի հոգևոր դպրոցի սան էր եւ ծրագրել էր Սրամբուլում հիմնել նմանատիպ մի կրթական հաստատություն, որը կլինեւ նաեւ Արմաշի դպրոցի շարունակությունը։ Այս մտադրության մասին Գարեգին Խաչատուրյանը հայրնի էր համայնքի իր կողմնակիցներին նաեւ մինչեւ պարբիարքական ընտրությունները, եւ դա յուրահասարակ նախապայմանի բնույթ էր կրել¹⁴։ 1953 թ. կյանքի է կոչվում Գարեգին պարբիարքի մտադրությունը եւ բացվում է Սուրբ Խաչ դպրոցը, որը նաեւ նպաստեւ ունենալու Թուրքիայի տարբեր գավառներում մնացած հայության բեկորներին վերադարձնել իրենց ակունքներին, այսինքն՝ պայքարել լիակատար ուժացման դեմ։ Այդ գործին երջանկահիշատակ պարբիարքը նվիրումով է լծվել, եւ նրա նախաձեռնության շնորհիվ բազմաթիվ հայորդիներ վերադարձան իրենց արմարներին, հիմք դրվեց նաեւ հեղափոխում այս գործի շարունակության համար։

1950-ական թվականներից թափ է առել Թուրքիայի տարբեր գավառներում գոյատևած փոքրաթիվ քրիստոնյա հայերի ինքնախնամ գաղթը դեպի Սրամբուլ։ Եթե 1920-40-ական թվականներին Սրամբուլի համայնքի կորիզը եւ մեծամասնությունը դեռուս կազմում էին բնիկ պոլսեցի (այսինքն՝ ավելի վաղ դարերում Պոլիս Կրեդապիսկոպոսի) հայերը, ապա հեղափոխական տարիներին վերջիններք հիմնականում գաղթեցին արտասահման, եւ նրանց փոխարինեցին գավառից եկած հայերը։ Նախ եւ նկատել, որ երբեմն հենց Պոլսո Նայոց պարբիարքությունն է ձեռնամուխ եղել գավառներից հայերին Սրամբուլ Կրեդապիսկոպոս գործին, որպեսզի գոնե այդ կերպ փրկի հայության բեկորները։ Նայրնի եւ Գարեգին Խաչատուրյան պարբիարքի (հեղափոխում նաեւ՝ Շնորհք Գալուստյան պարբիարքի) գործադրած ջանքերն արդեն քրդախոս եւ թրքախոս դարձած գավառահայ երեխաներին Սրամբուլի հայկական դպրոցներ Կրեդապիսկոպոս եւ հայեցի կրթութ-

13 Տե՛ս Զաւէն Ա. քնն. Արգումանեան, Թուրքիոյ Պարբիարքութիւնը, «Ազգապատմ», հար. Դ., զիքք Բ., Նիւ Եորք, 1997, էջ 78:

14 Տե՛ս անոյ, էջ 82:

յուն փախու ուղղությամբ: Նիշյալ գործում մեծ դեր ունեն նաև Տայոց եկեղեցու սպասավորներ Տեր Բարդուղ ավագ քահանա Տրքաջյանն ու Տեր Կիրակոս ավագ քահանա Թոքաթյանը, որոնք անձամբ շրջել են փարբեր գավառներում և հավաքել այլախոս հայ երեխաներին: Սակայն հարկ է շեշտել, որ թուրքական իշխանությունները ամենաբիրպ մերթդներով ճնշում էին Տայ Առաքելական Եկեղեցու այս ջանքերը և պատրիարքությանը մեղադրում «հակապետական գործունեություն ծավալելու մեջ»:

1961 թ. հունիսի 22-ին Սրբոց Թարգմանչաց Կոնի Պատարագի ժամանակ սրբի փազնապի պատրճառով եկեղեցում հոգին ավանդեց Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանը: Նրա մահից հետո Պոլսո պատրիարք է ընտրվում Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանը¹⁵, որն այդ աթոռի ամենաերկարակյաց գահակալներից էր (1961-1990 թթ.): Տարկ է նկատել, որ Երուսաղեմի պատրիարքությունում հոգևոր ծառայություն իրականացնող Շնորհք Սրբազանը 1960 թ. փեղափոխվում է Սյամբուլ հենց Գարեգին պատրիարքի հրավերով, այսինքն՝ կարելի է ենթադրել, որ Գարեգին պատրիարքի նախնադրելի իրավահաջորդն է եղել: Շնորհք Գալուստյան պատրիարքի ջանքերով համայնքային կյանքում աշխուժություն է նկատվում, շարունակվում են աշխատանքները գավառահայության վիճակի բարելավման և ուժացումից փրկելու ուղղությամբ: 1966 թ. Մուշի Վարթո գավառում փեղի է ունենում երկրաշարժ, որից հետո այնտեղ բնակվող հազարավոր հայեր գաղթում են Սյամբուլ: Շնորհք պատրիարքի գլխավորությամբ ստեղծվում է «Գավառացի կարիքավորների օգնության հանձնաժողով», որը զբաղվել է փոխաձեռնի համար ապաստան և աշխատանք գտնելու գործով: 1967 թ. Սյամբուլի մերձակա Քրնալը կղզում պատրիարքը հայ երեխաների համար հիմնում է կազմուման կայան-ճամբար¹⁶:

Շնորհք պատրիարքի գահակալությունը համընկնում է միջազգային ասպարեզում Տայոց Յեղասպանության խնդրի աշխուժացման ժամանակաշրջանին, ինչը լրացուցիչ դժվարություններ է ստեղծում համայնքի և անձամբ պատրիարքի համար: Այսպես, 1965 թ., Տայոց Յեղասպանության 50-ամյակին, թուրք լրագրողներն ուղղակիորեն հարցրել էին Շնորհք պատրիարքին, թե արդյո՞ք եղել է Յեղասպանություն: Շնորհք պատրիարքը խուսափողական պատասխան էր փոխել, թե ինքը պարմաբան չէ, թող պարմաբանները պատասխանեն: Սակայն, երբ թուրք լրագրողները պնդել են իրենց հարցը, պատրիարքը փոխել է հետևյալ հստակ պատասխանը. «1915-ին ես 7 փարեկան էի, մեր 70 հոգիանոց գերդաստանից միայն ես ու մայրս ողջ մնացինք: Աքսորի ժամանակ մորս էլ կորցրի, քանի որ նա ստիպված ամուսնացավ մուսուլման մի թուրքի հետ: Նիմա դուք ինձ պարասխան փոխել, թե ո՞ր եմ իմ ազգականները: Եթե դուք գտնեք այս հարցի պատասխանը, դրանով նաև պարասխանած կլինեք՝ Յեղասպանությունը եղել է, թե՛ ոչ հարցին»¹⁷:

Շնորհք պատրիարքի գահակալության փարիներին ստեղծվել է պատրիարքութ-

15 Ավելորդ չէ նշել, որ Գարեգին պատրիարքի մահվան և Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի ընտրության ժամանակ Պոլսում ներկա է գտնվել նաև Ամենայն Տայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը:

16 M. Bebiroğlu, անդ:

17 “Ermeni Patriği Şınork Kalustyan’ın üvey kardeşi Diyanet işleri başkanı Lütfi Doğan”, - www.angelfire.com/wy/yaw/Ermeniler/ermeniler.html:

յան խորհրդակցական մարմին, որի կազմի մեջ են մտել համայնքի մրավորականներ և ճանաչված անձինք: Աշխարհիկ այս կառույցը մեծ նշանակություն և կարևորություն է ունեցել, սակայն, Շնորհք պարրիարքի մահից հետո փակվել է: Գավառներում մնացած և ուծացման փառքեր մակարդակներում գտնվող հայերի հարցը մեծապես եղել է նաև Շնորհք պարրիարքի ուշադրության կենտրոնում: Մասնավորապես, նա ոչ միայն ակտիվորեն զբաղվել է ուծացած հայության հարցերով, այլև գիտական հետազոտության է ենթարկել խնդիրը, քվել Թուրքիայում բնակվող հայության խմբային բաժանումներ, որոնք մինչև այժմ օգնում են թեմայով զբաղվողներին¹⁸: Նախկին շախան է, որ հենց Շնորհք պարրիարքի գահակալության փառիներին և մեծապես նրա ջանքերով է «Վարթո Էրմենի աշիրեթի» անվամբ հայրնի քղախոս հայերի ցեղախումբը փեղափոխվել Սրամբուլ, սկսել շփվել հայ համայնքի հետ¹⁹:

Այսպիսով՝ փեսնում ենք, որ թե՛ օսմանյան, և թե՛ հանրապետական Թուրքիայի իշխանությունները ծայրահեղ թշնամական և խտրական քաղաքականություն են վարել Կոստանդնուպոլսի Նայոց պարրիարքության նկատմամբ: Այնուամենայնիվ, սրեղծված ծայրաստիճան բարդ պայմաններում անգամ Պոլսո Նայոց պարրիարքությունը և վերջինիս գահակալները անուրանալի դեր են խաղացել Թուրքիայի հայության ազգային և կրոնական ինքնության պահպանման գործում:

18 Տե՛ս «Ալիք», Թեհրան, 18.12.1980, նույնը փե՛ն նաեւ **Կ. Խանյարեան**, Նայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Նանրապետութիւնում (1923-2005), Անթիլիաս, 2009, էջ 27:

19 Ի դեպ, Վարթո ցեղախմբի անդամ է նաեւ Ալիս թերթի նախկին խմբագրապետ և պոլսահայ համայնքի հայրնի գործիչ Նրանսր Դինքի կինը՝ Ռաբել Դինքը:

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

«ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՐՈՏԵԱՆ» ՆԱԲԱԶԱԾՈՒԻ ԿՈՆԴԱՆՆԵՐԸ (Նկարագրություններ և բնագրեր)

Վենետիկի Սուրբ Ղազար կղզու Մխիթարեան մայրավանքում 2001 և 2004 թթ.՝ երկու անգամն էլ սեպտեմբեր ամսին, «Յարություն Քիրոտեան» ձեռագրական հաւաքածուի ցուցակը պարբերաբար ընթացքում փարաբնույթ նիթերից զարեցինք ճիշդ 21 կոնդակ, բոլորը դասաւորեցինք ժամանակագրական կարգով¹. առաջինը 1700 թ. էր, վերջինը՝ 1910 թ., նոյն կարգով էլ համարակալեցինք² և սկզբնապէս մարտի էինք միայն նկարագրել, բայց քանի որ գիտենք՝ կաթողիկոսական, պարբերաբար և առաջնորդական կոնդակները մեր Եկեղեցու պարամութեան սկզբնաղբիւրների շարքում առաջնակարգ արժէք ունեն³, ուստի աստիճանաբար ամէն միատրի նկարագրութեանն աւելացաւ նաեւ բնագրի վերաբարտրութիւնը: Մարտի էինք սա որպէս յաւելում գերել «Յուցակ հայերէն ձեռագրաց «Յարություն Քիրոտեան» հաւաքածուի» անուանելի ստորար հարտի մէջ: Սակայն, ինչպէս այլ առիթով ասել ենք, հանգամանքների բերումով և մեզանից անկախ պարճառներով հարտի ամբողջացումն ուշանում է, ուստի որոշեցինք առայժմ ամսագրային հրապարակմամբ ապահովել այս բնագրերի գիտական շրջանառութիւնը:

Նկարագրութեան ընթացքում աստիճանաբար սրելոծեցինք մեր համոզմամբ նիթին յարմարող հարցակարգ. առանձին պողով կարգային Նամարը (մենք ենք նշանակել), յաջորդ պարբերութեան մէջ Գրչութեան վայր և Գրութեան թուական, երրորդ պարբերութիւնը՝ Տեղիակ, Նասցէաւեր և Միւրք բանի⁴: Չորրորդ պարբերութիւնը ձեռագրերի նկարագրութիւններին յարուկ հարցաշար է. Թերթ, Նիւթ, Մեծութիւն, Գրութիւն, Գիր, Տող: Ի վերջոյ՝ առանձին պարբերութիւններով ունենք Յարդարանք, Կնքադրոշմնշում և Վիճակ հարցերը: Այս բոլորը միասին, վարան ենք, պարկերացում են արալիս կոնդակի բովանդակութեան և արարաբին յարկանիշների մասին

1 Այսպիսի դասաւորութիւնը մեզ անելի յարմար թուաց, որովհետեւ բոլոր կոնդակները վերաբերում են մեր եկեղեցու պարամութեանը, որի ընթացքի մէջ գործող անճանց (կաթողիկոս, պարբերաբար, առաջնորդ) մէջ մեծ զանազանութիւն դնելն անիմաստ է, կարեւորը պարամութեան անընդմէջ ընթացքն է, որի արարեր դրուագների էլ վերաբերում են այսպէս հրապարակուող բոլոր միատրիները:

2 Զանազան նշումների և արարեր պարբերականների մարեւնագիտութիւնների հիման վրայ կազմել ենք Քիրոտեանի արագիր գործերի մարեւնագիտական մի ցանկ, որի մէջ այս կոնդակներին վերաբերող որեւէ հրապարակում չկայ. այսինքն՝ այսպէս արագրուող բնագրերը գիտութեան համար նորութիւն են:

3 Այս խնդրին վերաբերող մեր հայեացքների մանրամասները արեն՝ **Գեորգ Տէր-Վարդանեան**, Նայ Եկեղեցու պարամութեան աղբիւրների հրապարակման և գիտական շարադրանքի սրելոծման խնդիրներ (Նոր հրապարակութիւնների արեսութիւն և նկարումներ). - Նասկ հայագիտական արարեգիրք, Նոր շրջան, Թ. արարի. 1997-2001, Անթիլիաս-Լիբանան, 2001, էջ 423-51:

4 Որեւէ միատրի գրիչի կամ ծաղկողի անուն յայտնի չէ. կոնդակները գրուել են, բնականաբար, կաթողիկոսարանի, պարբերաբարանի կամ առաջնորդարանի քաղպողարների ձեռքով: Ուստի նկարագրական մասերում «Գրիչ» և «Ծաղկող» հարց և բացատական «անյայտ» պարափասներ չենք դրել:

Գալով բնագրերի վերաբարդությունը՝ գիտի կարիք չկար. արեցինք այնպես, ինչպես ձեռագիր գրքերից արվածում-մշակում ենք միջնադարեան բնագրերը⁵. միայն կոնդակների իրայապրուկ ձևի (1 թերթանոց փաթեթ-գալար, լուսանցներում երբեմն գրուած-լրեղաուրած բնագրի աւարտը) թելադրանքով այսպէղ գործածեցինք քողափոխի՝ / գծիկ-նշանը⁶: Միւր՝ հարկ համարեցինք ինչ-որ ձևով զարդարուած ներկայացնել կարմրով գրուած սկզբնաբառերը, բառախմբերը եւ հարուածները, ուստի այդպիսիք այսպէղ բերում ենք նուրբգիր քառասնակով: Մրանից էլ բիւնց յաջորդը. կոնդակների մէջ կան նրանց ասելիքի համար կարեւոր՝ կարմրագիր գլխաբառերով սկսուող բառեր, որոնք շարադրանքի քրամաբանութեամբ եւ քսր ներկայիս կէրադրական կանոնների պէրք էր գրել սովորական փոքրաքառով. սրիպուած էինք սրանց գլխաբառը պահպանել, բայց սրանցից առաջ ոչ թէ վերջակէր, այլ՝ սքորակէր դնել:

Վենետիկում աշխարկուր րնթացքում, կարծեմ այցելուներին ճիշտ բացաբրութիւն քուլ կարողանալու համար, մեզ քուտեցին նկարագրելու նաեւ Միխիթարեան բուն հաւաքածուի ցուցադրուող մի կոնդակ (ՏՊ 1887՝ Կոնդակների հաւաքածու ձեռագրի մասն). սա եւս նկարագրեցինք եւ բնագիրը վերաբարդեցինք: Յաւօք, այս կոնդակի շարադրանքի էական մասն րնկած է, այսուհանդերձ՝ եղածն էլ, պարմական այլ փասքերի հէք համադրուելով, կարող է բացաբրելի դարձնել, թէ ինչո՞ւ էր Մելքիսէթ Գառնեցին 1610 թ. այսպիսի փասքաթուղթ ուղարկում Արեւելեան Եւրոպայի հայութեանը: Միով բանիւ, սա հրապարակելու աւելի յարմար այլ առիթ երեւի չունենայինք, ուստի որպէս Յաւելուած կցեցինք ներկայ հրապարակմանը:

Բնագիրը լիովին հասկանալի դարձնելու համար բերում ենք թուրքերէն բառերի մի փոքրիկ ցանկ, որոնց բացաբրութիւնները շնորհակալութեամբ սքացել ենք Անի Աւելի-սեանից (ամէն բառի վերջում գրուած է համապարասիւան կոնդակի համարը).

ԱՄԼ - բնագիր, բուն, իսկական (3).

ԱՖՕՐԻԶ - աֆօրօգ, աֆօրօս-նգովք, անէծք (4).

ԵԱՍԱԽՃԻ - քսր օրենքի, օրենքի համաձայն (17).

ԷՖԳԱՖ (վագֆ, յոգն.՝ էֆգաֆ) - 1. շարիաթի սկզբունքներով բարեգործական նպա-

5 Բնագրագիտական անհմտութեան կամ նրա քարրական կանոններին անլրեղեակ լինելու դասական նմուշ է հէքրեւեայր. «Դիւան Նօր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի. Մասն Ա. Էջմիածնի կաթողիկոսների կոնդակներ (1652-1705 թթ.), Աշխարասիբեց Խաժակ Տէր-Գրիգորեան, Անթիլիաս, 2003» (200 էջ. 23 բնագիր): Այս գրքի խմբագիրը մեր բարեկամ Շահան եպս. Սարգիսեանն է, սակայն պապիի նշանով համառօքուած բառերն այսպէղ վերծանուած են փակագծեալ. փորձենք կարդալ՝ «շն[ո]րիք առ[ա]թ[ե]լ[ա]յ[կ]ա[ն], հանդերձ ա[սքրա]ծ[ա]յ[ն] բազմապ[ա]րիկ ա[ւր]իւնութ[ե]ամբ[ը] եւ նախախնամակ[ա]ն գթութեամբ[ը], ի վ[ե]ր[ա]յ քի-րապահ եւ ա[սքրա]ծ[ա]խն[ա]յմ, սկզբնահ[ա]սքր[ա]յր եւ սեպհականեալ առ հ[ա]ս[ա]յր[ա]յլ բոլ[ո]ր քրտունի վիճակի Մ[ո]լ[ո]լ[ո]յ Աթոռոյ Էջմիածնի, Ասքրածոյ ա[ւր]իւն[ե]ալ» (էջ 93) «Յ[խոս]ի Ք[րիստոս]ի ծառայ Տէր Նահապէր Կ[ա]թ[ո]լիկոս Ամենայն Նայոց» (էջ 112): Բնագրի այսպիսի վերծանում կարդալը քաժան է, որովհետեւ մարդ խճճում է փակագծերի եւ քառերի միջեւ, ուստի պէքք էր վերաբարդել աւանդաբար րնդունուած ձեւով. «շնորիք առաքելական, հանդերձ ասքրածային բազմապարիկ արիւնութեամբն եւ նախախնամական գթութեամբն, ի վերայ քիւրապահ եւ ասքրածախնամ, սկզբնահասքար եւ սեպհականեալ առ հասարակ բոլոր քրտունի վիճակի Մրքոյ Աթոռոյ Էջմիածնի, Ասքրածոյ արիւնեալ» եւ «Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Նահապէր Կաթողիկոս Ամենայն Նայոց»:

6 Տողերի կարգային համարներ դնելը՝ րնթերցումը դժուարացնող, ծանրացնող եւ աւելորդ դիպեցինք:

տրակով ջամիներին նուիրում կալումներ եւ այլ ունեցումք, 2. բարեպաշտական հաստատություններ, 3. բարեպաշտական հաստատությունների կրակներ (19).

ԹԱՄԱՍՈՒԿ - համաձայնագիր - 3.

ԹԱԼԱՆԱՆԱՅ - ախոռ (6).

ԹԸԹՄԱԿ - ապաշտարություն, թողություն տալ (2).

ՄԱՆՈՒՄ - յայտնի (4).

ՄԱՆԱՐԱՎԱՆ (մահաարական) ԳԻՐ - շրջաբերական նամակ (6).

ՄԱԼԱՄ - ողջոյն, բարեւ (4).

ՍՈՒՐԱԹ - պարճէն (3).

ՍՕՖ - բուրդ, բրդէ գործումք (2).

ՏՈՒՎԱԹԻՒՎԻ ՎԷ ՍԱՏԵԹԻՒՄ - վսեմաշուք եւ երանելի (4).

ՏՕՆԼՈՒՄ - զգեստ, վարպիքցու (2).

ՔԵՐԵՍԵՏԵՐ (քերեսէճի, քերասէճի) - աղաղճավաճառ, փայտավաճառ (1):

Այսպիսով, հրապարակուող 22 փառագրից կաթողիկոսական կոնդակներ են 11ր (ՏՊ 2-6, 8-10, 15, 21, Յանելում), պատրիարքական են 8ր (ՏՊ 1, 7, 11, 12, 17-20) եւ առաջնորդական՝ 3ր (ՏՊ 13, 14, 16): Այս բնագրերը, անկասկած, մեր Եկեղեցու պարմութեան տարբեր հարցեր նորովի մեկնաբանելու առիթ են դառնալու, սակայն ներկայ հրապարակման՝ ամսագրի համար ունեցած արդէն իսկ մեծ ծաւալն⁷ աւելի չմեծացնելու մտաւորութեամբ, այդ հարցերի մէջ չենք մտնում: Նշենք հրապարակուող կոնդակների գիրական արժէքը հաստատող միայն մի փաստ. Մ. արք. Օրմանեանը, յարմարեցնելով՝ Պեպրոս Նոմփկայեցու կաթողիկոսական օծումը դրել է 1748 թ. ապրիլին⁸, նրա իշխանութեան տեւողութիւնն էլ համարել տասն ամիս⁹. սակայն մեր 6րդ կոնդակը, որ ունի «ՅԻՍՈՒՄԻ Քրիստոսի ծառայ Տէր Պեպրոս կաթողիկոս ամենայն հայոց եւ ծայրագոյն պատրիարք Վաղարշապատու» ստորագրութիւնը եւ թուագրումը է՝ «ՌՃՂԷ. (1748) թուին, Յունարի վերջին», այս վճիռները փոխում է հետեւեալի. եթէ տասն ամիս տեւողութիւնը ճիշդ ենք համարում, ապա Քիւթիւր մականունով կաթողիկոսն իշխել է 1748. յունուար-հոկտեմբեր ընթացքում:

7 Մենք հրապարակում ենք 22 փաստաթուղթ, իսկ վերը յիշատակուած՝ «Դիւան Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի» 200 էջանոց գրքում կայ 23 միատուր. այսինքն՝ ցանկութեան դէպքում այս նիսթը եւս կարելի էր գրքային տեսքով մատուցելի դարձնել:

8 Ազգապատում. Նայ ուղղափառ եկեղեցույ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը՝ յարակից ազգային պատգանքով պատմում. Գրեց Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան. նախկին պատրիարք, հ. Բ., Կոստանդնուպոլիս, 1913, յօդ. 2025, էջ 2963. «Պեպրոս Այնթափցի, մականունեալ Քիւթիւր, կաթողիկոս օծուեցաւ Մայր տաճարին մէջ 1748ին, ամսաթիւր անորոշ: Միաբանութիւնը իր գործին արդարացումը ապացուցանելու համար, ընդարձակ գրութիւն մը պատրաստեց, որուն մէջ բացառօրէն զամենայն յանցանս Ղազարու, եւ զայն ի բազում պարճէնս ցրուեց ամեն գլխաւոր վիճակներ: Այդ գիրին ստորագրած էին 21 եպիսկոպոսներ եւ 19 վարդապետներ, եւ 1748 մայիս 20 թուական կը կրէր: Նկատելով որ այդ գիրը ամեն գործ վերջացնելէն ետքը գրուեցաւ, Կարնոյ եւ Չմիւռնիոյ մէջ Ղազարու համակիրներուն ալ միտքը հանդարտեցնելու համար, եւ օծումը անկէ առաջ տեղի ունեցած էր (ՉԱՄ. Գ. 841), ի դէպ է զարիկին մօտիկ կիրակիներէն մէկուն դնել օծման ամսաթիւր: Զարիկը այն տարին ապրիլ 10ին հանդիպած էր»:

9 Նոյն տեղում, յօդ. 2028՝ էջ 2967. «Պեպրոսի կաթողիկոսութիւն վարելու տեւողութիւնը ամիս տասն քսում է հաւասարապէս ամէնէն (ՉԱՄ. 31), եւ 1748 ապրիլէն հաշուելով, տապալումն ու բանաբարկութիւնը կը հանդիպին 1749 փետրուարին»:

ԿՈՆԴԱԿՆԵՐ

1

ԵՐՈՒՍԱՂԷՄ

ՌՃԽԹ. ~ 1700

ՀԵՂԻՆԱԿ՝ Մինաս Ամգեցի պատրիարք Հայոց Երուսաղէմի (1697-1704): ՀԱՍՑԷԱՏԷՐ՝ Կ. Պոլսի քէրէստէճիներ: ՄԻՏՔ ԲԱՆԻ՝ շնորհակալութիւն վասն նուէր ստացուած «քէրէստէ՝ տախտակա բազումս՝ մեծ եւ փոքր, եւ այլ անօթ պիտանացու վանացս՝ զորս գրով եւ զորս առանց գրի»:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ բ. երեսը: ՆԻԻԹ՝ թուղթ. եւրոպական, երեք կիսալուսնի լուսադրոշմով եւ լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 59,8x22,8: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն (45,5x17,2). եզրերից կարմրով սահմանազծուած, ձախ եզրին եւս մի կարմիր գիծ, որի եւ գրադաշտի սահմանազծի միջեւ 4 սմ լայնքի չգրուած տարածութիւն: ԳԻՐ՝ նոտրգիր: ՏՈՂ՝ 65:

ՅԱՐԴԱՐԱՆՔ՝ առաջին՝ «Ի» տառը 23,5 սմ երկարութեամբ թռչնա-գիր, բուսական յաւելումներով:

ԿՆՔԱԴՐՈՇՄ-ՆՇՈՒՄ՝ թերթի վերին եզրին կպած, կենտրոնում, երկաթագիր, կապգրով՝ «Երուսաղէմ»: Նոյն եզրից 7 սմ ցած կենտրոնում, 3,7 սմ տրամագծով կլոր, կարմրով կնքադրոշմ, շուրջանակի գրուած՝ «ԿՆԻՔՍ ՍՈՒՐԲ ԳԼԽԱԴՐԻՆ Է ԱԹՈՒԻ Ա՛Մ ՀԱՅՈՑ», կենտրոնի 2,6 սմ տրամագծով շրջանակի մէջ Աստուածածին, երկու հրեշտակ, որոնք Յովհաննէս Մկրտչի գլուխը պահել են սկուտեղ-թասից վեր: Բ. երեսի ստորին ծայրին. «Ըստամպօլու քէրէստէճոց օրհնութեան գիրն է»:

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԲՆԱԳԻՐԸ

Ի ուրբէ եւ հաւատարեալ, ասորոշապարհ եւ մեծապայծառ, / Հրաշալի եւ Հրաշափառ, լոռաշառալ եւ յասորոշա/կոխ քաղաքէս Երուսաղէմէ եւ յամենասուրբ եւ յաստուածաՀոտ տնօրինականացն Քրիստոսի / Աստուծոյ մերոյ: Նախ ի Սուրբ Նազարէթէն՝ ուր Գաբրիէլ հրեշտակապետն աւետեաց / սրբոյ կուսին Մարիամու: / Եւ ի գերապատիւ սուրբ Ծննդենէն Քրիստոսի: Եւ ի վերապատուեալ սուրբ Մըսրէ՝ յընծայմանէն Քրիստոսի: Եւ ի գերամեծար սուրբ այրէն: Եւ մեղսաքաւ/իչ սուրբ Յորդանանէն: Եւ ի սուրբ Թափօր լեառն՝ յայլակերպութենէն Քրիստոսի: Եւ ի սուրբ Գող/գոթայ՝ խաչելութենէն Քրիստոսի: Եւ աստուածընկալ սուրբ գերեզմանէն Քրիստոսի: Եւ ի տիեզերալուր / սուրբ յարութենէն Քրիստոսի: Եւ ի վերաթռիչ սուրբ Համբարձմանէն Քրիստոսի: Եւ ի սուրբ Վերնատունն՝ / ի գալստենէ Հոգոյն Սրբոյ: Եւ յամէնաւրհնեալ յԱստուածամօր սուրբ գերեզմանէն: Եւ ի գերահրաշ սուրբ կափարիչ վիմէն: Եւ ի սուրբ բանտէ փրկչին Քրիստոսի

Աստուծոյ մերոյ: Եւ ի տեն/չալի Սուրբ Հրեշտակապետաց տաճարէն: Եւ յառաքելաշնորհ սուրբ աթոռոյ եղ/բօր Տեառն արդարոյն Յակոբայ: Եւ յաստուածարեալ սուրբ գլխադրէ առաքելոյն Յակոբայ՝ որդւոյն Զեբեդեա: Եւ սոցին սպասաւոր ի Տէր Մինաս Վարդապետէ, / Յորմէ ժամանեալ հասցէ գիր աւրհնութեան եւ նամակ պահպանութեան, շնորհք առա/քելական եւ աստուածային բազմապատիկ աւրհնութիւն եւ նախախնամական գթութիւն / ի վերայ կայսերապետ ի արքայանիստ մայրաքաղաքիդ Կոստանդնուպօլսոյ գետեղեալ / եւ գլխայ առեալ աստուածասէր եւ բարեպաշտօն հոգեւոր որդեկացդ մերոց՝ առ հասար/ակ համօրէն Քէրէստէճի վարպետներաց՝ անհանգիստ աշխատող եանաշմաներաց / եւ մշակաց, եւ առ հասարակ ամենեցուն՝ տանցն եւ ընտանեացն, որդոցն եւ դստերացն, զարմիցն եւ / զաւակացն, ընչիցն եւ ապրանացն, վարիցն եւ վաստակոցն, առիցն եւ տրիցն, խանութիցն եւ / քէրխանայիցն, եւ համայն սիրելեաց եւ բարեկամաց ձերոց ի Տէր Յիսուս խնդալ. ամէն: / Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ եւ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ եւ Հոգոյն Սրբոյ կենարարէ / եկեացէ եւ լցուցէ օր ըստ օրէ առատապէս շնորհիւ իւրով: Աւրհնութեամբ Հօրն անեղականի, / սէր եւ գթութիւն խաչեցելոյն փրկողի եւ անեղակցի, ողորմութիւն առատահոս զեղմանց անեղի՝ / Հոգոյն Սրբոյ փառակցի՝ մաղթանօք տիրամօր կուսի եւ դշխոյի՝ հայցմամբ հրաբուռից / անմարմնական զօրացն եւ լուսեղինացն դասի, աղաչանօք ընտրելոց տեսանողացն եւ սր/բազանի առաքելոցն գնտի, պաղատանօք ամենամաքրից արեամբ ներկելոց նահատակացրն / խրմբից: Իջցեն առ ձեզ ծաւալմունք շնորհաց, տարածմունք պարգեւաց, հանճարք իմաստ/ից, հրաշք անճառից, տուրք քաղցրութեանց եւ բղիժմունք առատ ողորմութեանց, հեղումն ան/նուագից գթութեանց եւ խանդաղատմունք գորովալրից սիրոյ՝ պարգեւք հոսանից ծաւալ/մանց եւ աւրհնութիւն գետօրէն ոռոգմանց, շնորհաբաշխութիւն ճառագայթաձեւից փայլմանց եւ / հեղումն աննուագից երկնափայլութեանց, պայծառակեցեն զունակութիւն մասանց հոգոյ / եւ մարմնոյ, անճառելի շնորհի եւ հարսնարան առագաստի, եւ երանութեան պսակացն / հաղորդի եւ մշտագլուարճ ցնծութեանն՝ ի լոյս կենացն ամէնի. ամէն:

Եւ ընդ սիրոյ օրհնութեանս ծանուցումն լիցի աստուածասէր հաւատացելոցս, քանզի մարգարէն Դաւիթ երանէ եւ աւրհնութիւն տայ արդարագործ եւ բարեսէր արանց, թէ որ զպտուղ իւր / ի ժամու տացէ եւ տերեւ նորա մի՝ թափեսցի (Սղմս. Ա. 3). եւ այլն: Արդ, զսոյն զայս ի մէջ ածելով՝ նարդեանս / կամիք գոհանալ եւ շնորհակալ լինել ի վերայ տրոց արդեանց առատութեանց եւ պտղոց բարեաց, / որ ի ձէնջ ընծայի կամաւոր զոհ եւ պտուղ երախայրեաց աստուածընկալ սուրբ գերեզմանին եւ / աստուածահոս տնօրինականացն Քրիստոսի, որ ամենայն տարւոջ յի-

շելով զպակասութիւնն հոգեւոր ծնողին ձեր/ոյ՝ իւրաքանչիւր ի ձէնջ ըստ չափու իւրում առաքէք կամաւոր ընծա եւ պարգեւ հատա/նելով ի հալալ վաստակոց ձերոց, որ եւ աստանօր անսխալ ունելով զնոյն առաքեալ էիք / զփայտեայ քէրէստէ՝ տախտակս բազումս՝ մեծ եւ փոքր, եւ այլ անօթ պիտանացու վանացս՝ / զորս զրով եւ զորս առանց զրի՝ առ ի շինութիւնն եւ ի պայծառութիւնն սրբոյ աթոռոյն, որ այն ամենայն լի եւ ան/պակաս եկն եւ եհաս ի սուրբ աթոռս: Զոր եւ մեր առեալ զհոգոյ բաժինն եւ զսիրոյ պտուղն / ձեր, մատուցաք առ ի պէտս կարեաց պակասութեան՝ հաստատութեան եւ ամրութեան սրբոյ աթոռոյս / Երուսաղէմի: Եւ համօրէն ի սմա դրան կեալ միաբան եղբարքք աղօթեմք եւ աղաչեմք զանկարօտն եւ զայցելուն ամենեցուն զՏէր մեր Յիսուս Քրիստոս, որ իջեալ յերկնից ի ստորին կողմ երկրի, այս ինքն՝ ի / սուրբ քաղաքս Երուսաղէմ, ընդ մեղաւորս բազմեցաւ եւ ընդ մաքսաւորս եկեր եւ արբ, եւ ընդ անօրէնս / համարեցաւ, եւ զնոսին գտեալ սրբեաց ի մեղաց եւ արդարացոյց ի պարտեաց եւ հարչարա/նօք խաչին եւ թաղմամբն եւ յարութեամբն՝ զբոլոր մեղանչական բնութիւնս սրբեալ մաքրազար/դեաց, նոյն նորոգօղն բնութեանց՝ սրբեալ մաքրեսցէ զձեզ ի հոգեկան եւ ի մարմնական մեղաց / եւ արասցէ զձեզ տուն եւ տաճար հաղորդութեամբ մարմնոյ եւ արեան իւրոյ սրբոյ: Եւ ոպէս պատա/րազս կամաւոր ընծայից զնախնեաց արդարոց՝ զԱբէլի, զՆոյի եւ զԱբրահամուն հա/ճեցաւ եւ զընծայս նուիրաց մոգուց թագաւորացն, եւ զլոմայս այրւոյն, եւ զխունկս իւղա/բերից կանանցն ընկալաւ, նոյն ընկալցի եւ ընդունելի արասցէ զնուէրս եւ զընծայս ողոր/մութեան ձերոյ՝ ի գանձանակ մեծի ողորմութեան ձերոյ, որպէս զխունկ նուիրաց ի հոտ անուշից, / պատարագ ընդունելի հաճոյ Աստուծոյ: Եւ տացէ ձեզ փոխարէն միոյն հարիւրապատիկ, հազա/րապատիկ եւ բիւրապատիկ աւրհնութիւնս շնորհաց եւ զվարձս բարեաց: Եւ որքան սուրբ / Երուսաղէմ չէն եւ պայծառ մնա, սաղմոսերգութիւնք, ժամք եւ պատարագք մատչին՝ առ հասա/րակ ձեզ եւ ձեր ննջեցելոցն մասն եւ բաժին պարգեւեսցին ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ՝ աստ եւ ի հան/դերձելումն անզրաւ յաւիտենիւ. ամէն:

Գրեցաւ աւրհնութեան գիրս ի թվաբերութեանս հայոց ՌՃԽԹ. (1700), Մարտի ԼԱ. (31), պատկեր օր մեծի պասեքի / օրհնեալ յարութեանն Քրիստոսի, ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, ի դուռն Սրբոյն Յակոբայ աթոռիս ամնայն հայոց:

2

Ս. ԷԶՄԻԱՄԻՆ

ՌՃՀԶ. - 1727

ՀԵՂԻՆԱԿ՝ Կարապետ Բ. Ունեցի կաթողիկոս ամենայն հայոց (1726-1729): ՀԱՍՅԷԱՏԷՐ՝ հաճի Պալի եւ իր ընտանիք: ՄԻՏՔ ԲԱՆԻ՝ օրհնութիւն ի դիմաց յարգալի վերաբերմունքի:

ԹԵՐԹ՝ 1. ՀԳՐՈՒԹՈՒԹՅՈՒՆ՝ Բ. ԵՐԵՍՐ: ՆԻԻԹ՝ ԹՈՒՂԹ. ԵՐՈՒԿԱԿԱՆ, լՈՒՍԱԳ-
ԾԵՐՈՒԹՅՈՒՆ՝ 32,2x21,5: ԳՐՈՒԹՈՒԹՅՈՒՆ՝ մԻԱՍԻԼՆ (23,5x14,5). ՃԱ-
ԽԻԳ ՎՈՅԳ, աՂԻԳ մԵԿ ԿԱՐԴՐՈՒՎ ՎԵՐԻԳ ՎԱՐ սԱՀՄԱՆԱԳԾՈՒԹՅՈՒՆ, ՀՈՐԱ սԻԼ-
ՆԱԿ-ԿՈՐՐՈՒՎ ՂԵՐՈՒԹՅՈՒՆ 6,2 սմ լԱՅՆՔԻ ՃԱԽ լՈՒՍԱՆԳՐ: ԳԻՐ՝ ՆՈՒՐԳԻՐ:
ՏՈՂ՝ 31՝ ԲՈՒՆ մԱՍՐ, 31՝ լՈՒՍԱՆԳԱՅԻՆ յԱԼԵԼՈՒՄ:

ՅԱՐԴԱՐԱՆՔ՝ ՎԵՐԻՆ ԵՂՐԻՆ մՈՍ, ԿԵՆՏՐՈՆՈՒՄ, ԿԱՐԴՐՈՒՎ ԳԾԱՆԿԱՐ
ԹՈՒՆԱԳԻՐ «Է», ՆՈՅՆԱԿԱ ԿԱՐԴՐՈՒՎ ԳԾԱՆԿԱՐ ԹՈՒՆԱԳԻՐ ՆԱԵԼ «Յ՝Ի»
սԿՍՈՒԹՅՈՒՆ, ՀԱՐԱԳՐԱՆՔԻԳ ՎԵՐ, ՃԱԽ ԿՈՂՄՈՒՄ, «ԿԱԹՈՂԻԿՈՍ» ԲԱՈՒ ՎԵ-
ՐԵԼՐ ԿԱՐԴՐՈՒՎ ԳԾԱՆԿԱՐ ՍԱԾԱՐ-ԵԿԵՂԵԳԻ:

ԿՆՔԱԴՐՈՇՄ-ՆՇՈՒՄ՝ ԲՆԱԳՐԻ ՎԵՐԵԼՐ, ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԿԱՐԴՐՈՒՎ ՎԵ-
ԳԱՆԿԻԼՆ ԿՆՔԱԳՐՈՇՄ, ՎՐԱՆ ԿԱՊԳՐՈՒՎ. «Է. ԿԱՐԱՊԵՏ ԿԱԹՈՂԻԿՈՍ.
ՌԺՇԵ. (1726)»:

ՎԻՃԱԿ՝ ԲԱԼԱՐԱՐ:

ԲՆԱԳԻՐԸ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ / ամենայն
Հայոց ԵԼ ՎԱՏԱՐԻԱՐԳ ՎԱՂԱՐՀԱՊԱ/ՍՈՒԼ լՈՒՍԱԿԱՌՈՅԳ ԵԼ ԽԻՐԱՆԿԱՐ
սՐԵՈՅ աՌԱՔԵԼԱ/ԿԱՆ աԹՈՒՆՅԱ ՍՈՒՐԵ ԷՅՄԻԱԾՆԻ: ՅՈՐ ԵԼ ՀՆՈՐՀՕՔ ամԵ/
նԱԳՕՐ սՈՒՐԵ ՀՈԳԼՈՅՆ ԺԱՄԱՆԵԱԼ ՀԱՍԳԷ ԳԻՐ օՐՀՆՈՒԹԵԱՆ ԵԼ աՂՕԹՔ /
պԱՀԱՊԱՆՈՒԹԵԱՆ, ՀՆՈՐՀՔ աՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԼ աստուածային բԻՐԱՊԱՍԽԻԿ
օՐՀ/նՈՒԹԻԼՆՆ Ի ՎԵՐԱՅ սԻՐԵԼԻ ԵԼ ՀՈԳԵԼՈՐ ՈՐԳԵԿԼԻԳ մԵՐՈՅ ԵԼ ՀԱՐԱԳԱՍԻ
սՐԵՈՅ / աԹՈՒՆՅԱ ՀԱԾԻ ՊԱԼԻԻԳ ԵԼ ՀԱՄԱՅՆ ԸՆՍԱՆԵԱԳՂ ԵՂԵԼՈՅՆ, ԵԼ ՂԵ-
ՌԱ/ԲՈՅ ՆՈՐԱՀԱՍ ՀԷԼԵՎԻ ՈՐԳԼՈՅԳ, ԵԼ աՅԼՈՅ մԻԱԿԱՄ ԵԼ ՀԱՄԱԽՈՐՀՈՒՐԳ
/ սԻՐԵԼԵԱԳՂ ԵԼ ԲԱՐԵԿԱՄԱԳՂ, աԳԳԱԳՂ ԵԼ աԳԱՆԳՂ, սԵՂԱՆԱԿԳԱԳՂ ԵԼ
/ ՎԱՅԵԼՈՂԱԳՆ, ԵԼ աՅԼՈՅ պԱՀՍԱԿԱՆ սԱՊԱՍԱԼՈՐՈՂԱԳՆ՝ մԵԾԻ ԵԼ ՎՈՐՔՈՒ /
ԽՆԴԱԼ Ի ՏԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԵԼ մՆԱԼ ՆՈՅՆ ԳԵՐԱԳԱՐԳ ԵԼ պԵՐԾԱՊԱ-
ԽԻԼ ՀՆՈՐՀԻԼՆ. ա[մԷՆ]:

ՀՆՈՐՀՔ ԸՆԴ ԲԵԳ ԵԼ սԵՐ ԵԼ ԳԹՈՒԹԻԼՆ, աՅԵԼՈՒԹԻԼՆ ԵԼ ԽԱՂԱՂՈՒԹԻԼՆ,
ՈՐ Ի ՀԱՄԱ/ԳՈՅ ԵԼ ՀԱՄԱՊԱՍԽԻԼ մԻԱՍՆԱԿԱՆ սՈՒՐԵ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆՆ՝ ՀՕՐ
ԵԼ ՈՐԴԼՈՅ ԵԼ / ՀՈԳԼՈՅՆ ՍՐԵՈՅ ԻՂԵԷ ԵԼ ՀԱՆԳԻԵԷ Ի ՎԵՐԱՅ ՃԵՐ ԵԼ ԵՐԿՆԱ-
ՊԱՐԳԵԼ ՀՆՈՐՀՔՆ / ԵԼ օՐՀՆՈՒԹԻԼՆՆ ՂԵՂԵԳԻ աՌԱՍԱՊԵՆ ԵԼ անՀԱՍՏԱՐԱՐ
Ի ՀՈԳԻՍ ԵԼ Ի մԱՐՍԻՆԱ ՃԵՐ. ա[մԷՆ]:

ԵԼ ԸՆԴ ՎԵՐՈՅ ԳՐԵԱԼ ՔԱՂԵՐԱԾԱԼԱԼ ԵԼ ՀՆՈՐՀԱՄԱՍՈՅՅ օՐՀՆՈՒԹԵԱՆ
/ ԾԱՆԻՐ, սԻՐԵԼԻ ԵԼ ՀՈԳԵԼՈՐ ՈՐԳԵԱ՝ ԻՄ, ԶԻ աՀԱ յՈՐՄԷ ՀԵՍԷ ԵԼԵԱԼ
ԵՄՔ / Ի փԱՌԱՈՐԱԳՈՅՆ ՔԱՂԱՔԷԴ ՖԻԳԱՆԴԻՈՅ, ՈՂ ԵՄՔ մՈՌԱԳԵԱԼ ԳԾԵՐ
սԷՐՆ / ԵԼ ՂԱՊԱՍԻԼՆ ԵԼ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻԼՆՆ, ՈՐ ՃՄԱՐՈՒՄԱԳՈՅՆԱ ՈՒՆԷԻՔ ԵԼ
աՌՆԷԻՔ աՌ / ԾԵՐՈՒԹԵԱՆԱ մԵՐՈՒՄ, ԵԼ ՍԱԿԱԼԻՆ ԵԼԱ ԳՆՈՅՆՆ ՈՒՆԻՔ սԷՐՆ,
ԳԻ ԵՐԵԼԻ յԱՅՄՆԱ/ՎԵՆ յԱՀԱ մԵՐ յԱՐԱԺԱՄ, ԵԼ ԹԷՎԵՍ ԳԾԵՐՆ աՅՍԱԿԱ,
ԲԱՅԳ ԳՄԵՐՆ ԵԼԱ աՌԱ/ԼԵԼ օՐ ԸՍՍ օՐԷ յԱԼԵԼԵԱԼ ԲԱԳՄԱՆԱՅ, ԳՈՐ ԵԼ ՏԷՐՆ
ՔՐԻՍՏՈՍ ՀԱՍՏԱՍՏՈՒՆ ԵԼ անԽԳԵ/ԼԻ պԱՀԵԱԳԷ: ԵԼ աՐԴ, աՀԱ սԻՐՈՅ ՆՀԱՆ

եւ իբր թէ օրհնութեան պարգեւ / տօնլուխ մի ալ սօֆ վերարկացու ի վերայ Յակոբ աղային՝ հոգեւոր որդե/կին մերոյ, որպէս զմաշեակն սուրբ մարգարէին Եղիայի ի վերայ հոգեծին որդոյ / Եղիսէոսի, որ ի զգենուլն նորա հանգեաւ Հոգին ի վերայ նորա, եւ ըստ նոյն / սարասի ի զգենուլ այսմ ասուեղինի հանդերձիս, հանգիցէ շնորհքն / աստուածային ի վերայ մանկանս այստ, եւ խաղասցի Հոգի աստուածեղէն ի վերայ նորա, ընդ որս / եւ հովանացեալ կայասցի ի վերայ բոլոր յարկացդ, եւ բնակեալ համայն ընդ / քեւ եղելոց անձանցն, առ այսքան բաւեսցի, եւ շնորհ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի || ընդ քեզ լիցի, եւ որք ընդ քեզ են ամե/նեսին: Իսկ արդ, զյիսուսաւանդ ողջոյն / եւ օրհնութիւնն մատուցանեմ սիրելի որդե/կին մերոյ տիրացու Գրիգորին, ի դիպող / ժամու օրհնութեան գիր մի այնու գրելոց եմք՝ / եթէ հրամայեսցէ Տէր: Նա եւս օրհնութիւն մա/տուցանեմ չէլէպի որդեկացդ Յովանէսին, / Թովմասին, եւ Յակոբ աղային, զոր եւ հան/գիցէ ի վերայ իւրաքանչիւրոցն. եւ կրկին ողջ լե՛ր: || Զաստուածապարգեւ օրհնութիւնն / մատուցանեմ մահտեսի Տէր Սահակ / եւ Տէր Մատթէոս քահանայիցն. լուաք / որ խաղաղութեամբ են եկեալ. ուխտ / նոցա ընդունելի եղեցի, եւ Սաղեմացի / սապոնիցն մի՛ մոռանայցեն զմեզ / եւ օրհնեալ եղիցին ի Հօրէն լուսոյ: / Ողջոյն եւ օրհնութիւն մատուցանեմ / խնամի մահտեսի Յարութիւնին եւ իւր օրհնեալ որդւոցն: || Զփրկչաւանդ օրհնութիւն մատուցանեմ տիրացու Գրիգորի հօրն՝ մահտեսուոյն, զթրթմակն թող լնու: / Ահա արշիտիակոս Գրիգորին մօռ գօտի / մի ուղարկեցի. բարով վայելէ: / Զսօֆի յաւելեալն ի Յակոբ / աղայէն Թովմաս աղային / շնորհես, որ բարով / վայելեսցեն, եւ եղե/ցի շնորհաւոր: || Գրեցեալ եղեւ ՌՃՀԶ. (1727) թվին / եւ ամսեանս Յուլիսի ԻԶ. (26), օրն, / ի Սուրբ Աստուածածնա վանս, որ ի Գաղատիա:

3

Ա. ԷԶՄԻԱԾԻՆ

ՌՃՀԷ. ~ 1728

ՀԵՂԻՆԱԿ՝ Կարապետ Բ. Ունեցի կաթողիկոս եմենայն հայոց (1726-1729): ՀԱՍՑԷԱՏԷՐ՝ Իգմիւռնիոյ առաջնորդ Մինաս աստուածաբանութեան վարդապետ: ՄԻՏՔ ԲԱՆԻ՝ Գաղատիոյ առաջնորդ Մօսէս վարդապետին նշանակել է Զմիւռնիայի նուիրակ:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ բ. երեսը: ՆԻԻԹ՝ թուղթ. եւրոպական, լուսադծերով: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 33,4x22,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին (21,7x16,5). ձախ եզրը սահմանադժուած ծալելով: ԳԻՐ՝ նոտրգիր: ՏՈՂ՝ 32, վերջին երեքը 6 սմ լայնքի ձախ լուսանցում:

ՅԱՐԴԱՐԱՆՔ՝ վերին եզրին մօտ, կենտրոնում, կարմրով գծանկար

Թռչնադիր «է», նոյնպէս կարմրով դծանկար Թռչնադիր նաեւ «Յ''ի» սկսուածքը, շարադրանքից վեր, ձախ կողմում, «կաթողիկոս» բառի վերեւ կարմրով դծանկար տաճար-եկեղեցի:

ԿՆՔԱԴՐՈՇՄ-ՆՇՈՒՄ՝ բնադրի վերեւ, կենտրոնում կարմրով վեցանկիւն կնքադրոշմ, վրան կապղրով. «է. ԿԱՐԱՊԵՏ ԿԱԹՈՂԻԿՈՍ». վերի եւ վարի ազատ մնացած տեղերում զարդադէք:

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԲՆԱԳԻՐԸ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏԷՐ ԿԱՐԱՊԵՏ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ /Հայոց եւ պատրիարդ Վաղարշապատու լուսակառոյց եւ տիրանկար մեծի սրբոյ դերակայ եւ դերահռչակ աթոռոյս էջմիածնի: / Յորմէ սիրով եւ օրհնութեամբ ծանի՛ր, սիրելի եւ հարազատ հոգեւոր / որդեակ իմ եւ յիշմիւնիոյ առաջնորդ Մինաս աստուածաբանութեան վարդապետ: Ահա / մեզ նուիրակ կարդեցաք օրհնեալ քաղաքիդ յիշմիւնիոյ եւ բոլոր վիճակի դորին. / Եւ սրբալոյս մեռունն աստուածադործ հանդերձ օրհնութեան նամակաւ առաքեցաք ի / ձեռն սիրելի որդեկին իմոյ՝ Գաղատիոյ առաջնորդ Մօսէս աստուածաբանութեան վարդապետին, / Որ եւ նովաւ Տէրամբ ժամանիլ ի քեզ, զի մի՛ առաւել ծանրութիւն եւ բեռն լիցի քեզ: Ուստի / դրեմ եւ պատուիրեմ անդրանկապատիւ որդւոյդ, զի ի ժամանին առ քեզ՝ պարտիս / փութով դործ ի ձեռն ածել եւ մեզ յառաջադոյն քան զդործ նուիրակութեանդ մէկ / Ռ. մառչիլ հաւատարիմ մարդով հասուցանել, որպէս եւ հնարն է եւ կամիս, զի կարի մեծի նեղութեան եւ պակասութեան կայ սուրբ Տունս վասն առաւելութեան պարտուցս, զի նորն ի վերայ հնոյն բարդեցաւ, / քանզի յօրէ յորմէ հետէ մտեալ եմք աստ, արդ, դրէթէ Ժ., ԺԵ. քիսայ միայն այլասեռից / տուեալ կամք՝ թէ՛ ի զուր եւ թէ՛ ըստ տեղւոյն, զոր եւ դրելն անպատշաճ վարկանեմ, եւ / մանաւանդ ի յեկելոց իմասջիւր՝ ընդ այլ ամենայն իրաց հարկաւորաց: Նա եւ սակս լուսահողի / Եղեքաճորցի Դաւթի ձ. եւ Ե. (105) թումանի կտակի եւ թամասուկի կողմանէն, որ յառաջմէ սուրա/թրն եւս ետու քեզ, եւ դու դրեալ էիր, թէ ասլն եւս յղեա՛, այս անպատշաճ համարեցին / միաբանք սրբոյ տանս, եւ իւրեանք իսկ վասն այս դրեալ են քեզ, առ այս ի նոցա դրոյն իմա՛՝ որ/պիսութիւն բանից, եւ որպէս վայել է քաջամիտ խոհեմութեանդ եւ հարազատութեան, այնպէս արա՛ / խորհրդով եւ բանիւք յայդր եղելոց վաճառականաց, եւ մեզ ամենայնիւ ընդունելի է: / Եւ մանաւանդ այդ Քանաքեռցի Անտօնի որդի Իսրայէլի բանդ, զոր եւ նորին ե/րեսն եւս առեալ յղեցաք քեզ՝ այս երկու բանիցս հողալոյն որպէս եւ իցէ / շուտով ջատադով լիցիս առ ի կատարումն, եւ մի՛ մոռանայցես զառամեալ ծերունիս եւ ցա/լալի սուրբ Մայրս քո, զի եթէ այսմ սարասի յամեսցին վիշտք մեծի Տանս՝ երկ[ն] չիմ, թէ / ընդ կենաց իմոց վճարի եւ

փառազարդութիւնն սորին: Վասն որոյ պարտիս այժմ եւ միշտ ան/մոռաց յիշմամբ եւ արդեամբք վշտակից եւ օգնական լինելն: Որ եւ Տէրն տերանց / յամենայն ժամ օգնական լիցի քեզ յամենայն ընթացս քո ի բարին, եւ որք ընդ քեզդ ես. ամէն:

Առ դրան Սուրբ Էջմիածնի ՌՃՀԷ. (1728), Մայիսի Ժ. գրեցաւ:

Աբրօզատէ աղայոցն եւ Ալէքսան չէլէպոյն եւ յարեւելեան վաճառականացն / եւ առհասարակ ամենայն եկեղեցականաց եւ ժողովրդականաց ողջոյն եւ օրհնութիւնն / Քրիստոսի մատուցանեմք համայն ընդ քեւ հովանացելովք, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

4

ՈՒԶՔԻԼԻՍԱ (Էջմիածնի^ն)

ՌՃՀԷ. ~ 1729

ՀԵՂԻՆԱԿ՝ Կարապետ Բ. Ունեցի կաթողիկոս ամենայն հայոց (1726-1729): ՀԱՍՅԷԱՏԷՐ՝ Ապտուլ Ղափուլ բէկ: ՄԻՏՔ ԲԱՆԻ՝ պէտք է պատ-ծել ոմն Յովասափ երէցի, որ կաթողիկացել է:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ բ. երեսը: ՆԻԻԹ՝ թուղթ. եւրոպական, լուսադ-ծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 28,2x17,1: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն (19,5x12). գրա-դաշտը սահմանուած ծալումներով: ԳԻՐ՝ նոտրգիր: ՏՈՂ՝ 28:

ՅԱՐԴԱՐԱՆՔ՝ առաջին՝ «Ա» տառը թռչնագիր, կարմրով եւ դեղի-նով, նոյն գոյներով «կաթողիկոսէ» բառի վերեւը նկարուած եկեղեցի-խորան:

ԿՆՔԱԴՐՈՇՄ-ՆՇՈՒՄ՝ ստարին լուսանցի աջ անկիւնում կարմրով կլոր՝ 3,9 սմ տրամագծով կնքադրոշմ, որի եզրին շուրջանակի՝ «Է. ՇՆՈՐ-ՀՕՔՆ Ա՝Յ ԿԱՐԱՊԵՏ ԿԱԹՈՂԻԿՈՍ Ա՝Մ ՀԱՅՈՅ ԹԻՎ ՌՃՀԵ.»:

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԲՆԱԳԻՐԸ

Է. Թագաւորն / Ապտուլ Ղափուլ բէկիդ

Ըստ ժողովական ծառայի Տէր Կարապետ կաթողիկոս / աւանդաւորական / յայտնի լինի որ / վաթիւռ վէ սատէթիւռ վերոյ գրեցեալ / ,, ,, ,, զի տեղդ քո օրհնեալ երկրիդ գիւղի միոջ ոմն Յովասափ անուն երէց խոտորեալ եւ / բաժանեալ օրինաց մերոց եւ լեալ լթթան հերձուածօղ / Ֆռանկ, եւ բազում միամիտ ժողովուրդսն մոլորեցուցեալ եւ դարձուցեալ յօրինաց մերոց ի չարաչար հերձու/ածսն իւր, վասն որոյ մեք զինքն չարաչար բա-նիւ աֆօրիդ / արարաք, որ այլքն տեսեալ խրատեսցին, եւ ինքն դայցէ / տեղս հրամանաւ քո եւ առցէ ըստ արժանոյն պատիւ, / եթէ ոչ դայցէ՝ զինքն ըմբռնեալ, զամենայն ինչս իւր առցես / ի ձեռանէ իւրմէ, մեծաւ պատժեօք պատժեալ վարես/ցես յերկրէ քումմէ, զի մեծի Ալի Օսմանի ,, ,, ,, հրա/մանին դէմ է դորա արարմունքն, որպէս վայել է իմաստութեան

/ Հրամանուցող՝ այնպէս արասցես: Բայց այնպէս խաղք եւ / խայտառակ անես՝ որ բազմաց խորատ լինի, զի մի՛ ամենեքեան / Համարձակեալ զնոյն առնիցեն: Տէր Աստուած տացէ Հրամանուցող կեանս երկարս, որդւովք եւ դստերօք զքեզ զարդա/րեսցէ, եւ զքեզ ի վերայ օծախիդ քո Հաստատ պահեսցէ, / եւ ընդ ձեռամբ քո եղելոցն Հնազանդութիւն տացէ, / որ միամտութեամբ ծառայեսցեն քեզ զամենայն աւուրս կե/նաց իւրեանց. ամէն: Գրեցաւ ՌՃՀԸ. (1729) Թուին մերոյ / Մայիս ամսոյ Դ., ի դրան / Ուշքիլի/սու:

5

ՊԱՏՃԷՆ

[ԷԶՄԻԱՄԻՆ]

ՌՃԶԳ. - 1734

ՀԵՂԻՆԱԿ՝ Աբրահամ Գ. Կրետացի կաթողիկոս ամենայն Հայոց (1734-1737): ՀԱՍՑԷԱՏԷՐ՝ կեսարահայութիւն: ՄԻՏՔ ԲԱՆԻ՝ Սարգիս վարդապետին բարձրացրել է արքեպիսկոպոսութեան եւ նշանակել Կեսարիայի Հայոց առաջնորդ:

ԹԵՐԹ՝ 3. ՀԳՐՈՒԹ՝ 3բ: ՆԻԻԹ՝ Թուղթ. եւրոպական, լուսադրոշմով եւ լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 36,5x25,2: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն (31,3-33x22): ԳԻՐ՝ նոտրդիր: ՏՈՂ՝ 39, 41 (Հայերէնը), 36, 39 եւ 14 (լատիներէնը):

ՅԱՐԴԱՐԱՆՔ՝ Հունի. 1ա՝ վերը գծուած շրջանակ, մէջը՝ «Տեղի կնքոյ»:

ԿՆՔԱԴՐՈՇՄ-ՆՇՈՒՄ՝ 3բ փակցուած թերթիկի վրայ. «Պատճէն եպիսկոպոսական վկայականի կամ կոնդակի Սարգիս վարդապետի Կոստանդնուպոլսեցւոյ Արհիեպիսկոպոսի մեծին Կեսարիոյ: Տուեալ յէջմիածին, յամին 1733: Հանդերձ լատին թարգմանութեամբ»:

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԲՆԱԳԻՐԸ

Յամին Հազար եօթն Հարիւր եւ երեսուներորդ երրորդի Համարողութեան ըստ մեզ մարդացելոյ Բանին, եւ ի Հազար Հարիւր ութսներորդ երկրորդի (1733) Թուահաշուութեանս ազինս արամենի, նամսեանն Նոյեմբերի (ըստ Հռոմայեցւոց) երկուց տասանց եւ մու Հնգից, եւ ըստ Հայազնեայցս ի Տրէի տասն եւ եօթն, ես՝ Յիսուսի Քրիստոսի ծառայ եւ կենսատու Աւետարանի նորին պաշտօնեայ Տէր Աբրահամ ամենայն Հայոց կաթողիկոս, աթոռակալ սրբոյն Թադէոսի առաքելոյն եւ Հօրն մերոյ սրբոյ Գրիգորի Լուսաւորչին, եւ տեղապահ երկնահանգէտ եւ քրիստոսանկար զահին անպարտելոյ Սրբոյ Էջմիածնին, որ եւ տեղեալ եմ ի բաւարեմայել կղզւոյն Կրիտու, եւ աշակերտ մեծի Յովսեփայ աստուածաբան վարդապետի ի Տէր Հանգուցելոյ՝

Շնորհիվ եւ ողորմութեամբ բարեխնամօղ Տեառն Յիսուսի եւ Հաճութեամբ ամենասուրբ Հոգւոյն ճշմարտի, ըստ խնդրոյ ամենայն ժողովրդեան եւ Համայն քահանայից եւ իշխանաց մեծին Կեսարիոյ, նաեւ ըստ յօժարական կամաց եւ Հաւանութեան բազմերջանիկ եւ մեծի պատիարգին Կոստանդնուպօլսոյ Տէր Յովհաննէս աստուածաբան եւ գերահանձար եղբօր մերոյ, զիւր Հոգեանունդ եւ սիրագուն որդեակն եւ ի մանկութենէ աշակերտեալն զՏէր Սարգիս վարդապետն, զվարժն ի գիտութիւնս աստուածաբանականս եւ զհմուտն ի մակացութիւնս սոփիսթականս (զոր փորձիւ իսկ գիտեմք) բարձրացուցաք ի գերապատիւ աստիճան արհիեպիսկոպոսութեան՝ ի վերայ մեծի աթոռոյն սրբոյն Ղեւոնդեայ, որ ի Կապպադովկացոց Կեսարիայ, եւ Հոգաբարձու եւ այցելու սրբոյն Յովհաննու Մկրտչի գամբարանին եւ նորին հրաշագործ նշխարաց, եւ այլ պէսպէս սրբազնութեանց, որք անդ կան Հաւաքեալ՝ ի պահպանութիւն եւ ի պարծանս ազգիս մերում: Վասն որոյ գիտելով եւ ականատես ելով իմ, թէ որքան թախանձանօք եւ ժտանօք խնդրեցին կեսարեան իշխանք ի մեծապատիւ եղբօրէն իմմէ զիւր Հոգեանունդ Սարգիս վարդապետն, եւ եւս թէ որպէս արդ եւ մահասար գրեալ յղեցին ի սուրբն Սաղիմ՝ առ սրօքէակենցաղ պատրիարգն արթուն [=Գրիգոր] անուն, գրելով նմա թէ՝ Մեք բնաւքս մեծաւ խնդրանօք միշտ խնդրեմք ի քո հարազատ եղբայր բուզանդեան պատրիարգէն, զի տացէ երկրիս մերոյ առաջնորդ զիւր սիրագուն որդի Սարգիս վարդապետն, սակայն նա ոչ բնաւ լսէ մեզ առ ի տալ: Եւ թէ նա եւս որպէս հարկաւորեալ գրեաց ի Սաղիմայ առ ի կատարել զխնդիրս նոցին, ուստի յորժամ հարկաւորեցաւ ի մեծապատիւ եղբօրէն իւրմէ առ ի տալ նոցա առաջնորդ զվերոգրեցեալ Սարգիս վարդապետն, յայնժամ կամեցաւ յղել զնա ի սուրբ գահս՝ առ ի բարձրանել ի պատիւ եպիսկոպոսութեան ի վերայ մեծի աթոռոյն սրբոյն Ղեւոնդեայ, մեծագոյն ընծայիւք: Քանզի ի հալալ արգեանց իւրոց ետ կերտել մին զուտ ոսկեայ սկիհ՝ զմրուխտապատ եւ յակնթակուռ մինչեւ ցտասն քիսէ՝ յիշատակ Սրբոյ Էջմիածնին: Եւ յորժամ ես եւս Աբրահամ ամենայն հայոց կաթողիկոս գեռեւս էի ի Կոստանդնուպօլիս եւ հանգերձեալ էի գալ ի Սուրբ Էջմիածին՝ առ ի յերկրպագութիւն սրբոյ իջման տեղւոյն, Ուստի ի հանգիպիլ այսմ պատշաճաւորութեան եւ գիպողութեանս սրբազան պատրիարգն Կոստանդինու վերոգրեցեալն յանձնեաց առ իս զիւր սիրագուն որդեակն, զի իբր իւր փոխան հայր լինելով, ի Սուրբ Էջմիածին հրամանաւ իւրով տայցեմ ձեռնադրել արհիեպիսկոպոս ի վերայ բոլոր Կեսարիոյ: Սակայն իրաւի անհնար է ստիլ նախասահանութեանն Աստուծոյ, զի անգեղջք են կոչումն Աստուծոյ: Քանզի ի գալ եւ ի հասանիլ մեր ի Սուրբ Աթոռս՝ հանգեաւ առ Քրիստոս նախ քան զմեզ յառաջ՝ մեր անուանակից լուսահոգի Աբրահամ սրբազան կաթողիկոսն, եւ մերս նուաս-

տուլթիւն կամակցութեամբ եւ ընտրութեամբ ամենից եւ հաճութեամբ ամենասուրբ Հոգւոյն ճշմարտի կոչեցաւ ի պատիւ ծայրագոյն քահանայապետութեան ի հայոց համարողութեան հազար հարիւր ութսուն եւ երեք (1734) եւ ի Նոյեմբերի քսան եւ չորս: Իսկոյն յետ օծեցման իմ միւսում աւուր ի նոյն Նոյեմբերի ամսոյ քսան եւ հինգն, յաւուր տօնի Յուլիանեայ եւ Վասիլուհույ, ի մէջ արփիադիտակ սրբանոցի Սրբոյ Էջմիածնին, ի յաւագ խորանումն, ի ներկայութեան ամենից եպիսկոպոսաց եւ յոգնակուտակ ժողովրդոց բարձրացուցի ի գերապատիւ աստիճան արհիեպիսկոպոսութեան զՏէր Սարգիս աստուածաբան վարդապետն ի վերայ բոլոր Կեսարիոյ, առնելով զնա միայն անդրանիկ իմոյ ձեռնադրութեան: Եւ ի ժամ սրբոյ օծմանն իւրոյ, ի մէջ այն սարսափելի ատենին, ի ներկայութեան բազմագունից եպիսկոպոսաց եւ ժողովրդոց պսակաւորեցի զնա նորագոյն մականունութեամբ, ըստ արդեանցն եւ ըստ արժանաւորութեան, կոչելով զնա Սարգիս Շնորհալի /1բ/ վասն շնորհաբուզիս եւ յորդառատ քարողութեանն եւ այլոց արդեանց, զոր փորձիւ իսկ գիտեմք, նա եւ յայտ է ամենայն ումեք: Վասն որոյ յայտնի լիցի ձեզ ամենայն հայկական տոհմից, որք ի գաւառս, ի քաղաքս, յաւանս եւ ի գիւղօրեայս կայք բնակեալք: Աստուածաբան եւ բացատրօզ խորոց խորհրդոց Տպ (°) վարդապետաց, արթուն ակամբ դիտօզ պանծալի եպիսկոպոսաց, սրբանուէր եւ երկնահրաւէր քահանայից, ուղղաշաւիղ եւ համեստակենցազ սարկաւազաց, բարձօզ խաչին եւ քրիստոսազգեաց կրօնաւորաց եւ ամենայն տեառնավիճակ պաշտօնէից եւ եկեղեցական լրմանց, նաեւ արագասագեղուն եւ գոյիւք յոգնաբեղուն փարթամաց, ճարտարաբան եւ ատենախօս մեղիքներաց, հաւատարիմ եւ իրաւադատ տանուտէրանց, հանճարաշահ եւ իմաստուն վաճառականաց, վայելչակերտ եւ ազնուամեծար արուեստաւորաց, ուղղակիւ եւ նոյնաչափ վաճառողաց, քիւրտ ընդ երես եւ վաստակամեծ հոգադործաց, ծագկեալ ալեօք եւ փառազարդ ծերոց, պարկեշտրնթաց եւ ուղղաբնաց երիտասարդաց, կատարունամիտ եւ հպատակաբարոյ մանկանց, երկիւղազարդ եւ համեստացոյց կանանց, եւ առհասարակ ամենայնի, ի զանազան իրս հետեւելոց եւ ի պէսպէս գործառնութիւնս ընթացողաց, ըստ իւրաքանչիւր ախորժակաց եւ կարի, եւ ըստ աստիճանի հաւատացելոց ի Տէր մեր Յիսուս Քրիստոս Աստուածն ամենայնի, ազանց եւ սեռից արամենականաց հայկազունեաց, քանզի որպէս երկնային իմացական քահանայապետութեանցն կարգք, որք են եռ երրեակ քահանայապետութիւնք, ունին (ըստ սրբոյն Դիոնիսեայ) զառաջին, զմիջին եւ զվերջին, զի որովհետեւ սրբազան կարգ վերաձայնին, ի հարկէ պարտին ունիլ զառաջին, զմիջին եւ զվերջին: Որոց առաջինքն միջնոցն, եւ միջինքն վերջնոցն մատակարարեալ հազորդեն զաստուածային լուսափայլութիւնն: Որպէս յայտնաբանօրէն աստուածաբանէ գա-

գալթն աստուածաբանից ի դիրս Երկնային քահանայապետութեանցն: Եւ նմանապէս եւս որպէս օրէն է աշխարհիս, զի իշխանութիւնք մարմնաւորք անգրանցանեն ի հարց առ որդիս: Եւ եւս որպէս յայտնապէս տեսանեմք ի յանսդալ կարգս գործոյ բնութեան, զի վերինքն եւ պարզքն ներազդեն ի ստորնայինս եւ ի բաղադրեալս՝ զներգործութիւնս գոյացականս: Ըստ այսց օրինի եւ յաւէտագունիւ եւս կարգաւորութեամբ ի սրբազան եկեղեցւոյ Համանկատի սփռումն եւ տարածումն լուսափայլութեանց եւ շնորհաց Աստուծոյ ի վերնագունից առ ստորնագոյնս՝ իբր թէ ի գլխոյն առ ստորագրեալ անգամս վերահեղեալ ըստ արքունի քնարերգութիւն. Որպէս իւղ զի իջանէ ի գլուխ եւ ի մորուան Ահարօնի, եւ ի մօրուացն իջանէ ի գրապանս զգեստու նորա, որ եւ յայտնագոյն իսկ երեւի, զի ըստ բաղապետութեան երկնաւորացն եւ մերս եկեղեցական կարողապետութեան կարգ եւ նոյն նշոյլք ճառագայթեալ երեւի յերկնաւոր քահանայապետութիւնս սրբազնապետութիւն ներմարմնաւորութեամբ Որդւոյն միածնի, որով եւ գրեթէ գեր երկնապանծ գտաւ մերս զինուորեցեալ եկեղեցւոյ կարգապետութիւնն, զի ըստ առաքելոյն Պօղոսի յեկեղեցւոյ ուսան զբազմապատիկ զիմաստութիւն, որ եւ յաւէտագոյն տարածումն ի Քրիստոսէ սկզբնաւորեալ մինչեւ ցայսօր եւ ցյաւիտենից վախճանն ներգործի յամենայն ազգս քրիստոնէից աւանգօրէն պարգեւմամբ միմեանց, ըստ կարգի յառաջացելոց արժանաւորութիւն աստիճանի եւ պատուոյ՝ ի վեհագոյն գլխոյ անտի սկսեալ մինչեւ ի հոսկ սպասաւորսն: Արդ, վասն որոյ վերջապէս կրկին զայս ծանիք ամենեքին, զի զբաղձալի եւ զբազում երկամբ ծնեալ զաւակն՝ պատրիարգ եղբօրս մերոյ զՏէր Սարգիս Շնորհալի վարդապետն սրբազնագործեցաք ի կարգս եպիսկոպոսութեան եւ եգաք իբրեւ զճրագ ի վերայ աշտանակի սրբոյ եկեղեցւոյ՝ լուսատու լինիլ ամենեցուն՝ ոյք կարօտին, եւ առաջնորդել՝ որոց պիտոյանայ, իւրատել զստահակս, յուղղութիւն ածել զյանցաւորս, յանգիմանել զոչ եկեալսն յօրէնս Տեառն, հաստատել զգալթակղեալսն, կանգնել զգլորեալսն, եւ որ ինչ վայել է պաշտօնին իւրոյ, առնել առանց երկիւղի եւ ձանձրանալոյ: Մի՛ ոք իցէ որ սմա հակառակ կայցէ կամ ընդգիմակ երեւեսցի, զի գէպ ի սա հակառակօղքն մեզ եւ Քրիստոսի հրամանին են հակառակ, կապեալքն ի սմանէ կապեալ, եւ արձակեալքն՝ արձակեալ: Ըստ Քրիստոսի պատուիրանին պատուեսցի եւ ընկալցի յամենեցունց իբրեւ զպաշտօնեայ Քրիստոսի եւ սիրեսցի որպէս զծառայ նորա, զի արժանի է մշակն վարձու իւրում, իսկ սա մշակ երկնաւորին է, ապա ուրեմն առաւելաբար պարտի ընդունիլ, ըստ որում վայել է երկնաւորին: Որպէսզի գուք ի պարտուց գերծանիցիք, եւ սա ըստ քանքարաշահ ծառայիցն պսակի ձեօք հանգերձ, մշակ առանց ամօթոյ գտեալ, ասելով ցՏէրն. Ահա ես եւ մանկունք իմ, զորս ետուր ցիս: Ուստի եւ լսիցէ զերանագմայլ բար-

բառան, թէ Մո'ւտ յուրախութիւն Տեառն քոյ, ժառանգելով զանդրաւ երջանկութիւնն որ ի Քրիստոս Յիսուս ի Տէր [մեր] ///

Ծնթ. Հայերէն այս «բնագր»ից պակասում է զուտ փառաբանական աւարտի 1 կամ 2 երկու տողը, որ լատիններէն «Թարգմանութեան» մէջ այսպէս է. «Deo nostro, qui est benedictus a cunctis existensibus, et ab omnibus ensibus sempiterna glorificatione in secula seculorum amen» եւ որի վերջում կայ 4 տողանոց հետեւեալ ծանուցումը. «Scripta est haec Eppatus testimonialis Littera in supereminensi solio omnium armenorum Ecimiazin nuncupaso, Anno servasorij nostri 1733»: Հայերէնը 1¹ 1ին թերթն է եւ ըստ երեւոյթին ղոյգ չի ունեցել, լատիններէնը երկծալ ղոյգ թէրթ է (2ա-3բ), երկրորդի վրայ (3ա) «Թարգմանութեան» աւարտի 10 տող է եւ վերը բերուած ծանուցումը, մնացածը չգրուած է: Բառապաշարով դատելով, թւում է՝ Թարգմանութիւնը հայերէնն է, բնագիրը՝ լատիններէնը:

6

Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

ՌՃՂԷ. ~ 1748

ՀԵՂԻՆԱԿ՝ Պետրոս Հռոմկլայեցի կաթողիկոս ամենայն հայոց (1748. յունուար-հոկտեմբեր): ՀԱՍՑԷԱՏԷՐ՝ Ալթուն եւ Պօղոս աղայք: ՄԻՏՔ ԲԱՆԻ՝ Ղաղար Զահկեցու «չնորհիւ» էջմիածնի կողոպտեալ եւ խեղճ վիճակը:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ բ. երեսը: ՆԻԻԹ՝ թողթ. եւրոպական, լուսադրոշմով եւ լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 33,6x22: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն (24,5x15,2). երկու կողմից կարմրով սահմանագծուած: ԳԻՐ՝ նոտրգիր: ՏՈՂ՝ 42. վերջին 7ր ձախ՝ 5,5 սմ լայնքի լուսանցում:

ՅԱՐԴԱՐԱՆՔ՝ «Յ՛Ի» սկիզբը, պատիւի նշանով հանդերձ, գեղեցիկ թռչնազրեր եւ բուսադարձեր, որպիսին է նաեւ կնքադրոշմի վերեւը գրուած՝ «Է»ն, «կաթողիկոս» բառի վրայ կանոնաւոր նկարուած եկեղեցի-խորան (գոյները՝ կարմիր, կապոյտ, կանաչ, գեղին):

ԿՆՔԱԿՐՈՇՄ-ՆՇՈՒՄ՝ վերին եղրից 2,5 սմ ցած, գրադաշտի կենտրոնի ուղղութեամբ, 3,3 սմ տրամագծով կարմիր դրոշմ, շուրջանակի՝ «ՇՆՈՐՀԻԻՆ Ա՛Յ Տ՛Ր ՊԵՏՐՈՍ ՀՅՐԱՊՏ Ա՛Մ ՀԱՅ ՌՃՂԷ.» (1748): 4 մմ լայնքի յաջորդ շրջանակի մէջ գծադարձեր, իսկ կենտրոնի շրջանի մէջ պատկեր՝ «Յ՛Ս Ք՛Ս» մակագրութեամբ:

ՎԻՃԱԿ՝ բաւարար, նախկինում ծալուած տեղերում գրերը մաշուած, 4 տեղ եղերքը պատռուած, սակայն բնագիրն ամբողջական է:

ԲՆԱԳԻՐԸ

ՅԻՍՈՒՍԻՒՐԵՒԿՈՒՆ ԶԱՄԱՅ ՏԷՐ ՊԵՏՐՈՍ ՀԱՐՈՂԵՆ / ամենայն հայոց եւ ծայրագոյն պատրիարք Վաղարշապատու / եկեղեցոյս Քրիստոսի եւ տիեղերականի սրբոյ եւ մեծի աթոռոյս էջմիածնի:

Յորմէ ժամանեցի թուղթ սիրոյ, ողջունի եւ օրհնութեան եւ / նամակ պահպանութեան, շնոհք առաքելական եւ աստուածային բազմապատիկ օրհնութիւնն եւ նախախնամական գթութիւնն ի վերայ պարոն Աթոռն եւ Պօղոս ազնիւ աղայ/իցդ եւ իսկաբուն նազելեացդ իմոց, աստուածապահ տանց եւ բնակութեանց ձերոց, Քրիստոսիւ ծաղկեալ որդւոց / եւ դասերաց ձերոց եւ ի Հոգւոյն Սրբոյ բարգաւաճեալ ազգաց եւ ընդանեաց ձերոց, ընչից եւ ապրանաց ձերոց խնդալ ի Տէր:

Շնորհք, սէր եւ խաղաղութն յԱստուծոյ Հօրէ ամենակալէ եւ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ եւ ի Սրբոյ Հոգւոյն կենարարէ եւ յառատածաւալ պարգեւատուէ իջցէ եւ հանգիցէ ի վերայ ձեր, եկեացէ / եւ բնակեացի առ ձեզ իբրեւ զյորձանս գետոց եւ որպէս զվտակս աղբերաց յար եւ միշտ. ամէն:

Օրհնութիւն Հօր, պահպանութիւն Որդւոյ եւ նախախնամութիւն ամենագոր Սուրբ Հոգւոյն եղիցի ի վերայ ձեր / եւ լցուցէ փառօք եւ պատօք, եւ արգասալիր ճոխութեամբ, իբրեւ զորթս եւ զոստս սաղարթա/խիթ եւ պտղալից դրախտ տնկեալ ի զնացս Հոգւոյն վտակաց, մնալ խաղաղ կենօք. ամէն:

Եւ ընդ շնորհազեղուն օրհնութեան եւ ողջունառաք գրոյս յայտ լիցի սիրելեացդ իմոց եւ հոգեւոր զաւակացդ մօրս հաւատոյ Սրբոյն Էջմիածնի վասն անցելոց իրաց Սրբոյ Աթոռոյս եւ աթոռաքակին, թէ զինչ չարիք եւ զորքան աւերումն եւ քանդումն արարեալ է Սրբոյ եւ մեծի Գահիս, / զոր յառաջագոյն լուեալ էք բազում անգամ, իսկ այժմ որ վերստին եկեալ է, իմանալով թէ ոչ կարէ վայելել եւ նստիլ, իսպառ դատարկացուցեալ եւ մերկացուցեալ է զմայրս մեր, զորքան ամփոփեալ ինչք / գոն եղեր, զամէնն հանեալ, ցիր եւ ցան արարեալ, կորուսեալ է, եւ փլչելոյ գիւղն է յղեալ՝ առ / յեղբարսն իւր, եւ յորժամ մեք մտաք ի սուրբ Աթոռն, տեսաք որ մէկ փողի եւ մէկ կտոր կարկատանի նշմարանք ոչ գոյր, միայն թէ եկեղեցական քանի մի զարդ, այն այլ Նատիր շահին յետ դրկածն է, եւ այլ ինչք / ոչ գոն: Եթէ մէկ տարի եւս նստեալ լինէր, թիլ թէ Աթոռի քարերն եւ շինուածք հնոց նախնեացն / այլ կու քակէ եղեր՝ ըստ վկայութեան բոլոր միաբանից եւ երկրացոց, զի միշտ ասացեալն այս է եղեր / թէ՝ Կաթուղիկէի խաչն եւս կու իջուցանեմ, եւ եկեղեցին ձիոյ թաւախանայ շինել կուտամ, եւ իմ ասացեալն / եւ խօսքս գլուխ կու տանեմ. եւ այլ բազում բանք ի միաբանից մանսարականի գրէն կարէք իմանալ, զինչ / եւ իցէ սուրբ տունն շատ խղճութեան միջի է, պակասութիւնն անթիւ, չքաւորութիւնն յոլով, աղքատութիւնն անպատմելի, Տէր Աստուած ինքն այց արասցէ սրբոյ տանն իւրոյ, զի այսպիսի դառն ժամանակիս ակամայ կամօք / եւ բռնութեամբ այս փորձութիւնն իմ գլուխն բերին, եւ ի ներքոյ ծանր եւ անտանելի լծոյ արկին, զոր ոչ էի / ես արժան այս դժուարին գոր-

ծոյս, եւ ոչ էր իմ կար, սակայն վասն իմ անարժանութեանս եւ բազմազան մեղացս / այսպէս եղեւ, զինչ ասեմ՝ փառք Աստուծոյ, կամք Տեառն օրհնեալ է միշտ եւ օրհնեալ եղիցի: Խնդրեմ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, / որ իւր ամէնօրհնեալ անարատ ծնողին մաղթանօքն եւ խնկանուէր հայցուածովք լուսատուին մերոյ սրբոյն / Գրիգորի եւ շնորհիւ միածնաիջի տեղոյս, եւ մաքրափայլ աղօթիւք ձերովք մի՛ ամաչեցուցէ զմեզ / ի մէջ ազգիս հայոց, եւ ի ներքոյ պատկառանաց մի՛ թողցէ զանարժան մեղապարտս, եւ այցելութեամբն / իւրով այց արասցէ մեզ եւ սարսափելի Սրբոյ Աթոռոյս, եւ սորին շնորհիւն ձեզ եւ բոլոր ազգիս || Հայկազեան սեռիս ողորմեսցի եւ աննիազ գթութեամբն իւրով գթասցի. ամէն: Արգ, խնդրի ի սիրելութեանէ ձերմէ որ մեզ / եւ Սրբոյ Գահիս օգնական եւ ձեռնտու, թեւ եւ թիկունք լինիցիք յամենայն ժամ՝ ի բանս, ի գործս եւ ի խօսս, ի բնուստ / անտի անգրանիկ սիրելիք, հարազատ եւ հաւատարիմ բարեկամ իմ էք, նմանապէս անարժանս հարազատ եւ հաւատա/րիմ ձեր եմ եւ ո՛չ օտար: Որոյ օրհնութիւն, ողորմութիւն եւ գթութիւն Տեառն եւ շնորհք աստուածեան Սրբոյ Գահիս / եղիցի ի վերայ ձեր եւ ի վերայ համայնից սիրելեաց եւ բարեկամացն ձերոց աստ եւ ի հանգերծեալն. ամէն:

(Այլ, անկանոն, գուցէ՝ Քիթիոյի ձեռքի գրով) Գրեցաւ ի ՌՃՂԷ. (1748) թուին, Յունեալի / վերջին, ի Սուրբ Գահն էջմիածին:

7

ԵՐՈՒՍԱՂԷՄ

ՌՄԿԴ. ~ 1815

ՀԵՂԻՆԱԿ՝ Երուսաղէմի հայոց պատրիարք [Թեոփորոս Վանեցի ~ 1800-1818]: ՀԱՍՅԷԱՏԷՐ՝ Գրիգոր Ամիրայ: ՄԻՏՔ ԲԱՆԻ՝ իր հայր Նիկողոս աղայի կտակի հազար դուրուշից հասել է գեռեւս միայն 400ր:

ԹԵՐԹ՝ 1. Հգրուած՝ բ. երեսը: ՆԻԻԹ՝ թուղթ. եւրոպական, լուսագործով եւ լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 50,3x36,4: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն (35,5x26,9): ԳԻՐ՝ նոտրգիր: ՏՈՂ՝ 41:

ՅԱՐԴԱՐԱՆՔ՝ վերը՝ գրագաշտի մասի կենտրոնում թռչնազիր «է», նրա տակ՝ կնքագրոշմը (տե՛ս). ձախ եզրից 0,7 սմ յետոյ, վերից վար՝ կարմիր եզրագիծ. 5,2 սմ յետոյ նոյնպիսի երկրորդը, 1,8 սմ յետոյ՝ նոյնտեսակ զուգազիծ, վերջինը՝ աջ եզրից 1,3 սմ առաջ: Կոնգակի սկզբի 11 տողերից առաջ եւ գիմաց, 21x7,3 դաշտով նկար՝ ծաղկազարդ խոյակին դրուած հարթակի վրայ կանգնած թեւաբաց հրեշտակ, ձեռքին սկուտեղ, վրան՝ Յովհաննէս Մկրտչի գլուխը: Սկզբնատառեր եւ բառեր՝ կարմիր (այստեղ՝ նոտրով): Գոյներ՝ կարմիր, վարդագոյն, կանաչ, գեղին:

ՎԻՃԱԿ՝ լաւ. եզրերը թեթեւակի մաշուած, ծրարելու համար ժամա-

նակին ծապատիկ ծալուած, նոյն վիճակի արտաքին՝ բ. երեսի վերին շերտը դեղնած, կեղտոտուած:

ԿՆՔԱԴՐՈՇՄ-ՆՇՈՒՄ՝ Թերթի վերին եզրագծից 4 սմ ցած, կենտրոնում, եռաշրջանակ, 5,7 սմ տրամագծով կնիքի կարմիր դրոշմը, կենտրոնում Երուսաղէմի տաճարների հէնքի վրայ խաչածայր դրօշով Քրիստոս՝ ճաճանչների մէջ, արտաքին շրջանակի մէջ՝ վերը աղանակերպ սուրբ Հոգի, ապա ձուածեւ շրջանակների մէջ՝ ԺԲ. առաքեալք, միջին շրջանակի մէջ, կապերերով լի՝ «ԿՆԻՔՍ Ս[ՈՒՐ]Բ Ե[ՐՈՒՍԱ] ՂԷՄԻ ԱԹՈՌՈՅՍ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ ԵՒ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ]. ԶԷ ՊԱՐՏՈՒՑ ԱՅԼ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ»:

ԲՆԱԳԻՐԸ

[Հասցեն՝ բ. երեսի վերին աջ անկիւնում, կոնդակի բնագրի գրից տարբեր նոտրով] Լուսահոգի Մահտեսի Նիկողոս Մեծապատիւ / Ամիրայի օրհնագարմ Որդի Մահտեսի Գրիգոր / Ազնիւ Ամիրայ օրհնելոյն հասցէ / օրհնութեան կոնդակս / ձ[եռամբ] Սուրբ Երուսաղէմայ յարգոյ վէճիլ Պօղոս Աստուածաբան վարդապետին 27:

Ո՞րք եւ ի՞նչ աւանդել, Լսոյն-աշակարհ եւ մեծապայծառ, Հրաշալի եւ Հրաշափառ, լուսաւալ եւ լսոյն-աշակարհ Սրբոյ եւ մեծի Մայրալա[ղա՛վէս] Երուսաղէմ /, Նախ ի Սուրբ Նազարէթէ, ուր Հրեշտակապետն Գաբրիէլ Աւետեաց / Սրբուհւոյ Կուսին Մարիամու, որով յղացաւ զԲան Աստուած, եւ ի / Գերապատիւ Սուրբ Ծննդենէն Քրիստոսի, եւ ի Սուրբ Յորդանանու / զետոյն մաքրեցելոյ ի սուրբ Մկրտութենէ Քրիստոսի, եւ ի Սար/սափելի Գողգոթայէ ի Սուրբ Խաչելութենէն Քրիստոսի, եւ յԱստուածաշօշափ / Սուրբ Պատանաւորոյն Քրիստոսի, եւ ի լուսաբուրդի եւ յԱստուածորնկալ սուրբ / Գերեզմանէն Քրիստոսի, եւ ի Հրաշալի Սրբոյ Յարութեան Աշխարհամատրան / սուրբ տաճարէն Քրիստոսի, եւ ի սուրբ Զիթենեաց լեռնէն՝ ի Սուրբ Համբարձման / յՈսնակոխ Տեղւոյն Քրիստոսի, եւ ի սուրբ Գալիլեայ ժամադիր տեղւոյն / Քրիստոսի, եւ ի Սրբէագումար Ամէնօրհնեալ Տիրամայր Սուրբ Աստուածածնի / Գերեզմանէն, եւ ի Սրբոց Յակոբեանց երջանիկ եւ Սրբազան ընտրեալ / Առաքելոցն Գերագահ եւ տիրահաստատ մայր Աթոռոյս ամենայն Հայոց, եւ ի Սոցին սպասաւորէ / ի Տէր Թէոդորոս Արքեպիսկոպոսէ եւ Պատրիարքէ Սրբոյ քաղաքիս Երուսաղէմի, յՈրոց ժամանեալ հասցէ / Աստուածային անճառելի եւ բազմապատիկ օրհնութիւնն եւ նախախնամական գթութիւնն, եւ Առատապար/զեւ ողորմութիւնն, եւ շնորհք սրբութեանց տեղեացս ի վերայ յԱստուծոյ օրհնեալ հոգեւոր զաւակիդ / մերում մահտեսի Գրիգոր գերյարգի Ազնիւ Ամիրայիդ, կալ եւ մնալ քեզ միշտ խնդութեամբ. ամէն: /

Շնորհք եւ խաղաղութիւն Ամենասուրբ Երրորդութեան եւ միոյ Աստուածութեանն՝ Հօր եւ Որդւոյ եւ / Հոգւոյն Սրբոյ, եւ օրհնութիւն

Համայն սրբազնասուրբ տնօրինական տեղեաց մերոյ Տեառն եւ / փրկչին Յիսուսի Քրիստոսի միշտ եւ Հանապազ եկեացէ իջցէ եւ Հանգիցէ ի վերայ Հոգւոյ եւ մարմնոյ քոյ. ամէն: / Եւ ընդ Աստուածապարգեւ օրհնութեան գրոյս, ծանիր Հոգեւոր զաւակ մօրս լուսոյ Սրբոյ Աթոռոյս / Երուսաղէմի, եւ գերազնիւ սիրելի մեր ի Տէր. Զի հրամայէ Սրբազան Առաքեալն Պօղոս, ասելով թէ / Կտակ յետ մահուան Հաստատուն է (Եբր. Թ. 17), եւ զայս ուսեալ ի նախագուշադ մարգարէիցն եւ ի Տեառնէ / մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, յորմէ եւ ամենայն ազգք կան եւ մնան ամրագոյն ի վերայ այսր ուխտի եւ սահմանադրութեան Հաստատուն աւանդութեամբ, որպէս եւ դու Աստուածասէր սիրելիդ մեր, ըստ բնածին / Աստուածասիրութեանդ, մտերմական հրնազանդութեամբ պահես զնոյն աւանդութիւնն ըստ առաքելական քարոզութեանց: Եւ արդ, օրհնեալ է տունն ձեր՝ բարի ունելով ողորմած զննջեցեալն եւ հաւատարիմ զհոգեւորդ, վասն զի զկտակ առ Աստուած հանգուցեալ լուսահոգի հօր քոյ՝ մահտեսի Նիկողոս աղային, անթերի եւ / անպակաս յղեալ էիր՝ հազար դուռուշ, բայց ձեռամբ յարգի վէքիլ Պօղոս վարդապետին չորս հարիւրն / եկն հՀաս ի սուրբ Աթոռս եւ մեզ, եւ վեց հարիւրն մնացեալ է, սակայն զայն եւս շուտ հատուցանել աղաչեմ: / Որպէս եւ մեր ընկալեալ սիրով զհոգւոյ պտուղ կտակի ողորմութիւնս քոյ, մատուցեալ նուիրեցաք ի տաճար Տեառն Աստուծոյ ամենակալի, ի պէտս կարեաց Սրբոյ տանս դատաստանի, զոր եւ ինքն Տէրն մեր Յիսուս Քրիստոս հաճեալ ընկալցի զողորմութիւնս քոյ, իբրեւ զկամաւոր պատարագս Աբելի, Նոյի եւ Աբրահամու եւ / այլ ամենայն հաճոյացեալ սրբոցն իւրոց, եւ փոխարէն տրոց եւ ողորմութեանց քոց՝ հատուցէ քեզ միոյն բիւրա/պատիկ, աստ եւ ի հանդերձելումն, նա եւ որքան աստ ի սուրբ տնօրինական տեղիսս Քրիստոսի, եւ յառաքել/ական սուրբ Աթոռս ժամբ եւ սուրբ պատարագք կատարին, յայնց ամենից քեզ եւ քոյ Համայն կենդանեաց / եւ հաւասար ննջեցելոց հոգւոցն մասն եւ բաժին Հանցէ բարեբարն Աստուած. ամէն:

Գրեցաւ օրհնութեան եւ շնորհակալութեան գիրս ի վեհագոյն մայրաքաղաքս սուրբ Երուսղէմ, առ դրան Սրբոց Յակոբեանց Սրբոյ եւ մեծի մայր Աթոռոյս ամենայն Հայոց, ի թուին ՌՄԿԴ. (1815) եւ յամսեանն Ապրիլի 19:

8

Ս. ԷԶՄԻԱՄԻՆ

ՌՄԿԹ. - 1820

ՀԵՂԻՆԱԿ՝ Եփրեմ Ա. Զորագեղցի կաթողիկոս ամենայն Հայոց (1809-1830): ՀԱՍՑԷԱՏԷՐ՝ Պօղոս Պետրոսեան Մամիկոնեան: ՄԻՏՔ ԲԱՆԻ՝ առօրեայ խնդիրներ:

ԹԵՐԹ՝ 1. Հգրուած՝ բ. երեսը: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագծերով եւ լու-

սադրողով՝ «II III 1810»: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 40x23,3: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (27x19,7). ձախից երկու, աջից մէկ կարմրով սահմանադժուած: ԳԻՐ՝ շղաղիր: ՏՈՂ՝ 39:

ՅԱՐԴԱՐԱՆՔ՝ «Յ՛ի» սկսուածքը խոշոր, վրայի պատիւի նշանը ոճաւոր, «կաթուղիկոս» բառի վերեւը դժանկար դմբէթ-եկեղեցի:

ԿՆՔԱԴՐՈՇՄ-ՆՇՈՒՄ՝ վերին եզրից 4,5 սմ ցած, շարադրանքի կենտրոնի ուղղութեամբ 3,6 սմ տրամագծով դրոշմ, շուրջանակի՝ «Է. ՇՆՈՐՀԻՒՆ Ա՛Յ Տ՛Ր ԵՓՐԵՄ ԿԹԻՂԿՈՍ Ա՛Մ ՀԱՅՈՑ. ՌՄԾԹ.» (1810): Բ. երեսին, երեւի հասցէատիրոջ ձեռքով՝ «1822 Փետ. 18ն ընկալայ»:

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԲՆԱԳԻՐԸ

Յիսուսի Քրիստոսի ծննդէն շուրջ 5 էր Եփրեմ կաթուղիկոս / ամենայն հայոց եւ ծայրագոյն պատրիարկ առաքելականի եկեղեցւոյ Քրիստոսի, նա եւ լուսակառոյց Աթոռոյս սրբոյ էջմիածնի. / յիսուսաւանդ բազմադիւն ողջոյն եւ երկնածիր առատ օրհնութիւն ի սէր / դերագոյն առձօնի բարեպաշտութեամբ դերափայլեալ արժանադով հա/րազատ որդւոյ սրբոյ Լուսաւորչին եւ քրիստոսեան աթոռոյս մօր սրբոյ արդոյ եւ մեծա/րու աղայ Պօղոս Պետրոսեանիդ Մամիկոնեան ընտիր սիրելոյդ մերոյ եւ որոց քո են / ի ցնծի կիրս յօրանալ ճոխ ամանակօք:

Ծանիցէ յարդութիւնդ ձեր, որ սիրալրական դրութիւնդ քանակեալն ի 3 ամ/սեանն Օդոստոսի անցեալ ամի եհաս ի ձեռս ի 4 Փետրվարի ներկայ սոյն տարւոյս, որով դիտացեալ զողջանդամ ժամանումնդ ի նպատակ եւ զքաջառողջ եւ բարեվի/ճակ դրութիւն անձին եւ իրաց ձերոց՝ յաւէտ խրախացաք եւ դոհացեալ զամենախնամ արարչէն / մաղթեցաք պահել, պաշտպանել զձեզ ի դմին վիճակի յրեթացս յարակայ բարեյաջողութեան / առաւելեալ բարեմասնութեամբք հողւոյ եւ մարմնոյ. ամէն:

Նշանակեալ էր ձեր ցաւակցաբար զձախողակ դիպուածոյ Սրբոյ / Աթոռոյս ի կողմանէ մեծի դումարին, որ այդը չյաջողելոյն հասանիլ առ պար/տատէր վաճառականն, մեզ եւս արդարեւ ո՛չ սակաւ նեղութիւն եղեւ այդ դիպ/ուած, մինչ վաճառականքն դատարկաձեռն վերադարձեալ ժամանեցին աստ. այլ / զիարդ եւ իցէ՝ զոր միանդամ պատկանն էր կամ հարկ, տնօրինեալ զայնմանէ / դրեցաք աւասիկ Պօղոս շնորհազարդ եպիսկոպոս հարազատի մեր որդւոյ եւ / որոյ արժանն էր, առաքմամբ եւ այլոց թղթոց ընդ նմին՝ կարեւորաց եւ պատ/կանելեաց դմին իրողութեան, զոր տեսչիք:

Առաջին եւ յետին դրութիւնք ձեր ի վերայ ընտանեաց ձերոց ի Կոս/տանդինուպօլիս եղելոց ուղեւորեցան անդր առ ի մէնջ, որոց պատաս/խանիքն ժամանեալ աստ անյապաղ, առաքեալ եմք դէպ այդր առ ձեզ / զոր Տեառն յաջողմամբ ստացեալ էք ի հարկէ:

Իսկ թուղթ ձեռք, որ առ Երեմիա պատուելի վարժապետն ժամանեալ
աստ ընդ զըրոյդ որ առ մեզ, չգտանեցաւ խղճալին բանալ եւ / ընթեռնուլ
զայն, ըստ որում փոխեալ էր յաստի կենացս, թողեալ վասն մեր / կսկծա-
գին բաւական տխրութիւն, զորոյ զհոգին Տէր լուսաւորեսցէ եւ տի/րա-
կիր յարկաց հանդերձեալ խորանաց երկնից արքայութեան ժառանգորդս
/ կացուցեալ, զձեզ իսկ երկնային մխիթարութեամբ սփոփեսցէ եւ երկ-
րաւոր քաջա/դիպութեամբ բարեաց արգասաւորաց բարգաւաճեսցէ, եւ
անանց օրհնութեամբն ի բա/րութենէ ի բարութիւն, ի բարեբախտութենէ
ի բարեբախտութիւն եւ ի յառաջադի/մութենէ ի յառաջադիմութիւն, ի
չնորհս հոգւոյ եւ մարմնոյ առաջնորդեսցէ. ամէն: Ողջ լեր ամենայն ու-
րախութեամբ, եւ մեք եմք եւ մնամք վասն ձեր / եւ վասն ամենայն ձերայ-
նոց մշտնջենաւոր աղօթարար:

Ի 1820 ամի Տեառն, Մայիսի 8 Կաթողիկոս ամենայն հայոց

ի Սուրբ Կաթողիկոս Լեւոնի վաչագան Եփրեմ

(Երկրորդ օրինակ) ի սոյն թուոյ Յուլիսի 10ն

Ծնթ. Ստորագրութիւն-անունը «Վաչագան Եփրեմ» եւ վերջին տողը
այլ՝ Եփրեմի՞ ձեռքով, աւելի բարակ գրչով:

9

ՇՈՒՇԻ

ՌՄՀ. ~ 1821

ՀԵՂԻՆԱԿ՝ Եփրեմ Ա. Ձորագեղցի կաթողիկոս ամենայն հայոց (1809-
1830): ՀԱՍՑԵԱՏԵՐ Ալէքսէյ Պետրովիչ: ՄԻՏՔ ԲԱՆԻ՝ «ըստ պահանջե-
լոյ հարկի» էջմիածնից գնացել է Շուշի:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ բ. երեսը: Նիժի՞թ թուղթ. դեղնաւուն, լու-
սագծերով եւ լուսադրոյմով՝ Ռուսաստանի զինանշան: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝
33,3,8x20,5: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (28x17,5). ձախից զոյգ, աջից մէկ
կարմիր սահանագիծ: ԳԻՐ՝ չղագիր: ՏՈՂ՝ 37:

ՅԱՐԴԱՐԱՆՔ՝ «Յ՛ի» սկսուածքը խոշոր, վրայի պատիւի նշանը ոճա-
ւոր, «կաթողիկոս» բառի վերելը գծանկար գմբէթ-եկեղեցի:

ԿՆՔԱԳԻՐՈՇՄ-ՆՇՈՒՄ՝ ցածում, դրադաշտի կենտրոնի ուղղութեամբ
եւ ստորագրութիւնից ձախ, քառակուսու անկիւնները կտրած եւ ութան-
կիւն դարձուած կարմիր դրոշմ. «է. / ԵՓՐԵՄ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ / ՌՄԾԹ.»
(1810): Վերին ձախ անկիւնում՝ «N^o 361», «N^o 106»: Ստորին եզրի կենտ-
րոնում՝ «ՏՅԶԱԳ. [Պատասխան] N^o 359»:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. ձախ լուսանցը եւ բնագիրը մէջտեղում պատուո-
ւած, բայց ոչ ընկած:

ԲՆԱԳԻՐԸ

Բարձր գերագանց Լեւոնի Պետրովիչ / Ողորմած Տէր / Եղօշարար յերե-

Յիսուսի-Քրիստոսի ծառայե- շնորհն-նորա Խորեմ Կաթողիկոս ամենայն հայոց / եւ
ծայրագոյն պատրիարք Սրբոյ Լեւոնի:

Գերագոյն յարգանք մատուցանեմք զողջոյն քրիստոսեան եւ աղօթս /

առնեմք, զի կեանք ձերու՞մ բարձր գերազանցութեանն եղիցի ընդ երկայն / աւուրս լրացեալ ամենայն մասամբ բարերջանկութեան:

Աւետիք շնորհաբեր գալստեան ձերոյ բարձր գերազանցութեանն եւ ողջանդամ մտից այդը՝ ի քաղաքդ Հնչեալ ի լսելիս / մեր, փութամբ ահա ցնծութեամբ հոգւոյ եւ ուրախութեամբ մեծաւ շնորհաւորել / զնոյն՝ մաղթելով ի Քրիստոսէ Աստուծոյ, զի զշնորհ անսպառելի խնամոց իւրոց / եւ պահպանութեան ի վերայ ձեր մշտնջենապէս տարածեալ ունիցի, որպէս եւ զշնորհ / ամենաքաղցր ակնարկութեան Նորին Աստուծան: Մեծութեանն ի ձէնջ անպակաս արասցէ. ամէն:

Արդ, մատուցանեմք զայս նամակ բարձր գերազանցութեան / ձերու՞մ ի ձեռն հարազատի մերոյ Անտօն սրբազան արքեպիսկոպոսին, զոր յատկապէս ի սպաս ձեր առաքեցաք այնր աղագաւ, եւ յուսամբ թէ սիրով ընկալջիք, եւ զմնացեալ որպիսութեանց ի դմանէ իսկ բանիւ իմասջիք:

Ողորմած տէր, ըստ պահանջելոյ հարկի ներկայ ողորմելի դրութեան սրբոյ Աթոռոյն Արարատեան, եւ միանգամայն պարտաւորութիւն մերս քահանայապետական / պաշտօնի՝ հրաման առեալ յիշխողաց՝ եկեալ կամք յայսոսիկ կողմանս՝ ընդ / քաղցրագոյն հովնաւորութեամբ Նորին Աստուծան մեծութեանն, առ որ քանզի / կանխաւ ազդեալ եմք հանդերձ պարագայիւք պայծառափայլ կնիազ Վալե/րեան Գրիգորիչ Մատաթովին եւ սրբազան Ներսէս արքեպիսկոպոս հոգեւորական / ծայրագոյն կառավարչին կողմանցդ մերազնէից որ այդր, վասն որոյ թողումք ձեզ ի նոցունց իսկ իմանալ լիով: Եւ զի զՆերսէս սրբազան արքեպիսկոպոսն խնդրեալ եմք / զալ աստ առ մեզ վասն հարկաւորութեան, խնդրեմք եւ ի ձերմէ բարձր գերազանցութենէ / շնորհ առնել եւ հրաման տալ նմա առ այն: Եւ մեք յանձն արարեալ զմեզ / վերստին ի շնորհս խնամոց ձերոց, եւ զձեզ ի շնորհս պահպանութեան բարձրելոյն Աստուծոյ, եմք եւ մնամք խորին վերապատուութեամբ

բարձր գերազանցութեան ձերոյ վասն
ամենաջերմեռանդ աղօթարար
Ի 28 Դեկտեմբերի Պատրիարք հայոց
1821 ամի Տեառն Վշտալի Եփրեմ

Ի կայսերախնամ քաղաքն Շուշի

Ծնթ. Ստորագրութիւն-անունը «Վշտալի Եփրեմ» այլ՝ Եփրեմի՞ ձեռքով:

10

ԳԻՒԼԻՍՏԱՆ

ՌՄՇԱ. - 1822

ՀԵՂԻՆԱԿ՝ Եփրեմ Ա. Զորագեղցի կաթողիկոս ամենայն հայոց (1809-1830): ՀԱՍՅԷԱՏԷՐ՝ Ալեքսանդր Ա. կայսր Ռուսաց: ՄԻՏՔ ԲԱՆԻ՝ ինքն անկարող է եւ հրաժարուում է կաթողիկոսական պաշտօնից:

ԹԵՐԹ՝ 1: ՆԻԻԹ՝ թուղթ. լուսագրողով եւ լուսագծերով: ՄԵԾՈՒ-

ԹԻԻՆ՝ 38,5x20,9: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (28x16,5 Ա. երեսը, 21,5x 16,5 Բ. երեսը): ԳԻՐ՝ չղաղիր: ՏՈՂ՝ 36+32:

ՅԱՐԴԱՐԱՆՔ՝ «Յ՛ի» սկսուածքը խոչոր, վրայի պատիւի նշանը ոճաւոր:

ԿՆՔԱԴՐՈՇՄ՝ չունի. ՆՇՈՒՄ՝ Բ. երեսին, մատիտով՝ «Հին Նախիջեւանի»:

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԲՆԱԳԻՐԸ

Ամենաողորմած կայսր ինչնակաւամենայն Ռոմայ Աւետանքի Պաւլոսի / աստուածագործ ինչնակաւ եւ ակնկալութիւն / եւ ամենայն միաբանութեան իմոց հոգեւորականաց / աղօթարար ձեր եւ՝

Յիսուսի Քրիստոսի ծառայ Եփրեմ կաթողիկոս ամենայն հայոց եւ ծայրագոյն պատրիարք / Արարատեան աթոռոյ սրբոյ կաթողիկէ Էջմիածնի՝ ամենախոնարհաբար երկրպագութեամբ Ամենողորմածի Աթոռոյ Ձերում Կայսերական մեծութեանն մատուցանեմ նախ զիմ ամենակատար գոհունակութիւնն բազմապատիկ օրհնաբանութեամբ օրհնաբանեալ Անուան եւ Անչնն եւ Աթոռոյ Ամենօգոսրոս/իստ Չէր Տէրութեան, որոյ ամենաքաղցր հովանաւորութեամբն գտայ ես երանական իմն բարեբախտ/ութեամբ ապահովացեալ յամենայն ժամանակս լինելոյ իմ վիճակաւոր արքեպիսկոպոսութեամբ հայոց ի Ռոմաստան զամս / իբրեւ երկոտասան, եւ ի վերայ այնր եւս վերապատուեալ դահակալութեամբ Արարատեան Պատրիարքական Աթոռոյ սրբոյ Գրիգորի մեծի Պարթեւի եւ Լուսաւորչի ամենայն հայոց եւ նախագահ առաջնորդութեամբ / ընդհանուր ազգի եւ եկեղեցւոյ նորա:

Ապա վստահացեալ ի Ձեր աստուածանման մարգարիտութիւնն, համարձակիմ առաջի առնել ա/մենալուսափայլ բարերար հայեցողութեան Ձերում Կայսերական Մեծութեանն՝ որպէս առաջի միակ ամենաբաւական բժշկի զիսկութիւն որպիսութեան ցաւալի անձին իմոյ եւ կացութեան, զի յօրէ մտանելոյ իմ յաթոռ պատրիարքութեան ամենայն հայոց սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի որ յԱրարատ, օր ըստ օրէ ծանրացան ի վերայ իմ / հոգք պատրիարքական աթոռոյն, յորս թէպէտ ամենայն զօրութեամբ եւ կարողութեամբ մարմնոյ իմոյ եւ հոգւոյ յարատեւեալ / մինչեւ ցայժմ զամս իբրեւ երեքտասան, միշտ ապագայ յուսով երկայնամտեալ փութացայ կրել զամենայն / յօժարութեամբ եւ ջանացայ բազմօք, զի թերեւս կարօղ եղէց վերածել յիւր առաջին վերանորոգութիւն զմիակ / պարծանքն ամենայն անայցելու ազգի հայոց զԱթոռ պատրիարքութեանն մեզ յանձնեցեալ, այլ տարաբաղտ գտեալ / մինչ իսպառ ոչ երբէք եւ ոչ իւրք ոչ կարողացայ հասանիլ ցարգ այնպիսի իմոց բաղձանաց, զի ընդ / հակառակն միշտ մեզ յառաջբերեալ ժամանակն զիւրն հզօրեղ ներգործութիւն, փոխանակ ակնկալեալ բարեաց պատրիարքա/կան աթոռոյն, օր

քան զօր հզորացան նաեւ անակնկալ չարիք ի վերայ հասարակութեան ազգի հայոց ընդ բազում / տեղիս, որով եւ բազմացան, ծանրացան ի վերայ իմ եւ աթոռոյ Արարատեան եւ ամենայն մերոց հոգեւորականաց անբե/րելի դժուարակրողութիւնք, նա մանաւանդ ծանրութիւնք բազմատոկոսի պարտուց, յորժամ եւ ծերութիւն իմ ա/ռաւել քան զամենեսին ծանրացեալ ի վերայ անձին իմոյ եւ պակասեցուցեալ յամենայն կարողութեանց, կարճեաց / մինչ իսպառ նաեւ զընթացս այնպիսի յուսոյ բարեաց եւ ապագայ ակնկալութեանց, ուստի զի մի՛ եւս ծանրացի ինձ պարտաւորութիւնն իմ աթոռոյ եւ ազգի հայոց վասն իմումս անհոգանալոյ, ընտրեցի ես / մեկուսանալ յայսկոյս եւ ի բաց հօժարեցուցանել զանձն իմ ի պարտաւորութեանց անտի պատրի/արգական կոչմանն իմոյ, յանձնելով զծերութիւն իմ դարձեալ բարերար հովանաւորութեան Ձե/րոյ / Կայսերական Դե/պարտութեան, որոյ ամէնողորմած Ղրամատիւն գտայ ես հաստատեալ յայն կո/չումն իմ: Այլ յայսմ եւս առաւելաւ ինձ տարաբաղտութիւն իմ, զի ի սակաւ նեղութեանց անտի ճանապարհորդութեան իմոյ եւ ի վերաժամանելոյ ցրտութեանց եւ ձեանց վտանգեալ մինչեւ իսպառ ամենայն անձ/նական առողջութիւն իմ, աչք իմ եւ ականջք եւս, որք ի վաղուց ենթարկեալ գտանէին տկարութեանց / հասակի ծերութեան իմոյ, ամենեւին նուազեցան ի տեսութեանց եւ ի լսողութեանց:

|| Բայց ի վերայ ամենայնի այսոցիկ յոյս իմ հզօրագոյն է յիս, թէ աստուածաման բարեգութ հայե/ցողութիւն ձեր չունիցի անտես առնել ո՛չ զծերութիւն եօթանասուն եւ երկու ամեայ հասակի իմոյ, / ո՛չ զպատրիարգական աթոռն ամենայն հայոց, ո՛չ զմիաբանութիւն հոգեւորականաց նորա եւ ո՛չ իսկ զբոլոր հօտն, ո/րոց ես ցարդ կրէի զկոչումն կաթողիկոսութեան պատրիարգութեան եւ ընդհանրական հովուապետութեան, / ուստի զիս եւ զամենեսին զնոսա այսու իմովս ամենախոնարհ ինդրագրով յանձնելով Ձե/րոյ Կայսերական Դե/պարտութեանց եւ անսահմանափակ տիեզերատարած մեծ ողորմութեանց, եզրակացուցանեմ վասն իմ, զի ես յայսմ հետէ ազատակամ ընտրութեամբ իմով եւ ինքնայօ/ժար անբռնադատ կամօք հրաժարեալ իսկապէս ի կաթողիկոսական եւ ի պատրիարգական կոչմանց / անտի իմոց եւ յամենայն պարտաւորութեանց նոցին, ցանկամ միմիայն հոգեւորական կոչմամբ / իմով կալ ուրեք ի տեղի ապահով ի ներքոյ քաղցր հովանաւորութեան եւ հզօր թեւոց Ձե/րոյ Կայսերական Դե/պարտութեան եւ լինիլ աղօթարար վասն ամէնաողորմած Աթոռոյ Ձեր եւ վասն ամենայն ազգի հայոց եւ փրկութեան հոգւոյ իմոյ, յետ որոյ սուրբ ժողովն բարձագոյն խորհրդարանի Արա/րատեան պատրիարգական Աթոռոյն սրբոյ Կաթողիկոս Իշխանի համաձայնութեամբ միաբանակցաց իւրեանց եւ ամենայն հոգեւորականաց եւ մարմնաւորականաց հայոց կարօղ են ըստ օրինի յատկացուցանել / փոխանակ իմ զայլ

ԲՆԱԳԻՐԸ

Ի դործս բարեպաշտութեան յաւէտ բարգաւաճեալ քրիստոսասէր Մանուկ աղայի / աստուածաւանդ ողջունիւ օրհնութիւն բազում մատուցանեմք:

Դառն է արգարեւ՝ յորժամ նեղութիւն հասանէ առն / ցնծացելոյ, եւ անհնարին դառն՝ եթէ նեղութիւնք եւ ցաւք կրկին յորգեսցեն / ի վերայ. ոչինչ երկարեմ զբանս՝ արտայայտել զմեծութիւն նեղութեան սրբոյ Աթո/ռոյն Երուսաղէմի, որ ի բազում ժամանակաց անտի ի խոր խաղաղութեան պանծայր, իսկ / այժմ անտանելի նեղութիւնք բազմագումար պարտուց բուռն զօրութեամբ գառ/նապէս տազնապեն զայն:

Արգ, գիտելով [զ] ձեր գովելի յօժարութիւն յարգիւնաւոր ողոր/մութիւնս, զորս ոչինչ խնայէք նուիրել, նորոգ նուիրակ կարգեալ առաքե/ցաւ առ կողմունսդ Ռումէլիոս շնորհապերճ Մարկոս վարդապետ սիրելի / եղբայրն մեր ըստ հոգւոյ, որ հանգերծեալ է գալ ի ձեր աստուածախնամ քաղաք, / որոյ վասն զայս գիր սիրոյ եւ յանձնարարական գրեցաք առ սիրելութիւն ձեր, որպէս զի / ըստ բարի սովորութեան ձերում մխիթարեսձիք զնա սիրով եւ պատուով, եւս / առաւել՝ առատ տրօք եւ ողորմութեամբ եւ կարեկից լինելով նեղութեանց սրբոյ Աթո/ռոյն ի սէր սրբոց Յակովբեանց:

Աւելի քան զայս մաղթեմք ի բարեգութ Տեառնէն, զի / յամենայն փորձանաց եւ ի ցաւոց ազատ պահելով տացէ ձեզ զառողջ կեանս / եւ ընդ հովանեաւ անեղական աջոյն իւրոյ պահպանեսցէ, եւ լինիլ ողջ / յանտրտում կեանս. ողջ լերո՛ւք:

|| Գերապատիւ իշխան աղայից տիրախնամ քաղաքիդ մերս հոգեւոր / որդւոց ընծայեմք ողջոյն բազմաւ օրհնութեամբ:

Պատրիարք Կոստանդնու[պոլսոյ]
Կարապետ արքեպիսկոպոս

1825 Յուլ. 20

Ի Պատրիարգարանս ամենայն հայոց
որ ի Պօլիս

ԵՐՈՒՍԱՂԷՄ

ՌՄՁԳ. ~ 1834

ՀԵՂԻՆԱԿ՝ Գաբրիէլ Նիկոմիդացի պատրիարք հայոց Երուսաղէմի (1818-1840): ՀԱՍՑԷԱՏԷՐ՝ Պոլսի Սամաթիա թաղի Ս. Գէորգ եկեղեցի: ՄԻՏՔ ԲԱՆԻ՝ ստացուած ութ հարիւր դուրուշ նուիրատուութեան առիթով՝ «Օրհնութեան Գանձանակի կոնգակ»:

ԹԵՐԹ՝ 1. Հգրուած՝ բ. երեսը: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 78x54,3:

ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասին (58,5x39,8): ԳԻՐ նոտրդիր (որոշ բառեր՝ բոլորդիր): ՏՈՂ՝ 64:

ՅԱՐԴԱՐԱՆՔ՝ վերը, դրադաշտի մասի կենտրոնում թռչնադիր «է», նրա տակ՝ կնքադրոշմը (տե՛ս). ձախ եզրից 9,2 սմ յետոյ, վերից վար՝ կարմիր եզրագծերով 0,8 սմ լայնքի դեղին եզրաշերտ, ապա՝ 1,7 սմ լայնքի ծաղկաշերտ, կրկին՝ 0,8 սմ լայնքի դեղին եզրաշերտ, դրադաշտը, որին յաջորդում է կրկին 0,8 սմ լայնքի վերջին դեղին եզրաշերտը՝ աջից թողնելով թղթի 1,2 սմ լայնք: Կոնդակի սկզբի 17 տողերից առաջ, 22x12 դաշտով նկար՝ ծաղկազարդ հարթակի վրայ կանգնած հրեշտակի ձեռքին Յովհաննէս Մկրտչի դուռիւր: Սկզբնատառեր եւ բառեր՝ կարմիր (այստեղ՝ նոտրով): Գոյներ՝ կարմիր, վարդագոյն, կանաչ, դեղին:

ԿՆՔԱԴՐՈՇՄ-ՆՇՈՒՄ՝ թերթի վերին եզրագծից 6,2 սմ ցած, կենտրոնում, եռաշրջանակ, 5,5 սմ տրամագծով կնիքի կարմիր դրոշմը, կենտրոնում Երոսաղէմի տաճարների հէնքի վրայ խաչածայր դրօշով Քրիստոս, միւս շրջանակի մէջ՝ զարդերով ընդմիջուող՝ ԺԲ. առաքեալք, արտաքին շրջանակի մէջ, կապերերով լի՝ «է. ԿՆԻՔՍ Ս[ՈՒՐԲ]Բ Ե[ՐՈՒՍԱՂ]ԷՄ[Ա] Յ ՅԱՐ[ՈՒ]Թ[ԵԱ]Ն Ք[ՐԻՍՏՈՍ]Ի ԵՒ Ս[Ր]Բ[Ո]ՅՆ ՅԱԿՈԲԱՅ ԱԹՈՌՈՅ Ա[ՄԵՆԱՅ]Ն Հ[Ա]Յ[Ո]Յ. ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՈՉ ՊԱՐՏՈՒՑ»:

ՎԻՃԱԿ՝ վնասուած. բոլոր եզրերը մաշուած, երեւի ծրարելու համար ժամանակին բազմապատիկ ծալուած, նոյն վիճակում խոնաւութիւն տեսած, դրադաշտի երկայնական առանցքի ուղղութեամբ 4 տեղ բնագիրը դժուարընթեռնելի դարձած, նրանից աջ երկու տեղ թուղթը ծակուած՝ թափուած:

ԲՆԱԳԻՐԸ

[Հասցէն՝ ք. երեսի վերին աջ անկիւնում, կոնդակի քնագրի գրից տարբեր նոտրով] Ի Սամաթեայ Կոստանդնուպօլսոյ Սուրբ Գէորգ եկեղեցւոյ / մաքրափայլ քահանայից, Աստուածասէր յարգելի ամիրայից եւ իշխանաց / եւ առ հասարակ օրհնեալ ժողովրդոց Սուրբ Երոսաղէմայ / գանձանակի օրհնութեան կոնդակն է: / Ի ձառն գանձապետ Ղազարոս Աղային հասցէ ձ[եռամբ] Սուրբ Երոսաղէմայ վէքիլ իմաստապետ Յովհաննէս վարդապետին:

Ո՞րք էն՝ փառաւորեալ Աստուածաշնորհ էն՝ մեծապայծառ, Հրաշալի էն / Հրաշափառ Քրիստոսակոյն Սրբոյն էն՝ մեծի Մայրափա[ղափէն] Երոսաղէմէ, / նախ ի Սուրբ Նազարէթէ, ուր Հրեշտակապետն Գաբրիէլ ա[ւետեաց սրբոյ] Կուսին / Մարիամու, որով յղացաւ զԲանն Աստուած, եւ ի Գերապատիւ Նոնդ[եան տեղ]ւոյն՝ ի / Սուրբ Եյրէն եւ ի Սուրբ Մարէն Քրիստոսի, եւ ի Սուրբ Յորդանանու՝ ի սուրբ Մկրտութենէ Քրիստոսի, եւ ի / Թաքորական լուսափայլ Պայծառակերպութեան սուրբ Լեռնէն Քրիստոսի, եւ ի Սարսափելի / Գողգոթայէ ի Սուրբ Խաչելութենէն Քրիստոսի, եւ յԱստուա-

ծաշօշափ Սուրբ Պատանատեղւոյն Քրիստոսի, / Եւ ի Շնորհապարզեւ յԱստուածրնկալ Կենատու Լմենասուրբ Գերեզմանէն Քրիստոսի, եւ ի Սուրբ / Չիթենեաց լեռնէն՝ ի Սուրբ Համբարձման յՈտնակոխ Սուրբ Տեղւոյն Քրիստոսի եւ յայլ ամենայն / Սքանչեւօք լցեալ բոլոր մարմնա-
ռիկ եւ փրկագործ Արքայնասուրբ Տնօրինական Տեղեաց / Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մարմնացելոյ Բանին Լստուծոյ, եւ ի Արօքագու-
մար Լմենօրհնեալ / Տիրամայր Սուրբ Լստուածածնի Գերեզմանէն, եւ ի Սուրբ Յակովբեանց երջանիկ եւ Արքայն / Ընաքելոցն Գերագահ եւ Լստուածագիր Սրբոյ եւ մեծի Եթովոյս ամենայն Հայոց, եւ ի Սոցին / Սպասաւոր ի Տէր Գաբրիէլ Երէմիայի Կոնստանտինոսի Պապական Սրբոյ Մայրաքաղա-
քիս / Երուսաղէմի, Յորոց ժամանեալ հասցէ Գիր Սիրոյ Օրհնութեան, Շնորհք եւ Եղօթք / Ընաքելական եւ Լստուածային անճառելի եւ բա-
մապատիկ Օրհնութիւնն եւ նախախնամական / Գթութիւնն եւ Առա-
տապարգեւ Ողորմութիւնն, եւ Շնորհք Սրբութեանց Տեղեացս ի վերայ յԱստուծոյ Օրհնեալ եւ Տիրահաստատ Կայսերապետ Մեծի Մայրաքա-
ղաքիդ Կոստանդնուպոլսոյ Սահմանայն / եւ ի միջի գորին կառուցեալ եւ հաս-
տատեալ Աստուածաշէն Սուրբ Գաբրիէլ Եկեղեցւոյդ եւ եկեղեցական Դէտ
եւ զլուխ կարգեալ / Հոգեւոր Հովուին ձերոյ եւ բարձր արժանապա-
տիւ եղբօր մերոյ Տեառն Սրբապետն Ընաքելական Երէմիայի Սրբապետն / Պապական, Պատուամեծար Աւագ Երիցու եւ հասարակ Մաքրափայլ
Քահանայից, Ուսումնասէր Սարկաւագաց, Քաղցրանուագ եւ / Շնոր-
հալի Գպրաց եւ այլ ամենայն ուխտի մանկանց սուրբ եկեղեցւոյ, Այլ եւ
ի վերայ համայն Աստուածասէր եւ գերապատիւ Ըմիրայից եւ / Սրբոյ
Եթովոյս հաւատարիմ Գանձապետ ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԻՆ եւ առ հասա-
րակ Քրիստոսասէր օրհնեալ ժողովրդականաց՝ / Արանց եւ կանանց, ծե-
րոց եւ տղայոց եւ ամենայն չափու հասակի ի Քրիստոս Աստուած հաւա-
տացելոց խնդութիւն, փայլեալ / միշտ ամենայն աստուածապաշտութեամբ
ըստ Հոգւոյ եւ ըստ մարմնոյ:

Շնորհք, սէր եւ երկնաւոր խաղաղութիւն Բարերարի եւ Մարգասի-
րին Աստուծոյ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ կենարարի եւ / առատա-
բաշխ Օրհնութիւն Սրբապետսուրբ Տեղեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի միշտ եւ հանապազ ի վերայ Հոգւոց եւ / մարմնոց ձերոց եղիցի
եւ զարգարեսցէ զձեզ ամենայն Աստուածահաճոյ Առաքինական բարե-
մա[ս]նութեամբ. ամէն:

Եւ ընդ աստուածապարգեւ Առատաշնորհ Ողջունիս եւ Օրհնութեանս
յիշեցուցանեմք յարգամեծար սիրելի Որդւոց մերոց / զգրոյն երանութիւն,
Զի որք զաղքատացն ըստ աշխարհի խորհեն եւ առ տնանկս օգնակա-
նութեամբ ի պէտս ողորմութեան յաճախեն / կարգայ նոցա Մարգարէն

զերանութիւն, Ապա ո՞րչափ մեծի երանութեան եւ անհամեմատ փառաց աստուածականաց արժանաւոր գտանիցին, / որք ի հոգեւորսն վազվազեն ձեռն տալ ոգորմութեամբ եւ նպաստաւոր լինիլ ի տուրս իւրեանց, եւ ո՞ր իցեն այս հոգեւորքն, ոչ այլ՝ / բայց եթէ եկեղեցիք Աստուծոյ եւ նոցին պաշտօնատարք: Այո, սիրելի՛ք, տաճարք Աստուծոյ անկարօտք են ըստ հոգեւորին, ըստ որում՝ / ինքեանք բաշխեն զշնորհս հոգեւորս, եւ զանսպառելիս մատակարարեն զերկնածիր պարգեւս հաւատացելոցս ի Տէր: / Բայց որովհետեւ արդէն իսկ զնմանութիւն երկնայնոյն յազթականին կրեն, եւ ի յերկրի են, ունին եւեթ կարօտութիւն ի մարմնաւոր / ծախսն, զի յգլխիսս երեւեցուցեն զիմանալին զանխափան զպայծառութիւնս՝ իբրեւ մատամբ եւ ձեռնբացի ցուցեալ զներքին զանճառ լուսափայլութիւնս, Ուստի ի թէութիւն մնան տրոց եւ ոգորմութեան մանկանցդ հարազատ ծնելոց, ըստ այսմ են եւ պաշտօնա/տարք նոցին, որպէս եւ Պօղոս վկայէր՝ «Ոչինչ ունիմք, եւ զամենայն ինչ ունիմք» (Բ. Կ. Թ. 9. 10), այսինքն՝ ունին զհոգեւորսն անթերի եւ անսպառ, / իսկ մարմնաւոր պիտոյից կարօտք մնային ոչ իբրեւ զկարօտս՝ բազձախնդիրք, այլ իբրեւ զկարեւորսն խնդրօղք, զոր եւ ի սուրբ Աւետարանին իմանամք զՏեառնէ մերմէ, որ ի լիութեանն ամենաբաւական էր եւ զարարածս բարձեալ ունէր ի հրամանս արարչութեանն, / այլ յրնչից կանանց բարեպաշտից պաշտիւր, որոց ապա զի՞նչ եւ ո՞րպիսի շնորհաց արժանաւորիլ, յայտնի է յամենակեցոյց / Յարութեանն իւրում, որ զլուսափայլ տեսութեան իւրոյ կանխեցոյց քան զառաքելոցն տեսութիւն, կանանցն դաստից այնոցիկ, / եւ արդարեւ արժանիք էին, զի որովհետեւ ոգորմածք ի հոգեւորս՝ գտին եւ զոգորմութիւն յաստուածտեսութեան անդ: Արդ, սիրելի՛ք / մեր ի Տէր, ըստ որում եւ դուք զհոգեւորացս փոյթ կալեալ ի պէտսն մարմնական կարօտութեան Սրբոյ Աթոռոյս եւ մեր՝ ոգորմած / տրովք ձերովք գանձանակաց օգնական հասանիք, զիտասջիք զի մեծի երանութեան եւ աստուածտեսութեան զձեզ պատրաստէք / արժանաւորիլ, քանզի յիրաւի առատապէս տրովք ձերովք Սուրբ Աթոռս եւ նորին սպասաւորք, որ օր ըստ օրէ ըստ հոգեւորին / գերապանծ չքեզանան եւ եկեղեցական յերգս ըստ հրեշտակացն ի յերկինս օրհնաբանութեամբ փայլին, եւ անձանձիր ազաչաւորք / են եւ մշտազերս ի մազթանս, նոցին շնորհք եւ ի կեանս եւ ի մահու հասցեն ձեզ օգնութիւն, եւ Տեարք Սուրբ Գահիս գերահռչակ / սիրելի առաքեալքն Քրիստոսի Սուրբ Յակոբեանք պահապան լիցին ձեզ եւ զգործս ձեռաց ձերոց յաջողեացեն, եւ բարեխօս լիցին / առ Տէր վասն փրկութեան ննջեցելոց ձերոց հոգւոց եւ կենդանեացդ, եւ վասն զի բարեգուլթ ոգորմածութիւն սրտից ձերոց ոչ միայն զմեզ, / այլ եւ զՍուրբ Առաքեալսն Քրիստոսի ուրախացուցին արդիւնք գանձանակի ոգորմութեան ձերում, որ էր ութր հարի[ւր] յիսուն զուռուշ / որ եկեալ

ժամանեաց ի Սուրբ Աթոռս, զորս շնորհեալ էիք լիալիր՝ ձեռամբ Սրբոյ Երուսաղէմայ վեքիլ շնորհափայլ Յ[ովհաննէ]ս վարդապետին, / Զոր եւ ընկալաք լիովին մեծագոյն իմն հաճութեամբ եւ մատուցաք ի սեղան Տեառն Աստուծոյ Ամենակալի իբրեւ զխուսնի ի հոտ անուշից Պատարագ / ընդունելի հաճոյ Աստուծոյ, զոր եւ ինքն Տէրն մեր Յիսուս Քրիստոս հաճեալ ընկալցի զնուէր ողորմութեան ձերոյ իբրեւ կամաւոր Պատարագս / Աբելի, Նոյի եւ Աբրահամու եւ այլ ամենայն հաճոյացեալ սրբոց իւրոց, եւ փոխարէնն հատուցէ ձեզ միոյն հազարապատիկ / եւ բիւրապատիկ զվարձս բարեաց, ցօղելով հանապազ ցօղն ողորմութեան ի վերայ հոգւոց եւ մարմնոց ձերոց, եւ մանաւանդ / ընդունելով զնուէրս ձեր՝ կատարեսցէ զամենայն հոգեւոր եւ մարմնաւոր խնդրուածս ձեր լցուցանելով ի բարին / նաեւ աստ՝ ի սրբազնասուրբ Տեղիսս Քրիստոսի՝ որքան շնորհաբաշխութիւնք, Սաղմոսերգութիւնք կատարին, Պաշտօնք եւ / Սուրբ անմահ պատարագք մատչին յայնց ամէնից ձեր համայն կենդանեաց եւ հաւասար ննջեցելոց / երանաւէտ տեսութեան եւ երկնից Արքայութեանն ընդ հաճոյացելոցն / Աստուծոյ արժանացուցէ բարերար եւ մարդասէրն Աստուած. ամէն:

Գրեցաւ Օրհնութեան Գանձանակի Կոնդակս ի Մայրաքաղաքս Սուրբ Երուսաղէմ, ընդ հովանեալ Սրբոց Յակովբեանց / Երջանիկ Առաքելոցն ի Հանրատենչ Գերագահ եւ Աստուածադիր Սուրբ Աթոռս ամենայն Հայոց, ի թիւ 1834, յԱպրիլ 22:

Ծնթ. բ. երեսին մատիտով արուած գումարում (թուերը՝ տակէտակ)
 $\ll 165 / 375 / 330 = 870 / 270 = 1140 \gg$:

13

ՆՈՐ ԶՈՒՂԱ

ՌՄՀԷ. ~ 1828

ՀԵՂԻՆԱԿ՝ Ամենափրկչի վանքի առաջնորդ Կարապետ արքեպիսկոպոս: ՀԱՍՅԷԱՏԷՐ՝ Պինանկ քաղաքի հայք: ՄԻՏՔ ԲԱՆԻ՝ նոր հոգեւոր հովիւ է նշանակուել Յովակիմ քհյ Աբրահամեան:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ բ. երեսը: ՆԻԻԹ՝ թուղթ. եւրոպական, լուսագծերով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 41,4x30,3: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն (26x22,8): ԳԻՐ՝ նոտրգիր: ՏՈՂ՝ 37:

ՅԱՐԴԱՐԱՆՔ՝ վերը գրադաշտի մասի կենտրոնում, երկճիւղ ուս կտցած աղաւնու պատկերով «է»: Նրա տակ առաջնորդարանի կնքադրոշմը՝ շրջանակուած դեղին եւ նարնջագոյն ճաճանչներով: Զախում, թերթի վերից վար, երկու կողմից զոյգ կարմրագծով շրջանակուած, 5,8 սմ լայնքի ծաղկազարդ շերտ, աջում միայն կարմիր երկգիծ եզրագիծ, առաջնորդարանի կնքադրոշմից աջ՝ մոխրագոյն հաւասարասրուն սե-

զանի նման մախրադոյն պատուանդան, վրան կապոյտ խարխիւով չորս սիւն, սրանց վրայ՝ եռագմբէթ եկեղեցի, չափսերն առանց պատուանդանի՝ 8,5x3,4 մմ: Զ ա ռ դ ա գ ի ը՝ «Յ՛Ի» համառօտագրուած սկզբնաբառը գեղեցիկ թռչնադիր: Կարմրով գրուած բառերն ու տառերն այստեղ նոտրգրով: Գ ո յ ն ե ը՝ կարմիր, վարդադոյն բալագոյն, կապոյտ, մուգ եւ բաց կանաչ, դեղին:

ԿՆՔԱԴՐՈՇՄ-ՆՇՈՒՄ՝ 1. Թերթի վերին եզրագծից 7 սմ ցած, կենտրոնում, ճաճանչազարդ եւ 6 մմ լայնքի շրջանակի մէջ, 37 մմ տրամագծով կնիքի դրոշմը, կենտրոնում գունդ բռնած Աստուած, նկարի ստորին մասում «1789», շուրջանակի, յաճախ կապգրերով, երբեմն իրար հիւսած՝ «է. ԿՆԻՔ Ս[ՈՒՐԲ]Բ ԱՄԵՆԱՅՓՐԿԶԻ 1238. ԶԻ ՍՕՎԱԻ ՕՐՀՆՈՒԹԻԻՆ ԿՈԶԻ»:

2. Զախ եզերազարդի ձուլած եւ շրջագծի մէջ, շուրջը դեղին ճաճանչներ, արտաքուստ ոճաւոր խաչաձեւ՝ կոր կամ սուր 16 անկիւնով, մէջը օձադլուխ դաւազան, որ կիսում է գրուածը՝ «Ք[ՐԻՍՏՈՍԻ] Ծ[ԱՌԱՅ] / ԿԱՐԱՊԵՏ / ԱՐՔԵՊ[ԻՍԿՈՊՈ]Ս / 1818»:

ՎԻՃԱԿ՝ լաւ. ծրարելու համար ժամանակին եղել է ութածալ, այժմ պահպանուում է երկծալ:

ԲՆԱԳԻՐԸ

ՅԻՍՈՒՍԻ Քրիստոսի Ժառանգ - Ուրբ Ամենափրկչի Հրաշալի Վանից Առաջնորդ Կարապետ Երէնդեհեան. / Յորմէ ժամանեալ հասցէ գողցոյն սիրոյ եւ օրհնութեան եւ նամակ պահպանութեան. / Շնորհք Առաքելական եւ Աստուածային բազմապատիկ օրհնութիւնն եւ նախախնամական / գթութիւնն եկեսցէ եւ հանգիցէ ի վերայ յԱստուծոյ օրհնեալ քաղաքիդ Պէնանգոր / բնակեալ Քրիստոնէից, Լուսաւորչակրօն Ազանց բոլորից, նախ սրբանուէր / եւ մեղսաքաւիչ Քահանայից, ուսումնասէր Սարկաւազաց, Գեղեցկանուադ Վարաց եւ ամենայն ուխտի մանկանց Եկեղեցւոյ, Այլ եւ պերճապատիւ եւ մեծարու Իշխանաց եւ Ազնիւ Ազայից, Գեր/յարգոյ եւ արժանապատիւ Գործակալաց, բարեզարդ եւ պատուելի Պարոնաց, բազմահմուտ եւ բարեջան / Երհեստաւորաց եւ օրհնեալ հասարակ Մարդկանց, նաեւ Դշխոհապատիւ եւ ազնուուհի Խաթու/ներաց, Աստուածասէր եւ ազօթարար Տանտիկնաց, եւ առ հասարակ Երանց եւ Վանանց, Ծերոց եւ Տղայոց, Ե/րիտասարդաց եւ Վուսից եւ ամենայն չափու հասակի, խնդալ ի Տէր յարաժամ բերկրանօք. ամէն:

Հնորհք Ամենազօրին Աստուծոյ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ իջցէ յերկնից եւ բնակեսցի ի ձեզ, ի տուէ / եւ ի գիշերի, ի նստիլ ի տան եւ ի դնալ ի ճանապարհ, ի ննջել եւ ի յառնել եւ յամենայն ժամու. ամէն: /

Այլ եւ օրհնեսցէ զձեզ Տէր Աստուած մեր եւ զարդարեսցէ հոգւով եւ մարմնով, տամբ եւ տեղեօք, որդւովք / եւ դասերօք, սիրելեօք եւ բարե-

կամօք, ընտանեօք եւ ազգականօք, դոյիւք եւ դոյականօք. ամէն:

Եւ արդ, շնորհազեղուն Աստուածային օրհնութեանս ծաներուք սիրելիքդ մեր, զի յետ գալստեան Հոգւոյն / Սրբոյ Սրբազան Առաքեալքն վիճակաւ ելին յաշխարհ ամենայն՝ քարոզել զԱւետարանն Քրիստոսի, եւ ուր ուրեք ինքեանք / ոչ բաւականային գնալ, առաքէին յաշակերտաց իւրեանց՝ վասն կառավարելոյ զհաւատացեալս Քրիստոսի, որ եւ / սոյն բարեկարգ սովորութիւն եկեալ ի մեզ հասեալ, որպէս եւ մեք կատարեմք ըստ մեր հոգեւոր պարտականութեանն, / առաքելով Քահանայս ի յօրհնեալ վիճակս մեր Սրբոյ Ամենափրկչի Աթոռոյս, եւ ի լրման թէմի Առաջի Քահանային, միւս այլ քահանայ առաքեմք ի տեղի նորին, եւ զառաջինն արձակեմք, Վասն որոյ եւ Արդ՝ որովհետեւ / զթէմ տեղւոյդ ձեր Քահանայ եւ մերս հոգեւոր սիրելի որդեակ տէր Մկրտիչ տէր Անդրէասին լրացեալ է, / յաղագս որոյ Ահա առաքեցաք առ յԱստուծոյ օրհնեալ բարեգարդ յատկացեալ սիրելիսդ մեր զմերս հոգեւոր / որդեակ խոհեմազարդ Տէր Յովակիմ Աբրահամեանն, հանդերձ օրհնութեան կոնդակաւս, որ Աստուծով ի գալ / եւ ի ժամանիւն առ տեղդ, մտցէ ի վիճակ տեղւոյդ, եւ յիշեալ տէր Մկրտիչն ելցէ ի վիճակէդ եւ ան/յապաղ վերադարձցի առ տեղս, եւ սիրով եւ մխիթարութեամբ ճանապարհորդեսջիք առ մեզ, իսկ վերոյ / յիշեալ նորանեկ Քահանայն ձեր՝ սիրելի Տէր Յովակիմն կացցէ եւ մնասցէ առ ձեզ, եւ վասն ձեր Քահանայա/գործութիւն արասցէ, եւ տուաք իւր թէմ եւ ժամանակ մնալոյ առ տեղդ չորս տարի, բաց ի երթեւեկութենէն, / եւ պատուիրեցաք իւրն, այսինքն՝ մերս սիրելի Յարգոյ Տէր Յովակիմին, զի ընդ ամենեսին ձեզ սիրով եւ խաղաղութեամբ լինիցի / եւ հետեւօղ իւր կարգին եւ կրօնին, արի եւ զգաստ լինելով, աղօթասէր եւ ժողովալ, միշտ ընթերցող աստուածային / Սուրբ գրոց, հեզ եւ խոնարհ եւ պարկեշտ, բարի օրինակ լինելով ամենեցուն, նաեւ պատուիրեմք ձեզ՝ օրհնեալ / սիրելեացդ մերոց, զի սիրով եւ յարգութեամբ ընկալջիք զձեր քահանայ Տէր Յովակիմն, եւ պատուեալ մեծարեսջիք եւ մխիթարեսջիք առատ արդեամբք եւ տրօք, եւ Աստուած զձեզ ամենեսին սիրով եւ խաղաղութեամբ պահեսցէ, եւ ի մտանել սրբոյ օրհնութեան կոնդակիս / ի քաղաքն ձեր բացձցի ի ձէնջ զցաւ, զցասում եւ զնեղութիւն, եւ տացի ձեզ կեանք եւ կենդանութիւն, ուրախութիւն եւ ցրն/ծովութիւն, եւ աստուածային շնորհօք լնանիցիք դուք՝ հանդերձ որդւովք եւ սիրելեօք. շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ. ամէն: /

Գրեցաւ ի վնսն Սրբոյ Հրաշալի Լուսնափրկչն՝ մերոյ, յամի Տեառն 1828. Եպրիլի 5ին, ի Նորս Զոհայ:

ՆՈՐ ԶՈՒՂԱ,

ՌՄՁԷ. - 1838

ՀԵՂԻՆԱԿ՝ Ամենափրկչի վանքի վերատեսուչ՝ Յաջորդ Յակոբոս ծ. վարդապետ, եւ կառավարիչ՝ Աստուածատուր վարդապետ: ՀԱՍՅԷԱՏԷՐ՝ Մադրասի հայք: ՄԻՏՔ ԲԱՆԻ՝ նոր հոգեւոր հովիւ է նշանակուել Յովա-կիմ քհյ Աբրահամեանը:

ԹԵՐԹ՝ 1. Հգրուած՝ բ. երեսը: ՆԻԻԹ՝ թուղթ. արեւելեան: ՄԵԾՈՒ-ԹԻԻՆ՝ 49,7x34,9: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն (30,5x23,2): ԳԻՐ՝ նոսրգիր: ՏՈՂ՝ 33 բուն մասը, ստորագրութիւնները՝ 4:

ՅԱՐԴԱՐԱՆՔ. վերը գրադաշտի մասի կենտրոնում, նռնենու երկ-ծիւղ ոստ կտցած աղաւնու պատկերով «է»: Նրա տակ առաջնորդարա-նի կնքադրոշմը՝ շրջանակուած ճաճանչներով: Զախից աջ. վերից վար 4 մմ լայնքով դեղին շրջանակաչերտ (երկու կողմում կարմիր նուրբ գծեր), ապա՝ 6,4 սմ շերտ, մէջը կարմիր, կապոյտ եւ դեղին եզրագծերով ձու-լա-շեղանկիւնաձեւ 8 բոլորակ (վերինը եւ վարինը կիսատ), սրանց մէջ եւ շուրջը տերեւա-ծաղկազարդեր, վերեւից 5րդ բոլորակի մէջ ստորագ-րողների կնքադրոշմները, առաջինից ելնում են արեւի ճառագայթներ, երկրորդից՝ երկարացողուն ծաղկակոկոններ: Սրանից աջ՝ 3, 8 եւ 3 մմ լայնքով, մոխրագոյն, նարնջագոյն եւ կրկին մոխրագոյն շրջանակաչե-րտեր, որոնց եզրագծերը՝ կարմիր կամ սեւ: Գրադաշտից աջ, վերից վար, կրկին կարմիր եզրագծերով եւ 3 մմ լայնքով դեղին շրջանակաչերտ, ապա 2 սմ լայնքով տերեւա-ծաղկազարդի շերտ, վերջում՝ 1,5 մմ լայն-քով նարնջագոյն եզրագիծ: Առաջին տողի վերին շրջանակագծի վրայ, կենտրոնը թերթի աջ եզրից 6,9 սմ ձախ՝ 95x41 մմ չափերով եկեղեցու գմբէթ-զանգակատուն, գմբէթի եւ 4 զանգերի վրայ խաչեր: Զ ա ղ ա գ ի ղ ՝ սկզբնազիր «ի»ն՝ հտեւի ոտքերին կանգնած առիւծ, վեր պարզած թաթերի մէջ ձուկ, երկար վզով դուլին աջ կորացրած. շարունակութիւ-նը առաջին երկաթագիր տողը վերից երկգիծ, տակից միագիծ կարմրով շրջանակուած: Խ ո ղ ա գ ի ղ եւ առանձին տառեր՝ կարմիր (այստեղ՝ նոսրով): Գ ո յ ն ր՝ կարմիր, կանաչ, բաց կապոյտ, նարնջագոյն, դե-ղին, մոխրագոյն:

ԿՆՔԱԴՐՈՇՄ-ՆՇՈՒՄ՝ 1. Թերթի վերին եզրագծից 7 սմ ցած, կենտ-րոնում, ճաճանչազարդ եւ 6 մմ լայնքի շրջանակի մէջ, 37 մմ տրամագ-ծով կնիքի դրոշմը, կենտրոնում գունդ բռնած Աստուած, նկարի ստորին մասում «1789», շուրջանակի, յաճախ կապգրերով, երբեմն իրար հիւսած՝ «է. ԿՆԻՔ Ս[ՈՒՐԲ]Բ ԱՄԵՆԱՅՓՐԿՁԻ 1238. ԶԻ ՍՕՎԱԻ ՕՐՀՆՈՒԹԻՆ ԿՈՉԻ»:

2. Զախ եեզազարդի մէջ, արտաքուստ ոճաւոր խաչաձեւ, կենտրո-

նում վերից վար վարդապետական դաւազան, «Ք[ՐԻՍՏՈՍԻ] Ծ[ԱՌԱՅ] / ՅԱԿՈԲՈՍ / ՎԱՐԴԱՊԵՏ / 1813»:

3. Նրանից ցած, կորացուած անկիւններով ուղղղանկիւն, կենտրոնում, վերից վար վարդապետական օձադլուխ դաւազան, անունը եւ կոչումը մէկական կապըրով՝ «Ք[ՐԻՍՏՈՍԻ] Ծ[ԱՌԱՅ] ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՎԱՐԴԱՊԵՏ. 1264»՝ վարդապետ դարձել եւ կնիքը պատրաստել է տուել 1815 թ.:

ՎԻՃԱԿ՝ լաւ. երեւի ծրարելու համար ժամանակին դարձուած 12ածալ, նոյն վիճակում խոնաւութիւն տեսած, թերթի կենտրոնում անկանոն եզրադժերով 11x5 սմ չափսի ձուածեւ մդացած բծեր. այժմ պահպանուած է քառածալ:

ԲՆԱԳԻՐԸ

Ի ԳԵՐԸՀՐԸՇ ՍՐԲՈՅ ԵՒ ՄԵԾԻ ԸՄԵՆԸՓՐԿՉԻ ՎԸՆԵՅ ԸՌԸՔԻ/լական լուսապայծառ եւ դեղեցկաշէն Հոյակապ բարձրաբերձ Սուրբ Եկեղեցւոյս վերա/տեսուչ՝ Յաջորդ Յակոբոս Ժ. վարդապետ, եւ կառավարիչ՝ Աստուածատուր վարդապետ, / Յորոց սիրով Սուրբ Հոգւոյն եւ Աստուածային բազմապատիկ օրհնութեամբ մատուա/ցի Ողջոյն Քրիստոսական լուսաւորչադաւան Պատուելի Հայկազեանցդ, որք / կայք բնակեալ յԱստուածախնամ մայրաքաղաքդ Մադրաս. Հաւատարիմ Սրբանուէր / Քահանայիցդ, Յորհապատիւ եւ բազմերախտ Գործակալաց, Մեծարու եւ շնորհապերձ / Իշխանաց, Յորհաշխատ եւ հարազատ Կառավարչաց, Հանճարեղ եւ արդարավաստակ Վաճա/ռականաց, Հայրենասէր եւ ազգասէր առ հասարակ Հայկազնէիցդ, բարեպաշտուհի Տիկնացդ, մեծաց եւ փոքունց, Արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց խնդալ ի Տէր:

Հնորհք, Սէր, ողորմութիւն, խաղաղութիւն եւ քաղցրականարկութիւն Ամենասուրբ Երրորդ/դութեան, հանդերձ սքանչելահրաշ Զօրութեամբ կենաց Փայտին Քրիստոսի, եւ Արիւնաներկ Տա/տասկի չարչարանաց Սրբոյ Հօրն մեր Գրիգորի Լուսաւորչին եւ շնորհաբաշխ Եջոյ Սրբ/բազան առաքելոյն Թադէդոսի, եւ արդարոյն Յովսեփայ նախարարին, եւ համայն / Աստուածաբնակ Արքութեանցն՝ որք կան աստ ի մայրենի ծոց ահեղահրաշ Սրբոյ Աթոռոյս Եմենա/փրկչի, առատացեալ բազմացի ի վերայ ձեր ամենեցուն, եւ փայլեալ պէսպէս բարութեամբք զձեզ / զարդարեսցէ ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ եւ Աստուածային շնորհօք լցուսցէ. ամէն:

Եւ զկնի սուրբ ողջունի եւ օրհնութեանս Աստուածայնոյ, յայտ առնեմք Պատուելի բարեպաշտութեան / ձերում, զի ի բնէ անտի լուսահողի նախնեացն մերոց լեալ է սովորութիւն, որ ի լրանալն ժամանակի վիճակաւոր / քահանայի ուրուք եղելոց, աստէն հարկ է պատրաստել զայլ ոմն, եւ առաքել ի տեղի նորին, եւ զա/ռաջինն արձակել, վասն որոյ կարդեալ այսու օրհնութեան կոնդակաւս մերով, վիճակաւոր քահանայ

ձեզ՝ զհամես/տաբարոյ եւ հեզահոգի Աբրահամեան Տէր Յովակիմ արժանապատիւ քահանայն, առաքեցաք զալ եւ / հովուել զձեզ Աստուածային պատուիրանաւ, զոր պարտիք եւ Դուք ամենեքեան ընկալնուլ ի սէր մեր, իբրեւ ըզ/ծառայ Քրիստոսի՝ յարգութեան պատուով եւ զսէր ցուցանելով սրտադիւր, եւ մխիթարեալ պահպանեսցիք մնալ առ / ձեզ հինգ ամ ժամանակաւ, իսկ ի ժամանիւ սորին առ տեղդ, Յարգոյ Տէր Ատեփաննոս Տէր Յարութիւննեանն / ելեալ վերադարձցի առ մեզ (զի ժամանակն լրացեալ է) եւ սոյն նորակէ Քահանայ Տէր Յովակիմն կացցէ եւ մնասցէ առ ձեզ: / Եւ պաքէն եւ մեք միաբան ուխտիւք աղօթաւ առնեմք վասն ձեր՝ ի մէջ ահեղահրաշ Սրբոյ Աթոռոյս / Եւ մենափրկչի, որպէս զի բարձրագոյն Աստուած օրհնեսցէ զձեզ եւ զորդիս ձեր, զազգս եւ զընտանիս / ձեր, զտունս եւ զբնակութիւնս ձեր, եւ զամենայն զբանս եւ զգործս ձեր արդիւնաւորս արասցէ, / եւ պահպանեալ պահեսցէ ընդ հովանեաւ ամենագոր նշանի իւրոյ, փրկեսցէ եւ ազատեսցէ / յերեւելի եւ յաներեւոյթ թշնամեաց եւ յամենայն փորձանաց, նաեւ՝ զհոգիս համայն հին եւ նոր ննջեցե/լոցն ձերոց լուսաւորեալ պայծառացուցէ եւ հանգուցէ յարքայութեան իւրում, ընդ յա/ջակողմեանսն դասելով եւ արժանացուցէ իւր քաղցր տեսութեան եւ երանաւէտ ձայնին. ամէն:

Գրեցաւ ի գերահռչակ Վահագն Սրբոյ
Եւսեպիոս, որ ի Նորս Զուղայ, յամի
Տեառն 1838, Մարտի 10ին

Որք կամք եւ մնամք վասն ձեր բարեացակամ աղօթարարք.

Սրբոյ Ամենափրկչի Աթոռոյս հոգաբարձու

Յաջորդ Յակոբոս վարդապետ:

Սրբոյ Աթոռոյս կառավարիչ
Աստուածատուր վարդապետ:

Ծնթ. Միայն ստորագրութիւնները՝ աջակողմեան ստորին 3 տողը՝ հեղինակների ձեռքով, մնացեալը՝ քարտուղարի:

15

ՔԻՇՆԻ

ՌՄՂԳ. - 1844

ՀԵՂԻՆԱԿ եւ՝ ԳՐԻԶ՝ ՆԵՐԱԷՍ Ե. Աշտարակեցի կաթողիկոս ամենայն հայոց (1843-1857): ՀԱՍՑԷԱՏԷՐ՝ Սուրբիաս Սոմալեան աբահար Մխիթարեանց: ՄԻՏՔ ԲԱՆԻ՝ Գաբրիէլ Այվազեանի այցելութեան մասին, նաեւ՝ խնդրում է Միքայէլ վ. Չամչեանի՝ հեղինակային «զհարազատ օրինակն ՎԱՀԱՆ անուանեալ գրքոյ»:

ԹԵՐԹ՝ 1. ՀԳՐՈՒԱԾ՝ բ. երեսը. ժամանակակից լուսանկար-պատճէն (չոր): ՆԻԻԹ՝ Թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 29,7x21: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն (18x16,2): ԳԻՐ՝ շղագիր: ՏՈՂ՝ 25:

ՅԱՐԴԱՐԱՆՔ՝ չունի:

ԿՆՔԱԴՐՈՇՄ-ՆՇՈՒՄ՝ վերը, գրադաշտի կենտրոնում, քառանկիւնի անկիւնները շեղակի հատած եւ ութանկիւն դարձուած դռմը՝ «Է. / ՆԵՐՍԷՍ / ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ / ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ Ա՛Մ ՀԱՅՈՑ / ՌՄՂԲ. 1843»:

ՎԻՃԱԿ՝ բաւարար (ըստ ամենայնի՝ նաեւ բնագիր օրինակը):

ԲՆԱԳԻՐԸ

Սերբէն ծառայ Ռերիպոսի եւ անհասանելի կամօքն Ասոր-ժոյ եղբայրասպետ եւ կաթողիկոս ամենայն Հայոց ծայրա/գոյն պարրիարգ Համապատկան նախաձեռնար անուոյ Արաբաբան մայր եկեղեցւոյ սրբոյ ԿԱԹՈՒՂԻԿԵ / ԷՋՄԻՍՏՆԻ Շնորհափայլ արհիեպիսկոպոսի եւ ընդհանրական Աբբայի Տեառն Սուքիասայ զողջոյն փրկչական / նուիրեմ ամենահարազատ անխարդախ ճշմարիտ սիրով: Գիր ձեր առ մեզ յամի 1841, ի Սեպտեմբերի 16. / լցեալ սիրով ընկալեալ ի ձեռն հարազատի ձեր եւ ոչ անհարազատի մեր Գաբրիէլ վարդապետի Գէորգեան Այվա/զեանց՝ այն անվայելչական ոչ միայն մերում միազգական եւ քրիստոնէական սեպուհ պարտաւորութեանց, այլեւ / համաշխարհական ազնուական կենցաղակցութեանց գտանիմ ցարդ անպատասխան:

Ծերունի ժամանակին վաղափորձ են ներգործութիւնք՝ թէ է ժամանակ լռելոյ եւ ժամանակ խօսելոյ, զորոյ եւ մեք անձամբ անձին առեալ զփորձ, զամս 16 համօրէն լռութեամբ դադարեցուցաք եւ զգրիչ առ ամենայն հեռաւորս / եւ մերձաւորս: Այլ զի հզօր իշխանն ժամանակաց, որ սովոր է մեռուցանել եւ կեցուցանել՝ զմեզ եւս մեռուցեալ եւ կեցուցեալ յամին անցելոյ ի Ս. Պ. Բուրգ, հուսկ ապա պարտաւորեաց տալ վաղձան լռութեանց, եւ զքանքար ի նորոյ մեզ պագեւեալ / կենաց յարգել ըստ կարողութեանց ի մեծութեան փառաց իւրումն ամենաբանական տեսչութեանց, եւ ի շինութիւն երկանց երկնավ/// մայրութեանց սրբոյ առաքելական եկեղեցւոյ եւ ամենաբարեպաշտ հօտի լուսաւորչացն Հայաստան ազգի աստուածազգեաց առաքել/ւոցն Թադդէոսի եւ Բարդուղիմէոսի եւ առաքելասարաս նոցուն յաջորդի Գրիգորի մեծի Պարթեւի, ահաւասիկ / զառաջինն այժմ յայտնեմ ձեզ զիսկապէս շնորհակալութիւն մեր յաղագս ձեր առ մեզ այնօրինակ բարեգրութեանց:

Սիրելի Այվազեանն այնպէս վազելով էանց առ մեօք, մինչեւ ոչ գիտել անգամ թէ ուստի դայ կամ յո երթայ: / Մատեանքն երկոքին վաստակք ձերում տպարանի տակաւին ի ճանապարհի գտանին, այլ քան զայնս սիրական մեզ՝ / եթէ չհամարեսցի յանհնարիցն ի կարգի՝ շնորհ գերագոյն համարիմ նուիրել մեզ մի՝ յաւէրժական յիշատակաց աշխա/տողին զհարազատ օրինակն ՎԱՀԱՆ անուանեալ գրքոյ հայր Միքայէլ վարդապետի Չամչեան, որոյ համառօտեալն / ի նորոյն հակառակորդաց օրինակ մի աղճատ՝ նոր այժմ տեսե[ա]լ աստանօր՝ ի Կիչնեւ, ցանկալի է մեզ ընթեռնուլ / զմաքուր օրինակն հեղինակին ամբողջ:

Ողջունելով զուխտ ձեր համօրէն մաղթեմ ձեզ եւ ամենեցուն զբարեգթութիւն Տեառն Աստուծոյ՝

Եպիսկոպոսապետ, պատրիարք եւ կաթողիկոս ամենայն հայոց Ներսէս:

1844 եւ ազգական մեր 1293

Դեկտեմբերի 21, ի Կիշինեւ

Ծնթ. Նոտրդրով մասը տպագիր է: Ենթադրելի է, որ պատճէնիս բնագիրը պահպանուում է Մխիթարեանց Վենետիկի դիւանում:

16

ՎԱՅՐ

ՌՅ. - 1851

ՀԵՂԻՆԱԿ՝ Արմաշի Զարխափան վանքի առաջնորդ Ստեփաննոս արքեպիսկոպոս: ՀԱՍՅԷԱՏԷՐ՝ Յակոբ արքեպիսկոպոս: ՄԻՏՔ ԲԱՆԻ՝ շնորհակալութիւն վասն նուիրեալ 50 ղուրուշ տարեկան լուսագինի:

ԹԵՐԹ՝ 1. չգրուած՝ բ. երեսը: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 45,5x32: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն (26x24): ԳԻՐ՝ նոտրգիր: ՏՈՂ՝ 21:

ՅԱՐԴԱՐԱՆՔ՝ կնքադրոշմի շուրջը կարմիր, կապոյտ եւ դեղին ճաճանչներ, «Պտրրգ» եւ «Մ՛Բ ԱԾԱԾՆԻ» բառերից վեր պսակներ, ճաճանչներ եւ թագեր, «Շ» գլխատառը գունաւորած կապոյտով եւ դեղինով (գոյներ՝ կարմիր, կանաչ, կապոյտ, դեղին):

ԿՆՔԱԴԱՐՈՇՄ-ՆՇՈՒՄ՝ վերին եզրից 3 սմ ցած, գրադաշտի կենտրոնի ուղղութեամբ, 4 սմ տրամագծով, սեւով, շուրջանակի՝ «ԿՆԻՔ ԶԱՐԽԱՓԱՆ ՍՈՒՐԲ Ա՛ՐԱԾՆԻ ՎԱՆԻՅ ՅԱՐՄԱՇ. 1820», կենտրոնի բոլորակի մէջ Աստուածածին՝ մանուկ Յիսուսի:

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԲՆԱԳԻՐԸ

ՊՏՐՐԳ Մ՛Բ ԱԾԱԾՆԻ

Հնորէն-սորէն Հոգոյն Զառարեան Աստուծոյ ծառայ նուաստ Ստեփաննոս արքեպիսկոպոս Զարխափան վանաց . . . եւ վիճակաց նորին գրկախառն / սիրալրական համբուրիւ ողջունեմ զաստուածարեալ եղբայրդ ըստ Հոգւոյ Տ. Տ. Յակոբ սրբազան . . . թագաւոր/եալ մայրաքաղաքիդ զառաքելապատիւ արքեպիսկոպոս:

Ըստ բարեսէր հաճութեան կամաց վեհիդ, ի հաւաստի նշան սրտեւանդն սիրոյդ առ մեծարեալն Աստուծոյ ամենասուրբ եզական / կոյսն Մարիամ, նուիրեալն ի ձէնջ յիսուն ղուրուշ տարեկան լուսագին ի տաճար տիրամօրն լուսոյ, ընդ ձեռն հաւատարիմ գան/ձապետի սրբոյ ուխտին մահտեսի Նիկողայոս աղայի Տէր-Գրիգորեան եհաս առ մեզ: Եւ քանզի այս ընծայատրութիւն Զերդ / ջերմեռանդութեան յօրինակ եւ յոր-

դոր բարեպաշտ ժողովրդոց՝ յաւելլու հաւատս, յաճախէ զսէր ամենեցուն, անեցու/ցանէ զպտուղս բեղմնաւորս եւ արդիւնս շահեկանս: Յաղադս որոյ եւ ի մէնջ նուաստից յանպիտան ծառայից միաբա/նից լիաբերան շնորհակալութեան ի ճահ դատեցաւ: Ուստի պարտապանս զմեզ իրաւապէս համարեալ, յանդիման սրբութեան / սեղանոյ տիրաբնակ եկեղեցւոյ, աղերս աղօթից եւ մաղթանս սրտառուչս վեր առաքեցաք առ Քրիստոս Աստուած, զի ընկալցի զնուէր / ողորմութեան ձերոյ իբրեւ զիւղ անուշահոտ հեղեալ ի դիւխն տիրական: Եւ արժանահայց բարեխօսութեամբ իսկուհւոյ մօրն եւ կու/սի ի հանդէս հողեւորականդ տեսչութեանդ փառաւոր արասցէ դովելի դործովք: Որպէս զի ի հաճոյս բարերար կամաց / իւրոց եղիցին եւ յօդուտ հաւատացելոց ջանք ձեր եւ վաստակ: Զի բոստ մեծութեան անուանդ եւ պաշտօնիդ՝ առնելով եւ / ուսուցանելով, մեծ կոչեալիք յարքայութեան երկնից: Եւ ի կրկին եկեղեցիս՝ ի զինուորեալն եւ ի յաղթականն, որպէս լոյս ան/աղօտ եւ անշէջ պայծառասլիք լուսաւոր առաքինութեամբ, ի փառս եւ ի պատիւ եռալուսեան տէրութեան միասնական / սուրբ Երրորդութեան յաւիտեանս. ամէն:

Գրեցաւ յամի Տեառն 1851, Օդոստոսի 24 / ի վանս Սուրբ Կուսին յԱրմաշ:

17

[ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ]

ՌՅԵ. - 1856

ՀԵՂԻՆԱԿ՝ Յակոբոս Գ. Սերոբեան պատրիարք հայոց Պոլսոյ (1839-1840, 1848-1858): ՀԱՍՅԷԱՏԷՐ՝ «եկեղեցւոյդ համօրէն լրութեան հողեւորականք եւ աշխարհականք»: ՄԻՏՔ ԲԱՆԻ՝ յայտնում է, որ ապօրինի պսակադրութեան համար Յովսէփ քահանան կարդալոյժ է արուած:

ԹԵՐԹ՝ 2. չդրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ թուղթ՝ ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 38x24,1: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (34x21): ԳԻՐ՝ չղաղիր. խոշոր: ՏՈՂ՝ 30:

ՅԱՐԴԱՐԱՆՔ՝ չունի:

ԿՆՔԱԴՐՈՇՄ-ՆՇՈՒՄ՝ վերին եզրից 1,6 սմ ցած ձուածեւ, մանուշակադոյնով, դրոշմուածքը թոյլ, վերին եզրով՝ «Յակոբ», տակը խաչածեւ դրուած զոյդ դաւազան եւ անզանազանելի ինչ: Վերի աջ անկիւնում, տարբեր ձեւքով «Պարիրք», նոյն ձեւքով է ստորին երու տողը՝ «Ողջ լեւրութք... հայոց»:

ՎԻՃԱԿ՝ ծալուածքները եւ եզրերը մաշուած, ծալծլուած:

ԲՆԱԳԻՐԸ

Ի Տէր Յակոբ արքեպիսկոպոսէ եւ . . . է մեծի / Պոլսոյ քրիստոսականս սուրբ ողջունիւ եւ օրհնութեամբ ծա/նուցումն լիցի սրբոյ եկեղեցւոյդ համօրէն լրութեան հողեւորա/կանաց եւ աշխարհականաց, մեծաց եւ փոքունց առ հասարակ:

Խարբերթցի Տէր Յովսէփ քահանայն ամիսէն աւելի / առաջ Էտիրնէցի սարրաֆ մահտեսի Կարապետ անուն հայաղգի / անձը, որ իւր օրինաւոր պսակեալ կնոջմէն զատուեր էր, առանց համանի / պատրիարքարանիս գաղտնի պսակեր է ի Պէշիկթաշ կոյս աղջկան / մը հետ՝ երկու հազար ղուրուշ առնելով, ինչպէս որ կնքունակ դր/րով իւրով հաստատեաց:

Արդ, Աղգային եկեղեցական ժողովը սուրբ Ներ/սէս Շնորհալի հայրապետի առ դասս քահանայից գրած խրատուց / խօսքէն առնելով՝ վճռեց, որ նոյն Խարբերթցի Տէր Յով/սէփ քահանայն այսուհետեւ լուծեալ է քահանայական կարգէն, / ուստի եւ աշխարհականութեան անուամբը պիտի կոչվի, մարմնաւոր / արհեստին հետեւելով իր պիտոյքը հոգայ, եւ մինչեւ ցմահ / պիտի աշխատէ իր հոգւոյն փրկութիւնը գտնելու համար / Աստուծոյ շնորհիւր: Ապաքէն անցմամբ ժամանակաց չըլլայ որ բարե/պաշտ մէկը ներողութիւն մտածելով վերստին անոր քահանայութեան / հրաման խնդրէ եւ ընդ նդովիւք հայրապետաց մնայ:

Ահա այսու օրհնութեան գրովս կծանուցանեմ ձեզ բա/րեպաշտիցդ, որ այսուհետեւ նոյն Խարբերթցի Տէր / Յովսէփը քահանայ չճանչնաք, այլ լոկ աշխարհական անձ մի է: / Այս մտօք ծանուցուեցաւ նաեւ Խարբերթի ա/ռաջնորդաց, որպէս զի իրենց բոլոր վիճակաց եւ դիւղ/րէիցը մէջ հրատարակեն քահանայութենէ լուծվիլը եւ աշ/խարհական ըլլալը լոկ Յովսէփ անուն, որն որ այժմ / եասախճիով աքսոր պիտի երթայ երկիրը Խարբերթ:

Ողջ լեւուք դօրացեալք ի խնամսն Աստուծոյ:

1856, Մարտ 10, ի պատրիարքարանի հայոց:

ԵՐՈՒՍԱՂԷՄ

ՌՅԿԸ. ~ 1869

ՀԵՂԻՆԱԿ՝ Եսայի Թալասցի պատրիարք հայոց երուսաղէմի (1864-1885): ՀԱՍՑԷԱՏԷՐ՝ Գրիգոր Օտեան: ՄԻՏՔ ԲԱՆԻ՝ ցաւակցութիւն Օտեանի մօր մահուան առիթով:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 1բ-2բ: ՆԻԻԹ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 33,5x23: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն (26x18,8). ձախից երկու, աջից մի սեւով սահմանադրուած: ԳԻՐ՝ չղղիւր: ՏՈՂ՝ 33:

ՅԱՐԴԱՐԱՆՔ՝ կնիքից աջ դեղինի եւ ոսկեգոյնի երանգներով եւ ոճաւոր զարդագիծ է, պատիւի նշանով՝ «ՊՏՐՐԳ», սկսուածքի առաջին 5 տողը նոյնպէս ոսկու եւ դեղինի երանգներով, պատրիարքի անունից բացի մնացեալը տպագիր, առաջին՝ «Յ՛Ի» համառօտման գրերը բուսական, հանգուցային եւ կենդանական զարդերով համեմուած, վրայի պատիւի նշանը ճաճանչներով շրջապատուած աղանակերպ սուրբ Հոգի,

«Յ» գրի բոլորակները մէջ կրկին ճաճանչներով շրջապատուած խաչ եւ Յիսուսի դիմանկարը, որ կայ նաեւ «Ի» գրի երկու ստեղծների միջեւ:

ԿՆՔԱԴՐՈՇՄ-ՆՇՈՒՄ՝ թղթի վերին եզրից 1 սմ ցած, գրադաշտի կենտրոնում, 4 սմ տրամագծով կլոր, կարմրով, շուրջանակի՝ «ԿՆԻՔՍ ՍԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՈՉ ՊԱՐՏՈՒՑ ԱՅԼ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ», մէջի շրջանակում Քրիստոսի յարութեան պատկերը: 2բ՝ «Ժամանեալ ի Կ. Պօլիս 5 Օգոստոս 1869, պատասխանեալ 7 [Օգոստոս 1869]»:

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԲՆԱԳԻՐԸ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏԵՐ / ԵՍԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ՇՆՈՐՀԻԻ / ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՅՆ . . . ԱՌԱՔԵ/ԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅՍ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ / ՎԵՐԱՏԵՍՈՒՉ, ՍՈՒՐԲ ԵՒ ՏՆՕՐԻՆԱԿԱՆ / ՏԵՂԵԱՅՆ ՔՐԻՍՏՈՍԻ, ՅՈՐՄԷ ՀԱՍՅԷ ՇՆՈՐՀՔ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐԱՅ / քրիստոսազօր եւ վսեմաշուք Գրիգոր էֆէնտիի Օտեան եւ պերճափայլ ազնիւ ընտանեացն.

Աստուածասէր սիրելի՛

Որ էնն Բանն մարդացեալ սակս աստու/ածացուցանելոյ մարդկայինս տկար, մահացու բնութիւն՝ ի փրկաւէտ եւ յերջանկառիթ պատգամ/սրն իւր այս յուսալիր պատգամ եւս որոտայ յասելն. «Եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր / մեռանիցի, ինքն միայն կայ, ապա թէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ» (Յ*Վ. ԺԲ. 24-25):

Ո՛հ աստուածայինն մարդասէր զթուլթեան, որ միով եւեթ արարչական բանիւն որպէս ըզ/տիեզերս յոչէից ի գոյ ած, սոյնպէ՛ս, սոյնպէս եւ զմահուն իրական հարուած սոսկալի ի չիք դար/ձուցանէ, մարդ անկեալ յերկիր իբրեւ զհատն ցորենոյ տայ ի գարնան զբազմութիւնս արդեանց / ասեմ յերկրորդ կեանսն, զի մահն ոչ այլ ինչ է, եթէ ոչ սկիզբն երկրորդ ծննդեան եւ կենաց, / եւս եւ այլ շատ խօսեցուք, զի Ձերդ աստուածասիրութիւն գիտէ քաջ անձամբ գանձն / մխիթարել, մանաւանդ թէ, զի մայր Ձեր բարեպաշտուհի զամենայն աւուրս կենաց իւրոց ըստ / քրիստոսաւանդ պատուիրանացն վարեցաւ, պարտ եւ արժան է ընդ հրեշտակացն դասուն / ոչ երբէք տրտմիլ, այլ ուրախ լինիլ, զի ի վաստակոցն՝ որ յայս կենցաղ ապականութեան վաստակեցաւ, կայ մնայ նմա հանդիստ, եւ փոխանակ առաքինական դործոցն ունի փառօք եւ պատուով / ներկայանալ յաթոռ ամենակալին եւ ընդ իմաստուն կուսանսն դասակից լեալ, յարազուարճ / անպատում բերկրանօք հրճուիլ եւ բարեխօս իսկ վասն Ձեր քրիստոսասիրութեան լինել, / ուստի կրկնակի արժան է Ձեզ ուրախ լինել ի յայտնութիւն անչափ սիրոյն որ առ Աստուածն եւ մայր / Ձեր երջանիկ, ուրախանայ արարիչն ընդ գրկախառնիլ իւր պարանոցաւ հարազատ աղախ/նւոյն իւրոյ, իսկ մայր Ձեր յիշատակաց արժանի խնդայ եւ

ղուարճացեալ ցնծայ ընդ փառսն, ընդ / լուսեղէն հանդերձսն, որ յերկնաւոր թագաւորին շնորհեալ, որում եւ ղձեղ արժանիս արասցէ / Տէր յետ խորին ծերութեան, կեանս երկարս, խաղաղականս պարգեւելով Ձեր պայծառափայլ մեծութեան, պսակս անթառամս հիւսեսցէ աղօթուտ գործոց Ձերոց, զորս գործէք եւ ունիք իսկ մինչ / ցկէտ վախճանի Ձերոյ գործել:

Սրբոյ առաքելական աթոռոյն / Երուսաղէմի պատրիարք Եսայի արքեպիսկոպոս

19

Երկու օրինակ՝ 19Ա, եւ 19Բ

Կ. ՊՈԼԻՍ

ՌՅԻԶ. - 1877

ՀԵՂԻՆԱԿ՝ Ներսէս Բ. Վարժապետեան պատրիարք հայոց Պոլսոյ (1874-1884): ՀԱՍՑԷԱՏԷՐ՝ պոլսահայութիւն: ՄԻՏՔ ԲԱՆԻ՝ դրամ հանգանակելու կոչ՝ Պալատի թաղի հանգուցեալ բնակիչ բրուտ Թադէոսի հիւանդ կնոջը եւ հինգ չափահաս աղջիկներին պարտքից աղատելու եւ իրենց բնակարանից չվտարուելու համար:

ԹԵՐԹ՝ 2. ՀԳՐՈՒԱԾ՝ 1բ. երեսը: ՆԻԻԹ՝ Թուղթ. լուսագծերով եւ լուսադրոշմով: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 34,3x21,3: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն (26x17,6): ԳԻՐ՝ չղագիր: ՏՈՂ՝ 34:

ՅԱՐԴԱՐԱՆՔ՝ չունի:

ԿՆՔԱԴՐՈՇՄ-ՆՇՈՒՄ՝ Թղթի վերին եղրից 1,5 սմ ցած, գրադաշտի կենտրոնում, 3,2 սմ կլոր, սեւով դրոշմ, շուրջանակի՝ «ՔՍԻ. ԾՌՅ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍ. ՊԱՏՐԻԱՐՔ. Կ. ՊՈԼՍՈՅ. 1874»: Թղթի վերին ձախ անկիւնում տպուած. «ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ / Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ. ԹԻԼ 234»: Նոյն մասում, Թղթի աջ եղրին, ձեռքով. «ՊՏՐՐՔ»:

ՎԻՃԱԿ՝ բաւարար. երկրորդ օրինակը ընդլայնակի պատռուած, երկու կէս եղած:

ԲՆԱԳԻՐԸ

Յիսուսի Քրիստոսի ծառայ Ներսէս արքեպիսկոպոս եւ շնոհիւն / Աստուծոյ . . . հայոց Կ. Պոլսոյ, ողջունիւ հայրական սիրոյ յայտ / առնեմ առ ամենայն ողորմած աղօթյինս, թէ Պալատու թաղին / բնակիչներէն հանգուցեալ բրուտ Թադէոսի հիւանդ լծակիցը / եւ հինգ չափահաս աղջկունք իրենց նախորդ լաւագոյն վիճակէն դառն եւ անտանելի թշուառութեան մէջ ինկած՝ եւ օրական / պարէնի կարօտ ըլլալէ դատ, իրենց աղքատիկ խրճիթը 7 հաղար / ղուրուշի պարտուց փոխարէն գրաւի առնուած, եւ նոյն պարտքը ան/վճար մնալուն առթիւ, այսօր ըստ կանոնի էֆգաֆին վճռուած / է՝ իրենց բնակարանէն մերժուիլ եւ թափառական մնալ փող/ոցներու եւ աւերակներու մէջ:

Յիշեալ ողորմելի ընտանիքն այս վերջին տաղնապին / վրայ եւ ոչ մէկէ մը օգնութիւն եւ յոյս չունենալով՝ վկայութեամբ պատուարժան թաղ. խորհրդոյն Պալատու գիմեցին ի Պատրիարքարան՝ Ազգին օգնութիւնը հայցել, եւ ըստ այնմ պատշաճ դատեցաւ / դատ. խորհուրդն յատուկ շրջաբերականաւ մը նպատ / հանգանակել ի թեթեւութիւն պարտուց սոյն խղճալի ընտանեաց / եւ ի յաջողութիւն գործոյս, ներկայ շրջաբերականս յանձ/նուեցաւ Արժ. Տէր Յովհաննէս քահանայի Շահպաղեան, / որով մեր սիրելի եւ ողորմած ազգայնոց կամաւոր նուիրաց շր/նորհներն ընդունի ի մխիթարութիւն տառապեալ աղջկանց, / որոց պարտքը հատուցվի, եւ իրենց աղքատիկ խրճիթէն գուրս չձգվին:

Ուստի կխնդրեմք մեր բարեսէր ազգայիններէն, որ / ի դալ Արժ. քահանայիս կարեկցաբար մէկ մէկ կամաւոր նուէր շր/նորհել բարեհաճիք՝ ի թիկանց թղթոյս նշանակելով իւրաքանչ/իւրոց նուիրաց բաժինը եւ ստորագրութիւնը, որպէս զի Պատ/րիարքարանս փութայ հատուցմամբ պարտուց նոցին թշուառ/ութեանց դարման տանել ըստ կարելւոյն, եւ զանոնք վերահաս / վտանգէ մը պաշտպանել շնորհիւ օժանդակութեան ողորմած ազ/գայնոց, որոց ամենեցուն յաւելցէ Տէր Աստուած գերջանկութիւն կենաց / եւ զյաջողութիւն գործոց ընդմիշտ եւ յաւիտեանս. ամէն:

Ողջ լերո՛ւք զօրացեալք ի Քրիստոս,

ՊՏ. Ներսէս Արքեպս.

22 Փետրուար 1877

Ի Պտր. հայոց

Կ. Պօլիս

Ծնթ. Պահպանուած է շրջաբերականի 2 օրինակ. երուան էլ բնագիր են՝ վաւերացուած կնիքով եւ պատրիարքի ստորագրութեամբ, երկուսի տարբերութիւնները բառական եւ շարահիւսական են՝ անշնչան: Երկրորդ օրինակի թուականը՝ «3 Մարտ 1877», համարը՝ նոյն «234»ը: Հանգանակութիւնն արուել է նախ առաջինով, որով հաւաքուել է 3112 զուրուշ (անուններն ու տուած գումարի չափերը գրուած են 1բ-2բ երեսներին), ապա՝ երկրորդով՝ 4748 զուրուշ (1բ-2ա), ընդամէնը՝ 7860. Յովհաննէս քհյ Շահպաղեանը երկրորդ օրինակի 2ա երեսին արգիւնքն ամփոփել եւ ստորագրել է՝ 6 Օգոստոս 1877 թ.: Այսպիսով, անհրաժեշտ գումարը հաւաքուել է հինգ եւ կէս ամսուայ ընթացքում:

Կ. ՊՈԼԻՍ

ՌՅԼԶ. ~ 1887

ՀԵՂԻՆԱԿ՝ Յարութիւն արքեպս. Վեհապետեան պատրիարք հայոց Պոլսոյ (1885-1888): ՀԱՍՑԷԱՏԷՐ՝ պոլսահայութիւն: ՄԻՏՔ ԲԱՆԻ՝ Իւս-

կիւտարի աղէտալի հրդեհի առիթով սուլթան Համիտ խան գորովագութ կայսեր ցոյց տուած առատագութ հոգացողութեան դիմաց կամենում է, որ Աստուած իւր հղօր աջը տարածի Օսմանեան բարեխնամ կայսրութեան վրայ:

ԹԵՐԹ՝ 1. Հգրուած՝ 1բ. երեսը: Նիժիժ՝ թուղթ: ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 59,8x22,8: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասին (26x19,5): ԳԻՐ՝ շղագիր, մանուշակագոյն թանաքով: ՏՈՂ՝ 36:

ՅԱՐԴԱՐԱՆՔ՝ չունի:

ԿՆՔԱԴՐՈՇՄ-ՆՇՈՒՄ՝ ստորեւ, վերջին բառերից յետոյ՝ իբրեւ ստորագրութիւն, սեւ թանաքով ձուածեւ (2,2 եւ 1,8) դրոշմ, վերին մասում եպիսկոպոսական թագ, երկու կողմում զաւաղաններ, ապա՝ վերից վար, կենտրոնում եւ վարից վեր երեք ժապաւէն, վրաները՝ «ՅԱՐՈՒԹԻ՝ ԱՐՔԵՊՍ ՎԵՀՊ՝ՏԵ՝Ն», որից ցած՝ «ՊՏՐՐՔ Կ Պ՝ԼՍՈՅ 1886»:

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԲՆԱԳԻՐԸ

ՊԱՏՐԻԱՐՔ

Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Յարութիւն արքայիս/կոպոս եւ շնորհիւ Ս. Հոգւոյն վերատեսուչ եւ . . . հայոց / Կոստանդնուպօլսոյ, յորմէ հասցէ ողջոյն եւ օրհնութիւն բարեխրատ քարոզչաց / Ս. եկեղեցեաց, գերապատիւ սրբաղան եպիսկոպոսաց, արժանապատիւ վարդապետաց, սրբ/բագործ աւաք-երիցանց, մաքրակրօն քահանայից եւ առ հասարակ օրհնեալ ժողովրդեան, որ/դոց մերոց սիրելեաց բնակելոց ի մայրաքաղաքիս:

Շնորհք եւ ողորմութիւն ամենասուրբ Երրորդութեանն հովանի լիցի ի վերայ / համայնիցդ՝ պահել դձեղ յամենայն երեւելի եւ աներեւոյթ փորձանաց, նեղութեան, տառապանաց / եւ արկածից աշխարհիս եւ միշտ ի խնամս իւր պահպանեցէ անտրտում կենօք. ամէն:

Հարկ չէ բացատրել թէ Իսկիւտարի աղէտալի հրդեհն, որ բաւականա/չափ ժողովուրդ, մեծաւ մասամբ աղքատ, իրենց բնակարանէն եւ ապրուստի աղբիւրէն զրկեց եւ յա/նուն Սուրբ Կարապետի կառուցեալ հոյակապ տաճարն եւ հինաւուրց ճեմարանն իւր բոցերուն / ճարակ ըրաւ, ի՛նչ մեծ վիշտ պատճառեց մեր հայրական սրտին եւ բոլոր ժողովրդեանդ:

Այս աղէտալի եւ տխուր պատահարի մէջ եթէ մխիթարական պարագայ / մի կայ, այն ալ միայն մեր օգոստափառ սուլթան Համիտ խան գորովագութ կայսեր ցոյց] / տուած առատագութ հոգացողութիւնն եւ խնամքն է, որով հաղարաւոր անպատսպար մնացած արկածեալներու արտասուքը հայրական սիրով ու գորովով սրբեց եւ նոցա վշտահար սիրտը մխիթարեց:

Օսմանեան բարեխնամ կայսերաց ի սկզբանէ անտի ունեցած հայրա-

կան / սէրն եւ ամէն պարագայից մէջ շնորհներն ու բարերարութիւններն արդարեւ անհաշուելի եւ / անմոռանալի են, այլ սակայն նորին օգոստոսփառ վեհափառութեան այս պարագային մէջ ան/միջական եւ անօրինակ գթութեամբ եւ կարեկցութեամբ ի գործ դրած հոգացողութիւնն եւ թէ՛ ու/տեստի, թէ՛ բնակարանի եւ թէ՛ դրամի կողմանէ շնորհած առատօրէն նուէրներն եւ ողորմութիւնք / մեր վրայ զի ո՛հ եւ նուիրական պարտ կը դնեն այս յաւիտենական յիշատակաց արժանի գթութեանց / գործոցն հանդէպ անհուն եւ անպայման երախտագիտութիւն տածել առ Օսմանեան բարեխնամ / պետութիւնն եւ առ պատուական եւ անգին անձն նորին վեհափառութիւն սուլթան Համիտ / խան անզուգական վեհապետին մերոյ:

Կաղաչեմք զթագաւորն թագաւորաց եւ զաղբիւրն ամենայն բարութեանց, / որ իւր հզօր աջը Օսմանեան բարեխնամ կայսրութեան վրայ տարածէ, Օսմանեան փառաւոր դահն անսասան եւ պայծառ պահէ, մեր օգոստոսփառ սուլթան Համիտ խան հայրա/խնամ եւ գորովագութ կայսեր պատուական անձը իբրեւ բիւր ական իւր աստուածային խնամոց ներքեւ պա/տըսպարէ եւ նորին վեհափառութեան անզուգական կայսեր անգին կեանքը խաղաղ եւ ան/դորր պահէ, եւ Օսմանեան բարձր դահուն վրայ հաստատուն եւ ուրախ կացուցանէ. ամէն:

Ի Պատրիարքարանի Հոյոց Կ. Պօլիս Ողջ լերուք զօրացեալ ի Տէր

յ7 Օգոստոսի 1887 ամի [Յարութիւն արքեպս Վեհապետեան,

Պատրիարք Կ. Պօլսոյ]

Թիւ 122

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՌՅԾԹ. - 1910

ՀԵՂԻՆԱԿ՝ Մատթէոս Բ. Իզմիրլեան կաթողիկոս ամենայն հայոց (1908-1910): ՀԱՍՑԷԱՏԷՐ՝ Մկրտիչ Նոհրիկեան: ՄԻՏՔ ԲԱՆԻ՝ գոհունակութիւն եւ օրհնութիւն նուիրած մագաղաթէ ձեռագիր Սաղմոսարանի համար:

ԹԵՐԹ՝ 2. չգրուած՝ 2աբ: ՆԻԻԹ՝ թուղթ. հաստ, դեղնաւուն: ՄԵ՝ ԾՈՒԹԻԻՆ՝ 35,6x22,2: ԳՐՈՒԹԻԻՆ՝ միասիւն (27x19,4). երկու կողմից զոյգ (թաւ եւ նուրբ) կարմրով սահմանագծուած: ԳԻՐ՝ տպագիր կարմիր երկաթագիր (առաջին 4 տողը) եւ շղագիր: ՏՈՂ՝ 27 եւ 12:

ՅԱՐԴԱՐԱՆՔ՝ չունի:

ԿՆՔԱԴՐՈՇՄ-ՆՇՈՒՄ՝ վերին եզրից 1,8 սմ ցած, գրադաշտի կենտրոնում, 3x2,8 չափսի՝ անկիւնները հատած քառանկիւն, կարմիր դրոշմ,

վերը Գառն Աստուծոյ, ապա՝ «ՄԱՏԹԷՈՍ Բ. / ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ / ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍ / ԱՄ ՀԱՅՈՅ / ՌՅԾԹ 1909»

ՎԻՃԱԿ՝ բաւարար:

ԲՆԱԳԻՐԸ

ՄԵՏԹԷՈՍ ԾԵՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԸՆՀԸ/ՍԸ-
ՆԵԼԻ ԿԵՄՕՔՆ ԸՍՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻ-
ԿՈՍ ԸՄԵՆԵՅՆ ՀԱՅՈՅ, ԾԵՅՐԸ/ԳՈՅՆ ՊԵՏՐՈՍԻ ՎԵՐԵՋ-
ԳԵԿԸՆ ՆԵՐԸՄԵԾԵՐ ԸԹՈՌՈՅ ԸՐԸՐԵՏԵԸՆ ԸՌԸՔԵԼԸԿԸՆ
ՄԵՅՐ / ԵԿԵՂԵՅԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԵԹՈՂԻԿԷ ԷՋՄԵԸԾՆԻ. Վսեմա-
փայլ Մկրտիչ Էֆէնտի / Նոհրիկեան հարազատ որդւոյ Մայր Աթոռոյս
նուիրեմք ողջոյն, հանդերձ օրհնութեամբ:

Բերկրութեամբ սրտի ընկալեալ մեր գնուիրաբերեալ / ի վսեմափայ-
լութենէ Ձերմէ զմագաղաթեայ ձեռագիր / Սաղմոսն, յանձնեցաք զայն ի
պահ մատենադարանի / Մայր Աթոռոյս՝ իբրեւ գլխատակ երախտագի-
տական / սրտաբուղիս զգացմանց սիրեցեալ առ ի մէնջ հոգեւոր / որդ-
ւոյդ առ Մայրն Լուսոյ համայնիցս: Որդեակդ / հոգեւոր, ի վաղուց անտի
քաջածանօթ են մեզ առաքինի գործք Ձեր եւ բոլորանուէր պատրաս-
տականութիւն / յօգուտ եւ ի յառաջադիմութիւն Ազգիս եւ / անհուն
սէր եւ ջերմագին զգացմունք առ Մայր Աթոռս / եւ առ հասարակ առ
ազգային յիշատակարանս: Մեք / ամենայն գովութեան արժանի համա-
րիմք զազգասէր / ընթացս եւ զբարի սիրտ Ձեր առ նուիրական հաս/տա-
տութիւնս ազգիս:

Արդ, ի տրիտուր սրտաբուղիս եւ թանկագին / նուիրաբերութեանդ,
այսու Հայրապետական կոն/դակաւ մերով յայտնելով Վսեմափայլու-
թեան Ձերում / զլիաշուրթն գոհունակութիւն մեր, օրհնեմք զՁեզ / եւ
զհամայն պատուական գերդաստանդ եւ մաղթեմք ի Տեառն / ի հաճոյս
իւր ընդունիլ գնուէրդ իբրեւ զլուծմայն աղքատ // կնոջն եւ պարգեւել Ձեզ
զամս ձիգս անդորր եւ խաղաղա/ւէտ կենօք, այլ եւ զբարեբաստութիւն
եւ գերջանկութիւն / ի վայելել գերկնապարգեւ եւ զառատաբաշխ բարիս
հան/դերձ օրհնաբանեալ գերդաստանաւդ:

Ողջ լերո՛ւք, զօրացեալ ի Տէր, պահպանեալ ի խնամս Ա. / Հոգւոյն եւ
օրհնեալ յաւէտ ի մէնջ. ամէն:

«15» Մարտի 1910 ամի

Եւ ըստ տոմարիս ՌՅԾԹ. Մատթէոս Բ. կաթողիկոս ամենայն հայոց
ի հայրապետութեան մերոյ Ա. ամի

յԱրարատեան Մայր Աթոռ Ս. Էջմիածնի

ի Վաղարշապատ

թ. 529

Ծնթ. Ստորագրութիւնը՝ կաթողիկոսի ձեռքով է: Նկարագրական տո-

ւեալների չգոյութեան պատճառով այս Սաղմոսարանի ներկայ համարը պարզել չկարողացանք:

ՅԱԻԵԼՈՒԱԾ ԿՈՆԴԱԿ ՄԵԼՔԻՍԷԹ ԳԱՌՆԵՑՈՒ. 1610 թ.

Մխիթարեանց Վենետիկի մատենադարանի Հ^մ 1887 (Կոնդակք) ձեռագրի մասն

ԹԵՐԹ՝ 1 (գալար): ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 77x24,2 սմ: ԳՐՈՒԹԻՒՆ՝ միասիւն (գրադաշտի լայնքը 20,5 սմ), երկու կողմից երկուական զոյգ կարմրով սահմանագծուած, ձախ կողմից աւելի է եւս մի կարմիր սահմանագիծ. սկիզբը մաշուած, ցեցակեր, շարագրանքի միջին հատուածից ընկած է բնագրի էական մասը, աջ եզրը եւ ընկած մասի տեղը նորոգած՝ հաւանաբար ԺԹ. դարի թղթով:

ԽԱԶԱՊԱՏԿԵՐ-ՃԱԿԱՏԱԶԱՐԴ՝ 23,2x20,6 սմ, գոյները՝ կարմիր, կապոյտ, կանաչ, նարնջագոյն, դարչնագոյն: Խաչի թեւերի միջեւ չորս կնքադրոշմ.

1. Կլոր կնքադրոշմ, տրամագիծը 3,8 սմ, շուրջանակի պատկերուած են 12 առաքեալների գլուխները, նրանից ներս՝ կրկին շուրջանակի գրուած է. «Է. ՏՐ ՄԵԼՔԻՍԷԹ ԿԹՂԿՍ ԱՄ ՀՅՅ ՊԱՏՐ.Գ. ՎՂՐՇՊՏԻ», սրանից ներս, կնիքի կենտրոնական բոլորակի մէջ Քրիստոս՝ խաչանիշ լուսապսակով:

2. Կլոր կնքադրոշմ, տրամագիծը 2,6 սմ, արտաքին բոլորակի մէջ՝ «Ի ՏՐ ՄԵԼՔԻՍԷԹ ԿԹՂԿՍ ԱՄ ՀՅՅ ՊԱՏՐ.Գ. ՎՂՐՇՊՏԻ», սրանից ներս՝ կենտրոնական բոլորակի մէջ վեցթեւեան հրեշտակի պատկեր:

3. Կլոր կնքադրոշմ, տրամագիծը 3,3 սմ, շուրջանակի պատկերուած են 12 առաքեալների գլուխները, նրանից ներս՝ կրկին շուրջանակի գրուած է. «ՏՐ ԶՔՐՅ ՎՐԴՊՏ ԱՌՋԴ ՎՐԳՅ», սրանից ներս, կնիքի կենտրոնական բոլորակի մէջ անորոշ պատկեր:

4. Արտաքուստ ոճաւոր գծագրութեամբ ձուածեւ կնքադրոշմ, երկայնակի 2 սմ, լայնակի՝ 1,8 սմ, մէջը՝ «ԶՔՐՅ ՎՐԴՊՏ ԾՈՅ ԱՅ»:

Բնագրի առաջին՝ «Ի» տառը թռչնագիր, նրան յաջորդող առաջին տողը երկաթագիր, կարմրով, մնացեալը՝ բոլորգիր (2րդ տողը կապոյտ, 3րդը՝ կարմիր, մնացեալը՝ սեւ), գլխատառերը երկաթագիր, կարմրով: Բոլոր կնքադրոշմները կարմրով են:

ԲՆԱԳԻՐԸ

Ի ԳԵՐԱՅԳՈՅ Ի ԳԵՐԱԿԱ ԵՒ Ի ԳԵՐԱԴՐԱԿԱՆ ԵՒ ԳԵՐԱՀՐԱՆ, Ի

դերազան եւ դերաճառ, յամենասուրբ Երրորդութենէն, ի յանսկիզբն Հօրէն, ի յանհաս Բանէն, ի Հոգոյն ճշմարտէն եւ ի միակութենէն եւ ի մի բնութենէն եւ մի դոյութենէն, եւ ի միապէս բարոյն, ի մի Աստուած դոյոյն, անձամբ եւ անուամբ բաժանելոյն այլ ամենայնիւ մի կալոյն, եւ ի դերադայի մեծահամբաւ ի բամալուր սուրբ մենաստանէս ի Վաղարշապատու սուրբ աթոռոյս Էջմիածնա աստուածակազմ լուսոյս եւ ի սոցին սպասաւորէ ի Տէր Մեկքիսէթ կաթողիկոսէ ամենայն հայոց, եւ ի Տէր Ստեփաննոս վարդապետէ, եւ ի Տէր Ստեփաննոս եպիսկոպոսէ, եւ ի Տէր Կարապետ վարդապետէ, եւ ի Տէր Յոհանէս վարդապետէ, Նա եւ Ստեփաննոս արհի եպիսկոպոսէ, Այլ եւ ի Զաքարիայ վարդապետէ եւ յայլ միեղէն եղբարցս, որ աստ կան հաւադեալ՝ ի Սուրբ Էջմիածինս, Հասցէ յիսուսաւանդ ողջոյն եւ առաքելական աւրհնութիւն ի վերա տիրախնամ եւ աստուածապահ քաղաքացի, նախ եւ առաջ Իլախաց երկրիդ մայրաքաղաքիդ Իլովա եպիսկոպոսացդ, քահանայիցդ եւ ԲԺ. ան դատաւորացդ եւ պարոն տօլվաթաւորացդ, եւ հաւասար քրիստոնէիցդ մեծի եւ փոքու առ հասարակ. ամէն: Երկրորդ՝ Կամենիսու քահանայիցդ եւ պարոն տօլվաթաւորացդ եւ հաւասար քրիստոնէիցդ. ամէն: Երրորդ՝ Սէչովու քահանայից եւ պարոն տօլվաթաւորացդ եւ բովանդակ քրիստոնէիցդ. ամէն: Չորրորդ՝ Եաշու քահանայիցդ եւ պարոն տօլվաթաւորացդ եւ հաւասար քրիստոնէիցդ. ամէն, եւ Ֆռանկստանու քրիստոնէիցդ առ հասարակ ամենեցուն ամենայնի. ամէն: Աւրհնեալ է Հայր Աստուած՝ անեղ, անծին, անժամանակ, դովեալ Որդին միածին Բանն Հաւր, ծաղումն անճառալոյս եւ ճառադայթ, բարեբանեալ Հոգին Աստուած ճշմարիտ բիւումն անսպառ, եւ բաշխօղ բարութեան որպէս աւրհնեաց զդասս հրեշտակաց եւ զկա[յ]անս անմարմնոց, նոյն աւրհնութեամբն եւ զձեզ աւրհնեացէ արարիչն Աստուած զդասս եւ զգումարս ձեր, զազդս եւ զտոհմս ձեր, զ[յ]արկս եւ զկայանս ձեր, զտունս եւ զբնակութիւնս ձեր, եւ որպէս աւրհնեաց զդրախտն ադինեա եւ ի նմա զմարդն առաջին, եւ զմայրն մեր եւ Աստուծոյ, Նոյն արարիչն Աստուած աւրհնեացէ զդրախտս ձեր, զայդիս եւ զբուրաստանս ձեր. ամէն: Պատճա /// չէն եւ պայծառ լինի ձեզ եւ պարծանք եւ ճոխութիւն, եւ թէ աղքատ եւ նուաստ դարձեալ ձեզ է պակասութիւն, ձեզանէ խնդիրք ունիմք որ զայս աթոռս ի մտաց չի հանէք եւ անտես չառնէք, եւ դուք աւրհնեալ լիջիք յԱստուծոյ բարձրելոյն. ամէն:

Կնքադրոշմ. Կնքադրոշմ. «ՀԱ- Կնքադրոշմ. «ՄԻ- Կնքադրոշմ.
 «ՄԱՐՏԻՐՍ / ՔԻ ՄԱ/ՉԱԶ ԵՊՍ / ՔԱ/ԵԼ ԵՊԿՍ «ՄԱՆ Ո/ԻԷԼ
 / ԵՊ /// (անվերծա- ԾԱՌ-Յ ՔԻ»». Ես Ծ/ԱՌ-Յ ՔԻ»». Ես ԵՊՍ / ԾՌ-
 ԱՆԻ). Ես յաթո- Համադա՛ եպիսկո- Միքա՛ել առաջ- ՔԻ»». Ես Մա-
 ռակալ Մարտի- պոս առաջնորդ նորդ սուրբ ուխտին նուէլ եպիս-
 րոս եպիսկոպոս սուրբ ուխտին Աղչկու վանացն որ կոպոս առաջ-
 վկա եմ այս բա- փրկչական պատ- է նաՀատակ Սուրբ նորդ Սուրբ
 նիս: կան պատկերին Ստեփանոս քահա- Աստուածած-
 վկա եմ այ[ս] բա- նային, վկա եմ այս նին վկա եմ
 նիս: բանիս եւ նամա- այս նամակիս:
 կիս:

Կնքադրոշմ. «Ա-
 ԾԱ/ՏՐ ԵՊՍ Ծ/Ռ-
 ՔԻ»». Ես Աստո-
 ւածատուր եպիս-
 կոպոս առաջնորդ
 սուրբ ուխտիս
 Այրվանաց վկա
 եմ այս նամակիս:

Այս Ե. վանաց առաջնորդս առաջի Աստուծոյ եւ սուրբ աթոռոյս
 դրանն այս նամակիս Համախոհ եմք այս բանիս, որ Զաքարիա վարդա-
 պետն եւ Դաւիթ եպիսկոպոս Հագիւ կարացաք Հաւանեցուցանել առ
 ձեզ գալոյ, այլ մարդոյ հրամանք չկա, այդ տեղեացդ նուիրակ կամ իշ-
 խանութիւն առնելոյ, դոցանէ ի զատ այլ մարդ չընդունիք, Աստուած
 ըզձեզ աւրհնէ, սուտ եւ խաբեբա մարդ շատ շուրջ կու գա, բայց ինչ
 մարդ որ այս նամակս ու ձեր նշանն առ ձեզ բերէ՝ ստոյգ եւ ճշմարիտ
 նուիրակն նա է: Գրեցաւ սակաւ գիրս դուռն Սուրբ Էջմիածնա թվին
 ՈԾԹ. (1610), Մայիս ամսոյ ի մէկն:

(Անկանոն նոտրոգրով) Եսաւ արքեպիսկոպոս առաջ[ն]որդ սուրբ
 ուխտի Անկուրիա տեսի զնամակս եւ հաւատացի այս այսպէս է ըս-
 տուկ ճշմարիտ (կալմբով կնքադրոշմ, անվերծանելի):

ՀԱՂՈՐԴԻՈՒՄՆԵՐ

ԱՐՓԻՆԵ ԲԱԲԼՈՒՄՅԱՆ

ԱԿՆԻ ԳԱՎԱՌԱԿԻ ՆԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ Ի. ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Նայ բնակչության թվաքանակի խնդիրը, թերևս ժԹ. դարի վերջերի եւ Ի. դարի սկզբների Խարբերդի նահանգին առնչվող հիմնախնդիրների մեջ ամենաբարդն է, քանի որ առավել հավասարի ու ամբողջական տվյալները չկան: Պաշտոնական թուրքական տվյալները միշտ ունեն առավելապես նվազ ցույց տալու հայ բնակչության քանակը, բացի այդ, դրանք մանրամասն չէին ներկայացնում հայ բնակչության թվաքանակը տարբեր գավառներում ու գավառակներում: Իրարից բավական տարբերվում են նաև Կ. Պոլսի հայոց պարբերաբարանի տարբեր տարիների տվյալները: Ստորև փորձել ենք տարբեր տվյալների համադրությամբ հաշվարկել Ի. դարի սկզբի դրությամբ գավառակի հայության թվաքանակը:

Ակնը որպես Խարբերդի գավառի առանձին գավառակ մաս էր կազմում Խարբերդի նահանգի: Այն ընկած էր Արաբկիրից հյուսիս, Խարբերդից՝ հյուսիս-արևմուտք: Արևելքում Ակնի գավառակին սահմանակից էր Խարբերդի գավառի Փոթորկե գավառակը, հյուսիսում՝ Էրզրումի նահանգն էր, արևմուտքում՝ Սեբաստիայի:

Ակնի հայությունը այսպեղ էր հաստատվել տարբեր ժամանակներում եւ տարբեր վայրերից, այդ թվում՝ Վանից, Էրզրումից, Քղիից, Բալուից, Խարբերդից, Ուրֆայից, Մադենից, Արաբկիրից, Տիվրիկից, Ջառայից, Սեբաստիայից, Թոքթաթից եւ այլ վայրերից¹: Այս շրջանը գտնվում էր բարեխառն կլիմայական գոտում, ուներ առողջարար, լեռնային օդ եւ առար բուսականություն: Ակնը հարուստ էր հարկապես պտղաբու ծառա-տեսակներով ու խաղողի այգիներով, թեև մշակելի տարածքները խիստ սահմանափակ էին: Ըստ Էփրիկյանի, սա էր այն պարճառներից մեկը, որ ակնցիներին ստիպում էր գաղթել այլ բնակավայրեր: Նեղինակը մասնավորաբար գրում է. «Ընդհանրապես Ակնցիք, գիտաբնակներն անգամ, քաղաքացույ կեանք կը վարեն, երկրագործությունը գրեթե բոլորովին մեջերեն վերցած է, արդեն մշակութեան յարմար հողեր ալ կը պակսին: Այս պարճառաւ թէ գիտացիք եւ թէ քաղաքացիք կը դիմեն յօրարութեան, անդ վաստակելու եւ ի հայրենիս վայելելու»²: Արտագաղթը Ակնի հայ բնակչության թվաքանակի փոփո-

1 Յ. Ճանիկեան, Նուրթինք Ակնայ, Թիֆլիս, 1895, էջ 15:

2 Ս. Էփրիկեան, Պատկերագրող բնաշխարհիկ բառարան, հ. 1, Վենետիկ, 1903-1905, էջ 82:

խության հիմնական միություն էր, որն արձանագրվել է ավյալ բնակավայրի դեպքում քարիններ շարունակ եւ աճել էր համիդյան կոտորածներից հետո:

Ակնի գավառակն ուներ 7 նահիլ՝ Սալահիլ, Իլիճ, Ապանոս, Ադին, Սերաճիք, Այնե-սի-Ահիբլի, Ապուհեիլ³: Ըստ Փոլապյանի՝ գավառակն բնոգրվում էր 102 գյուղ⁴: Ջանիկյանը նշում է Ակնի գյուղերի անունները, այն է՝ դեպի արեւմուտք՝ «Մանրուիս, Նարվեր, Չալթու, Ապրանք, Տիլլու, Ադրլ, Պրգմրժեն, Սարք Չիչեկ, դեպի հարավ՝ Բակեր, Ապուհեիլ, Կամրկապ, Կարուշա, Արկու, Նաբեղնոց, Նաբեղնոցի Ագրակ, Զինսիբի, Եփրապի ձախակողմում՝ Վանք, Շրգու, Շրգուի Ագրակ, Միջին գեղ, Վան գեղ, Ադրիկ, Սալահիլ, Կաշո, Չորակ, Մուշեղկա, Փեղդան, Կեճեկի, Ուռեկ, Յաղուպու, Ավերակ, Լիճք, Սա-նախսի, Աթմա, Բաղշպաշ, Բաղչա, Չյովիլեր, Թավուիս, Խասա, Նոպար, Բոշայի, Կաղ-րան, Գոմսկան, Փաշաղի, Ռապար, Արբոս, Սերկեիլ»⁵: Նշենք, որ միայն հայրուկենյա գյուղերում էր, որտեղ դարասկզբին հայեր էին ապրում:

Նախ, անդրադառնանք Ակն քաղաքի վերաբերյալ եղած հիշարակություններին: Խոսելով Ակնի մասին՝ թուրք պատմագիր Էվլիա Չելեբին նշում է, որ «քաղաքը Սուլեյ-ման խանի աշխարհագրով մտնում է Սվագի էյալեթի մեջ»⁶: Մամուրեթ-ուլ Ազիզ նա-հանգի կազմավորումից հետո Ակնը դարձավ Խարբերդի նահանգի անբաժան մասը: Այն նահանգի առանցքային բնակավայրերից էր՝ իր պարմությամբ ու հայի ինքնարիւթ պրեսակով: Կարմիր Խաչի կազմակերպության աշխարակիցներից Ջ. Նաբբելը 1896 թ. գրում է, որ Ակնը քաղաքի կերպով գեղեցիկ քաղաք է⁷: Ակնցին քաղաքավոր էր իր քաղքենի կենցաղով, գեղեցիկ տներ ունենալով սովորությամբ, ինչը նաեւ այն պարճա-ններից մեկն էր, որ սպիտակ էր ակնուցում գաղթել ու փնտրել ապրուստի ավելի լավ պայ-մաններ, քան կար ու սպեղծել էր նա իր ծննդավայրում:

Այժմ բերենք մի քանի վիճակագրական տվյալներ, որ առնչվում են քաղաքային ակնցիների թվաքանակին, ապա նաեւ անդրադառնանք հայաբնակ գյուղերին: 1878 թ. ապրիլի 8-ին Ակնի առաջնորդական տեղապահ Տեր Նարություն քահանա Երեցյանի կողմից պարբերաբար ուղղված գրավոր վիճակագրության համաձայն Ակն քաղաքում կար 5240 հայ եւ 4432 թուրք բնակիչ⁸: 1878 թ. վերաբերող վիճակագրության համաձայն՝ Ակնում ապրում էր 2000 քուրդ՝ 10000 բնակիչ, որի կեսից ավելին հայեր էին, մյուսները՝ թուրքեր⁹: 1880 թ. Ակնի վիճակի աշխարհագրում քաղաքի հայության քանակը նշված է 5442¹⁰, ինչը նախորդ տվյալների համեմատ մի փոքր աճել էր, որը պարամաբանական է: ԺԹ. դարի վերջերին Ակն քաղաքի հայության քանակի մասին Ս. Ծոցիկյանի բերած

3 Տե՛ս Ա. Փոլապյան, Պարմություն հայոց Արաբկիրի, Նիւ Եորք, 1969, էջ 38:

4 Տե՛ս անդ:

5 Տե՛ս Ա. Քեչեան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 34:

6 Է. Չելեբի, Թուրքական աղբյուրներ, Գ. Թարգմանությունը բնագրից Ա. Խ. Սաֆրասյանի, Երևան, 1967, էջ 157:

7 C. Barton, *The Red Cross: A History of this Remarkable International Movement in the Interest of Humanity*, J. B. Lyon Company Albany, N., Y., Washington, էջ 343:

8 Տե՛ս ԳԱԹ. Ազգային ֆ., 34/III, թ. 3:

9 Յ. Ճանիկեան, նշվ. աշխ., էջ 32 :

10 Ս. Էփրիկեան, նշվ. աշխ., էջ 82-83 :

սովյալը գերազանցում է վերոնշյալ երկու աղբյուրների տեղեկությունները: Ըստ հեղինակի՝ Ալն քաղաքում ապրում էր շուրջ 20000 մարդ, որից 10000-ը հայեր էին¹¹: Անգլիացի պրոֆեսոր Ռ. Նարրիսը մի նամակում մեջբերում է Ալնի միսիոներներից մեկից ստացված տեղեկագիրը, որտեղ ասվում էր, որ 1896 թ. դրությամբ Ալնն ունեցել է 1000 տուն հայ եւ նույնքան թուրք բնակիչ¹²: Պապրիարքարանի՝ Թեոդիկի հրապարակած ցուցակում քաղաքի հայությունը հաշվվում է 7800 անձ¹³, Ռ. Գեորգյանի ցուցակով՝ 7720, ինչը ստանում ենք, երբ աշխարհայան նախաբանում Ալնի գավառակի համար հաշվվող 16741 թվից հանում ենք գյուղերի հայության համար բերված սովյալները, քանի որ քաղաքի համար նման սովյալ նշված չէ: Ալնում, ըստ Բ. Եղիայանի կազմած վիճակագրության՝ 1914 թ. կար 7 հայաբնակ բնակավայր, 12 եկեղեցի, 16100 հայ բնակիչ¹⁴: Տարօրինակ է, բայց գրեթե բոլոր բնակավայրերի, գավառակների ու գավառների համար ավելի մեծ թվեր ներկայացնող այս ցուցակում Ալնի գավառակի համար գրեթե նույն թիվն է տրված, նույնիսկ ավելի փոքր, քան պապրիարքարանի ցուցակներում: Խնդիրն այն է, որ Եղիայանը Ալնի նախնին իր գյուղերով վերագրել է ոչ թե Ալնի գավառակին, ինչպես վարչական բաժանումն էր թելադրում, այլ Արաբկիրի գավառակին, ինչը թելադրում էր եկեղեցական թեմերի բաժանումը: Թերեւս այդ պարզառով է նաեւ, որ վերոնշյալ գյուղախումբն Արաբկիրի վիճակի մեջ է ներկայացրել նաեւ Թեոդիկը: Այլ սովյալների բացակայությունը հնարավորություն չի տալիս պարզել Ալն քաղաքի հայերի իրական թվաքանակը, քանի որ պապրիարքարանի նշած շնչերի թիվը գրեթե միշտ ավելի նվազ է, քան իրականում էր, ինչի ապացույցն այլ աղբյուրներում տեղ գտած սովյալներն են: Ինչուից, այս դեպքում միայն կարող ենք ենթադրել, որ հայերի թվաքանակն ավելին էր, քան 7720-7800-ը, սակայն հարկադրված ենք ընդունել այս թվաքանակը:

Անդրադառնալով գավառակի հայաբնակ գյուղերին, որոնք 10-ն էին: Ալնի բնակավայրերի հայության մասին խոսելիս չպետք է մոռանանք, որ այստեղ կային գյուղեր, որոնց բնակիչ հայերը ուղղափառներ էին կամ բողոքականներ: Ալնի բողոքականները 1890-ականներին 25 տուն էին¹⁵: Նայ կաթոլիկներն ապրում էին Ալնի Վանք, Ջորակ, Շրգու, Մուշեղկա գյուղերում:

Վերոնշյալ գյուղերը, ինչպես Ալնի գավառակի մյուս բոլոր գյուղերը, ԺԹ. դարի սկզբներին ունեցել են սովյալ հայություն, սակայն քաղաքի ընթացքում արտագաղթի, շարունակվող բռնի մահմեդականացման քաղաքականության, իսկ դարավերջին՝ արդեն զանգվածային կոտորածների հետեւանքով այս բնակավայրերի հայության թիվը շեշտակի նվազել էր: Ն. Ջանիկյանը, խոսելով Վանք գյուղի մասին, նշում է, որ այն իր

11 Ս. Ծոցիկյան, Արեւմտահայ աշխարհ, Նիւ Եորք, 1947, էջ 11:

12 R. Harris and H. Harris, *Letters from the Scenes of the recent Massacres in Armenia*, London, James Nisbet & Co., 1897, p. 209.

13 Տե՛ս Թեոդիկ, Գողգոթա հայ հոգևորականութեան եւ իր հօրին աղէքալի 1915 տարին, Նիւ Եորք, 1985, էջ 548:

14 Տե՛ս Բ. Եղիայան, Ժամանակակից Պարմութիւն Կաթողիկոսութեան Նայոց Կիլիկիոյ. 1914-1972, Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Նայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1975, էջ 891:

15 Յ. Ճանիկյան, նշվ. աշխ., էջ 43:

նկարագրած շրջանում՝ 1890-ականների սկզբներին, ուներ ընդամենը 40 փուն հայ կաթոլիկ բնակիչ, 5-10 փուն թուրք, այնինչ «ղեռ 25-30 փարի առաջ իբր 80 փուն բնակիչ ուներ, բայց երկիցս հրկիզմամբ՝ 10-20 փուններ է գալի բոլորն այրած եւ յեփոյ վերստին շինուած է»¹⁶։ Նույնը, թերեւս, րեղի է ունեցել գավառակի մյուս գյուղերում։ Գավառակի հայաբնակ գյուղերից 1915 թ. դրությամբ գուր հայաբնակ էր, թերեւս, միայն Բերկան, մյուսներում խառը հայերի հետ ապրում էին թուրքեր։ Նշենք, սակայն, որ այս բոլոր գյուղերում ապրող թուրքերը թվաքանակով զիջում էին հայերին։ Սա խոսում է այն մասին, որ այս բնակավայրերը նախկինում գուր հայաբնակ բնակավայրեր են եղել եւ միայն ԺԹ. դարի ընթացքում է, որ հաստատվել են նաեւ թուրք բնակիչներ։

Ակնի ամենամեծ գյուղը Ապուշեխն էր։ Այն ընկած էր Ակնից հարավ։ Գյուղի հիմնադիր հայերը գաղթել էին Վասպուրականից։ Նրանցից շատերը սերում էին ազնվական փոխներից։ Ապուշեխը բնակիչների կենցաղով, քրեական շքեղությամբ ու ճաշակով չէր զիջում Ակնին, գուցե ինչ-որ առումով նույնիսկ գերազանցում էր։ Այս բնակավայրի հայության հիմնական արհեստը նրբաթել կերպասեղենի արտադրությունն էր¹⁷։ Ապուշեխից եւս շատերն էին մեկնում արտագնա աշխատանքի։ Հիմնական ուղղությունը Կ. Պոլիսն էր։ Այս պարճառով էր, որ Պոլսի ամիրանների մեջ առաջադարձ դեր ու նշանակություն ունեին Ապուշեխից սերողները։ 1878 թ. վիճակագրության համաձայն, որ կազմել էր Ակնի առաջնորդական րեղապահ Տեր Նարություն քահանա Երեցյանը, գյուղն ուներ 1074 հայ բնակիչ¹⁸։ 1880 թ. վիճակագրության համաձայն՝ գյուղն ուներ 1066 առաքելական հայ բնակիչ¹⁹։ Նաթանյանի տվյալներով Ապուշեխը 1890-ականներին ուներ 400 փուն՝ կեսը հայ, կեսը՝ թուրք բնակիչ²⁰։ Պարբիարքարանի՝ Թեոդիկի հրապարակած ցուցակով 1913-1914 թթ. դրությամբ գյուղն ուներ 950 շունչ հայ բնակիչ²¹, Ռ. Գեորգյանի ցուցակով՝ 320 փուն՝ 1920 շունչ հայ բնակիչ²²։ Վերջին տվյալի համաձայն ստացվում է, որ յուրաքանչյուր փուն անդամների միջին թիվը հաշվվում է 6, ինչը նախորդ գյուղական բնակավայրերի դեպքում նկատելի ենք փոքր թիվ ընդամենների համար։ Թեւեւ այս բնակավայրի դեպքում որոշ ընդամեններ կարող էին կազմված լինել քաղաքական ընդամենների քանակի հաշվարկով, սակայն այս դեպքում եւս հաշվարկը կարարենք՝ յուրաքանչյուր փուն անդամների թվի միջինն ընդունելով 8. քրեական թիվն ընդունենք 320, ինչպես Ռ. Գեորգյանն է մարմանում, ստանում ենք՝ 2560։ Դժվար է ասել, թե Թեոդիկի ցուցակում նշված թիվն ինչու է այդչափ փոքր եւ պարբիարքարանի մյուս ցուցակից։

Ակնի մյուս մեծ գյուղը Կամարակապն էր, որը գտնվում էր Ակն քաղաքից հարավ-

16 Անդ, էջ 57։

17 Տե՛ս Ա. Քէլեան, Ակն եւ ակնցիք, հ. Բ, Փարիզ, 1952, էջ 61։

18 Տե՛ս ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., 34/111, թ. 3։

19 Տե՛ս Ս. Էփրիկեան, նշվ. աշխ., էջ 83։

20 Տե՛ս Յ. Ճանիկեան, նշվ. աշխ., էջ 45։

21 Տե՛ս Թեոդիկ, Գողգոթա հայ հոգևորականության, էջ 548։

22 Տե՛ս K. Re'vorkian, P. Paboudjian, *Les Arméniens dans l'empire Ottoman. A la veille du Génocide*, Paris, 1992, էջ 380։

արեւելք: Բնակիչները հիմնականում գաղթել էին Վասպուրականից, Դերսիմից, Չարսանճագից²³: Այս գյուղին եւս հասարակ էին գեղեցիկ, մեծ փոքր: Ակնի ու հարակից գյուղերի նման այս գյուղից եւս շարերն արտագաղթել էին Կ. Պոլիս, որպէղ հաստատուելով ձեռք էին բերել հաստութեք կալվածքներ: Մեծահարուստ գյուղացիներն ամեն կերպ աջակցում էին գյուղի դպրոցին ու եկեղեցուն: 1878 թ. վիճակացույցի համաձայն՝ գյուղն ուներ 764 հայ բնակիչ²⁴, 1880 թ.՝ 1133²⁵: Կամարակապում 1890-ականներին կար 150 փուն հայ, 30 փուն թուրք բնակիչ²⁶: Թեոդիկը գյուղի հայ փոքրի թիվը հաշվում է 100²⁷, Ռ. Գեորգյանը՝ 215՝ 1260 շունչ²⁸: Այս գյուղի դեպքում փոքրի թիվն ընդունելով 215, հաշվարկը կարարենք վերնշյալ փոսմարանությամբ, սքանում ենք՝ 1720:

Կամարակապի հարեւանությամբ էր Կարուշլա գյուղը, որի բնակիչները եւս ինչպես ապուհիցիներն ու կամարակապիներն իրենց համարում էին ագնվական ընտանիքի սերունդներ: Գյուղն ուներ եկեղեցի ու դպրոց: Ըստ Ջանիկյանի, գյուղն ուներ 40 փուն հայ, 20 փուն թուրք բնակիչ²⁹: Թեոդիկը փալիս է 50 փուն³⁰, Ռ. Գեորգյանը՝ 50 փուն՝ 256 շունչ³¹: Այս եւ մյուս 7 գյուղերի համար՝ Կարուշլա, Լիճք, Բնկա, Նարվեր, Մուշեղկա, Շրգու, Վանք, փան անդամների թիվը հաշվենք 8 եւ հաշվարկը կարարենք՝ հիմնվելով պարբիարքարանի ցուցակներում նշած փոքրի քանակի վրա: Բնկա գյուղի դեպքում արարերվում են Թեոդիկի ու Ռ. Գեորգյանի ցուցակներում նշված թվերը: Մենք հիմք ենք վերցնում Ռ. Գեորգյանի նշած փոքրի քանակը: Չորակ, Մուշեղկա, Շրգու, Վանք գյուղերի դեպքում Թեոդիկն ընդհանրապես որեւէ փվյալ չի ներկայացրել, թեւս նշել է դրանք որպես Ակնի ենթակա գյուղեր: Սքա պարճառք թերեւս այն է, որ սույն գյուղերի հայությունը կաթոլիկ էր, ուստի Թեոդիկը շրջանցել էր նրանց: Եթե այս բնակավայրերի դեպքում եւս հիմք ընդունենք Ռ. Գեորգյանի հրապարակած փվյալները, որպէղ ներկայացված է միայն շնչերի քանակը, փվյալների համեմատությունը ցույց է փալիս, որ Ակն գաղառակում բացառությամբ Չորակ եւ Վանք գյուղերի, մյուս բնակավայրերում հայ բնակչությունը 1878-1880 թթ. համեմատ անել էր: Ինչ վերաբերում է Չորակ ու Վանք գյուղերին, ապա, ինչպես նշեցինք, այսպէղի հայությունը կաթոլիկ էր: Այս պարճառքով է, որ պարբիարքարանի փվյալներում կարող էր եւ չարճանագրվել բնակչության աճը, առավել եւս, որ չի նշվում փոքրի քանակը, ինչը թույլ կրար հաշվարկ կարարել փան անդամների թվով, ինչպես մյուս բնակավայրերի դեպքում ենք վարվել, այլ ոչ թե ընդունել պարբիարքարանի փված շնչերի քանակը:

Սքորեւ փալիս ենք Ակնի գաղառակի բնակավայրերի հայության թվաքանակն արարացող աղյուսակ:

23 Տե՛ն Յ. Ճանիկեան, նշվ. աշխ., էջ 47:

24 Տե՛ն ԳԱԹ, Թ. Ագարյանի ֆ., 34/III, թ. 3:

25 Տե՛ն Յ. Էփրիկեան, նշվ. աշխ., էջ 83:

26 Ա. Քէ՛եան, նշվ. աշխ., էջ 74:

27 Տե՛ն Թեոդիկ, Գողգոթա հայ իղգեոթականութեան, էջ 548:

28 Տե՛ն Ռ. Ke'vorkian, P. Paboudjian, նշվ. աշխ., էջ 380:

29 Տե՛ն Յ. Ճանիկեան, նշվ. աշխ., էջ 50:

30 Տե՛ն Թեոդիկ, Գողգոթա հայ իղգեոթականութեան, էջ 548:

31 Տե՛ն Ռ. Ke'vorkian, P. Paboudjian, նշվ. աշխ., էջ 380:

	1878թ. վիճակագր. ¹	1880թ. վիճ. ²	Ն. Ջանիկյան ³	Թեոդիկ ⁴	Ռ. Գետրոյան ⁵	մեր հաշվարկները
Ակն	5240 ₂	5442 ₂		7800 ₂	7720 ₂	7800
Ապուջեխ	1074 ₂	1066 ₂		950 ₂	320պ/1920 ₂	2560
Կամարակապ	764	1133		100պ	215պ/1260 ₂	1720
Կարուշլա	168	204		50պ	50պ/256 ₂	400
Նարվեր	174	191	25պ	38պ	38պ/207 ₂	304
Լիճք	492	507	70պ	80պ	80պ/526 ₂	640
Բենեկա	904	874		140պ	220պ/1170 ₂	1760
Ջորակ	170	170	10պ	-	70 ₂	70
Մուշեղկա	124	62	15պ	-	164 ₂	164
Շրգու	138	138	30պ	-	320 ₂	320
Վանք	180 ₂	180	40պ	-	150 ₂	150
Ընդամենը	9428 ₂	9967 ₂		8750 ₂ + 408պ	13763 ₂	15888

Ակնի գավառակում Ի. դարի սկզբին հայաբնակ էին քաղաքն ու 10 գյուղեր, որպեսզի ապրող հայերի թվաքանակը, համաձայն մեր հաշվարկների՝ կազմում էր 15888 շունչ: Նայության թվաքանակը ԺԹ. դարի վերջերի վիճակագրական տվյալների համեմատ այս գավառակում աճել էր:

32 Տե՛ս ԳԱԹ, Ազգայանի ֆ., 34/III, թ. 3:

33 Տե՛ս Ա. Քեջեան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 34:

34 Տե՛ս Յ. Ճանիկեան, նշվ. աշխ., էջ 51-60:

35 Տե՛ս Թեոդիկ, Գողգոթա հայ եղեռնորականության, էջ 548:

36 R. Ke'vorkian, P. Paboudjian, նշվ. աշխ., էջ 380:

ՀՈԳԵԲՈՐ ԸԵԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՆՈՐ ՄԱՐՏԱՆՐԱՎԵՐՆԵՐ*

ՆՈՎՏԱՆՆԵՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԸ ԵՒ ԲՐՈՒԿԼԻՆՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

«Տիտու նրանց ասաց. Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ես եմ,
նախքան Աբրահամի լինելը»:
Նովհ. Ը. 58

Նովհաննեսի Ավերարանը առաջին իսկ համարից հռչակում է Տիտուսի Աստված լինելը, Նրա Աստվածությունը, հավիթենականությունը (Նովհ. Ը. 58): Ավելին. Նրան ուրիշներն են ընդունում որպես Աստված (Նովհ. Ի. 28), երկրպագում են որպես Աստծու (Նովհ. Թ. 38), Նա Արարիչ է, Նրա մասին են խոսում Ս. Գրքի բոլոր գրքերը, այսինքն՝ Տին Կրակարանը (Նովհ. Ե. 39) և այսպես շարունակ: Անշուշտ, բրուկլինյան հրապարակիչները պետք է այս Ավերարանը ինչ-որ կերպ ձեռափոխեին ու հարմարեցնեին իրենց սկզբունքներին, այնպես, որ ընթերցողների մարքվի անգամ չանցներ նույնիսկ ակնարկ Տիտուսի Աստված, Արարիչ լինելու մասին: Բրուկլինյան ՆԱԹ-ի “Նովհաննեսի Ավերարան”-ում այդ խմբագրումը կապարվել է “լավագույն ձեռով”, հենց առաջին իսկ համարից: Սրորեւ բերում ենք Նովհաննեսի Ավերարանից մի քանի համարների քննությունը:

ա) Նովհ. Ա. 1-5

Սկզբից էր Բանը, և Բանը Աստծու մոտ էր, և Բանը Աստված էր: Նա սկզբից Աստծու մոտ էր: Ամեն ինչ նրանով եղավ. և առանց նրան չեղավ ոչինչ, որ եղել է: Կյանքը նրանով էր: Եւ այդ կյանքը մարդկանց համար լույս էր: Եւ լույսը խավարի մեջ լուսավորում է, և խավարը նրան չնվաճեց:

Տունարեն բնագիրն է.

Ἐν ἀρχῇ ἦν ὁ λόγος καὶ ὁ λόγος ἦν πρὸς τὸν θεόν καὶ θεὸς ἦν ὁ λόγος. οὗτος ἦν ἐν ἀρχῇ πρὸς τὸν θεόν. πάντα δι’ αὐτοῦ ἐγένετο καὶ χωρὶς αὐτοῦ ἐγένετο οὐδὲ ἓν ὃ γέγονεν. ἐν αὐτῷ ἦν ζωὴ καὶ ἡ ζωὴ ἦν τὸ φῶς τῶν ἀνθρώπων• καὶ τὸ φῶς ἐν τῇ σκοτίᾳ φαίνει καὶ ἡ σκοτία αὐτὸ οὐ κατέλαβεν.

Այս պարբերության առաջին համարը բրուկլինյան թարգմանության մեջ այս րիւսքն ունի.

Սկզբից էր Խոսքը, Խոսքը Աստծու հետ էր, և Խոսքը *սասրված*² էր:

*Սկիզբը՝ «Էջմիածին», 2012, Ա.-Դ. համարներում:

² Այս բառի վրա ՆԱԹ-ը եղում է րալիս՝ *սասրվածանման, սասրվածային (ՆԱԹ, էջ 1581)*:

Ինչպես րեսնում ենք այս համարից, Խոսքը, այսինքն՝ Հիսուս, ասարված (փոքրա-
պատով) է եւ ոչ թե՛ Ասարված (մեծապատով): Եւ այդ նրանք հիմնավորում են հեպրեյալ
կերպ.

Նովի. Ա. 1-ի հունարեն քնագրում Ասարված=Յեծ թառ երկու անգամ է հանդիպում.
առաջին անգամ այն ունի $\acute{o}$ (=ho) (նույնի հայցականն է՝ $\tau\acute{o}\nu$ =ton) որոշյալ հոդը, իսկ
երկրորդ անգամ այդ հոդը բացակայում է: Ներկաբար այդ երկու Յեծ թառերը փարբեր
են, նույնը չեն. իսկ դա նշանակում է, որ երկրորդ Յեծ թառը, որ Հիսուսն է՝ $\lambda\acute{o}\gamma\omicron\varsigma$ -ը³,
ամենեւին էլ նույն՝ Յեծ-ը չէ, այսինքն Ասարված՝ Նայրը (=Jehova) չէ, փոքր ասարված է⁴:

Սրացվում է, որ բրուկլինյան դավանանքում գոյություն ունի երկու ասարված՝ մեծ
Ասարված (գրում են մեծապատով) եւ փոքր ասարված (գրում են փոքրապատով): Մեծը
Նայրն է (=Jehova), փոքրը՝ Հիսուս: Միայն թե Հիսուս Ասարված չլինի՝ մեծապատով,
այսինքն՝ Նորը հավասար. սա է բրուկլինյան դավանանքը: Սա անշուշտ nonsense է,
եւ միանգամայն հակառակ սուրբգրային ուսմունքին: Քանի որ այդ դեպքում անհաս-
կանալի են դառնում Եսայի ԽԳ. 10-11 եւ սրա նման շար ու շար համարներ, որոնք
հռչակում են Ասարծու միակությունը, եզակիությունը.

Ինձնից առաջ ուրիշ Ասարված չի եղել, ինձնից հետո եւս չի լինի: Ե՛ս եմ Ասարված,
ինձնից բացի չկա մեկը, որ փրկություն փա:

Իսկ ինչ վերաբերում է $\acute{o}$ (=ho) որոշյալ հոդին, թե այն բացակայում է երկրորդ Յեծ-ի
համար, ապա Նոր Կրակարանում կան շար փեղեր, ուր Յեծ-ը վերաբերում է Նորը եւ
այդ հոդը այնպեղ էլ չկա: Այսինքն՝ այդ դեպքում էլ պերք է այդ Յեծ թառը թարգմանել
փոքրապատ *ասարված* բառով՝ համաձայն բրուկլինյան հրապարակիչների պրամարա-
նության, մինչդեռ ՆԱԹ-ում այդպես չէ, այսինքն՝ այդ անհոդ Յեծ-ները շար անգամ
թարգմանվել են մեծապատով՝ *Ասարված* բառով: Օրինակ՝ Նովի. Ա. 6 համարում.

հունարենն է՝

Ἐγένετο ἄνθρωπος ἀπεσταλμένος παρὰ θεοῦ ὄνομα αὐτῷ Ἰωάννης·

Կար մի մարդ՝ *Ասարծուց* ուղարկուած. նրա անունը՝ Նովիանենա⁵:

Պարզ է, որ այսպեղ *Ասարված* բառը վերաբերում է Նորը, իսկ հունարենն ամենեւին
էլ չունի $\acute{o}$ (=ho) որոշյալ հոդը⁶:

Այս փաստարկներին, որպես կանոն, վկաները բերում են հունարենի մասնագեպ-
ների ինչ-որ անուններ՝ որ իբր պաշտպանում են իրենց թարգմանության փարբերա-
կը: Մինչդեռ դա վկաների գործելակերպի հերթապահ ձեւերից է. այդ մասնագեպների
ասածները ամենեւին նման չեն վկաների մեջբերածներին: Ռ. Ռոդեսը իր գրքում⁷ բերում

³ $\lambda\acute{o}\gamma\omicron\varsigma$ բառի լավագույն թարգմանությունը հայերեն *Բան* բառն է (ի միջի այլոց միայն հայերենում է
թարգմանությունը *խոսք*-ից փարբեր), մնացած բոլոր լեզուներում այն թարգմանված է *խոսք* բառով: Սա
դարձյալ ցույց է փայխ, որ բրուկլինյան հայ թարգմանիչները լավ չեն փրապերել հայերենին եւ անգլերեն
word-բառը թարգմանել են *խոսք*-ով, չիմանալով *Բան*-ի գոյության մասին:

⁴ ՆԱԹ, էջ 1979:

⁵ Ընդգծումները մերն են:

⁶ Նույն իրողությանը հանդիպում ենք նաեւ հեպրեյալ համարներում. Մաթթ. Ե. 9; Ղուկ. Ա. 78; Նոմ. Ա. 7;
Փիլ. Բ. 13 եւ այլն:

⁷ Տե՛ս Րոն Րոդես, *Вразрез со священным писанием*, Минск, 1998, էջ 51-52:

է հունարենի՝ հենց այդ մի քանի հայերնի մասնագետների կարծիքները, որոնցից մեկը ներկայացնում ենք ստորև.

«Ո՛հ, դա այդպես չէ. պարսաղրել մարդկանց մտածել, թե գիտնականները համաձայն են իրենց արեսակներին, - միայն մեթոդ է, որով վկաները մոլորության մեջ են գցում մարդկանց: Ես կարծում եմ, որ դա սարսափելի է, երբ մարդիկ գնում են հավիտենական կործանում նրանց միտումնավոր աղավաղած թարգմանությանը հավաքալով»⁸:

Դրան հակառակ շարք արդեր հունարենն ունի Տիմոսին վերաբերող «Աստված» բառը օ՝ (=ho) որոշյալ հոգով. օրինակ՝ Տովհ. Ի. 28-ում.

Թովմասը պարասխան արվեց ու նրան ասաց. *Տեր իմ եւ Աստված իմ:*

καὶ ἀπεκρίθη Ὁ Θεὸς καὶ εἶπεν αὐτῷ ὁ κύριός μου καὶ ὁ θεός μου

Թովմասն իր այս խոստովանության մեջ Տիմոսին Տեր եւ Աստված է դավանում (տե՛ս նաեւ Ա. Տովհ. Ե. 20 համարը՝ «Եւ գիտենք, որ Աստծու Որդին եկավ եւ մեզ արվեց խելք, որպեսզի ճանաչենք նրան, ով Ճշմարիտն է. եւ մենք Ճշմարտի՝ նրա Որդու՝ Տիմոս Բրիսարոսի մեջ ենք. որովհետեւ նա՛ է ճշմարիտ Աստված եւ հավիտենական կյանք»), եւ այսպէղ առկա է օ՝ (=ho) որոշյալ հոգը: Բրուկլինյան թարգմանիչների՝ այս թեօուկից դուրս գալու մարտավարությունը նույնն է: Թովմասի *Տեր իմ եւ Աստված իմ* ասածի մեջ **Աստվածը** գրում են փոքրատառ՝ *Տեր իմ եւ աստված իմ*, եւ այդ բառի վրա հղում արալիս փողարակում. «Կամ՝ «իմ Աստվածը», այսինքն՝ Եհովայի Խոսնակ եւ Ներկայացուցիչ»: Այսինքն՝ ուզում են ասել, որ *Տեր իմ եւ Աստված իմ* խոսքերը վերաբերում են Եհովային, ու ոչ թե՝ Տիմոսին, իսկ Տիմոս միայն նրա *Խոսնակն է ու Ներկայացուցիչը*: Այսպէղ նրանք չեն զրանում Տիմոսի «պաշտոնները» ներկայացնել մեծատառով՝ *Խոսնակ եւ Ներկայացուցիչ*: Սա էլ նրանց դավանական սկզբունքներից է. Խոսնակը եւ Ներկայացուցիչը մեծատառով՝ Տիմոսն է, իսկ խոսնակ եւ ներկայացուցիչ՝ փոքրատառով՝ իրենք են՝ Եհովայի վկաները: Սա կարարյալ nonsense է:

Այս համարի քերականական քննությունը նույնպես ի չիք է դարձնում բրուկլինյան հրապարակիչների արեսակները, թե այնպէղ օգտագործած *θεός*-ները արարեր անձեր են ներկայացնում եւ նույնը չեն:

Տովհ. Ա. 1-ի բառացի թարգմանությունն է.

առաջին մասը՝	Ἐν ἀρχῇ Սկզբից	ἦν էր	ὁ λόγος Բանը,	
երկրորդ մասը՝	καὶ ὁ λόγος եւ Բանը	ἦν էր	πρὸς մոտ	τὸν θεόν Աստծու,
երրորդ մասը՝	καὶ θεός եւ Աստված	ἦν էր	ὁ λόγος. Բանը:	

Այս նախադասության մեջ ենթական օ՝ *λόγος*-ն է՝ *Բանը*, սորորոգայր՝ *ἦν* - *էր*: Չի կարող լինել այնպես, որ *էր* բային հաջորդի ուղիղ խնդիր, քանի որ, համաձայն քերականական կառուցվածքի, անփոփոխ բայից հետո պետք է լինի ոչ թե խնդիր, այլ սորորո-

⁸ R. Martin Walter, "The New World translation", *Christian Research Newsletter*, 3:3. p. 5.

գելիական ուղղական (predicative nominativus), որը դարձյալ վերաբերում է ենթակային, այս դեպքում՝ ὁ λόγος-ին: Նոր Կրիստոսի հայրնի մասնագետ Կոռնելիոս հայրնաբերել է մի օրինաչափություն, համաձայն որի ստորոգելիական ուղղականը (predicative nominativus, մեր պարագայում՝ թե՛՛-ը երկրորդ մասում), որը վերաբերում է ենթակային, երբեք չի ընդունում արդեն ունեցած հոդը, եթե նա նախորդում է բային (մեր պարագայում՝ ի՛նչ-էր)⁹: Նենց այս էլ պետքում ենք բնագրում՝ Նովի. Ա. 1-ում: Այս է պարզապես, որ երկրորդ թե՛՛-Աստված բառը (երրորդ մասում) չունի որոշյալ հոդ, և թե՛՛-ը թարգմանել որպես աստված՝ փոքրաբանով, կամ աստվածային՝ քերականորեն սխալ է և ցույց է տալիս թարգմանիչների՝ հունարեն լեզվի չմացությունը, քանի որ թե՛՛-ը համարվում է ի՛նչ-էր բայի ստորոգելիական ուղղականը (predicative nominativus) Նովի. Ա. 1-ի երրորդ մասում և վերաբերում է ենթակային՝ Բան-ժ լόγος-ին: Ներկայաբար Քրիստոսը, եթե Նա Բանն է, Որը «մարմին եղավ» (Նովի. Ա. 14) չի կարող լինել այլ Բան, ԱՍՏՎԱԾ-ից բացի, եթե անշուշտ չենք անտեսում հունարեն բնագիրը, այսինքն՝ Աստծու Խոսքը¹⁰:

Նախառակ բրուկլինյան թարգմանիչ-մեկնաբանների Նովի. Ա. 1-ում մեր ս. հայրերը և բոլոր օտար մեկնիչները միշտ պետք են մեր Տիրոջ հավիտենականությունն ու անփոփոխելիությունը:

Ս. Գրիգոր Տաթևացի

«Երեք բան պետք է խմանանք, քանի որ երեք հարցեր են ծագում Աստծու Բանի առնչությամբ. նախ՝ ե՞րբ էր Բանը: Մրա պարասխանն է՝ «Ի սկզբանե էր Բանն»:

Երկրորդ. հարց է ծագում, թե՛՛ ո՞ր էր: Մրա պարասխանն է՝ «առ Աստուած էր»:

Երրորդ. հարց է ծագում նաև, թե՛՛ Ո՞վ էր: Մրա պարասխանն է՝ «Աստուած էր Բանն»¹¹:

Այսինքն **Բանն-Տիտուսի** գոյությունը ի սկզբանե էր՝ դուրս էր ժամանակի թավալումից՝ հավիտենական էր. և եթե Նա սրեղծված՝ արարված լիներ՝ ավերարանիչը չէր գրի «Ի սկզբանե էր Բանն», այլ կգրեր՝ «Ի սկզբանե եղավ Բանն», ինչպես ավերարանիչը գրում է Նովիանների մասին 6-րդ համարում՝ «Եղև այր մի»¹²:

Իսկ որ Նա «առ Աստուած էր», նշանակում է, որ Նա միշտ գոյություն է ունեցել Աստծու հետ միասին. չի եղել ժամանակ, երբ Նա գոյություն չի ունեցել: Մյուս կողմից այս նշանակում է, որ Նայրը և Բանը նույն դեմքը չեն, ինչպես Գ. դարում պնդում էր սաբելական հերձվածը¹³:

Նովի. Ա. 4 համարի հունարենի սկիզբն է՝ ἐν αὐτῷ ζῶν ἦν, որ բառացի թարգմանվում է՝ «նրանում, նրանով էր կյանքը», այսինքն՝ Տիտու-Լագոսն է կյանքը, իսկ քանի որ

⁹ E. C. Colwell, *A Definite Rule for the Use of the Article in the Greek New Testament*, in *JBLe* 52 (1933), p. 20.

¹⁰ Այս պարբերությունը թարգմանաբար բերված է Ուոլտեր Մարտինի գրքից. տե՛ս **Walter Martin**, *The Kingdom of the Cults*, Bethany house publishers, Minnesota, 1997, էջ. 138:

¹¹ Ս. Գրիգոր Տաթևացի, Մեկնություն Յոհաննու Անարարանի, Ս. Էջմիածին, 2005, էջ 52:

¹² Նովի. Ա. 6: Նունարենն է. Ἐγενέτο ἄνθρωπος ...

¹³ Քանի որ Բան-Լագոսը Նորից փառքեր դեմք ունի, դրա համար էլ Նովի. Ա. 1-ում որոշյալ հոդը պետք է չլինի, հակառակ դեպքում սաբելականությունը իր հիմնավորումը կգտնի այսօրվա «սաբելականների»՝ բրուկլինյան կազմակերպության հրապարակության ՆԱԹ-ի մեջ:

կյանքի աղբյուրը Ասարված է¹⁴, ապա այսպեղից պետք է հեղինակի, որ Տիտուս նույն Ասարվածն է: Այս տեսակետը անշուշտ հակասում է բրուկլինյան թարգմանիչների դավանանքին, և այդ հարցը նրանք լուծում են դարձյալ իրենց հասկացածով «հնարամտությամբ»: Ահա նրանց թարգմանածը.

«*նրա միջոցով*, կյանքն էր»:

Քննելով թարգմանելով այսպես՝ *միջոցով*, Նրանից, այսինքն՝ Տիտուսից, օտարվում է կյանքի աղբյուրը, Նա Եհովայի համար դառնում է օգնական, գործիք կյանք ստեղծելու համար, բայց ոչ կյանքի աղբյուրը: *Նրա միջոցով* թարգմանելով դարձյալ նշանակում է, որ Նա՝ Տիտուս, փարբեր է Տորից՝ որի համար նա գործիք է, այսինքն՝ ստորադաս է:

բ) Տոմի. Ը. 58

Տիտուս նրանց ասաց. Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ես եմ, նախքան Աբրահամի լինելը:

ՆԱԹ-ի թարգմանությունն է.

Տիտուս նրանց ասաց. Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, նախքան Աբրահամի լինելը *ես արդեն կայի*:

Տունարենն է.

εἶπεν αὐτοῖς ὁ Ἰησοῦς Ἀμὴν ἀμὴν λέγω ὑμῖν πρὶν Ἀβραάμ γενέσθαι ἐγὼ εἰμὶ.

Տրեանների այն հարցին, թե՛ *Դեռ հիսուսն փարեկան չկա՞ս դու ես Աբրահամի՞ն ևս տեսե՞ր*, Տիտուս պատասխանում է. *Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ես եմ, նախքան Աբրահամի լինելը*: Տրեանները այսպեղ Տիտուսի ասածների մեջ ասարված-հայեցողություն են տեսնում, քանի որ այդ ասելով Նա՝ Տիտուս, Իբրեւ հավասար է դառնում Ասարվածին (ինչպես Տոմի. Ե. 18, Ժ. 30 համարներում): Տենց դա է նշանակում «*նախքան Աբրահամի լինելը*», այսինքն՝ Նրա հավիտենական գոյությունը: Այս պարզ ավերարանական շարադրանքը այլ կերպ հասկանալ գրեթե բացառվում է. ավերարանիչը այնքան հասկանալի ու պարզ է ներկայացնում բանավեճը, որ միանշանակ հրեաները Տիտուսի խոսքերի մեջ տեսան Ելից Գ. 14-ը՝ «Ես եմ»-ը՝ ինչպես Նա համար էլ նրանք քարեր վերցրին, որ քարկոծեն Նրան:

Այս թեզուից դուրս գալու համար բրուկլինյան վարդապետները այս համարը թարգմանել են *նախքան Աբրահամի լինելը ես արդեն կայի* ձևով: Իսկ այս նշանակում է, որ Տիտուսին արդեն չի կարելի նույնացնել Ելք Գ. 14 և Եսայի ԽԳ. 10-13-ում հանդիպող այդ նույն՝ ինչպես Նա համար էր, այլ՝ Ը. 44-ի համար, որ Նա նրանց անվանեց՝ «*սասարանայի գավակներ*»: Եթե ճիշտ է բրուկլինյան այս տարբարակությունը, ապա Մարթ. ԺԲ. 34, ԻԳ. 33 և այլ համարներում, հրեաները նույնպես պիտի քարեր վերցնեին ու հարձակվեին Տիտուսի վրա, քանի որ այդ տեղերում եւս Նա նրանց անվանեց *խժերի ծնունդներ*: Մինչդեռ ավերարանների այդ դրվագների պարմությո-

¹⁴ Մաղմ. ԼԵ. 10:

¹⁵ Անշուշտ Տիտուսի Կարակարանի հունարեն Յոթանասնից թարգմանությունից են վերցված:

յունները այդպիսի շարունակություն չունեն. անձնական վիրավորանքների համար երբեք չէին քարկոծում: Փարիսեցիները, լինելով օրինապաշար, չէին խախտի քարկոծելու համար նախարեսած պայմանները: Իսկ դրանք Նեգամարյանում հինգն էին.

1. Ղևուր. Ի. 27: Թույլատրվում է քարկոծել վեհուկներին ու կախարդներին:

2. Ղևուր. ԻԴ. 10-23: Թույլատրվում էր քարկոծել Ասրծուն հայեռելու դեպքում:

3. Բ Օր. ԺԳ. 5-10: Թույլատրվում էր քարկոծել սուր մարգարեություն անելու համար, որը կռապաշտության էր փանում:

4. Բ Օր. ԻԱ. 18-21: Թույլատրվում էր քարկոծել ծնողներին անհնազանդ ու անառակ գավակներին:

5. Բ. Օր. ԻԲ. 21-24, Ղևուր. Ի. 10: Թույլատրվում էր քարկոծել պոռնկության եւ բռնաբարության դեպքում¹⁶:

Միայն եւ միայն այս դեպքերում էր թույլատրվում օրինավոր կերպով քարկոծել հանցագործին: Ավերարանական բոլոր պատմություններում, ուր բնոդիմախոս հրեաները փորձում էին քարկոծել Նիսուսին, նրանք վարվում էին օրենքի այդ սահմաններում, համարելով, որ Նիսուս ոչ թե վիրավորում է իրենց անձը, այլ հայեռում է Ասրծուն՝ Նորր, ուստի, 2-րդ կերպի համաձայն նրանք համարում էին, որ թույլատրելի է քարկոծելը: Նույն իրավիճակն է նաև Նովի. Ժ. 30 համարում, երբ դարձյալ հրեաները փորձեցին քարկոծել Նիսուսին. հեպտաբար, թե՛ Նովի. Լ. 58, թե՛ Նովի. Ժ. 30 համարներում հրեաները ճիշտ հասկացան Նիսուսի խոսքերը՝ այսինքն, որ Ինքը հավակնում է ներկայանալ որպես նույն Նայրը, նույն Ասրվածը:

Մասնագետները նշում են, որ քերականորեն նույնպես չնչն էլմս-ն¹⁷, որպես «ես արդեն կայի» թարգմանելը կոպիտ սխալ է¹⁸: Բրուկլինյան թարգմանիչների այն պնդումը, թե «ես արդեն կայի» ձևը (անգլերեն՝ *I have been*) *պատմողական* կամ *պատմական* *ներկա* եղանակն է¹⁹, այդ բանավեճում Աբրահամին հիշարակելու պատմության մեջ, անհիմն է. քանի որ այդ հարվածում ոչ թե պատմություն է շարադրված *պատմողական* կամ *պատմական* *ներկա* եղանակով, այլ՝ Նիսուսի ուղիղ խոսքն է, բանավեճն է հրեաների հետ: Իսկ հունարենում *պատմողական* կամ *պատմական* *ներկա* եղանակը թույլատրվում է կիրառել միայն պատմություն ներկայացնելու, պարմելու ժամանակ:

(շարունակելի)

ՂԵԻՆՆԴ-ԶԱՆՆԱ ՄԱՅԻԼՅԱՆ

16 Տե՛ս **Walter Martin**, *The Kingdom of the Cults*, Bethany house publishers, Minnesota, 1997, էջ 141:.

17 Յոթանասնից թարգմանության մեջ Ելից Գ. 14-ր եբրայեցերեն՝ הֵיָיָה אֲשֶׁר הֵיָיָה (heyah asher heyah) թարգմանվել է չնչն էլմս հունարեն համարժեքով: Այդ ձևը Նիսուս հաճախ էր օգտագործում, որ առաջացնում էր հրեաների բարկությունը (Նովի. Լ. 59), այսինքն՝ նրանք ծանոթ էին չնչն էլմս ձևին:

18 Տե՛ս **Walter Martin**, *The Kingdom of the Cults*, Bethany house publishers, Minnesota, 1997, էջ 141-142:

19 Historical present.

ԳԻՐԱԽՈՍՈՒՄԻՆ, ԱՂՏԵՆԱԳԻՏՈՒՄԻՆ

ԱՐՇԻԼ ԳՈՐԿԻՆ՝ ՆԵՌՈՒ ԵՒ ՄՈՏԻԿ ՆԱՅ ՆԿԱՐԻՉ

«Արշիլ Գորկի - Ոստանիկ Ադոյան. 1902-1948», Հեղինակ եւ կապմող
Շահեն Խաչատրյան, Երեւան, 2011:

Արշիլ Գորկի... Նայի համար այս անսովոր անուն-ազգանունով նկարիչը Ի. դարի առաջին կեսին Միացյալ Նահանգներում սրելոված գեղանկարչության նոր դպրոցի՝ «աբստրակտ էքսպրեսիոնիզմի» հիմնադիրներից մեկն է: Սակայն մինչև անցյալ դարի 70-ական թվականները մեզանում նրա մասին գրեթե ոչ մի բան հայտնի չէր: 1968 թվականին Երեւան է գալիս նրա քույրը՝ Վարդուհին եւ բերում է եղբոր սրելծագործությունների սլայդները, որոնք ցուցադրվում են Երեւանի Արվեստի աշխարհիկների փանը: Դա մի իսկական հայտնություն էր արվեստագետների եւ արվեստասերների մի նեղ շրջանակի համար: Տպավորությունն այնքան մեծ էր, որ հայ խոշոր նկարիչ Մինաս Ավետիսյանը հաջորդ օրն իսկ ձեռնամուխ է լինում սրելծելու իր հայտնի՝ «Աղթամարի պարկերի փակ. հրաժեշտ Վանին» կրավր, որը ներկայումս պահվում է Դեպոյտյի «Ալեքս եւ Մարի Մանուկյաններ» թանգարանում: Կրավրի կենտրոնում, իր բնականից գրկում պարկերված է Մանուկ Ոստանիկ Ադոյանը. այդպես էր ապագա ամերիկահայ հայտնի նկարիչ Արշիլ Գորկու բնիկ հայկական անուն-ազգանունը:

Այդ ժամանակից սկսած արվեստագետ Շահեն Խաչատրյանը, որ Մարտիրոս Մարյանի փուն-թանգարանի փնթեղն էր եւ սլայդների ցուցադրման առիթով ներկաներին համառոտակի ծանոթացրեց նկարչի կյանքին ու սրելծագործությանը, ձեռնամուխ է լինում այդ ծանոթությունը կարելվույն չափ բնդլայնելու եւ խորացնելու շնորհակալ գործին: Վերջին շրջանում Ամենայն Նայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի մրաւդաւմամբ եւ Շ. Խաչատրյանի մասնակցությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում սրելծվել է Ա. Գորկու հուշաթանգարան:

Ա. Գորկու սրելծագործության մի անբաժան մասն են նրա՝ հարաւարներին գրած նամակները, որոնցից մի քանիսը մեզանում առաջին անգամ քալագրվեց «Գարուն» ամսագրում: Դրանք եւս յուրօրինակ հայտնություն եղան, վկայելով, թե նկարիչը որքան դառն ապրումներ է ունեցել, որքան ծանր է քարել Նայրենիքի կորուստը: Իսկ 2005 թվականին Երեւանում քալագրվեց Գորկու «Նամականին», որն առավել ամբողջական պարկերացում է քալիս նկարչի նեղ անձնական կյանքի մասին. հենց այդ նամակներն

Էլ պարասխան են պալիս այն հարցերին, թե որպեղից է եկել Արշիլ Գորկի անունը: Նա հայկական Արշակին րվել է երոսական հնչողություն՝ դարձնելով Արշիլ, իսկ Գորկի (ռուսերեն го́рький-դառն բառից) ազգանունով շեշտել է իրեն բաժին ընկած դառնությունը, միաժամանակ նաև արտահայտել սերը ռուս գրող Մաքսիմ Գորկու նկատմամբ:

Ամերիկահայ նկարահավաք Ջերարդ Գաֆեսյանի՝ Երևանում հիմնած արվեստի կենտրոնում ցուցադրվում են Գորկու քանդակա յուղաներկ եւ գրաֆիկ աշխատանքներ: Իսկ նկարչի թույրը՝ Վարդուհին Նյու Յորքի հայոց եկեղեցուն հանձնելով եղբոր՝ իրեն պարկանող գործերը, կրակ է թողել, որպեսզի, ինչպես ցանկացել է Գորկին, այդ աշխատանքները վերջին հանգրվանը գտնեն Սուրբ Էջմիածնում, այնպեղ, որպեղ առաջին հանգրվանը գրավ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու պատերի տակից գաղթած նրա ընտանիքը:

Եւ ահա վերջերս Շ. Խաչատրյանը կազմել է լույս է ընծայել Ա. Գորկու կյանքի ու սրեղծագործությունների մասին պարմող մի գունարիպ ժողովածու: Այն մեզանում իր տեսակով առաջինն է, որ փոքր ի շատն ամփոփ ձևով պարմում է նկարչի դառն մանկության, գեղագիտական լարված որոնումների եւ սրեղծագործական հաղթության մասին:

Ժողովածուի մեջ գերեղված են Գորկու առավել աչքի ընկնող գործերի գունավոր վերարարությունները: Տեղ են գրել նաև նմուշներ միջնադարյան հայ մանրանկարչությանից, Մարտիրոս Մարյանի, Մինաս Ավերիսյանի, սիյուռքահայ անվանի գեղանկարիչներ Լևոն Թյուրթյունիցյանի, Խորեն Նարոթյանի եւ Գառգուի (Գառնիկ Զուրումյան) մի քանի սրեղծագործությունների գունավոր վերարարություններ:

Կարելի է ասել, որ ժողովածուն յուրովի ամփոփում է այն աշխատանքը, որը արվեստաբան Շ. Խաչատրյանը մինչև այժմ կարարել է Գորկու արվեստը մեզանում հնարավորինչափ հայտնի դարձնելու ողղությամբ:

Ցանկալի կլիներ, որ ժողովածուի մեջ տեղ գրնեին նաև ամերիկահայ խոշոր քանդակագործ, ամերիկյան արվեստի դասական Ռուբեն Նաթյանի որոշ գործեր, որի հետ Ա. Գորկին առիթ է ունեցել ծանոթանալու:

Ինչպես անցյալ դարի 70-ական թվականներին Ա. Գորկու մասին, այնպես էլ այժմ ամերիկահայ այդ խոշոր քանդակագործի մասին մեզանում շատ քիչ բան է հայտնի: Դրա պարմադ մասամբ այն է, որ նա ապրել ու սրեղծագործել է ամերիկահայ համայնքի մշակութային կյանքից մեկուսի: Սակայն Ռ. Նաթյանը կյանքի վերջին շրջանում սրեղծեց Նայոց Մեծ եղեռնին նվիրված մի խոշոր գործ, որը տեղադրված է Նյու Յորքի Սուրբ Վարդան եկեղեցու բակում:

Վերը նշված նկարիչների աշխատանքները ժողովածուի մեջ ընդգրկված են այն տրամաբանությամբ, որ նրանք ներկայացնում են մեզ շատ հարագար ու հարուստ մի ողղություն, որը կարելի է իրավամբ անվանել հայ գեղանկարչական դարոց, անկախ այն բանից, թե նրանք երբ են սրեղծագործել, որ երկրում եւ գեղարվեստական մարծողության ձևավորման ինչ հանգամանքներում: Այո, համաշխարհային արվեստում կա՝ այդպիսի մի առանձին ողղություն եւ դարոց:

Ո՛րն է այդ դպրոցի առանձնահատկությունը. նրա ներկայացուցիչները Աստված սրբեղծած աշխարհը պարկերում են այնպես, ինչպես Աստված է այդ աշխարհի պարկերը դրոշմել հայի հոգու մեջ, պարկերում են հայ բնիկ մրաժողությամբ, նրանց գույները հայերեն են պարմում այդ աշխարհի մասին: Նրանք հայի հոգու մեջ դրված Աստված լույսի անդրադարձներն են, որ վկայում են այդ լույսի մասին հայերեն և հայախոս գույներով: Այլապես որբեղից այն հարազատությունը, այն նմանությունը, որը կա, ասենք, միջնադարի հայ մանրանկարիչների և նրանցից դարեր անց սրբեղծագործած Ա. Գորկու գույների, լույսի ու սրվերի խաղերի միջև, մի նկարչի, որ ապրել և սրբեղծագործել է Նոր Աշխարհի իրականության մեջ, գեղագիտական ու գեղանկարչական վիթխարի որոնումների ու թռուտների մեջ:

Այս առումով ժողովածուի մեջ մի շարք հեղափոխական փաստ է վկայակոչվում: Մարտիրոս Սարյանը, առաջին անգամ դիպրելով Ա. Գորկու աշխատանքների սլաշները, անմիջապես, առանց երկար-բարակ մրաժեկու, ասել է. «Շատ ազապ մրաժող նկարիչ է, գծերը խոսում են և զգայուն: Գույները շարք գեղեցիկ են և իմ գույներին էլ շարք մոտ են: Այդ ամենը հնարված չէ, հիշողությունների, ներքին փեստության ծնունդ է: Նրան աբստրակցիոնիստ անվանելն այնքան էլ ճիշդ չէ...»: Երբ Ոստանիկը Ամերիկա էր մեկնում, այդ ժամանակ փաստորեն փարբեր աշխարհներից իրար բողառաջ էին գնում մի կողմից ապագա խոշոր նկարիչը, մյուս կողմից՝ այն հասունացնող գեղագիտական մրաժողությունը, որին Ա. Գորկին ձեռք ու կերպ քվեց որպես ամերիկյան հողի վրա կազմավորված առաջին ինքնություն գեղանկարչական դպրոցի: Այդ փարբեր աշխարհներից մեկը Նայասարան էր, որբեղից դուրս եկավ Ա. Գորկին և որբեղ նա բողառներ 13 փարեկանում կանգնեց հանդիման անլուր ռճիրի, որը անսրբեղծագործ փարբեր գործում էր սրբեղծագործ փարբի դեմ:

Մյուս աշխարհը Նոր Աշխարհն էր՝ Ամերիկան: Մինչ Նին Աշխարհում շարունակվում էր մեծագույն ողբերգությունը՝ Նամաշխարհային պարերագմը, որի գագանային հղացման շրջանակներում իրագործվում էր Նայոց Մեծ եղեռնը, Նոր Աշխարհում կառուցվում էր բողառվին փարբեր մի կյանք: Այնրեղ ամեն ինչ նոր էր. ավելի ճիշդ՝ փրկությունը, բողառականությունը, դիվանագիտությունը, անշուշտ, նաև արվեստը, փողոթնված էին նորի որոնումներով:

Ժողովածուի մեջ բողառնոր գծերով ներկայացված է Ա. Գորկու կենսագրությունը, Շ. Խաչատրյանը նշում է, որ ըստ նոր քվյալների նա ծնվել է 1902 թվականին, պարմական Վասպուրական աշխարհում, Նայասարանի հնագույն մայրաքաղաք Վանից ոչ հեռու, փողոթի Խորգում գյուղում: Ահա թե նկարչի հորեղբորդին ինչպես է հիշում հայրենի գյուղը. «Մեր Խորգում գյուղը, ուր անցել է Ոստանիկի մանկությունը, երվներանգ գույների մի ծաղկավան էր: Ոստանիկի նկարչական ձիրքը բնածին էր, նկարելն ու բանդակելը նրա փարերբն էին: Մի անգամ վարժապետ պարուն Միիրանը նկարեց, որ վերջին շարքում նստած Ոստանիկը ինչ-որ բանով է կլանված:

- Բեր այսրեղ բարերախարակդ,- հրամայեց պարունը:

Տանկարծակիի եկած Ոստանիկը մոտեցավ նրան: Քարեդախարակի վրա նկարված էին միմյանց հռչակող երկու գամփոներ... Ի գարմանս բոլորիս, պարոն Միխանն ասաց.

- Այս ինչ հրաշք է, Կոլաս, դու անպայման նկարիչ դառնալու ես...»:

Ընդամենը 13 տարեկանում Ոստանիկը մոր և երեք քույրերի հետ հայրերի բնօրրանից դեպի Արևելյան Ղաթստան ծայր առած գաղթականության հետ անցնում է Արաքս գետը և հասնում Էջմիածին: Երկու ավագ քույրերը շուրջով մեկնում են Ամերիկա: Մայրը Կոլայի ու աղջկա հետ ժամանակավորապես հանգրվանում է Շահաբ (այժմ՝ Մայակովսկի) գյուղում: Շուրջով նա մահանում է գրկանքների մեջ: Ոստանիկը և քույրը մեկնում են Թիֆլիս, այնուհետև Բաթում, որտեղից էլ՝ Ամերիկա: Նրանց աղքատիկ իրերի մեջ կար մի խուսափած լուսանկար՝ մայրը փոքրիկ Ոստանիկի հետ: Նկարագրում Ա. Գորկին այդ լուսանկարի հիման վրա պետք է սրելով իր գլուխգործոցներից մեկը՝ «Նկարիչն ու իր մայրը» կրավր, որն այսօր Նյու Յորքի Ուիթնի թանգարանի պարծանքն է, և որի մասին բազում հայրնի արվեստագետներ հիացական ու գարմացական հռչակածներ են գրել ու դեռ կգրեն:

Ա. Գորկին Միացյալ Նահանգներում մասնագիտական կրթություն է ստացել մասամբ Բոստոնում, դիզայնի նոր դպրոցում, մասամբ էլ Նյու Յորքում, սակայն դա կարճ է տևել և կիսար է մնացել: Բացը լրացնելու համար նա ներվում է անձամբ ուսումնասիրելու երոսական արվեստը և դառնում է մի տեսակ «հին ու նոր արվեստների բոցավառ հետազոտող»: Արվեստաբան Մ. Շալիբովն այդ կապակցությամբ գրել է. «Ինչպես մեծ բանաստեղծները մեծ ընթերցողներ են, այդպես էլ Գորկին մեծ դիպող էր, ուներ գարմանալի ցնցող ու վերլուծող յուրահատկություն: Երոսական նկարիչները թաղված էին Նյու Յորքի մեծ գրադարաններում և այլուր... Գորկին եղավ նրանց իսկական հայր-նաբերողն ու շրջապարին ծանոթացնողը»: Նա այնքան գիպելիքներ է կուրակում, որ մի քանի տարի (1926-1931) դասավանդում է Նյու Յորքի Կենտրոնական գեղարվեստական ուսումնարանում: Սակայն, իհարկե, միաժամանակ նկարում է: Առաջին աշխատանքները կրում էին գույր խմբերախմբական (ֆրանսերեն impression-տպավորություն բառից) բնույթ: Ինչպես հայրնի է, այդ ուղղությունը սկիզբ է առել ԺԸ. դարի վերջերին Ֆրանսիայում: Նոր նկարչությունը գույր գեղագիտական խմաստով կորականապես հրաժարվում էր կլասիցիզմի, ժամանրիզմի ու սալոնային սկադեմիզմի սկզբունքներից: Իմպրեսիոնիստները հաստատեցին, որ կյանքի իրողությունները, բնության երևույթների կենդանի ընթացքը առանց այդ սկզբունքների միջնորդության պարկերելը արվեստին հաղորդում է գեղարվեստական մեծ հավաստիություն և հուզականություն:

Այնուհետև Ա. Գորկին հետևում է ֆրանսիացի խռոր նկարիչ Պ. Սեզանի գեղագիտական սկզբունքներին, և դա պարահական չէր, քանզի վերջինս, զարգացնելով իր նախորդների ավանդույթները, սրելով էր իր խիստ անհատական ոճը, որը կոչվեց պոստիմպրեսիոնիզմ: Կոմպոզիցիան կառուցելով գծանկարի խիստ հստակ հենքի վրա, Սեզանը առարկաներն ու բնության երևույթները պարկերում է այնպիսի հարաբերակցությամբ, որը խորհրդանշում է նրանց հավասարակշռությունը. գեղարվեստական նման լուծման դեպքում մանրամասները, պարահական պահերը տեղ չունեն: Նրա կրավուն-

րում, առավելապես բնանկարներում, առարկաների կառուցվածքը հաղորդվում է շար որոշակիորեն, դրանց ձևերը թանձրացվում են անխառն գույներով. նկարիչն օգտագործում է հակադարձ հեռանկարի սկզբունքը, այսինքն՝ առարկան շրջում է դեպի դիտորդը, դրանով հասնելով պարկերված իրողության ձևերի սահմանության, գունային հարստության:

Այս ամենը նորայից էր երոպական արվեստում, ուստի պարսիական չէ, որ Մեզանի գեղարվեստական մրաձողությունը շար հերմոդներ ունեցավ ինչպես Տին, նույնպես եւ Նոր Աշխարհում, որպէղ նրանցից մեկն էլ Ա. Գորկին էր: Նկարչի այդ շրջանի գործերը ոչ թե Մեզանի արվեստի բնորոշականություններն էին, այլ յուրօրինակ մեկնաբանություններ:

Ա. Գորկին այնուհետև սկսում է հեղափոխել կուլիզմի գեղանկարչական սկզբունքներով: Եւ դա շար փրամաբանական է, քանզի այդ ուղղության հերմոդները, շար բան ուսանելով Մեզանից, շարունակեցին որոնել մեծ նկարչի արվեստի արտահայտչամիջոցների հարստացման նոր ուղիներ: Նույն որոնումների մեջ էր նաեւ Ա. Գորկին, սակայն Արեւելքից Նոր Աշխարհ ուրք դրած նկարիչը այդ ամենի մեջ միաժամանակ որոնում էր նաեւ իր ինքնությունը: Այսօրվա հեղից կարելի է ասել՝ Ա. Գորկու առջև դրված խնդիրը մեծ հաշվով այս էր՝ գեղանկարչության մեջ յուրովի հաստատել այն կայր, որը կար քրիստոնական հին Արեւելքի եւ նոր Արեւմուտքի միջև:

Այս խնաստով շար բնութագրական է Ա. Գորկու մտերիմ Ուիլյամ դր Կունինգի հայրնած կարծիքը հայ նկարչի մասին. «Նա օժտված էր սուր փնտռությամբ, այդ ամենը նա ուներ մինչև Երոպայից եկած սյուրռեալիստներին հանդիպելը եւ նրանք նրան ասացին՝ դու արդեն ունես այդ ամենը...»: Իսկ Գորկու անվանի հայրենակից Ռ. Նաբյանը նրա մասին մասնավորապես գրել է. «Նա շար ավելի լավ էր իմանում, թե ինչ է կարարվում Երոպայում: Չափազանց խելացի էր եւ գիտեր հավուր պարշաճի խոսել արվեստի մասին: Նա ամենաառաջադեմ նկարիչն էր, որ երբեւ ունեցել ենք Ամերիկայում: Նաեւ ամենագայունը: Նա փայլուն հոգեբան էր: Տաճախ էինք ավտոմատից օգրվում դռնաթա ուրելու եւ մի բաժակ շոկոլադ խմելու համար: Աղքատ էինք եւ սովորաբար գնում էինք 27-րդ փողոցի ծայրին գրնվող համեստ մի ռեստորան, որպէղ ապուրից մինչև դեսերտն արժեր բնղամենը 40 ցենպ»:

